ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՆՏԻԿ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2018

ՀՏԴ 391/395(=19):94(479.25)
ԳՄԴ 63.5(5Հ)+63.3(5Հ)
Ն 251

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտա-
կան խորհուրդը

Խմբագիր **ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ**
պ.գ.թ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ
Գրախոսներ՝ **ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**
պ.գ.դ., ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ
ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
պ.գ.թ., ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռ.Ա.
Ն 251 Հունական և հռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, - Եր.: ԵՊՀ հրատ., 2018 թ., 240 էջ:

Մենագրության մեջ առաջին անգամ ի մի են բերվում անտիկ դարաշրջանի հունական և հռոմեական սկզբնաղբյուրների՝ Հերոդոտոսի, Քսենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Գայոս Պլինիոս (Ավագ) Մեկունդոսի, Ապպիանոսի, Դիոն Կասսիոսի, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի երկերի վկայությունները Հայաստանի և հայերի պատմամշակութային կյանքի, հայոց ազգագրական երևույթների վերաբերյալ:

Նախատեսված է ազգագրագետների, հայոց պատմության ու մշակույթի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ընթերցող հանրության համար:

ՀՏԴ 391/395(=19):94(479.25)
ԳՄԴ 63.5(5Հ)+63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2285-8

© ԵՊՀ հրատարակչություն, 2018
© Նահապետյան Ռ. Ա., 2018

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ մշակում է աշխարհը ճանաչելու և յուրացնելու, նրան հարմարվելու իր յուրօրինակ գործիքները: Դրանցից է նաև անցյալի պատմության, մասնավորապես ազգագրության, հնագիտության, և մշակույթի վերաբերյալ այն ընդարձակ տեղեկատու շտեմարանը, որը, ժամանակակից լեզուներով թարգմանելով, մատչելի է դարձել գիտելիքների և հմտության սանդղակի տարբեր հանգույցներում հայտնված ընթերցողներին:

Նշված գործընթացի նախաձեռնությունը պատկանում է պատմահայր Մովսես Խորենացուն, որը տակավին վաղ միջնադարում բնագրով քաջ ծանոթ էր անտիկ դարաշրջանի հունահռոմական և առաջավորասիական մի շարք հեղինակների, նրանց գործերը սերտել էր աշխարհի հռչակավոր գրադարաններում և ներմուծել էր նրանց հաղորդումներն իր «Պատմության հայոց» աշխատության մեջ:

Անցած դարի առաջին կեսին անտիկ պատմագրության երևելի գործիչների ստեղծագործություններից քաղվեցին ընտրովի հատվածները, որոնք վերաբերում էին Հայաստանին և հայերին: Այս շարքում են կանգնած Ստրաբոնի և Տակիտոսի գործերը: Նույն դարի երկրորդ կեսին նոր թափ ստացավ օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին տեղեկատու մատենաշարը, որտեղ տեղ գտան անտիկ և միջնադարյան բազմաթիվ հեղինակներ՝ Դիոդորոս Սիկիլիացի, Դիոն Կասսիոս, Հովսեպոս Փլավիոս, Պրոկոպիոս Կեսարացի և այլք: Ս. Կրկյաշարյանի ջանքերով թարգմանվեցին Հերոդոտոսի «Պատմությունը» և Պլուտարքոսի «Զուգակշիռքի» այն գլուխները, որոնք զգալի չափով շոշափում էին Հայաստանը՝ Լուկուլլոս, Պոմպեոս, Անտոնիոս:

Ամբողջ անտիկ պատմագրությունը բծախնդիր ուսումնասիրելով՝ ակադ. Հ. Մանանդյանը հեղինակեց իր նշանակալի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» հատորաշարը, ինչն էլ հիմք դարձավ հետագայի հայագիտական ակադեմիական բազմահատոր կոլեկտիվ մենագրության ստեղծման համար (Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., I-VIII հատորներ, Երևան, 1971 - 1984): Միևնույն ժամանակ արագորեն օիրագործվեց «Հայ ազգագ-

րություն և բանահյուսություն» մատենաշարը:

Վերոնշյալ հենքի վրա սույն մենագրությամբ ասպարեզ է ելնում հունահռոմեական անտիկ սկզբնաղբյուրների ազգագրական տվյալները Հայաստանի և հայերի մասին ուսումնասիրությունը: Ռաֆիկ Նահապետյանը փորձված ազգագրագետ է. տասնյակ տարիներ դասավանդել է տարբեր բուհերում և ոչ ուրիշների կողմից միջնորդված տեղյակ է ուսանող մտավորականների մասնագիտական հետաքրքրությունների շրջանակին և խորությանը, աղբյուրներից տեղեկություններ քաղելու գործելաոճին և հոգեբանությանը: Այս ամենը նկատի առնելով՝ նրա բեղմնավոր գրչի տակից դուրս են եկել հայ ազգարության տարբեր խնդիրներին վերաբերող մի քանի տասնյակ հոդվածներ և մի քանի մենագրություններ:

Նշված մենագրությունն էլ այժմեական է: Պատեհ է տեղի և ժամանակի առումով այնքանով, որ մի կողմից ժողովում է հայերի մասին փաստերով առավել տեղեկացված հին հեղինակներին՝ հնարավորություն տալով ընթերցողին դրանք յուրացնելու մի համալիրի մեջ և հեղինակների՝ հաճախ միևնույն առարկան շոշափող տարբեր տվյալները հենց այս գրքի էջերում բաղդատել՝ հասնելով ճշմարտության հաջորդ աստիճանին:

Մենագրությունը զուգորդում է օտար հեղինակների գործերի քաղվածքները դրանց վերլուծությանը զուգահեռ: Ուշագրավ է, որ հեղինակը սկզբնաղբյուրների մեջ, որոնցից բերված հատվածները մտածված ընտրության արդյունք են, ընդգծում է ազգագրական տեսանկյունը: Հեղինակը, ինչպես կարելի է համոզվել աշխատանքի վերջում բերված գրականության ցանկից, լավ տեղյակ է նաև հնագիտական, ժողովրդագրական, գրականագիտական տեսական գրականությանը, ինչն էլ վստահություն և ազատություն է տալիս նրան իր եզրակացությունների մեջ:

Թեև մենագրությունը գերազանցապես հասցեագրված է ուսանողներին, այն օգտակար է նաև գիտնականների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում պատմական Հայաստանի և հայերի վաղ անցյալի մասին նյութերն ուսումնասիրելու և համարժեք հետևություններ անելու հարցը չի կորցրել իր արդիականությունը, քանի որ պայմանավորված աշխարհաքաղաքական շահերով՝ XXI դարի հայը հաճախ դեռ առնչվում է իր երկրի սահմանների, էթնիկ պատկանելիության, քաղաքական ու տնտեսամշակութային կյանքի վերաբերյալ կեղծ, հաճախ անհեթեթ վերլուծությունների: Ավելին՝ Հայաստանի պատմական տարածքի թեման այսօր միջազգային հանրության օրակարգում է, քանի որ այն ուղղակիորեն կապված է տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության հաստատման գործընթացին: Ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ անտիկ դարաշրջանում, պատերազմական գործողությունները մշտական բնույթ են ունեցել, հետևաբար երկրների սահմանները պարբերաբար փոփոխվել են: Բացառություն չի կազմել նաև Հայաստանը, ուստի տարբեր պատմիչների մոտ կարելի է հանդիպել Հայաստանի տեղադրության, սահմանների և հայ կյանքի վերաբերյալ տարբեր մեկնությունների, այդ ամբողջ գործընթացում այլ ժողովուրդների ներկայացուցիչների գաղթը դեպի Հայաստան, նրանց ձուլվելը հայերին ազդել է հայ հասարակության զարգացման ընթացքի վրա, ինչն արտահայտվել է միջհասարակական փոխհարաբերություններում, դավանանքում, մշակույթում, ճարտարապետության մեջ և հասարակական գործունեության այլ բնագավառներում: Հետևաբար Հայաստանի և հայերի մասին պատմական նյութերն ուսումնասիրելն ու գիտական պատշաճությամբ ներկայացնելը այսօր արդիական և կարևոր խնդիր է:

Ընդհանրապես հին Հայաստանի պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրները զանազանատիպ են թե՛ իրենց բնույթով, թե՛ ըստ գրության ժամանակի: Պատմագրությունը՝ որպես այդպիսին, ծնունդ է առել Հունաստանում՝ Ք.ա. VI-V դարերում: Հին Արևելքի քաղաքակրթությունները՝ եգիպտականը՝ բազմահարուստ գաղափարագիր դպրությամբ, սեպագրականը՝ իր շումերական, բաբելաասորական, խուռիական, խեթական, ուրարտական ու հին պարսկական

ճյուղավորումներով, մնացել են առանձին իրադարձությունների կամ միատարր երևույթների շարաններն արձանագրող մակարդակի վրա: Այս մակարդակից մասամբ տարբերվում են խեթական և Վանի արքաների ընդարձակ տարեգրությունները, որոնցից, բացի արքաների ռազմական և շինարարական գործունեությունից, կարելի է տվյալներ քաղել նաև պաշտամունքի, օրացույցի, պատմական աշխարհագրության և այլնի վերաբերյալ:

Հայաստանի և հայերի պատմության, տնտեսամշակութային բնութագրի ուսումնասիրության համար, սակայն, առավել հանգամանալի և կարևոր սկզբնաղբյուրներ են ավելի քան երկուսուկես հազարամյակ առաջ հունահռոմեական պատմիչների հաղորդած տվյալներն ու մեկնությունները: Հին Հայաստանի վերաբերյալ նրանց վկայությունները սփռված են, Ք.ա V դարի պատմիչ Հերոդոտոսից սկսած, ավելի քան հազար տարի ընդգրկող ժամանակահատվածում ապրած հունահռոմեական մի շարք հեղինակների երկերում: Ինչո՞ւ հունահռոմեական, քանի որ թեման մշտապես մեկնաբանվել է այնպիսի հռչակավոր օտարերկրյա պատմիչների կողմից, որոնցից շատերը անձամբ են եղել Հայաստանում, և նրանց հաղորդած տեղեկությունների արժանահավատությունը շատ բարձր է գնահատվում հետազոտողների կողմից: Հայաստանի վերաբերյալ վկայությունները թեև նրանց երկերում սփռված են ցաքուցրիվ, այդուհանդերձ բացառիկ են այն իմաստով, որ նրանց հեղինակները առավել կամ պակաս չափով ժամանակակից են իրենց նկարագրած իրադարձություններին և կամ օգտվել են այդ իրադարձությունների մասին գրած ավելի վաղ հեղինակների գործերից: Իհարկե, նրանց ուշադրությունը սևեռված է եղել իրենց երկրներին՝ հունահռոմեական աշխարհին, որից դուրս գտնված երկրները համարվել են բարբարոսական, որոնց պատմության ու մշակույթին, բնականաբար, անդրադարձել են հիմնականում հունահռոմեական տիրակալների նվաճողական արշավանքների կապակցությամբ, դրա համար էլ կցկտուր, երբեմն էլ՝ խառնաշփոթ, անգամ հակասական այդ տեղեկությունները, բացառությամբ Հերոդոտոսի, Քսենոփոնի և Ստրաբոնի աշխատությունների, դեռևս թերի են հին Հայաստանի սոցիալ-քաղաքական և տնտեսամշակութային կյանքը համակողմանի շարադրելու համար: Այդ հեղինակներից շատերը չեն եղել Հայաստանում, ուստիև նրանք գրել են Հայաստանի մասին կարդացածի հի-

ման վրա: Նույնիսկ Հերոդոտոսի նման հեղինակը, որն իր պատմական երկը շարադրելու համար նյութեր և տպավորություններ քաղելու նպատակով շրջագայել է բազմաթիվ երկրներում, որոշ հեղինակների համոզմամբ Հայաստանի վերաբերյալ նյութերը հաստատագրել է ականատեսի աչքերով:

Ինչևէ, այս տեսակետից հատկապես ուշագրավ են Քսենոփոնի և Ստրաբոնի տեղեկությունները: Այս հեղինակները անձամբ են եղել Հայաստանում, հետևաբար հայերի ու նրանց երկրի մասին գրել են հիմնականում այն, ինչ իրենք տեսել են կամ տեղում լսել: Ստրաբոնը չի բավարարվել այդքանով: Նա օգտվել է իրենից առաջ Հայաստանով անցած և հայերի ու նրանց երկրի մասին գրած նախորդ հեղինակների գործերից, ինչպիսիք են՝ Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցներ Կյուրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին: Այսպիսով՝ Հերոդոտոսի, Քսենոփոնի և Ստրաբոնի երկերը ոչ միայն անձնական դիտումների և տպավորությունների արգասիք են, այլև իրենց ժամանակի չափանիշներով պատմաաշխարհագրական և ազգագրական մի յուրատեսակ հանրագիտարան, որոնցում հավաստվում են արժանահավատ վկայություններ ոչ միայն անտիկ շրջանի հայոց, այլև Հայաստանի հարևան մյուս երկրների պատմության ու մշակութային յուրահատկությունների մասին, որոնց հետ հայերը գտնվել են քաղաքական և մշակութային սերտ հարաբերությունների մեջ:

Հայոց պատմության և կենցաղամշակութային կյանքի ուսումնասիրության համար թեև ոչ համակարգված, բայց կարևոր արժեք ունեն նաև հունական պատմագրության նշանավոր մյուս ներկայացուցիչներ Դիոդորոս Սիկիլիացու, Պլուտարքոսի, հռոմեական պատմագիրներ Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսի, Ապպիանոսի, Դիոն Կասսիոսի, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի աշխատությունները, որոնց հաղորդած արժեքավոր տեղեկությունների հիման վրա կարելի է պատկերացում կազմել մեր երկրի ու ժողովրդի անտիկ դարաշրջանի հազարամյա պատմության, կենցաղի ու մշակույթի բազում կողմերի մասին: Մենք կարևորել ենք հունական և հռոմեական պատմագրության անտիկ շրջանի այս հեղինակների գործերը, որոնք համեմատաբար առավել հանգամանալի են ներկայացրել հին հայերի կենցաղամշակութային պատկերը: Այս հեղինակների մի մասի վկայություններին համառոտակի անդրադարձել ենք մեր կողմից

2010 թ. հրատարակված «Հայ ազգագրության պատմություն. մաս I. Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին» բուհական ուսումնական ձեռնարկում (էջ 78-118) և առանձին հոդվածներում (տե՛ս գրականության ցանկում): Դրանք լրացումներով և հնարավոր ամբողջական տեսքով ներկայացվում են սույն գրքում:

Մենք հունահռոմեական անտիկ պատմագիրներին ամբողջությամբ չենք անդրադարձել, քանզի ոմանց (Պոլիբիոս, Հովսեպոս Փլավիոս, Պոմպեոս Տրոգոս, Մեմնոն և այլք) Հայաստանի և հայերի վերաբերյալ հաղորդած տեղեկությունները հետևողականորեն չեն լուսաբանում քիչ թե շատ տևական ժամանակաշրջանը, ավելի շատ վերաբերում են պատերազմական գործողություններին ու դիվանագիտական հարցերին, մինչդեռ հայոց ներքին կյանքը, ըստ էության, դուրս է մնացել վերջիններիս տեսադաշտից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՆՏԻԿ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 1.1. ՀԵՐՈԴՈՏՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԻՆԸ ԳՐՔԻՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Հայաստանում ապրող ցեղերի և բուն հայ ժողովրդի հնագույն կենցաղին ու մշակույթին վերաբերող տվյալներով առավել քան հարուստ նյութեր է տրամադրում հունահռոմեական անտիկ մատենագրությունը:

Հին հունական պատմագրության դերը հին Հայաստանի տնտեսամշակութային կյանքի և պատմության լուսաբանման գործում չափազանց մեծ է: Առավելապես կարևոր են Հերոդոտոսի, Քսենոփոնի և Ստրաբոնի հաղորդումները, որոնք մոտիկից ծանոթ են եղել Հայաստանին: Պատմագիտության մեջ անտիկ դարաշրջանի սկիզբ է համարվում Ք.ա. IX դարը, և Հոմերոսին համարում են անտիկ հեղինակ: Նա ունի տեղեկություն նախահայերի մասին («Իլիական», II, 783):

Անտիկ հեղինակներից առաջինը, որ գրել է Հայաստանի և հայերի մասին, Հերոդոտոս Հալիկառնասեցին է (Ք.ա. 484-425 թթ.): Թեպետ հելլեն պատմահոր հիմնական նպատակն է եղել գրել հույն-պարսկական պատերազմների պատմությունը, որոնց պարսկական բանակի կազմում մասնակցել են նաև հայերը, սակայն նրա «Պատմության» շարադրանքը ժամանակի համաշխարհային պատմության և մշակույթի յուրատեսակ ակնարկ է: Հերոդոտոսն առաջին պատմագիրն է, որը որոշակի ծրագրով է շարադրել համաշխարհային պատմությունը՝ օգտագործելով գրավոր և բանավոր աղբյուրներ, վիմագիր արձանագրություններ, ճանապարհորդությունների ընթացքում հավաքած տեղեկություններ և այլ նյութեր:

Հերոդոտոսը տեղեկություններ է պահպանել նաև հին Հայաստանի ու հայերի մասին. դրանք թեև մեծաքանակ չեն, բայց շատ

կարևոր են: Այդ տեղեկությունները արժեքավոր են հատկապես նրանով, որ հունական պատմագրության էջերից մեզ հասած հնագույն տվյալներն են մեր երկրի մասին և պահպանվել են ոչ թե մի այլ պատմիչի, այլ պատմահայր Հերոդոտոսի երկում[1]:

Պատմագրության հիմնադիր Հերոդոտոսի երկը բովանդակում է հին աշխարհի պատմությունը մինչև Ք.ա. V դարը, ներառյալ հույն-պարսկական պատերազմների (500-447) մանրամասն նկարագրությունը: Այդ աշխատությունը եզակի նշանակություն է ունեցել Հունաստանի և անտիկ աշխարհի պատմական մտքի հետագա զարգացման վրա, բացառիկ աղբյուր է հեղինակի ժամանակ հայտնի երկրների՝ Սև ծովի առափնյա շրջանների, Հունաստանի, Եգիպտոսի, Փոքր Ասիայի, Մերձավոր Արևելքի, այդ թվում՝ նաև Հայաստանի Ք.ա VII-V դդ պատմամշակութային կյանքի ուսումնասիրության համար: Պատմահայրը շատ է ճանապարհորդել: Շուրջ տասը տարի (Ք.ա. 455-445թթ.) շրջագայել է Սև ծովի ավազանի հունական գաղութներում, եղել է Փոքր Ասիայի պետություններում, Պարսկաստանում, Բաբելոնում, Պաղեստինում, Փյունիկիայում, Եգիպտոսում, Լիբիայում, Հունաստանում, Էգեյան ծովի կղզիներում, Սիցիլիայում, Բոսպորում և այլուր, ծանոթացել նրանց ժողովուրդներին ու պատմությանը: Հերոդոտոսի ճանապարհորդությունների նպատակը պարզ չէ, բայց արդյունքը ակնբախ է. այցելած երկրների մասին նա հայտնում է առաջնակարգ, հաճախ եզակի տեղեկություններ: Նա հիմք դրեց համաշխարհային պատմության: Տեսածի և լսածի հիման վրա նա գրել է իր հռչակավոր «Պատմություն» աշխատությունը, որը հետագայում Ալեքսանդրիայի գիտնականները բաժանել են ինը գրքերի, որոնք վերնագրվել են ինը մուսաների անուններով: Հերոդոտոսի «Պատմությունը» պարունակում է հսկայական քանակությամբ պատմական, աշխարհագրական, ազգագրական նյութեր հին աշխարհի երկրների և նրանց հասարակական-քաղաքական հարաբերությունների վերաբերյալ: Ակադ. Հ. Մանանդյանը ենթադրում է, որ Հերոդոտոսը ևս Քսենոփոնի նման անձամբ եղած պետք է լինի Հա-

---

[1] Տե՛ս **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986 (այսուհետև բնագրում կնշվեն՝ Հ, գիրքը և էջը:): Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան,** Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատությունը՝ հայ ազգագրության անտիկ դարաշրջանի սկզբնաղբյուր, «Լրաբեր հաս. գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 2015, թիվ 3, էջ 134-145:

յաստանում և հայերի ու նրանց երկրի մասին գրել է գլխավորապես այն, ինչ ինքը տեսել է կամ տեղում լսել[2]: Սակայն նրա՝ Հայաստանում եղած լինելը վիճարկելի է: Այսպես, նկարագրելով եգիպտացիների կենցաղը, Հերոդոտոսը գրում է. «Նրանք միակ ժողովուրդն են, որոնք իրենց անասունների հետ ապրում են միևնույն հարկի տակ» [Հ, գ. II, էջ 102]: Եթե նա իրոք այցելած լիներ Հայաստան, ապա Քսենոփոնի նման (տե՛ս ստորև) ինքը ևս կտեսներ, որ հայկական գյուղերում նույնպես մարդիկ իրենց ընտանի կենդանիների հետ ապրել են նույն հարկի տակ: Այդուհանդերձ, Հերոդոտոսը հայտնում է առաջնակարգ, հաճախ եզակի տեղեկություններ:

Հերոդոտոսի «Պատմությունը» հայ ընթերցողին է ներկայացվել Ս. Կրկյաշարյանի թարգմանությամբ, ինչի ուսումնասիրման հիման վրա էլ Գ. Սարգսյանը Հերոդոտոսի՝ Հայաստանի մասին տեղեկությունները բաժանում է երկու խմբի: Առաջին խումբը վերաբերում է Հայաստանի տարածքին, նրա սահմանների բնութագրմանը իսկ երկրորդը որոշ պատկերացում է տալիս երկրի բնակչության կենցաղի մասին[3]:

§ 1.1.1. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԵՐՈԴՈՏՈՍԻ

Հայաստանի տարածքի և սահմանների վերաբերյալ դիտարկումներն ու ընդգծումները օտար սկզբնաղբյուրները շոշափել են հազարամյակներ շարունակ: Այսօր առավել ևս առնչվում ենք մեր երկրի սահմանների և մեր ժողովրդի ծագմանը վերաբերող տարբեր վերլուծությունների՝ ամենաանհեթեթներից մինչև գիտականորեն հիմնավորվածները: Ավելին՝ Հայաստանի իրական տարածքների թեման այսօր միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է, քանի որ ուղղակիորեն կապված է տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության հաստատմանը: Ահա թե ինչու Հայաստա-

---

[2] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (մ.թ. 66 թ.), Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 353:

[3] Տե՛ս **Գ. Սարգսյան,** Պատմահայր Հերոդոտոսը: Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, էջ 553-578:

նի և հայերի մասին պատմական նյութերի ուսումնասիրությունն ու համարժեք հետևություններ անելը մեծ կարևորություն են ձեռք բերում: Մեծ հետաքրքրություն հարուցող վկայություններ կան հին Հայաստանի պատմական աշխարհագրության, տնտեսության ու հասարակական-քաղաքական հարաբերությունների մասին: Դրանք թեև բազմաքանակ չեն, սակայն հույժ կարևոր են: Դրանցից ենք տեղեկանում, որ Ք.ա. V դարում Հայաստանը գտնվում էր Աքեմենյան Պարսկաստանի XIII և XVIII սատրապությունների մեջ: Ներկայումս հայագիտության մեջ ավելի ընդունելի է դառնում այն տեսակետը, որ Աքեմենյան դարաշրջանի Հայաստանը հիմնականում զբաղեցրել է XIII սատրապությունը (տե՛ս, օրինակ, Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1999, թիվ 1-12, էջ 45-114):

Ենթադրվում է, որ Հայաստանի սահմանները Աքեմենյանների տիրապետության սկզբնական շրջանում՝ մինչև Դարեհ Ա-ի բարեփոխումները, համընկնում էին Ք.ա. VI դարի հայկական թագավորության սահմանների հետ:

Հերոդոտոսը հաղորդում է, որ Դարեհ Ա-ի օրոք XIII սատրապությունն ընդգրկում էր Պակտյուիկեն, արմենևերին և նրանց հարևաններին՝ մինչև Եվքսինյան (Սև) ծովը (Հ., գ. III, էջ 197-198): Ս. Երեմյանը Պակտյուիկեի երկիրը նույնացնում է Կորդուքի հետ[4], իսկ Հ. Մանանդյանը տեղադրում է Վանա լճի հարավում[5]: Արևելքից և հյուսիս-արևելքից այն կից էր XVIII սատրապությանը: Երկու սատրապությունների սահմանը դժվարությամբ է որոշվում: XIII սատրապության վարչական կենտրոնը հավանաբար եղել է Վանը: XVIII սատրապության վարչական կենտրոնը հավանաբար գտնվում էր Էրեբունիի միջնաբերդում[6]: Ուշագրավ է, որ Աքեմենյան թագավորներից մեզ հասած արձանագրություններում այդ սատրապութ-

---

[4] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 450:

[5] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ աշխ., էջ 52-53:

[6] Տե՛ս **Գ. Տիրացյան,** Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո: - Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 452: Սահմանների վերլուծությունը մանրամասն տե՛ս **Գ. Ա. Տիրացյան,** Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դար): «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1980, № 4, էջ 84-95, Նույնի, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ - III դ. վերջ), ՊԲՀ, 1981, № 2, էջ 68-84:

յունները չեն հիշատակվում, Հայկական լեռնաշխարհը հանդես է գալիս միասնաբար՝ Արմինա անվանումով: Պարսկական տիրապետության օրոք Հայկական լեռնաշխարհի երկու վարչական միավորները ընկալվում էին որպես մի երկիր՝ Հայաստան[7]: Հերոդոտոսը հայերին հիշատակում է պարսկական Քսերքսեսի բանակում: Վերջինս 480 թ. արշավեց դեպի Հունաստան (Հերոդոտս VII, 73):

Նախ՝ Ք.ա. V դ. առաջին կեսի դրությամբ, Հայաստանի տարածքին Հերոդոտոսն անդրադառնում է Փոքր Ասիայի կենտրոնական մասում Հալիս գետի հոսանքին հարող երկրների հետ առնչությամբ, նշում է, որ գետի ակունքը Հայկական լեռներն են. «…Մեդիական և Լյուդիական տերությունների սահմանը Հալյուս գետն էր, որը հոսում է Հայաստանի լեռներից Կիլիկիայի միջով» [Հ, գ. I, էջ 32]: Պատմագրի կողմից սահմանների ընդգծումը կատարվել է նշված գետի միջոցով: Հալիսի (ներկայիս Կըզըլ-Իրմակ գետի) ակունքերը գտնվում են հետագայի Փոքր Հայքի տարածքում: Ի դեպ, Փոքր Հայքի անջատումն ու Մեծ և Փոքր Հայքերի առաջացումը, ըստ երևույթին, թվագրվում է Ք.ա. IV դ. առաջին կեսով: Հերոդոտոսի ժամանակ դրանք միավորված են եղել մեկ՝ Հայաստան (Արմենիա) երկրի մեջ, որի հյուսիսարևմտյան սահմաններն ընդգրկել են Հալիսի ակունքները:

Հերոդոտոսը տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի հարավարևմտյան, հարավային ու հարավարևելյան սահմանների մասին: Դրանք (Հ, գ. V, էջ 305 և գ. V, էջ 307) գրեթե իրար կրկնում ու հաստատում են. «Փռյուգիացիներին հարևան են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ, սրանց հարևան են կիլիկեցիները… կիլիկեցիներին սահմանակից են արմենները, և սրանք առատ են հոտերով, իսկ արմեններին հարևան են մատիենները» (Հ, գ. V, էջ 305): Հերոդոտոսը որպես Հայաստանի արևմտյան հարևան է հիշատակում Կիլիկիան: «Կիլիկիայի և Արմենիայի սահմանը կազմում է նավարկելի մի գետ, որի անունն է Եփրատ» (Հ, գ. V, էջ 307):

Հայաստանի հարավային սահմանը պատմագիրը կապում է Տիգրիս գետի վերին հոսանքի հետ: Հստակորեն ասված է. «Տիգրիսը բխում է Արմենիայից»: Տիգրիսն այդ հատվածում հոսում է արևմուտքից արևելք (ն. տ): Պատմագիրը Հայաստանի հարավարևելյան հարևան համարում է մատիենների երկիրը, որը զբաղեցնում էր

[7] Տե՛ս **И. М. Дьяконов,** История Мидии, М.-Л., 1956, с. 347-348:

Ուրմիա լճի ավազանը (ն. տ):

Հերոդոտոսն այդ տեղերով անցնող «Թագավորական ճանապարհի» կապակցությամբ նշում է նաև Հայաստանի տարածքի ճշգրիտ երկարությունը. այդ տարածությունը Եփրատի գետանցից մինչև մատիենների սահմանը հավասար է 56,5 փարսախ (1 փարսախը 5,5 կմ է) կամ 340 կմ-ից փոքր-ինչ ավել:

Եթե Հերոդոտոսի հիշատակությունների հիման վրա բավականաչափ հստակորեն են գծագրվում Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները, ապա նույնը չի կարելի ասել արևելյան և հյուսիսային սահմանների մասին: Այս հարցի պարզաբանումը կարելի է գտնել Հերոդոտոսի՝ Աքեմենյան տերության XVIII սատրատպությանը տված բնութագրման մեջ: Ըստ նրա՝ այդ սատրապության բնակիչներն էին մատիենները, սասպեյրները և ալարոդները (Հ, գ. III, էջ 94): Ակադ. Գ. Սարգսյանը, հիմնվելով Դարեհ Ա-ի հայտնի Բեհիսթունյան արձանագրության տվյալների վրա, անում է ուշագրավ եզրակացություն. Հերոդոտոսի հիշատակած ալարոդները (նույն ուրարտացիները) հայերն են եղել[8]:

§ 1.1.2. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԸ՝ ԸՍՏ ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ

Հերոդոտոսը ակնարկներ ունի նաև հին Հայաստանի էթնիկ կազմի մասին: Նրա վկայություններից երևում է, որ Հայկական լեռնաշխարհում, հայերից բացի, բնակվում էին նաև բազմաթիվ այլ ցեղեր: Հիշատակում է սասպեյրներին, ալարոդներին, մատիեններին (Հ., III, 94):

Նշված ցեղերի ծագումը վերջնականապես պարզված չէ, բայց, ըստ երևույթին, ալարոդները ուրարտացիներն էին, մարդերը իրանական ծագում ունեին, մատիենները՝ խուրիական: Հիշատակված բոլոր ցեղերը և, առաջին հերթին, ալարոդները, ընդգրկվելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացում, հետագայում մեծ մասամբ ձուլվեցին հայերի հետ՝ հետքեր թողնելով լեզվի, մշակույթի, մարդաբանական տիպի, ինչպես նաև տեղանունների վրա: Այսպես, օրինակ, ալարոդներից առաջացել է Արարատը, սասպեյրներից կամ

[8] Տե՛ս **Հերոդոտոս**, էջ 553-579:

հեսպերիտներից՝ Սպերը և այլն[9]:

§ 1.1.3. ՀԱՅԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՓՈՅՈՒԳԻԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Նախ՝ Հերոդոտոսը խոսում է փռյուգիացիների մասին, ներկայացնում նրանց սպառազինությունը, այնուհետև հաղորդում է, որ «Արմենները, լինելով փռյուգիացիների երկրում գաղութաբնակներ, զինված էին փռյուգիացիների նման: «Պատմության» VII գրքում նա գրում է. «Փռյուգիացիների սպառազինումը բավականին նման էր պափլագոնիականին (բնակվում էին Փոքր Ասիայի մերձսևծովյան ափերին՝ ներկայիս Սինոպից հարավ-արևմուտք), միայն մի փոքր տարբերությամբ: Փռյուգիացիները, ինչպես մակեդոնացիներն են ասում, երբ իրենց հարևանությամբ ապրում էին Եվրոպայում, անվանվում էին բրիգներ[10]: Իսկ Ասիա վերաբնակվելուց հետո նրանք երկրի հետ միասին փոխեցին իրենց անունը՝ կոչվելով փռյուգներ: Արմենները, լինելով փռյուգիական գաղութաբնակներ, զինված էին փռյուգիացիների նման: Այս երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը[11], որն ամուսնացած էր Դարեհի (խոսքը Աքեմենյան տերության թագավոր Դարեհ Ա Վշտասպյանի (522-486) մասին է) դստեր հետ» (Հ, գ. VII, էջ 409): Նրանք իբրև զենք ու հանդերձանք ունեցել են հյուսված սաղավարտներ, փոքր վահաններ, կարճ նիզակներ, տեգեր, սրեր և բարձր ճտքավոր կոշիկներ:

Հերոդոտոսին հետևում է Ք.ա. IV դարի հույն աշխարհագիր Եվդոքսոսը, ըստ որի՝ «Իսկ արմենները ծագումով Փռյուգիայից են, և

---

[9] **Գ. Տիրացյան,** Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 455):

[10] Հնդեվրոպական ժողովուրդ, որը Փոքր Ասիա էր անցել Թրակիայից Ք. ա. XIII-XII դարերում, բնակվում էր Փոքր Ասիայում՝ Լիդիայի և Կապադովկիայի միջև: Փոքր Ասիա տեղափոխված թրակափռյուգիական ցեղերի մեջ հիշատակված են արիմները, որոնք համարվել են նախահայերենի կրողները: Ըստ «Իլիականի»՝ նրանք ապրել են Արգեյոս լեռան և Մաժաք (Կեսարիա) քաղաքի շրջակայքում (**Հոմերոս,** «Իլիական», հ. II, հին հունարեն բնագրից թարգմ.՝ Համազասպ Համբարձումյանի, Ե., 1955, էջ 783):

[11] Արտոքմես անունը, Ս. Կրկյաշարյանի կարծիքով, պետք է կարդալ Արտաշես (տե՛ս **Ս. Կրկյաշարյան,** Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում, ՊԲՀ, 1973, № 4, էջ 185):

նրանց լեզվում շատ բան փռյուգերենից է»[12]: Ք.ա. I դարի հեղինակ Դիոնիսիոս Հալիկարնասցին արմենիներին և փռյուգիացիներին համարում է համալեզու[13]: Այստեղից էլ հայագիտության մեջ առաջացել է հայերի ծագման փռյուգիական վարկածը: Հետազոտողներն ամենից ավելի ուշադրություն են նվիրել հայերի մասին Հերոդոտոսի այն հաղորդմանը, ըստ որի՝ նրանք «փռյուգիական վերաբնակիչներ են», որից ենթադրվում է, թե իբր հայերը ծագում են փռյուգիացիներից, թեև հայոց լեզվի և փռյուգերենից պահպանված տարրերի համադրությամբ կարծիք է ձևավորվել, որ դրանք ազգակից լեզուներ են և թրակերենի հետ կազմել են հնդեվրոպական լեզվաընտանիքի ճյուղերից մեկը՝ թրակափռյուգահայկական ճյուղը: Իրավացի են այն գիտնականները, որոնք գտնում են, որ փռյուգերենից մնացած սակավաթիվ բառերը չեն կարող հիմք ծառայել նման ենթադրության: Փռյուգերենի և արմենիերենի մերձավոր ազգակցության մասին հույն մատենագիրների այս տեղեկությունները դժվար է ստուգել, որովհետև փռյուգերենի առանձնահատկությունները մանրամասն մեզ հայտնի չեն, և նրա բառամթերքից շատ քիչ բան է պահպանվել[14]: Այդուհանդերձ, Հերոդոտոսի հաղորդման համաձայն՝ պատմագրության մեջ ժամանակին զարգացվել է հայ ժողովրդի ծագման փռյուգիական վարկածը: Ըստ այդ տեսակետների՝ հայերի հնդեվրոպական նախնիները, որոնք բնակվում էին Սանգարիա գետի ափին՝ ներկայիս Անկարայից արևմուտք, փռյուգիացիների ճնշման ներքո շարժվել են դեպի արևելք՝ Անտիտավրոսի լեռները և Հալիս գետի վերին հոսանքի շրջանը[15]: Փռյուգիացի և հայ զինվորների համանման հագուկապի, հայերենում փռյուգերեն բառերի առկայության վերաբերյալ փաստերը չեն կարող հիմք հանդիսանալ մի ժողովրդի՝ մյուսից առաջանալու վերաբերյալ: Իրականում, փռյուգիացիներն ու

---

[12] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 19:

[13] Տե՛ս նույն տեղում: Հերոդոտոսի ռուսերեն թարգմանության ծանոթագրության մեջ Ֆ. Միշչենկոն փռյուգիացիների մասին գրում է. «Փոքրասիական թերակղզում փռյուգիացիների բնակավայրերի խոր հնությունը, ինչպես նաև նրանց ազգակցությունը, մի կողմից, արմենների և մյուս կողմից՝ հելլենների հետ, ամեն կասկածից վեր է (տե՛ս Геродот, История в девяти книгах, перевод с греческого Мищенко Ф. Г., т. II, М., 1888, с. 607):

[14] **Գ. Սարգսյան,** Պատմահայր Հերոդոտոսը, էջ 569:

[15] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 243:

հայերը ազգակից են. ունեն ընդհանուր հնդեվրոպական ծագում, և նրանց լեզուներում նույն կամ նույնարմատ բառերի առկայությունը, առավել ևս զինվորների միանման հագուստը պետք է օրինաչափ համարել: Առավել ևս 1980-ական թթ. հնդեվրոպական նախահայրենիքի տեղի հարցը որոշակիացավ: Այն Ք.ա. V-IV հազարամյակներում գտնվել է Առաջավոր Ասիայի հյուսիսում՝ Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, Հյուսիսային Միջագետքում և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում: Հերքվեց հայերի եկվորության հարցը: Հայ ժողովուրդը կազմավորվել է իր պատմական հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում[16]:

§ 1.1.4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՀԵՐՈԴՈՏՈՍԻ

Անտիկ Հայաստանի տնտեսական կյանքում երկրագործությունն առանցքային նշանակություն է ունեցել, հատկապես գինեգործությունը, քանի որ բարձրորակ գինու տեսականին միջազգային շուկայում կայուն պահանջարկ ուներ: Այս տեսանկյունից անչափ ուշագրավ է Հայաստանից առաքվող փյունիկյան գինու առևտրի կապակցությամբ Հերոդոտոսի հիշատակությունը: Նա գրում է, որ Հայաստանից Եփրատ գետով փյունիկյան գինի էին տանում՝ Բաբելոն վաճառքի: Ըստ հետազոտությունների՝ «փյունիկյան» գինին աչքի էր ընկնում առանձնահատուկ բուրավետությամբ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն պատրաստվել է «մուսկատ» տեսակի խաղողից, քանի որ վերջինս ամենից բուրավետն է, նրա տեսակները մշակվել են խաղողագործության համար բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող Հայաստանում: «Մուսկատ» գինիներ, հավանաբար, Հայկական լեռնաշխարհում արտադրվել են դեռևս ուրարտական

---

[16] Տե՛ս **Т. Гамкрелидзе**. **В. Иванов,** Индоевропейский язык и индо-европейцы, т. II, Тбилиси, 1984, **Ա. Պետրոսյան**, Հայոց ազգածագման հարցեր, Ե., 2006, **А. Петросян,** Этногенез, Армяне. Серия “Народы и культуры”, М., 2012, с. 42-49 և այլն:

ժամանակաշրջանում[17]:

Հերոդոտոսի ամենածավալուն հաղորդումը Հայաստանի մասին վերաբերում է հենց բաբելացի առևտրականների՝ մեր երկրով անցնող ճանապարհորդություններին (Հ, գ. I, էջ 79-80), որի միջոցով էլ տեղեկանում ենք մեր հայրենիքի՝ որպես «փյունիկյան» (տիպի) գինու արտադրության հայրենիքի, հայկական գինու գնման և վաճառքի, գյուղատնտեսության, առևտրական արտաքին կապերի ու ապրանքային տնտեսության մակարդակի մասին: Պատմագիրն այդ տեղեկությունը որակում է որպես Բաբելոնում իր լսածներից ամենազարմանալին. «Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նավարկում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշվեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռիներ (մատղաշ շիվեր), (որոնցով) պատրաստում (հյուսում) են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ո՛չ նավի հետնամասն են լայնացնում, ո՛չ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք Հայաստանից մեծ մասամբ փոխադրում են գինի՝ կարմիր կարասներով»: Գ. Խ. Սարգսյանը կարծում է, որ «փյունիկյան» սափորների մասին հիշատակելիս պատմագիրը, հավանաբար, նկատի է ունեցել «փյունիկյան» ձև ունեցող անոթները կամ կարմիր սափորները, որոնք արտադրվում էին Հայաստանում: Այլապես գրաստների ծանրաբեռնումը կավանոթներով իրեն չէր արդարացնի[18]: Վերոհիշյալ նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ. նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստվում էին և՛ շատ խոշոր, և՛ առավել փոքր: Դրանցից ամենախոշորները կշռում էին հինգ հազար տաղանդ տարողություն (բաբելոնական տաղանդը հավասար է 30,3 կգ - Ն. Ռ.), այսինքն՝ 151,5 տոննա: Յուրաքանչյուր նավի մեջ լինում էր մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի

---

[17] Տե՛ս **Ռ. Փալանջյան,** Գինեգործությունը և տեխնիկական բույսերի վերամշակումը Հին Հայաստանում (մ.թ.ա. VI - մ.թ. IV դարեր), պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2015, էջ 7: Հմմտ. **Ա. Арутюнян,** Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Е., 2005.

[18] Տե՛ս **Հերոդոտոս,** էջ 569-570:

քանիսը: «Նավերով Բաբելոն հասնելուց և բեռը վաճառելուց հետո նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ, քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավարկել գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում էին ոչ թե փայտից, այլ կաշվից: Երբ նրանք, գրաստները քշելով, ետ են դառնում արմենների մոտ, նույն ձևով պատրաստում են ուրիշ նավեր» (Հ, գ. I, էջ 79-80): Մեկնաբանելով Հերոդոտոսի արժեքավոր այս վկայությունը՝ ազգագրագետ Լ. Պետրոսյանը հանգել է այն եզրակացության, որ «առանց երկմտելու կարելի է պնդել, որ նախ՝ նավերը **փայտամած լաստահատակ պետք է ունենային և, տակից անպայման օդալից տկեր կապած՝** հատկապես մեծ և բեռնատարողունակ այդ սարվածքներին, իրոք, **տկալաստ նավեր են եղել**»[19]: Ըստ նույն հեղինակի ուսումնասիրության՝ տկալաստը պատրաստում էին կա՛մ միմյանց կապած-ագուցած կա՛մ փայտասեպերով գամած-ամրացված բարակ գերաններից, կամ էլ տափակ ու քառանկյուն տախտակներից կազմած տախտակամած լաստահատակի տակից մի քանի շարքով կապում, ամրացնում էին ոչխարի, այծի, եզան կամ գոմեշի օդալից, հաճախ նաև կպրամած տիկեր, որոնք լաստը հուսալիորեն պահում էին ջրի մակերեսին[20]: Դիպուկ է ասել Լեոն. «Եփրատյան սրընթաց և ըմբոստ ալիքները նվաճելու համար ժողովրդական հանճարը հնարել է նավաշինարարության և նավագնացության մի ինքնատիպ եղանակ, որ գրավել էր Հերոդոտոսի ուշադրությունը և մանրամասն նկարագրության առարկա դարձրել»[21]:

Գետով նավարկելու փաստը վկայում է երթևեկության բնագավառում համապատասխան գիտելիքներ ունենալու մասին: Ընդ որում՝ երթևեկությունը կատարվել է ոչ միայն գետի հոսանքով, այլև ցամաքով, ավանակների քարավաններով: Հերոդոտոսի հաղորդումից երևում է, որ այս երթևեկությունը Բաբելոնի և Հայաստանի միջև կրել է շարունակական բնույթ: Այս առթիվ ակադ. Գ. Սարգսյանը

---

[19] Տե՛ս **Լ. Պետրոսյան,** Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները: Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), գիրք 22, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2007, էջ 249:

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 247:

[21] Տե՛ս **Լեո,** Երկերի ժողովածու, Առաջին հատոր, «Հայաստան» հրատ., Ե., 1966, էջ 277:

նշում է, որ «Բաբելոնի և Հայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել: Պատմագիրը հիշատակում է միայն բաբելոնցի առևտրականների, բայց դրանով ամենևին չի բացառվում նաև հայ առևտրականների կողմից այդ ուղիները նույնպես օգտագործելու հանգամանքը»[22]:

Հերոդոտոսը որպես առևտրի հիմնական առարկա է հիշատակում գինին, սակայն վաճառքի են հանվել նաև նավի կմախքն ու ամբողջ ծղոտը: Այն, որ, իրոք, Հայաստանը եղել է գինու արտադրության հայրենիքներից մեկը, այդ մասին խոսվում է նաև Հերոդոտոսից կես դար անց Հայաստանով ճանապարհորդած Քսենոփոնի «Անաբասիսում», որտեղ ընդգծվում են հայկական գինիների մի քանի տեսակների գոյությունը և բարձր որակը (տե՛ս ստորև):

Հերոդոտոսը եղել է Բաբելոնում, նրա պատմածը կասկածի ենթակա չէ: Այս հաղորդումից կարելի է պնդել, որ Բաբելոնի և Հայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել: Պատմագիրը հիշատակում է միայն բաբելոնցի առևտրականներին, բայց դրանով ամենևին չի բացառվում հայ առևտրականների կողմից այդ (նաև ցամաքային) ուղիներն օգտագործելու հանգամանքը: Նավերի կառուցման համար կիրառվող նյութը (և՛ ուռենու ճյուղերը, և՛ մորթիները, և՛ հարդը), ինչպես նաև ավանակները ամբողջությամբ հայթայթվել են Հայաստանում: Փաստորեն՝ նավերի կաշեպատ լինելը խոսում է Հայաստանում կաշեգործության գոյության մասին: Հերոդոտոսը հայերին հիշատակում է որպես «անասուններով հարուստ ժողովրդի»: Հերոդոտոսը հավաստում է, որ Հայաստանի հարավարևմտյան կողմերը՝ «Թոգարմա տունը» (Թորգոմա տուն), և որ նրա հարստության գլխավոր աղբյուրը կազմում էր անասնապահությունը. «հայերը առատ (անասունների) հոտեր ունեն» (Հերոդոտոս V, 49), հանգամանք, որ նույնպես հաստատված է այլ գրավոր աղբյուրներով և հնագիտական նյութերով: Հայաստան երկիրը ակտիվ մասնակցություն է ունեցել Փյունիկեի համաշխարհային վաճառանոցում, նաև իր ընտիր ձիերի և մանավանդ ջորիների վաճառքով (Հերոդոտս, I, 194): Դա հաստատվում է նաև Հերոդոտոսին հաջորդած Քսենոփոնի, Ստրաբոնի և նրանցից շատ առաջ՝ ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրությունների՝ Հայաստանում

[22] Տե՛ս **Գ. Սարգսյան,** Պատմահայր Հերոդոտոսը, **Հերոդոտոս,** էջ 569:

ձիաբուծության և տեղական ձիերի բարձր համարման, ավանակաբուծության մասին վկայություններով*: Գյուղատնտեսության և կենդանիների բուծման մասին վկայություններն այստեղ հայտնվում են Միջագետքի հայտնի հնագույն բնակատեղիների ժամանակներից շատ չանցած: Հայերը տիրել են արոտավայրերով հարուստ տարածքների: Ինչ վերաբերում է հայ-արմենների անասնապահական հմտություններին, ինչպես Դարեհ Ա-ի նախորդների ժամանակ, 519 թվականից հետո ևս, հայերը Պարսկաստանին տալիս էին հետևակ ու ձիավոր զորք[23]: Անտարակույս, Հայաստանից արտահանվում էին նաև ձի և այլ տեսակի անասուններ:

Ինչ վերաբերում է բաբելացի առևտրականների օգտագործած մորթուն, ապա Հերոդոտոսը «Պատմության» V գրքում ուղղակի ասում է. «Արմենները առատ հոտեր ունեն» (Հ, գ. V, էջ 305):

Հերոդոտոսի՝ գինու մասին նշած հաղորդման հիման վրա Գ. Սարգսյանն արդարացիորեն կատարում է հետևյալ հարցադրումը. եթե Հայաստանից Բաբելոն գինի էր արտահանվում, ապա ի՞նչ ապրանքներ էին ներմուծվում Բաբելոնից Հայաստան: Չէ՞ որ առևտրականները չէին կարող դատարկաձեռն երթևեկել: Բաբելոնը, իհարկե, շատ ապրանքներ էր արտադրում՝ արմավ, արմավենու յուղ, հացահատիկ, գործվածքեղեն: Սրանց մասին Հերոդոտոսը լռում է: Այս հարցում համաձայնելով պատմաբանի ենթադրությանը՝ նշենք, որ, հավանաբար, կաշվեղենից բացի, գրաստները բեռնված են եղել նաև այլ ապրանքներով: Գագիկ Սարգսյանի կարծիքով, մորթիներից բացի, ավանակների քարավանները պետք է որ Բաբելոնում բեռնվեին հետդարձի համար պիտանի նաև այլ ապրանքներով, ամենայն հավանականությամբ՝ արծաթով՝ հաշվի առնելով գրաստների՝ մորթիներով ծանրաբեռնված լինելը:

Մի կարևոր հանգամանք ևս, որ Հայաստանով՝ նրա հարավային սահմանով, իրոք, անցել է առևտրական բանուկ ճանապարհ, վերստին հաստատում է Հերոդոտոսը՝ Փոքր Ասիայից Պարսկաստան տանող հռչակավոր «Թագավորական ճանապարհը» նկարագրելիս (Հերոդոտոս, V, 52): Այդ ճանապարհն ունեցել է վարչական, ռազմական ու առևտրական կարևոր նշանակություն: Այն հիմնակա-

---

* Ձիաբուծության մասին ավելի մանրամասն տե՛ս **Հ. Հակոբյան,** Հայոց պատերազմները և ռազմարվեստը Տիգրան Մեծի օրոք, Երևան, 2013, էջ 66-71:

[23] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 62:

նում սալահատակ էր: Այդ ճանապարհի մի խոշոր՝ 340 կմ հատվածը, ինչպես տեսանք վերը, անցնում էր Հայաստանի հարավ-արևելքով: Այդտեղ կառուցված էր 15 օթևան-կայան: Այն ձգվում էր արևմուտքից արևելք՝ Եփրատի արևմտյան կեռմանի գետանցից սկսած՝ շարունակվելով Տիգրիսի վերին հոսանքի երկայնությամբ: Ճանապարհի ուղղությունը, Հ. Մանանդյանի ենթադրությամբ, եղել է Մալաթիայից՝ Խարբերդի դաշտի միջով դեպի Ամիդ-Դիարբեքիր, այստեղից՝ այժմյան Ջեզիրե: Արքայական ճանապարհի ամբողջ երկարությամբ, մոտավորապես յուրաքանչյուր 25 կմ-ի վրա տեղավորված էին սպասարկման շենքերով և անձնակազմով օթևան-կայանները՝ կառուցված ճանապարհորդների հանգստյան և ճանապարհի անվտանգության համար: Հերոդոտոսի վկայությամբ՝ Հայաստանի միջով անցնող հատվածն իր բարեկարգության ու անվտանգության շնորհիվ մեծ նշանակություն ուներ ոչ միայն փոստային և վարչական կապերի, այլև նախևառաջ ապրանքափոխանակության ու առևտրի զարգացման համար: Այս տեսանկյունից Արքայական ճանապարհի ազդեցությունը Հայաստանի հարավարևմտյան շրջանների՝ Ծոփք և Աղձնիք նահանգների տնտեսական զարգացման վրա զգալի է եղել: Բնականաբար, այն մեծ դեր է խաղացել Հայաստանի տնտեսական կյանքում[24]:

Երրորդ գրքում Հերոդոտոսը հաղորդում է պարսկական տերության 20 սատրապություններից արքային արծաթի տաղանդներով տրվող հարկի քանակի մասին: Նա գրում է. «Պակտյուիկեից (ուսումնասիրողները նույնացնում են Կորդուքի հետ), արմենևերից և հարևաններից մինչև Եվքսինյանը (այսինքն Սև ծովը) ստացվում էր 400 տաղանդ (մոտ 12 տոննա արծաթ). սա 13-րդ նահանգն էր» (Հ, գ. III, էջ 197): Տարեկան շուրջ 12 տոննա արծաթը հսկայական գումար էր, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ ծանրությունն ընկնում էր ոչ միայն հայերի, այլև հարևան որոշ երկրների վրա, որովհետև սրանց մեջ թվով, տարածքով և կարողությամբ գերակշռում էին հայերը: Պետք է հաշվի առնել, որ հայերի մի այլ՝ արևելյան հատվածը, երկու ուրիշ ժողովուրդների հետ կազմելով տերության XVIII սատրապությունը, արքային վճարում էր ևս 200 տաղանդ (6 տոննա ար-

[24] Տե՛ս **Я. А. Манандян,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. - XV в. н.¬ э.), Е., 1954, с. 16-18:

ծաթ): Դրա համար պետք է առկա լինեին միջոցներ, որոնց աղբյուրներից մեկն էլ, ըստ Գ. Սարգսյանի, Բաբելոնի հետ Հայաստանի միջազգային առևտուրն էր[25]:

Հերոդոտոսի՝ Հայաստանի մասին տվյալներից կարելի է եզրակացնել, որ Հայաստանը ներկայանում է որպես հարուստ, զարգացած գյուղատնտեսության, առևտրական արտաքին կապերի ու ապրանքային տնտեսության որոշակի մակարդակ ունեցող երկիր:

Նյութական մշակույթ: Հերոդոտոսի «Պատմությունում» հակիրճ ակնարկ կա նաև հայերին վերագրվող հագուստի, սպառազինության մասին, ինչպես՝ «արմենները, լինելով փռյուգիացիների գաղութաբնակներ, զինված էին նրանց նման», իսկ «փռյուգիացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք, քիչ տարբեր դրանից: … Հերոդոտոսը նկարագրում է պափլագոնացիների հանդերձանքը. «Պափլագոնացիներն արշավում էին գլուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը» (Հ, գ. VII, էջ 409)[*]:

Հերոդոտոսը մեկ այլ առիթով էլ գրում է. «Կովկասում բնակվում են բազմաթիվ և բազմապիսի ազգեր, որոնց մեծ մասը ապրում է վայրի (անտառների - Ն. Ռ.) պտուղներով: Պատմում են, որ այստեղ կան այնպիսի ծառեր, որոնց տերևները մանրացնելով, խառնում են ջրին և դրանով իրենց զգեստների վրա նկարներ գծում: Այդ նկարները չեն լվացվում, այլ մաշվում են բրդե գործվածքի հետ, ասես դրանք սկզբից ևեթ գործված լինեին միասին» (Հ, գ. I, էջ 83): Փաստորեն, ըստ հույն հեղինակի, այստեղ մի շարք ներկատու բույսերով ներկում են բրդեր և դրանցով պատրաստում նկարազարդ գործվածքներ, որոնք ո՛չ ջրից և ո՛չ ժամանակից չեն կորցնում իրենց պայծառ գույնը: Ուրարտուում դեռ Ք.ա. 714 թ. կատարած արշավանքի ժամանակ Ասորեստանի Սարգոն II արքան հափշտակում է 130 գույնզգույն կերպասներ, զգեստներ, վուշե շապիկներ և հատկապես հարյուր

---

[25] **Հերոդոտոս,** էջ 571:

[*] Հին հայերի զենքի, զրահի և հագուստի մասին տե՛ս նաև հիշյալ և ուրիշ սկզբնաղբյուրների հիման վրա արված պատկերագրական վերականգնումները, **Հ. Հակոբյան,** Հայաստանի բանակն ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք, Ե., 2013, գունավոր ներդիրներ Ա և Բ:

հազար երկու հարյուր քսանհինգ ոչխար[26]: Ուսումնասիրելով Կարմիր բլուրից հայտնաբերված նյութերը՝ կենդանաբան Ս. Կ. Դալը հանգել է այն եզրակացության, որ Ք.ա. VII-VI դդ. Արարատյան դաշտում բուծում էին նրբագեղմ, երկարաբուրդ ոչխարներ[27]:

Հերոդոտոսը որոշ ակնարկներ ունի նաև ժողովրդական բժշկության վերաբերյալ: Ըստ նրա՝ Արաքս գետում աճում էր Արաքսա անունով մի բույս, որ օժտված էր զարմանալի հատկություններով. երբ աղջիկներն այն գտնում էին, դրանից արյունահոսություն էր առաջանում, իսկ բույսը խամրում էր: Հերոդոտոսի վկայությամբ՝ Արաքսի ափերին աճում էին այնպիսի ծառեր, որոնց պտուղներն ունեին թմրանյութի հատկություն. տեղացիներն իրենց խնջույքների ժամանակ այդ պտուղները նետում էին կրակը, ապա սրանց բուրմունքը շնչելով՝ հարբում էին ինչպես գինուց ու սկսում էին պարել և երգել[28]:

§ 1.1.5. ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՐԵՎԱՆ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ազգագրական առումով անչափ ուշագրավ է Հերոդոտոսի նկարագրությունը որոշ ժողովուրդների սովորույթների մասին: Այսպես, օրինակ՝ խոսում է հույների շրջանում առևանգմամբ ամուսնության գոյության (Հ, գ.Ա, 5, 6), Դելփյան պատգամախոսարանի կարեկցանքը շահելու համար երեք հազար ընտիր անասուն զոհաբերելու (Հ, գ. Ա, 50, 22), պարսիկների կողմից աստվածներին զոհեր մատուցելու (Հ, գ. Ա, 132, 57), բազմակնության պարսկական սովորույթների մասին: Ըստ պատմիչի հաղորդման՝ «պարսիկի դիակը չէին թաղում, մինչև շները կամ հավերը այն չեն քրքրել: Ես հաստատ գիտեմ, որ մոգերն այդպես են վարվում, քանզի նրանք բացահայտ են այդ

---

[26] Տե՛ս **И. М. Дьяконов,** Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, № 2, с. 287, 292, 296, 318: Տե՛ս նաև **Գ. Ղափանցյան,** Ուրարտուի պատմությունը, Ե., 1940, էջ 206-207:

[27] Տե՛ս **С. К. Даль**, Результаты изучения млекопитающих из раскопок урартского города Тейшебании, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, 1952, թիվ 1, էջ 82:

[28] Այս մասին տե՛ս **Վարդանյան Ս.**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 2000, էջ 31:

անում: Այսուհանդերձ, պարսիկները դիակը նախապես մոմով պատելուց հետո են հողին հանձնում» (Հ., Ա, 140, 60): Դիակը մոմով պատելու սովորույթը պարսիկները վերցրել են բաբելացիներից: Դիակը գազանների հոշոտմանը հանձնելու սովորույթը այդ ժամանակ գոյություն ուներ միայն հյուսիսիրանական ցեղերի ու մոգերի մոտ: Դիակները գազանների հոշոտմանը հանձնելու մոգերի սովորույթը ծագել է կասպիական ցեղերի թաղման ձևերից (Հ., ծան. 101, էջ 584):

Պատմահայրը մանրամասնորեն նկարագրում է նաև բաբելոնական հանդերձանքը. «Հագնում են նրանք մինչև ոտները հասնող վուշե խիտոն (ներքնաշապիկ), իսկ վրայից մեկ ուրիշ բրդե խիտոն, դրա վրայից էլ հագնում են սպիտակ թիկնոց. նրանց կոշիկները տեղական են, բեովտիական մաշիկների նման*: Նրանք պահում են երկար մազեր, գլուխներին կապում չալմա և ամբողջ մարմինը օծում անուշահոտ յուղով: Ամեն մեկն ունի կնիք և գավազան: Ամեն մի գավազանի վրա փորագրված է խնձոր կամ վարդ, կամ շուշան, կամ արծիվ և կամ մեկ այլ բան: Քանզի ընդունված չէ առանց նշանի գավազան ունենալը» (Հ., գ. ա, 195, 80):

Անչափ ուշագրավ և բացառիկ նկարագրություն է թողել աղջիկներին վաճառելու ամուսնական սովորույթի մասին. «Տարին մեկ անգամ յուրաքանչյուր գյուղում մի վայրում հավաքում են ամուսնական տարիքի հասած բոլոր կույսերին, նրանց շուրջը կանգնում են այրերի խմբեր, իսկ քարոզողը, ամեն մեկին առանձին կանգնեցնելով, վաճառում է, նախ ամենագեղեցիկին. իսկ երբ արդեն դրա դիմաց նա շատ ոսկի էր ստանում, կանչում էր մյուսին, որը հետևյալն էր իր գեղեցկությամբ: Նրանք վաճառվում էին ամուսնության համար: Բաբելոնացի փեսացուներից հարուստները, իրար ընդհատելով, գինն էին բարձրացնում և գնում ամենագեղանիներին: Իսկ հասարակ ժողովրդի թվից փեսացուները, որոնք չէին ընկնում գեղեցկության հետևից, առնում էին ոչ գեղեցիկներին և հավելյալ դրամ չէին ծախսում: Ամենագեղեցիկ աղջիկներին վաճառելուց հետո քարոզողը կանգնեցնում էր ամենատգեղին կամ հաշմվածին և հայտարարում, թե ո՞վ սրան կվերցնի իրեն կին նվազագույն դրամով, և վերցնում էր նա, որը ամենաքչին էր համաձայնվում: Այդ դրամը գոյանում էր գեղեցիկ կույսերից. ուստի գեղեցիկներն ամուսնացնում էին տգեղնե-

* Բեովտիան կամ Բեոթիան Հին Հունաստանի մարզերից էր, Աթենքի արևելյան հարևանը: Նրա մայրաքաղաքն էր Թեբեն:

րին և խեղանդամներին» (Հ., գ. Ա,196, 80-81):

Ըստ պատմահայր Հերոդոտոսի՝ բաբելոնացիները հանգուցյալներին թաղում էին մեղրի մեջ: Ամեն անգամ իր կնոջ հետ կենակցելուց հետո բաբելոնացին նստում էր ծխացող խնկանոթի առաջ, նույնը նրա դիմաց (նստած) անում է կինը: Այնուհետև, արշալույսին նրանք լվացվում են, քանզի առանց լվացվելու նրանք ոչ մի անոթի չեն հպվում: Այդպիսի սովորություն ունեն նաև արաբները (Հ., գ. Ա,198, 81):

Մեկ այլ ավանդույթի համաձայն՝ բաբելոնացի կինը իր կյանքում մեկ անգամ պետք է նստեր Ափրոդիտեի սրբավայրում և խառնվեր օտարերկրացի այրի հետ: Շատ կանայք, որոնք պարծենում էին իրենց հարստությամբ և անարժան էին համարում խառնվել մյուսների հետ, երկձի ծածկած սայլակներով գալիս և կանգնում էին սրբավայրի մոտ: Նրանց հետևում էին մեծ թվով սպասավորներ: Կանանց մեծ մասը վարվում էր հետևյալ կերպ: Նստում էին Ափրոդիտեի սրբավայրում՝ գլուխներին պարանից (հյուսած) պսակ դրած: Նրանց մի մասը գալիս էր, մյուսը՝ գնում: Բոլոր ուղղություններով ուղղագիծ անցումներ կային հավաքված կանանց միջև, որոնց միջով անցնելով՝ օտարերկրացիները ընտրություն էին կատարում: Եթե կինն այստեղ նստեց, ապա նա չի կարող իր տուն վերադառնալ, մինչև օտարերկրացիներից մեկը, նրա փեշի մեջ արծաթ նետելով, սրբավայրից դուրս չխառնվի նրա հետ: Արծաթը նետելիս նա պետք է ասեր. «Ես քեզ կանչում եմ հանուն Մյուլիտտա (Ափրոդիտե) աստվածուհու»: Արծաթի քանակը նշանակություն չուներ: Կինն իրավունք չուներ այն մերժելու: Խառնվելուց հետո, իր սրբազան պարտքը աստվածուհու առաջ կատարած լինելով, նա վերադառնում էր տուն, որից հետո նրան չէին կարող տիրանալ, ինչքան էլ մեծ գումար տային: Արդ, գեղեցիկ և բարեկազմ եղողները շուտով տուն էին վերադառնում, իսկ տգեղները երկար սպասում էին, այնքան մինչև ընդունված կարգը կատարվեր: Այդ տևողությունը կարող էր տարիներ տևել (Հ., գ. Ա,199, 81-82):

Հերոդոտոսը ուշագրավ վկայություններ է հաղորդում նաև մասագետների՝ արևելասկյութական ցեղերի սովորույթների մասին: Բերենք դրանցից մի քանիսը. «Սրանք սովորաբար ապրում են հում ձուկ ուտելով, օգտագործում են փոկի կաշուց պատրաստված հագուստ», «…այստեղ կան այնպիսի ծառեր, որոնց տերևները մանրացնելով՝ խառնում են ջրին և դրանով իրենց զգեստների վրա նկարներ գծում: Այդ նկարները չեն լվացվում, այլ մաշվում են բրդե գործվածքի

հետ, ասես դրանք սկզբից եթե գործված լինեին միասին: Այս մարդիկ իրար հետ բացահայտ խառնվում են, ինչպես անասունները» (Հ., գ. Ա, 202-203, 83):

«Մասագետները սկյութականի նման զգեստ են հագնում և նրանց նման կենցաղ վարում: … Նրանցից յուրաքանչյուրն ամուսնանում է մեկ կնոջ հետ, բայց կանանցից օգտվում են բոլորը՝ ընդհանուր ձևով: Արդ, եթե որևէ մասսագետ այր ցանկանա որևէ կնոջ, ապա նա, իր կապարճը կապելով նրա սայլին, անխոռով խառնվում է նրան:

Նրանց մոտ տարիքի ոչ մի սահման չկա: Բայց եթե որևէ մեկը շատ է ծերանում, ապա նրա բոլոր ազգականները հավաքվում են և մորթում ծերունուն, նրա հետ նաև ոչխարներ, և ամբողջ մսերը եփելով, խրախճում են: Սա նրանք համարում են ամենաերանելի մահը. իսկ հիվանդությունից մահացածին չեն ուտում, այլ հողով ծածկում են և սգում, որ նա չհասավ զոհվելու տարիքին:

Նրանք ոչինչ չեն ցանում, այլ սնվում են անասուններով ու ձկներով. Արաքս* գետում առատ ձուկ է լինում: Նրանք նաև կաթնախում են:

Աստվածներից միայն պաշտում են արևին, որին էլ ձիեր են զոհաբերում: Այդ զոհաբերման իմաստն այն է, որ ամենաարագընթաց աստծուն պետք է զոհաբերել արարածներից ամենաարագընթացին» (Հ., գ. Ա, 216, 87-88):

Հին Հայաստանի և հայերի, նրանց հարևանների վերաբերյալ հույն պատմահայր Հերոդոտոսի տեղեկությունները անգնահատելի են հայոց պատմության անտիկ դարաշրջանի պատմաքաղաքական, վարչական և հատկապես տնտեսամշակութային կյանքի լուսաբանման համար, քանզի դրանք եզակի են ու հիմնականում արժանահավատ:

* Խոսքը Արայյան լիճը թափվող Օքս (այժմ՝ Ամուդարիա) գետի մասին է:

§ 1.2. ՔՍԵՆՈՓՈՆԻ «ԱՆԱԲԱՍԻՍ» ԵՎ «ԿՅՈՒՐՈՊԵԴԻԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԲԱՑԱՌԻԿ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

«Ատտիկյան մեղու» բնութագրումն ստացած պատմագիր ու գրող Քսենոփոնը Թուկիդիդեսի և Հերոդոտոսի հետ մեկտեղ համարվում է հունական պատմագրության երրորդ գագաթը: Բայց նրանցից ոչ մեկը այն չափով չի ուսումնասիրել Հայաստանը և կարևոր տեղեկություններ թողել նրա ներքին կյանքի մասին, որչափ Քսենոփոն Աթենացին (ծնվել է Ք. ա. մոտ 430 թ., վախճանվել՝ 356 թ.)[29]: Քսենոփոնի թողած հարուստ պատմագրությունից մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Անաբասիսը» և «Կյուրոպեդիան» («Կյուրոսի դաստիարակությունը»): Մեծ է «Անաբասիսի»՝ որպես պատմական սկզբնաղբյուրի և գրական-գեղարվեստական ստեղծագործության արժեքը[*]: Հայ ժողովրդի պատմության և տնտեսամշակութային կյանքի մի ամբողջ դարաշրջան է լուսաբանվում: Քսենոփոնը գրել է իր լսածի ու տեսածի անմիջական տպավորությունների

---

[29] Քսենոփոնը հունական վարձկան զորախմբի կազմում մասնակցել է փոքրասիական երկրամասերի պարսկական սատրապ, պարսից արքաեղբայր Կյուրոս Կրտսերի ձեռնարկած ռազմական արշավանքին դեպի Պարսկաստան (Ք.ա. 401-400 թթ.): Կյուրոսի նպատակն էր տապալել իր եղբայր Արտաքսերքսես II Մնեմոնին (404-358) և տիրանալ գահին: Արշավանքը անհաջողությամբ է ավարտվել: Կունաքսայի ճակատամարտում Կյուրոս Կրտսերը սպանվել է:

Տասնհազարանոց վարձկան հունական զորաբանակը, որի մեջ էր նաև Քսենոփոնը, ստիպված է եղել բռնել դեպի հայրենիք նահանջի երկու ուղիներից ամենադժվարանցանելի լեռնային ուղին՝ թշնամու հետապնդումներից խույս տալու համար: Նահանջող հույները կտրել-անցել են նաև Հայոց լեռնաշխարհը՝ հարավից հյուսիս-արևմուտք, Վանա լճից հարավ ընկած կարդուխների երկրից՝ Հայաստանի տարածքով դեպի Սև ծովի ափերը: Քսենոփոնը հունական բանակի արշավանքին ուղեկցել է որպես հուշագրող պատմաբան, իսկ նահանջի ժամանակ եղել է նաև գլխավոր առաջնորդներից մեկը: Այս նահանջի նկարագրությունները Քսենոփոնը ներկայացրել է իր ստեղծագործությունների գլուխգործոց «Անաբասիս» («Նահանջ Բիւրու») աշխատությունում:

[*] Գրել է նաև «Հունական պատմություն», «Սոկրատեսյան ստեղծագործություններ» («Սոկրատեսի արդարացումը», «Հուշեր Սոկրատեսի մասին», «Խրախճանք»), «Տնային տնտեսության մասին», «Հիերոն», «Լակեդեմոնական պետական կառուցվածքը» և այլ աշխատություններ:

ներքո: «Անաբասիսի» թարգմանությունն ու ընդարձակ ծանոթագրությունները կատարել է Ս. Կրկյաշարյանը[30]: Այն բաղկացած է 7 գրքից: Նա իր մասին խոսում է երրորդ դեմքով: «Անաբասիսը» հրատարակել է կեղծանունով, քանզի քաղաքական պատճառներով նա վտարանդի էր:

Քսենոփոնի հաղորդած տեղեկություններն Հայաստանի/Արմենիայի մասին միանգամայն արժանահավատ են ու վստահելի, որովհետև ինքն անձամբ եղել է Արմենիայում և նկարագրել է Հայաստանը իբրև ականատես: Հայերի և Հայաստանի մասին Աքեմենյան Պարսկաստանի ժամանակաշրջանում դա միակ ու ամենակարևոր աղբյուրն էր, որի մեջ նկարագրված է Քսենոփոնի և տասը հազար հույն զինվորների վերադարձը Բաբելոնի մոտից Արմենիայի ու Տրապիզոնի վրայով Հունաստան:

Հաջորդը «Կյուրոպեդիա» երկն է՝ բաղկացած ութ գրքից, որի հիմնական բովանդակությունը պարսկական հզոր միապետության հիմնադիր Կյուրոս Մեծի կյանքն ու գործունեությունն է (600-530 թթ. Ք.ա.): «Կյուրոպեդիա» պատմափիլիսոփայական, բարոյախոսական-քաղաքական երկը համարվում է համաշխարհային գրականության մեջ առաջին պատմավեպը: Որոշ ուսումնասիրողներ, կասկածի տակ առնելով երկի արժանահավատությունը, ժխտում են գրքի պատմագիտական արժեքը: Իրականում «Կյուրոպեդիայի» մի շարք հատվածներ, հատկապես Հայկական լեռնաշխարհի բնակիչներին և քաղաքական դեպքերին վերաբերող, հիմնված են պատմական ստույգ տվյալների վրա, ուստի հավաստի են, մանավանդ Հայաստանի վերաբերյալ տեղեկությունները, որ հիմնված են հանրահայտ նահանջի ընթացքում ստացած անձնական տպավորությունների վրա: Բացի այդ՝ նշված երկի տվյալները Ք.ա. 6-րդ դարի կեսերի Հայաստանի մասին շատ դեպքերում համահունչ են Մովսես Խորենացու «Պատմությանը»: Այս երկու աղբյուրները փոխադարձաբար լրացնում են իրար և ուսումնասիրողին հնարավորություն են տալիս վերականգնելու Հայկական լեռնաշխարհի պատմությունը դեռևս ուրարտական ժամանակաշրջաններից: Քսենոփոնի այդ աշխատությունները հայ ժողովրդի պատմության, կյանքի բոլոր կողմերի վերաբերյալ անուրանալի աղբյուրագիտական արժեք ունեն: Դրանց հաղորդած տվյալնե-

---

[30] Տե՛ս **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմանությունը՝ Սիմոն Կրկյաշարյանի, Ե., 1970:

ը արժանի են ուշադրության, քանի որ հազվագյուտ դրական վկայություններ են արմենների մասին Ք.ա. VI դարի առաջին կեսին[31]: Ըստ Ի. Մ. Դյակոնովի՝ «Կյուրոպեդիայի»՝ Հայաստանին վերաբերող մասի հիմքում ընկած են Ք. ա. VI դարի պատմական իրական դեպքերը[32]:

«Կյուրոպեդիա» երկում բավական ծավալուն բաժին նվիրված է Հայաստանին: Երկում Ք.ա. 6-րդ դարի կեսերին հանդես են գալիս հայկական թագավորությունը, հայոց թագավորը, նրա որդիներ Տիգրանը և Սաբարիսը, զորավար Էմբասը, տեղեկություններ են տրվում հայկական զորքի՝ այրուձիի ու հետևակի քանակության, արքունի հարստությունների, արմենների երկրի սահմանների, Մարաստանի և հարևան այլ երկրների ու ժողովուրդների հետ հայերի փոխհարաբերությունների մասին և այլն:

Քսենոփոնի հաղորդումները առնչվում են հայ-արմենների նստակյաց և երկրագործ լինելու փաստերին: Պատմիչը խոսում է Հայաստանի երկրագործական մշակույթի, անասնապահության, որսորդության, տնայնագործության ու արհեստների, հայերի բնակավայրերի, շենքերի, զգեստների, ուտեստի, խմիչքների, հյուրընկալման, զենքերի, ռազմական սովորությունների, կրոնական հավատալիքների, ընտանիքի, հասարակական հարաբերությունների և այլ հարցերի մասին:

§ 1.2.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՍԵՆՈՓՈՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Հայաստանի՝ որպես տարածաշրջանի հնագույն պետություններից մեկի տարածքային տեղադրության խնդիրը հազարամյակներ շարունակ եղել է դիտարկումների, հաղորդումների նյութ: Պատմական Հայաստանի վերաբերյալ բավականաչափ տեղեկություններ են թողել հայ միջնադարյան պատմիչները: Սակայն չափազանց

---

[31] Տե՛ս **Քսենոփոն,** Կյուրոպեդիա, թարգմանությունը՝ հուն. բնագրից, ծանոթ.՝ Ս. Կրկյաշարյանի, Ե., 2000:

[32] Տե՛ս **И. М. Дьяконов,** История Мидии, М.-Л., 1956, էջ 350-351:

կարևոր սկզբնաղբյուրներ են օտար հեղինակների, մասնավորապես երկուսուկես հազարամյակ առաջ հունահռոմեական պատմագիրների հաղորդած տեղեկություններն ու վկայությունները: Հատկապես ուշադրության են արժանի Հերոդոտոսի կողքին նաև Քսենոփոնի, Ստրաբոնի և Տակիտոսի տվյալները: Տողերիս հեղինակը առանձին հոդվածներով անդրադարձել է Քսենոփոնի[33]՝ Հայաստանի և հայերի վերաբերյալ ուշագրավ հաղորդումներին:

Սույն աշխատության մեջ ներկայացվում են Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատություններում Հայաստանի վարչական տարածքի, զինված ուժերի, էթնիկ կազմի, հայ հին հասարակության կառուցվածքի և այլ հարցերի վերաբերյալ անդրադարձները:

Հին Հայաստանի տարածքը

Հայաստանի ու երկրի բնակչության վերաբերյալ հույն պատմագիր Քսենոփոնի տեղեկությունների արժանահավատ լինելը կասկած չի հարուցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իբրև հունական զորքի զորապետ՝ նա անմիջականորեն առնչվել է նկարագրվող դեպքերին, անձամբ եղել է Հայաստանում, շփվել հայ բնակչության հետ, ուստի և նրա հաղորդումները բացառիկ են:

Քսենոփոնի վկայությունները վերաբերում են մեր հայրենիքի հարավային և հյուսիսային կողմերին. Ք.ա. V դարի վերջում Հայաստանի հարավային սահմանը, ավելի ստույգ, այդ սահմանի արևելյան հատվածը Կենտրիտես գետն էր (միջնադարյան աղբյուրներում՝ Ջերմ), Արևելյան Տիգրիսը (Բոհտան-սու), որը Հայաստանը բաժանում էր կարդուխների երկրից (Կորդուք): Հարավային սահմանի մյուս՝ արևմտյան հատվածը Արևմտյան Տիգրիսն էր կամ Մասիոսը՝

---

[33] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները (Հայ ազգագրության անտիկ դարաշրջանի բացառիկ սկզբնաղբյուրներ): «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Ե., ԵՊՀ հրատ., 2015, էջ 363-383; նույնի՝ Հայաստանի պատմաաշխարհագրական, քաղաքական և ժողովրդագրական կառուցվածքը ըստ Քսենոփոնի երկերի: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գիտական տեղեկագիր», № 3-4 (28-29), Ե., 2016, էջ 108-117:

Տուր-Աբդին լեռնաշղթան[34]:

Հույները «գերի վերցվածներից լսել էին, որ եթե անցնեն Կարդուխյան լեռները, ապա կհասնեն Արմենիա, որտեղ և, եթե ցանկանան, կարող են անցնել Տիգրիս գետի ակունքները, իսկ եթե չցանկանան, կարող են գետը շրջանցել» [«Անաբասիս», IV, 3, էջ 82]:

Հայաստանի արևելյան և արևմտյան սահմանների մասին Քսենոփոնը լռում է, սակայն այս բացը որոշակիորեն լրացվում է Հերոդոտոսի կողմից հայկական սատրապությունների մասին հիշատակելու ժամանակ: Քսենոփոնի վկայություններով պարզվում է, որ Հերոդոտոսից մինչև իր ապրած ժամանակահատվածը (շուրջ 50 տարի) Հայաստանի վարչական բաժանումը ենթարկվել է որոշակի փոփոխությունների. երկու սատրապությունները միավորվել են մեկ՝ Արմենիա պետության մեջ: Ինչպես Հերոդոտոսը, Քսենոփոնը ևս Հայաստանը ներկայացնում է որպես ընդարձակ մի երկիր: Ա. Գարագաշյանի, Հ. Գելցերի և մյուսների աշխատանքներում նշվում է, որ Հայաստանն ունեցել է երկու սատրապ[35]: Սակայն Հ. Մանանդյանի, Ս. Կրկյաշարյանի և մյուսների համոզմամբ՝ սատրապը[36] մեկն է եղել[37]: Համոզմունքը հիմնավորվում է Քսենոփոնի հետևյալ հաղորդմամբ. «Կարդուխների երկիրն անցնելուց հետո ասում էին, որ (հույները) կգան Արմենիա, որը մեծ է ու հարուստ և գտնվում է Օրոնտա-

---

[34] Տե՛ս **Գ. Տիրացյան,** «Անաբասիսը» և Հայաստանը: Քսենոփոն, Անաբասիս, էջ 226-227, 236-237:

[35] Տե՛ս **Մ.Մ. Գարագաշյան,** Քննական պատմութիւն Հայոց, II, Թիֆլիս, 1895, էջ 67, **Հ. Գելցեր,** Համառոտ պատմութիւն Հայոց, թարգմ.՝ Հ. Գր. ծ. Գալեմքարյանի, Վիեննա, 1897, էջ 7, **Г. Халатянц,** Очерк истории Армении, М., 1910, էջ 92:

[36] Սատրապ նշանակում է «տեղապահ», «աշխարհապահ»: Աքեմենյան տերության վարչական բաժանումները կոչվում էին սատրապություններ: Սատրապությունների կառավարիչ սատրապը իր տիրույթում մի տեսակ փոքր արքա էր: Արքայից արքայի ձեռնարկած ռազմական արշավանքների ժամանակ սատրապը գլխավորում էր սատրապությունից հավաքագրած զորքերը: Պարտավոր էր նաև վարելու դատական գործերը, իրավունք ուներ սատրապության ներքին շրջանառության կարիքների համար արծաթ և պղինձ մանրադրամ հատելու, մինչդեռ ամբողջ տերության մեջ ոսկի դրամ հատելու իրավունքը արքան վերապահում էր բացառապես իրեն (տե՛ս **Քսենոփոն,** «Կյուրոպեդիա», գ. VII, ծանոթ. 20, էջ 387):

[37] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, Ե., 1944, էջ 70:

սի իշխանության տակ» [«Անաբասիս», III, 5, էջ 17]: Կարծիքների բազմազանությունը Տիրիբազի մասին Քսենոփոնի վկայության արդյունք է, որն անվանվում է Արևմտյան Հայաստանի «հյուպարքոս» [«Անաբասիս», IV, 4, էջ 4], այսինքն՝ փոխկառավարիչ (հավանաբար եղել է Օրոնտաս սատրապի օգնականը):

§ 1.2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ՝ ԸՍՏ ՔՍԵՆՈՓՈՆԻ

Հայաստանով անցած Քսենոփոնի գրառումները, տպավորություններն ու տեղեկությունները, «Անաբասիսից» բացի, տեղ են գտել Կյուրոս Մեծի՝ Աքեմենյան տերության հիմնադրի վարքում՝ «Կյուրոպեդիայում»: Այստեղ հանդես է գալիս Ք. ա. VI դարի կեսերի հայկական թագավորությունը, տեղեկություններ է տրվում հին հայերի ռազմիկ ժողովուրդ լինելու, ազատության և անկախության ձգտումների, հայկական զորքի՝ այրուձիու և հետևակի թվաքանակի մասին, արքունի հարստությունների, Մարաստանի և հարևան այլ երկրների ու ժողովուրդների հետ հայերի փոխհարաբերությունների մասին և այլն: Ինչպես «Անաբասիս»-ում, այնպես էլ «Կյուրոպեդիա»-ում Հայաստանին և հայերին վերաբերող վկայությունները ոչ միայն արժանահավատ են, այլև շատ հաճախ՝ եզակի: Հետաքրքիր է հայ զինվորների սպառազինության և ճարպկության նկարագրությունը. «Նրանք այնքան ճարպիկ էին, որ անգամ մոտիկ լինելիս կարողանում էին փախչելով ազատվել, քանզի նրանք ուրիշ ոչինչ չէին կրում, բացի աղեղներից ու պարսատիկներից: Նրանք գերազանց նետաձիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր: Նետարձակման ժամանակ նրանք լարը ձգում էին՝ ձախ ոտքը դնելով աղեղի ցածի ծայրի վրա: Նրանց արձակած նետերը ծակում էին վահաններն ու լանջապանակները: Հելլենները, երբ այդպիսի նետեր էին ձեռք բերում, ապա կաշվե փոկեր հարմարեցնելով դրանց՝ օգտագործում էին տեգի փոխարեն» («Անաբասիս», IV. 28, էջ 88): Հին Հայաստանում Քսենոփոնը [«Կյուրոպեդիա», I, II, էջ 9] հիշատակում է զենքի տարբեր տեսակներ՝ նետ-աղեղ, նիզակ, պարսատիկ, դաշույն, սուր, սվին, կապարճ, սակր, վաղր, մուրճ, ճկիռ, հյուսկեն վահան,

պարան, օղապարան և այլն։ Զեռնամարտի զենքերից էին. կուրծքը ծածկող զրահը (լանջապան), ձախ ձեռքին՝ հսկայական վահանը, իսկ աջ ձեռքում՝ թուրը (ակինակ) կամ վաղրը (դաշույն)։ Հեծյալները կրում էին թաղիքե հատուկ թիկնոց, որն ամբողջապես ծածկում էր ձիավորին [«Կյուրոպեդիա», I, II, էջ 11, II, I, էջ 62]։ Զենքը, իր բուն նշանակությունից բացի, հնագույն դարերից մինչև ուշ միջնադար Հայաստանում եղել է տղամարդկանց տարազի յուրօրինակ մասը՝ իբրև լրացուցիչ զարդ (դաշույնը կաշվե և մետաղազարդ գոտիով, գոտուց կախված դանակն իր պատյանով, հովվական մականը այծենակաճի ձախ կրծքի տակ ամրանների մեջ և այլն)[38]։ Երվանդունիների օրոք կարելի է խոսել մի կողմից ցեղային աշխարհազորերի և գուգազորերի, մյուս կողմից՝ Երվանդունի սատրապական արհեստավարժ բանակների գոյության մասին։ Հնագիտական տվյալները և հին հունական պատմական երկերը թույլ են տալիս վերականգնել այս զորքերում ընդգրկված զորատեսակների մասին։ Հայկական թեթև հետևակայինները հագնում էին այծի մազից գործած կամ վուշից կարած թեթև վերնաշապիկ, երբեմն ծոպավոր փեշերով եզերված։ Մարմնի կենսական մասերը պաշտպանված էին շապիկին ամրացված վահանակներով, լանջապանակներով։ Գլուխը պաշտպանված էր գործված գլխարկով կամ մետաղի դրսույթով թեթև սաղավարտով։ Ոտքերին երկարաճիտ կաշվե կոշիկներ էին հագած։ Մի ձեռքին հյուսկեն կլոր վահան էր բռնած։ Հիմնական զենքը մեկ և կես մետրանոց լայնալիճ աղեղն էր։ Հայկական ծանր հետևակայինը մեծ, գործած վահանի հետևում պաշտպանված էր նաև մինչև փորն իջնող զրահաշապիկով, որի վրա ամրացվում էին բրոնզե խոշոր սկավառակներ։ Ոտքերին ամրացված էին սռնապաններ։ Գլխին թաղիքից գլխարկ կար։ 2.5 մ երկար նիզակից բացի՝ զինվորն ուներ նաև նետվող կարճ տեգեր թուր, գուրզ, դաշույն կամ սակր։

Մյուս հայկական զորատեսակները թեթև և ծանր հեծելազորն էին։ Թեթև հեծելազորայինները կամ նետաձիգներ, կամ տեգակիրներ էին։ Ծանր հեծելազորայինների մարմինը պաշտպանված էր մետաղական զրահաշապիկով։ Առանձին թեփուկավոր զրահաշապիկով էր պաշտպանված նաև ձին։ Հեծյալի հարձակողական զեն-

[38] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013, էջ 18-20։

քերն էին երկար տեգերը և թուրը, որը մարտիկը կրում էր գոտկատեղին: Այդ նկարագրություններում ցույց են տրված հայկական զորամասերի տեսակներն ըստ զենքերի, մենամարտեր վարելու ձևերը, պաշտպանության եղանակները[39]:

Ըստ Քսենոփոնի վկայությունների՝ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել, որի համար էլ պարբերաբար ապստամբել են: Հայերի այս ձգտումների մասին հանգամանալի նկարագրված է Դարեհ Ա-ի (522-486թ.) թողած արձանագրության մեջ[40], ինչպես նաև «Կյուրոպեդիա» երկում՝ Կյուրոսի և արմենների թագավորի երկխոսության մեջ:

«–Ասա ինձ, – հարցնում է Կյուրոսը, – երբևէ դու կռվե՞լ ես իմ մոր հոր՝ Աստյուագեսի և մյուս մեդացիների դեմ:

–Այո՛,- պատասխանեց:

–Պարտվելով նրանից՝ համաձայնե՞լ ես տուրք վճարել, նրա հետ պատերազմի գնալ, ուր որ նա հրամայի, և բերդեր չունենալ:

–Այդպես է:

–Հապա ինչո՞ւ այժմ տուրք չես վճարում, զորք չես ուղարկում և սկսել ես ամրություններ կառուցել:

–Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ, և որդիներիս ազատություն թողնեմ» [«Կյուրոպեդիա», III, I, 10, էջ 96-97]:

«Կյուրոպեդիա»-ում պահպանված տեղեկություններից իմանում ենք, որ մեդական թագավոր Աստիագեսի օրոք (584-533) Հայաստանը Մեդիայից կախյալ երկիր էր: Հայոց թագավորի անունը այդտեղ չի հիշատակվում, բայց շատ է խոսվում նրա որդի Տիգրանի մասին, որը Աստիագեսի պալատում աքեմենյան Կյուրոսի հասա-

---

[39] Դրանց պատկերագրական վերարտադրությունը և մանրամասների ընդարձակ մեկնաբանությունը տե՛ս **Հ. Հակոբյան,** Հայաստանի բանակները ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք, Ե., 2013, մենագրության մեջ. գունավոր ներդիրներ Ա և Բ, մեկնաբանություններ, էջ 70-71:

[40] Արձանագրությունը փորագրվել է Բեհիստուն բարձրադիր ժայռի վրա՝ ներկայիս Քերմանշահ քաղաքից ոչ հեռու: Գրված է երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլամերեն և աքքադերեն: Արձանագրությունը բաղկացած է հսկայական 9 սյունից, որոնցից 5-ը գրված է հին պարսկերենով (76 պարագրաֆ, 414 տող), երեքը՝ էլամերեն և մեկը՝ բաբելերեն (տե՛ս «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», թարգմանությունը՝ բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մ. Նալբանդյանի, Ե., 1964):

կակիցն ու զինակիցն էր: Թշնամիների դեմ Մեդիայի մղած պատերազմների ժամանակ հայոց թագավորը պարտավոր էր մեդական թագավորին տրամադրել իր զինվորական ուժի կեսը, այսինքն՝ 20 հազար հետևազոր և 4 հազար հեծելազոր: Հայոց թագավորը՝ իբրև մեդական թագավորի կրտսեր դաշնակից, նրան վճարում էր 50 տաղանդ հարկ: Տեղեկանում ենք նաև, որ հայոց թագավորը պատերազմել է Աստիագեսի դեմ, սակայն պարտություն կրելով՝ պարտավորվել է հարկ վճարել, առաջին իսկ պահանջով տրամադրել զորքը և չկառուցել ամրություններ («Կյուրոպեդիա», III, I, 32-33, էջ 104):

Հայ-արմենների ազատատենչության ձգտումների վերաբերյալ ուշագրավ հավաստումների ենք հանդիպում դարձյալ «Կյուրոպեդիա»-ում Կյուրոսի և մեդիացիների արքա Կյուաքսարեսի (Կիաքսար) երկխոսության մեջ: Երբ հնդիկները դուրս գնացին, Կյուրոսը ասաց Կյուաքսարեսին. «–Հիշում եմ՝ քիչ առաջ քեզանից լսեցի, թե արմենների թագավորը քեզ այժմ արհամարհում է՝ լսած լինելով, որ թշնամիները գալիս են քեզ վրա, և նա ո՛չ զորք է ուղարկում, ո՛չ տուրք է վճարում, որը պարտավորվել էր տալ»: «–Իրոք, նա այդպես է վարվում, ով Կյուրոս, – ասաց Կյուաքսարեսը, – ուստի ես ևս տատանվում եմ և չգիտեմ՝ որն է լավ՝ արշավել նրա դեմ և փորձել հարկադրել նրան, թե առայժմ թողնել նրան, որպեսզի մյուս թշնամիների վրա չավելացնենք նաև այս մեկին»: Կյուրոսը դարձյալ հարցրեց. «–Իսկ նրա բնակավայրերը արդյո՞ք ամո՞ւր վայրերում են, թե՞ գուցե նաև մատչելի վայրերում»: Կյուաքսարեսը պատասխանեց. «Բնակավայրերը շատ ամուր վայրերում չեն. ես դա չեմ մոռացել, սակայն կան լեռներ, որտեղ կարող է իսկույն ապաստանել և թաքցնել իր հետ տարած հարստությունը և իրեն ապահով զգալ, եթե որևէ մեկը մոտերքում նստած չպաշարի նրան, ինչպես արել էր իմ հայրը»: Եվ Կյուրոսն ու Կյուաքսարեսը որոշում են քողարկված համատեղ հարձակվել Հայաստանի վրա հայոց արքայի ուժերը ծուղակի մեջ գցելու և արքային գերեվարելու համար [մանրամասն տե՛ս «Կյուրոպեդիա», II, IV, 9-25, էջ 88-92]:

Այսպես, ըստ Քսենոփոնի՝ հայերի զինված ուժերը բաղկացած էին հեծելազորից և հետևակից. հեծելազորը հասնում էր 8000-ի, իսկ հետևակը՝ 40.000-ի:

Հայոց արքայորդի Տիգրանն ասաց. «Արմենների հեծելազորը մոտ 8 հազար է, հետևակը՝ մոտ չորս բյուր, իսկ իմ (հայոց արքայի –

Ռ. Ն.) հարստությունը այն գանձերի հետ, որ թողել է հայրս, արծաթով հաշված, ավելի քան երեք հազար տաղանդ» է[41] [«Կյուրոպեդիա» III, I, էջ 104]:

Նույն արքայորդի Տիգրանը միայն Կյուրոսին ներկայանում է չորս հազար ձիավորով, շուրջ մեկ բյուր [10 հազար] աղեղնավորներով և այդքան էլ պելտաստներ [«Կյուրոպեդիա», III, II, էջ 108], այսինքն՝ հայոց երկրի զինված ուժերի գրեթե կեսը: Զորքի մյուս կեսը՝ չորս հազար ձիավոր և քսան հազար հետևակ, նա թողնում է երկրում, որովհետև արմենները շարունակ պատերազմ էին մղում հարևան խալդերի դեմ, որոնք Քսենոփոնի երկում անվանված են խալդայներ: Այն ժամանակ զորքը բաժանված էր դասակների, վաշտերի, հազարյակների և տասը հազարյակների. «Կյուրոսը իր մոտ հրավիրեց բյուրապետերին, հազարապետերին, վաշտապետերին, դասակապետերին» [«Կյուրոպեդիա», III, III, էջ 119]: Տեղեկություններ, որոնք լիովին համընկնում են Մովսես Խորենացու հաղորդած տվյալներին: Ըստ «Կյուրոպեդիայի»՝ Մարաստանից կախյալ վիճակում գտնվող Հայաստանը ձգտում էր անկախության: Այդ ձգտումը ճնշում է Կյուրոսը, ապագա Աքեմենյան տերության հիմնադիրը, որը առժամանակ մարաց թագավորի զորավարն էր: Իսկ հայոց արքայազն Տիգրանը, ինչպես արդեն նշվել է, Կյուրոսի որսակիցն ու մտերիմ ընկերն էր («Կյուրոպեդիա» III, I, էջ 104-115): Մովսես Խորենացու շարադրած Տիգրանի և Աժդահակի վիպասքի հիմքում հարևան ազգերի թագավորներին՝ հայոց Տիգրանի, մարաց Աժդահակի (Աստիագեսի) և Կյուրոսի հարաբերություններն են[42]: Կասկածից վեր է, որ պատմիչ-զորավարի տեղեկությունների մեծ մասը Քսենոփոնը քաղել է Հայկական լեռնաշխարհով անցնելիս այն տեղեկությունների հետ միասին, որոնք «Անաբասիսի»՝ Հայաստանին վերաբերող բաժնի

---

[41] Ընդունելով բաբելոնական-պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32 կգ 640 գր.՝ արմենների թագավորի հարստությունը իր կշռով հավասար կլինի 3000x32.640=97.920 կգ արծաթ դրամի: Իսկ եթե արծաթի և ոսկու հարաբերությունը ենթադրենք այդ ժամանակ 1:10, որ հավանական է, այդ հարստության դրամական արժեքը համապատասխան կլինի մոտ 12 միլիոն ոսկի ռուբլու (տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, էջ 44-45):

[42] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, Ա, զ:

հիմքն են կազմում և Քսենոփոնի անուրանալի ավանդն են հայ ժողովրդի պատմության աղբյուրագիտական գանձարանի հարստացման գործում: Թեև ժամանակակից պատմագիտությունը ժխտում է «Կյուրոպեդիայի» աղբյուրագիտական արժեքը, սակայն կասկածից դուրս է, որ այնտեղ ներկայացվող տեղեկությունների մեծ մասը Քսենոփոնը քաղել է ականատեսի աչքերով:

§ 1.2.3. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԵՐԸ

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայկական լեռնաշխարհի էթնիկ պատկերի վերաբերյալ Քսենոփոնի վկայությունները: Նրա տվյալներով՝ Ք. ա. V դարի վերջին Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, նրա միջնաշխարհը բնակեցված էր հիմնականում մեկ ժողովրդով՝ հայերով: Հույների նահանջի ճանապարհի նկարագրությունից երևում է, որ Արևելյան Տիգրիսից մինչև Արաքսի վերին հոսանքը և ավելի հյուսիս հույները անցել են հայկական գյուղերով[43]: Հայերը, որոնք դեռ Ք.ա. VI դարում ապրում էին դասակարգային հասարակության և պետականության պայմաններում, ժողովուրդ էին: Արմենիներից բացի, եթե Հերոդոտոսը հիշատակում է **սասպեյրներին**, **ալարոդներին**, **մատիեններին**, Քսենոփոնը հիշատակում է Հայկական լեռնաշխարհում էթնիկական մի շարք այլ խմբերի ևս՝ **խալդայներ**, **խալյուբներ**, **կարդուխներ**, **մարդեր**, **տաոխներ**, **փասիաներ**, **հեսպերիտներ**: Այս ցեղերի ծագումը դեռ վերջնականապես պարզված չէ, բայց, ըստ երևույթին, ալարոդները ուրարտացիներն էին, մարդերը իրանական ծագում ունեին, մատիենները և տաոխները՝ խուրրիական, սասպեյրները կամ հեսպերիտները, փասիաները, խալդայները՝ թերևս քարթվելական: Հիշատակված բոլոր ցեղերը և առաջին հերթին ալարոդները, ընդգրկվելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացի մեջ, հետագայում ձուլվեցին հայերի հետ՝ հետքեր թողնելով լեզվի, մշակույթի, մարդաբանական տիպի վրա[44]: Ուշագրավ է, որ այդ ցեղերի անվանումները պահպանվեցին Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններում: Այսպես, օրինակ՝ ալա-

---

[43] Տե՛ս **Գ. Տիրացյան,** «Անաբասիսը» և Հայաստանը: Քսենոփոն, Անաբասիս, էջ 221-241:

[44] Տե՛ս **Գ. Տիրացյան,** Հայաստանի ներքին կյանքը Աքեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 455:

րոդներից առաջացել է Արարատը, մարդերից՝ Մարդաստան կամ Մարդուցայք և, ըստ երևույթին, Մարդուղի գավառները, սասպեյրներից կամ հեսպերիտներից՝ Սպերը և այլն[45]: Քսենոփոնի նկարագրած կարդուխների երկիրը համապատասխանում է հին հայ պատմիչների մոտ հիշատակված «Կորդուք»-ին կամ «Կորդուաց» աշխարհին, իսկ խալդայները Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան ծայրամասերում բնակվող ցեղախումբն էր, որից հետագայում առաջացավ պատմական Հայաստանի Խաղտիք երկրամասը: Պատմագիտության մեջ կատարված փորձերը խալդայներին նույնացնելու ուրարտացիների հետ, այժմ վերջնականապես մերժվում են: Խալյուբները Սև ծովի հարավարևելյան ափերին և Բարձր Հայքի ու Փոքր Հայքի լեռներում բնակվող ցեղեր են եղել: Հունական սկզբնաղբյուրների համապատասխան տեղեկությունների քննությունը ուսումնասիրողներին հանգեցրել է այն եզրակացության, որ խալդայների և խալյուբների անվան տակ պետք է հասկանալ միևնույն ցեղախումբը[46]:

Խալդայների վերաբերյալ հույն զորավարը հայտնում է, որ բնակված էին Աղձնիքի, գլխավորապես Սասունի և Խույթի լեռնային շրջաններում, ազատ էին և խիզախ, նրանք զինված էին հյուսկեն (ծառերի ճյուղերից հյուսված), կաշեպատ երկայն վահաններով և նիզակներով: Ասում էին, որ նրանք ամենառազմիկ ժողովուրդն են այդ երկրում ապրող բնակիչներից: Նրանք ծառայում են զորքի մեջ վարձով, եթե մեկը նրանց աջակցության կարիքը ունենա, որովհետև նրանք, խիստ ռազմունակ լինելով, միաժամանակ աղքատ են. նրանց երկիրը լեռնոտ է և հարուստ է միայն չնչին մասը [«Անաբասիս», IV, III, էջ 89]:

«Կյուրոպեդիա» աշխատության մեջ էլ ներկայացնում է խալդայ ռազմիկին. «Յուրաքանչյուր խալդայ ուներ հյուսկեն վահան և մի զույգ նիզակ. ասում էին, թե նրանք ամենառազմատենչ մարդիկ են այդ տարածքում ապրող ցեղերից: Նրանք վարձով ծառայում էին զորքի մեջ, եթե որևէ մեկը նրանց կարիքն ունենար, քանզի խիստ ռազմունակ էին, բայց և աղքատ, քանի որ նրանց երկիրը լեռնոտ է, և սոսկ մի փոքր մասն է բարեբեր» [«Կյուրոպեդիա», III, II, էջ 109]:

«Կյուրոպեդիա» երկում [III, II, 17-24, էջ 111-114] ընդարձակ

---

[45] Տե՛ս Նույն տեղում: Հմմտ. **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, էջ 69-72:

[46] Տե՛ս **Գ. Տիրացյան,** «Անաբասիսը» և Հայաստանը, էջ 232:

նկարագրություն կա հարևանությամբ ապրող արմենների և խալ-դայների միջև ռազմական ընդհարումների, ապա Կյուրոս Մեծի միջ-նորդությամբ դաշինք կնքելու և խաղաղ ու շահավետ միմյանց արո-տավայրերից ու վարելահողերից օգտվելու մասին. «Նրանք իրար հավատարմության երաշխիքներ տվեցին և պայմանավորվեցին, որ երկու կողմերը իրար հանդեպ կպահպանեն իրենց ազատությունը, իրավունք կունենան փոխադարձ ամուսնության, ինչպես նաև իրար հողերի և արոտավայրերի օգտագործման, և կպաշտպանեն իրար ընդհանուր ուժերով, եթե իրենցից որևէ մեկին անարդարություն արվի» [«Կյուրոպեդիա», III, II, 23, էջ 113]:

«Արմենների և խալդերի խաղաղ համակեցության հետևանքն այն եղավ,– գրում է Հ. Մանանդյանը,– որ խալդերը և տեղական այլ ժողովուրդները հետզհետե միաձուլվեցին արմենների հետ, և հետա-գա դարերի ընթացքում գոյացավ այժմյան հայ ժողովուրդը»[47]:

Ուշագրավ է Քսենոփոնի նկարագրությունները խալյուբների բարքերի, զենքերի ու ամրությունների վերաբերյալ. «Նրանք [խալ-յուբները] առավել, քան բոլորը, ում երկրից անցել էին հելլենները, ամենաքաջն էին և ձեռնամարտի էին բռնվում: Նրանք մինչև փորը հասնող վուշե զրահներ ունեին և զրահի եզրաթևիկների փոխարեն՝ խիտ հյուսված քուղեր: Նրանք նաև ունեին սռնապաններ և սաղա-վարտներ և գոտուց կախած դաշույն՝ լակեդեմոնական կեռ (մանգա-ղաձև) դանակի մեծության, որով սպանում էին, ում որ հաղթել կա-րողանային, և կտրելով գլուխները՝ վերցնում էին ու գնում, և սրանք երգում էին ու պարում, երբ թշնամու տեսադաշտում էին գտնվում: Ունեին նաև մեկ ծայրով նիզակ՝ հինգ կանգուն երկարությամբ: Սրանք մնում էին քաղաքավայրերում (պարսպապատ բնակավայ-րերում – Ռ. Ն.), և երբ հելլենները անցնում էին այդ տեղերով, նրանք հետևում էին անընդհատ կռվելով: Բնակվում էին ամրացված վայրե-րում, որտեղ հավաքել էին նաև իրենց մթերքները. այնպես, որ հել-լենները այստեղից ոչինչ չկարողացան վերցնել, այլ սնվում էին այն կենսամթերքներով, որ վերցրել էին տառխներից» [«Անաբասիս», IV, 15-17, էջ 103]:

Քսենոփոնի «Անաբասիսում» խալյուբները հիշատակվում են

---

[47] **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Ա, էջ 48:

որպես արմենների հյուսիսարևմտյան կողմի հարևան ժողովուրդ, ինչպես և տառխները: Խալյուբները և տառխները հիշատակված են իբրև վարձկան զինվորներ Տիրիբազի զորքի շարքերում («Անաբասիս», IV, IV, 18, էջ 94]: Քսենոփոնի վկայություններից հայտնի է նաև, որ խալյուբների մի մասը, որ ապրում էր պոնտական լեռներում, զբաղվում էր երկաթագործությամբ. «Սրանք փոքրաթիվ էին և հպատակվում էին մոսինոյկներին. նրանց մեծագույն մասի ապրուստի աղբյուրը երկաթագործությունն էր» [«Անաբասիս», V, V, 1, էջ 121]: Սրանք, ըստ երևույթին, պատկանում էին այն խալյուբների ցեղախմբին, որոնց երկրով նախապես անցել էին հելլեն վարձկանները [«Անաբասիս», IV, III, 15, էջ 103]:

Որպես վարձկաններ՝ Տիրիբազի զորքի շարքերում Քսենոփոնի մոտ հիշատակված են, բացի խալյուբներից, նաև տառխները: Սրանց երկրի միջով հելլեններն անցել էին հինգ օրվա ճանապարհ՝ մոտ 30 փարսախ [ավելի քան 150 կմ – Ռ. Ն.]: Սրանք, ըստ երևույթին, հարևան են եղել խալյուբներին ու փասիաններին և միասին դիմադրել էին հելլեններին:

Տառխները խուռիական ծագում ունեցող լեռնային այն ցեղերն էին, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Հարփասոս (Ճորոխ) գետի ակունքների և միջին հոսանքի շրջանում: Սրանց երկրամասը ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Դայաեենի և Դիաուխի անուններով: Տառխների երկրի անունից ծագել է Մեծ Հայքի Տայք աշխարհի անունը: Փասիաները Արաքս գետի վերին հոսանքի շուրջը բնակվող ցեղերն են: Փասիաների անունից ծագել է պատմական Հայաստանի Բասյան (Բասեն) գավառի անունը[48]:

Կարդուխների բնակեցրած երկրի սահմանները բավական ճիշտ կերպով որոշվում են Քսենոփոնի հաղորդած տվյալներով: Հարավում այն եզերված էր Կորդվաց լեռներով, հյուսիսում՝ Տիգրիսի վտակ Կենտրիտեսը (այժմ՝ Բոհտան-սու) այն բաժանում էր Արմենիայից: Քսենոփոնի հաղորդած վկայությունները մեծ արժեք են ներկայացնում այդ երկրի բնակիչների վաղ շրջանի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար: Կարդուխները այդ ժամանակ ունեցել

---

[48] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, կազմողներ՝ **Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան,** ԵՊՀ հրատ., Ե., 2007, էջ 253-254:

են հարուստ գյուղեր, զբաղվել են երկրագործությամբ, գինեգործությամբ, անասնապահությամբ, ինչպես և արհեստագործությամբ: Հատկապես զարգացած էր պղնձագործությունը. «Այստեղ առատ պարեն կար վերցնելու, իսկ տները կահավորված էին բազմաքանակ պղնձե ամաններով…» [«Անաբասիս», IV, 8, էջ 83]: «Հելլենական զորքը բանակեց այստեղ գտնվող բազմաթիվ ու բարեշեն տներում, որտեղ առատ պարեն կար»: Քսենոփոնը խոսում է նաև կարդուխների՝ որպես ռազմական քաջարի ու ճարպիկ գործողությունների նախաձեռնող և վարժ նետաձիգ լինելու մասին. «Նրանք այնքան ճարպիկ էին, որ անգամ մոտիկ լինելիս կարողանում էին փախչելով ազատվել. քանզի նրանք ուրիշ ոչինչ չէին կրում, բացի աղեղներից ու պարսատիկներից: Նրանք գերազանց նետաձիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր: Նրանց արձակած նետերը ծակում էին վահաններն ու լանջապանակները: Հելլենները, երբ այդպիսի նետերը ձեռք էին բերում, ապա կաշվե փոկեր հարմարեցնելով դրանց, օգտագործում էին տեգի փոխարեն» [«Անաբասիս», IV, 28 էջ 88]:

Կարդուխների վերաբերյալ պատմագիտության մեջ եղել է այն կարծիքը, որ նրանք եղել են քրդերի նախահայրը[49]: Հ. Մանանդյանը այդ տեսությունն անընդունելի է համարում՝ հիմք ունենալով Քսենոփոնի և Ստրաբոնի այն վկայությունները, որ կարդուխները նստակյաց ժողովուրդ էին, և ունեին համեմատաբար բարձր մշակույթ. կարդուխների տները կահավորված էին, առատ էին պարենի պաշարներով, ունեին շատ գինի, նշանավոր ճարտարապետներ էին, փորձառու էին քաղաքների ու բերդերի պաշարման աշխատանքներում: Նստակյաց և երկրագործ այս հին ժողովուրդը չէր կարող լինել խաշնարած և թափառակյաց քրդերի նախահայրը[50]:

Քսենոփոնի կողմից արմենների և խալդայների հետ Օրոնտասի զորքի մեջ հիշատակված են նաև մարդերը, որոնք բնակված են եղել պատմական Հայաստանի երկու հին գավառներում, որոնք նրանց անունով կոչվել են Մարդաստան կամ Մարդաղի[51]:

---

[49] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն, հայ ժողովրդի պատմություն, Երկեր, հ. Ա, էջ 73:
[50] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 73:
[51] Տե՛ս **նույն տեղում**, էջ 75:

Բացի վերոհիշյալ ցեղերից՝ Հայկական լեռնաշխարհում բնակվելիս են եղել նաև այլ ցեղեր, որոնք գտնվել են սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման տարբեր մակարդակներում. նրանք մասամբ հիշատակված են Հերոդոտոսի և հունահռոմեական այլ հեղինակների երկերում:

Քսենոփոնը վկայություն ունի նաև սկյութական ցեղերի մասին: Նա գրում է. «Նրանց [տառոխների երկրից - Ռ. Ն.] մոտից հելլենները հասան Հարփասոս գետը, որի լայնքը չորս պլեթրոն [1 պլեթրոնը 30.86 մետր է] էր: Այստեղից առաջ ընթացան սկյութենների երկրի միջով չորս կայան՝ քսան փարսախ (1 փարսախը հավասար է 5250 մետրի) հարթավայր տեղերով դեպի գյուղերը, որոնցում մնացին երեք օր և պարենավորվեցին» [«Անաբասիս», IV, VII, 18, էջ 103-104]: Այս սկյութենները, որոնք Քսենոփոնի ժամանակ բնակվում էին Տրապիզոնից հարավ գտնվող լեռնային վայրերում, հետևորդներն են Ք.ա. 8-րդ դարի վերջին Հյուսիսային Կովկասից Փոքր Ասիա ներխուժած սկյութական այն ցեղերի, որոնց հարվածներից մեծապես տուժեց Ուրարտական պետությունը[52]: Ըստ Հ. Մանանդյանի վարկածի՝ սկյութական ցեղերը ապրել են Կողքիսից սկսած մինչև Մեդական երկիրը (հավանաբար այժմյան Նախիջևանի կողմերը), որոնց Հերոդոտոսը անվանում է սասպեյրներ: Նույն այս ցեղերը, ըստ Հ. Մանանդյանի, տասը հազարի նահանջի ժամանակ (401-400 թթ. Ք.ա.) գտնվել են այժմյան Կարս-Լենինականի (Գյումրի) շրջաններում և Արարատյան դաշտում (Քսենոփոնի մոտ անվանված են սկյութենները)[53]: Հ.Մանանդյանը Հարփասոս գետը նույնացնում է Արաքսին, իսկ սկյութենների երկիրն էլ, ըստ նրա, գտնվում էր այժմյան Գյումրի վայրում[54]: Հ. Մանանդյանը այս կարծիքին է հանգել «Գյումնիաս» բնակավայրի հիշատակության հիման վրա, ըստ որի՝ «[հելլենները սկյութենների երկրից] անցան չորս կայան՝ քսան փարսախ, դեպի մեծ, բարգավաճ և մարդաշատ մի քաղաք, որը կոչվում էր Գյում-

---

[52] Փոքր Ասիա ներխուժած սկյութական ցեղերի մասին տե՛ս **Б.Б. Пиотровский,** Урарту, Ереван, 1944, էջ 295-324: Հմմտ. նաև՝ **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն…, էջ 77-78:

[53] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն…, էջ 77-78:

[54] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Ե., 1944, էջ 13-17:

նիաս» [«Անաբասիս», IV, VII, 19, էջ 104]: Սակայն ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով՝ Գյումնիաս քաղաքը գտնվում էր Բայբուրթյան գոգավորությունում՝ Ճորոխ (գիտնականների մեծ մասի կարծիքով՝ սա Քսենոփոնի հիշատակած Հարփասոսն է – Ռ. Ն.) գետի ակունքների շրջանում: Այս տեսակետը ավելի հավանական է այն առումով, որ Գյումնիաս քաղաքից եկած ուղեցույցը հելլեններին ասում է, որ «հինգ օրվա ընթացքում կհասցնի այնպիսի մի վայր, որտեղից կտեսնեն ծովը (Սև ծով – Ռ. Ն.), հակառակ դեպքում, հավաստեց նա, թող իրեն սպանեն» [«Անաբասիս», IV, VII, 20, էջ 104]:

§ 1.2.4. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երկրագործություն: Խիստ հետաքրքրական են Քսենոփոնի տեղեկությունները արմենների տնտեսական կյանքի և ներքին կենցաղի մասին: Երևում են և՛ Արմենիայի բարեկեցիկ վիճակը, և՛, մասնավորապես, արմենների գյուղերի լիությունն ու պաշարեղենի առատությունը:

Անցնելով Հայկական լեռնաշխարհով՝ սկզբնական շրջանում հունական նահանջող զորքը դիմել է բռնությունների՝ այրելով ու թալանելով հայկական գյուղերը, սակայն, ի վերջո, հայերի հետ եկել համաձայնության, ըստ որի՝ հույները չեն ավերի հայկական բնակավայրերը, իսկ հայերը պարտավորվում են նահանջող զորքին ապահովել սննդամթերքով [«Անաբասիս», IV, 5-6, էջ 93]: Իրենց ճանապարհին՝ Կենտրիտես գետի և Տիգրիսի ակունքների միջև, Տելեբոաս գետի ափերին, Տելեբոասից դեպի Արածանիի ակունքները տանող ճանապարհին, Արածանիի վերին հոսանքը անցնելուց հետո հույները հանդիպել են բազմաթիվ գյուղերի և գյուղախմբերի: Քսենոփոնը Արմենիան անվանում է «ընդարձակ ու բարեկեցիկ երկիր»: Նա հավաստում է, որ Արմենիայում «պարենն առատ էր», «նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն, մորթելու անասուններ, հաց, **անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն**» [«Անաբասիս», IV, 9, էջ 93]: Հիշատակություն է թողել ոռոգման համակարգերի, Տիգրիս գետից սնուցվող 4 խորը և լայն ջրանցքների, նրանցում նավարկվող հացատար նա-

վերի մասին [«Անաբասիս», I, 14, էջ 26-27]:

«Այստեղ գտնվող բազմաթիվ ու բարեշեն տներում մեծ քանակությամբ այնքան գինի կար, որ պահում էին ծեփված հորերում» [«Անաբասիս», IV, 22, էջ 88]: Քսենոփոնի այս հաղորդման հիման վրա կարծիք է հայտնվել, որ Վերին Տիգրիսի ավազանի գյուղերում պատրաստում էին հատուկ տեսակի գինի՝ Մադերա տիպի, որը ջերմային մշակման էին ենթարկում դրսում՝ արևի տակ, կրաշաղախով ծեփված հորերի մեջ: Ներկայումս այդ մեթոդը կիրառվում է մադերային տիպի գինիների հնեցման ժամանակ: Հայկական լեռնաշխարհի տարածքում այդպիսի գինիներ պատրաստել են առնվազն ուրարտական ժամանակաշրջանում[55]: Պատմիչը հիշատակում է ցորենից ու գարուց պատրաստված հաց, ցորեն և գարի առանձին, չորացրած խոտ՝ անասունների համար, գարուց պատրաստված գինի (գարեջուր), հին անուշահոտ հորած գինիներ, չամիչ, ընդեղեններ, քունջութի, դառը նշի և բևեկնի ձեթ: Նշվում է հայերի շրջանում առանձնապես զարգացած գինեգործության մասին: Քսենոփոնը մասնավորապես ընդգծում է, որ հայկական գինիները բարձրորակ էին, հնեցված և տարբեր տեսակների: Քսենոփոնի հավաստմամբ Հայաստանում իրենց խմած գինին աչքի էր ընկնում առանձնահատուկ բուրավետությամբ: Արածանիի հովտի գյուղերում Քսենոփոնի և նրա ընկերների ու զինվորների ճաշակած «բուրավետ հին գինիները», ըստ նորերս հրատարակած ատենախոսական աշխատանքի, ամենայն հավանականությամբ եղել են մուսկատ տեսակի: Մուսկատ գինիներ, հավանաբար, Հայկական լեռնաշխարհում արտադրվել են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից: Այդ եզրակացությանն է հանգել Ա. Հարությունյանը՝ վերլուծելով «Լուվրի աղյուսակի» տվյալները[56]:

Ինչ վերաբերում է գարեջրին, ապա պատմագրի վկայությամբ Հայաստանում գարեջուր արտադրել են դեռևս Ք.ա. V-IV դդ. [«Անաբասիս», IV, էջ 93]: Հայերը գարեջրի պատրաստման համար օգտագործել են հացահատիկ (գարի, կորեկ), բույս (գայլուկ) և այն խմել են

---

[55] Տե՛ս **Ռ. Փալանջյան,** Գինեգործությունը և տեխնիկական բույսերի վերամշակումը Հին Հայաստանում (մ.թ.ա. VI – մ.թ. IV դարեր), պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Ե., 2015, էջ 8:

[56] Տե՛ս **Ա. Արտեշյան,** Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Е., 2005:

եղեգներով: Այստեղից էլ ծագել է այդ խմիչքի հայերեն անունը[57]:

Հույները, սովորության համաձայն, մարզական վարժություններից մաշկը յուղով օծելու, մաշկը առաձգական դարձնելու համար յուղի պակասություն այստեղ չեն զգացել. «Քանզի այստեղ [Արմենիայում. – Ռ. Ն.] յուղի շատ տեսակներ կային, որ գործածում էին ձիթայուղի փոխարեն՝ խոզաճարպ և քնջութի, դառը նշի և բևեկնի յուղ: Կար նաև սրանցից պատրաստված մեռոն…» [«Անաբասիս», IV, 12–13, էջ 94]: Քսենոփոնի տեղեկություններից կարելի է հետևություն անել, որ որոշ բույսեր օգտագործվել են մի քանի նպատակով: Ճարպայուղատու բույսերը քամելով՝ ստացել են բուսական ճարպայուղեր՝ ձեթեր, որ օգտագործվել են ինչպես սննդի մեջ, այնպես էլ տեխնիկական նպատակներով: Քսենոփոնի հաղորդման համաձայն՝ Արածանիի հովտի բնակչությունը ձեթ էր պատրաստում քնջութի սերմերից: Հայաստանի անտիկ բնակավայրերի պեղումների ժամանակ ամենից տարածված գտածոներից են սանդերը և աղորիքները, որոնք հանդիսացել են քնջութի ձեթի արտադրության ժամանակ կիրառվող հիմնական գործիքներ: Նա հաղորդումներ ունի նաև Հայաստանում պատրաստվող օծանելիքների մասին: Ըստ նրա՝ Ք.ա. V դարում Արածանիի հովտում Արևմտյան Արմենիայի կառավարիչ Տիրիբազոսի տիրույթներում բարձրորակ օծանելիքներ են արտադրվել, որոնք եղել են երկու տեսակի՝ քսուքներ, պատրաստված խոզի ճարպահիմքի վրա, և հեղուկ օծանելիքներ՝ պատրաստված քնջութի ձեթի հիմքի վրա: Այդ օծանելիքներից Քսենոփոնը հատկապես առանձնացնում է դառը նշի և պիստակենու (խնկենու) եթերայուղեր պատրաստվածները [«Անաբասիս», IV, էջ 94]: Հնարավոր է, դրանք հանդիսացել են օծանելիքի տեղական հայտնի «բրենդներ»[58]:

Թեպետ հունական զորքը նահանջել է ձմռանը, սակայն Քսենո-

---

[57] Գարեջուրն առավել լայն գործածություն է ունեցել Հայաստանի այն շրջաններում, որտեղ այգեգործությունը, մասնավորապես խաղողագործությունը զարգացած չէր: Թեյշեբաինի բերդի (Կարմիր բլուր) պահեստներում հայտնաբերված մթերքների մեծ քանակությունը վկայում է այն մասին, որ մեզանում ավելի քան 2,5 հազար տարի առաջ մշակել են մեծ քանակությամբ գարի: Ըստ Բ. Պիոտրովսկու տվյալների՝ պահպանվել են ոչ միայն այն իրերը, որոնցով բնութագրվում էր գարեջուր պատրաստելու տեխնոլոգիան, այլև նրա պատրաստման զանազան սեպագիր բաղադրատոմսերը, (**Б. Пиотровский**, Ванское царство, М., 1959, с. 142–147):

[58] Տե՛ս **Ռ. Փալանջյան,** Ատենախոսություն, էջ 12:

փոնը նկարագրել է, որ հայերի սեղանները չափազանց առատ էին հացի տարբեր տեսակներով: Նա գրում է. «…Այդ գիշեր բոլոր զինվորները, տեղավորվելով տներում, քնեցին ամեն տեսակ պարենի առատության մեջ…» [«Անաբասիս», IV, էջ 94]: Քսենոփոնի՝ իբրև ականատեսի վկայություններից երևում է, որ հայ ընտանիքն ի բնե հյուրասեր և օտարականների համար գթառատ է եղել: Հայ գյուղապետը վստահում է նույնիսկ իրեն ձերբակալության մեջ պահող Քսենոփոնին, լիառատ կերուխումի է արժանացնում հույն զինվորներին, թաղված կարասներից հրամցնում անուշահամ գինիներ: Այդպիսի ուշադրության են արժանանում բոլոր այն զինվորները, որոնք Հայաստանի ծանր ձմռան պայմաններում հյուրընկալված են լինում արմենների տներում: Քսենոփոնը «որ գյուղ էր մտնում, գնում էր գյուղերում եղողների (հելլենների) մոտ և ամեն տեղ գտնում էր նրանց կերուխում անելիս և ուրախ: Եվ ոչ մի տեղից բաց չէին թողնում, մինչև չմատուցանեին նրանց ամենաընտիր կերակուրները…. Սպասավորություն էին անում արմենների երեխաները՝ բարբարոսական զգեստներ հագած, իսկ երեխաներին նրանք նշաններով ցույց էին տալիս, ինչպես մունջերի, թե ինչ անել: Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ քանակությամբ ցորենի ու գարու հացի հետ: Ու եթե որևէ մեկը մտերմաբար ցանկանում էր խմել մյուսի կենացը, ապա նրան քարշ էր տալիս կարասի մոտ և կռանալով պետք է խմեր այնտեղից՝ եզան նման ծծելով» [«Անաբասիս», IV, 32, 33, էջ 98]: Ի դեպ, հին հույները, գինին կրատերի (կավե անոթի) մեջ ջրի հետ խառնելով, թնդությունը թուլացնելով խմելու սովորություն են ունեցել: Այս մասին պատմիչը ավելի մանրամասն է նկարագրում. «Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների [կարաս. – Ռ. Ն.] մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին [կարասի շրթներին հավասար, ամանի բերանին – Ռ. Ն.] լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգնի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր» [«Անաբասիս», IV, 26, էջ 97]: Սա գարեջրի վերաբերյալ մեզ հայտնի առաջին գրավոր հիշատակությունն է: Նա նաև վկայում է, որ հայերը ունեին գինին հորելով պահելու սովորույթ [«Անաբասիս», IV, էջ 98]:

Ուշագրավ կարծիք է հայտնվել այն մասին, որ Քսենոփոնի բնութագրած թունդ խմիչքը քիչ հավանական է, որ գարեջուր եղած լիներ, որ Հայաստանում պատրաստված այդ յուրահատուկ ըմպելիքը գարուց պատրաստված գինի է եղել: Անտիկ գրավոր աղբյուրների ուսումնասիրությունը հնագետ Ռ. Փալանջյանին հանգեցրել է այն հետևության, որ հնում արտադրվել են գինիներ, որոնց պատրաստման համար խաղողի քաղցուին (շիրա) հացաբույսեր են խառնել: «Հավանաբար, – նշում է հնագետը, – նման կերպ է պատրաստվել Քսենոփոնի հիշատակած գարու գինին: Այդպիսի տեխնոլոգիայով պետք է ստացվեր ավելի թունդ գինի, քան միայն խաղողից պատրաստված գինին, քանի որ տվյալ դեպքում խաղողի քաղցուի մեջ առկա բնական խմորիչները պետք է նպաստեին քաղցուի հետ խառնված գարու ածիկից մեծ քանակությամբ շաքարի և սպիրտի ստացմանը»[59]: Նույն հեղինակը, նկատի ունենալով Հարությունյանի (А. Арутюнян, Очерки… Е., 2005) այս կարծիքը, բերում է նաև մասնագետի մյուս երկու կարծիքը, որ Քսենոփոնի նշածը, այնուամենայնիվ, կարող էր եղած լինել նաև գարու օղի կամ էլ, ինչպես ընդունված է պատմագիտության մեջ, գարեջուր:

Փաստորեն՝ Հայաստանը գյուղատնտեսական մթերքներով հարուստ երկիր էր, այդ իսկ պատճառով Քսենոփոնն ու իր հայրենակիցները սննդամթերքի հայթայթման գործում առանձին դժվարությունների չեն հանդիպել: Բազմազան մթերքների թվարկումը ցույց է տալիս հին Հայաստանի երկրագործության զարգացման բարձր աստիճանը և նրա բազմաճյուղ լինելը: Հացահատիկի, խաղողի, յուղատու և տեխնիկական մշակաբույսերի, ընդեղենի, գինու ընտիր տեսակների, գարեջրի առատությունը գրավական է վերելք ապրող երկրագործության, հայ ժողովրդի դարավոր փորձի և հմտության բացառիկ արդյունավետության: Քսենոփոնի տեղեկությունները համընկնում են նախորդ դարաշրջանի՝ ուրարտական երկրագործության մասին մեզ հայտնի թե՛ գրավոր և թե՛ հնագիտական տվյալներին[60]:

Անասնապահություն և որսորդություն: Քսենոփոնը հայերին ներկայացնում է ոչ միայն որպես երկրագործ, այլև անասնապա-

---

[59] Տե՛ս **А. Арутюнян,** Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении. **Ռ. Փալանջյան,** ատենախոսության սեղմագիր, էջ 8:

[60] Տե՛ս **Б. Пиотровский,** Ванское царство, с. 142–147:

հությամբ զբաղվող ժողովուրդ: Նա հաղորդում է, որ հայերի տնտեսության երկրորդ ճյուղը եղել է անասնապահությունը: Եթե Հերոդոտոսը հայերին անվանում է «անասուններով հարուստ ժողովուրդ», ապա Քսենոփոնը Հայաստանը համարում է խոշոր ու մանր եղջերավոր անասուններով հարուստ երկիր, թվարկում իր տեսածը հայերի տներում՝ կով, այծ, ոչխար, ձի, թռչուններ, այնուհետև՝ ոչխարի, այծի և խոզի միս, խոզի ճարպ [«Անաբասիս», IV, էջ 93]:

«Կյուրոպեդիա» երկասիրության մեջ էլ հիշատակված է, թե Հայաստան երկիրը «ամբողջությամբ բնակեցված է. այն լիքն է ոչխարներով, այծերով, արջառներով, ձիերով, հացահատիկով և ամեն տեսակ բարիքներով» [«Կյուրոպեդիա», IV, IV, էջ 156]: Սովորություն է եղել պահել մսացու անասուններ, որոնք, անկասկած, ծառայել են թե՛ սննդի ապահովման և թե՛ վաճառահանման ու ապրանքափոխանակման համար: Անասնապահության զարգացածությունը երևում է և այն բանից, որ, ըստ Քսենոփոնի, արմենները կարիք ունեին լրացուցիչ արոտների, քանզի լեռնային արոտատեղերը գտնվում էին լեռները քաշված խալդայների ձեռքին: Ի վերջո, երկու կողմերը գալիս են փոխադարձ համաձայնության՝ արոտներից անվտանգ, համատեղ օգտվելու համար: «Երկու կողմերն էլ (արմենները և խալդայները – Ռ.Ն.) իրար հավատարմության երաշխիքներ են տալիս և պայմանավորվում են, որ իրար հանդեպ կպահպանեն իրենց ազատությունը, իրավունք կունենան փոխադարձ ամուսնության, ինչպես նաև **իրար հողերի և արոտավայրերի համատեղ օգտագործման**, և կպաշտպանեն իրար ընդհանուր ուժերով, եթե իրենցից որևէ մեկի նկատմամբ անարդարություն արվի» [«Կյուրոպեդիա» III, II, էջ 112–113]: Բացի այն, որ անասնապահությունը հայերի տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավել, գրում է, որ արմենները կիրառում էին հեռագնա անասնապահության եղանակը. անասուններին բարձրացնում էին ալպիական բուսականությամբ հարուստ ամառային արոտավայրերը [«Կյուրոպեդիա», VII, III, էջ 329]: Պատմիչը զանազան առիթներով ցույց է տվել, որ զարգացած է եղել ձիաբուծությունը՝ հեծելազորը սեփական ձիերով ապահովելու, ինչպես նաև Պարսկաստանին ձիահարկ տալու նպատակով: Քսենոփոնի հաղորդման համաձայն՝ հույները ձերբակալում են գյուղում գտնվող բոլոր գյուղացիներին ու գյուղապետին, նաև «**թագավորին որպես տուրք սնուցվող տասնյոթ մտրուկների, ինչպես և** գյուղապետի աղջկան, որն ին-

ներորդ օրն էր, ինչ ամուսնացած էր: Իսկ նրա ամուսինը գնացել էր նապաստակ որսալու և գյուղում չգերվեց» [«Անաբասիս», IV, 24, էջ 97]: Գեղջավագին ուղղված հարցին, «թե ձիերը ո՞ւմ համար են բուծվում, նա պատասխանեց, թե՝ արքայի համար իբրև տուրք» [«Անաբասիս», IV, 34, էջ 98]: Քսենոփոնը նաև հաղորդում է, որ գեղջավագը իրեն և մյուս զորավարներին ու վաշտապետերին ևս տվել է մեկական մտրուկ. «…Եվ դեռ առաջներում իր ավար վերցրած պառավ ձին նվիրեց գեղջավագին, որպեսզի սնուցի ու զոհաբերի, քանզի լսել էր, որ այն նվիրաբերված էր Հելիոսին (Արևի աստվածությանը – Ռ. Ն.): Ինքը վերցրեց մտրուկներից մեկը, և մյուս [զորավարներին ու] վաշտապետերին ևս տվեց մեկական մտրուկ» [«Անաբասիս», IV, 35, էջ 98]: Այնուհետև գովում է հայկական ձիատեսակը՝ ճկունությունն ու դիմացկունությունը նկատի ունենալով. «Այստեղ [նկատի ունի Հայաստանը, – Ռ. Ն.] ձիերը փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ» [«Անաբասիս», IV, 36, էջ 98]: Քսենոփոնը, ինչպես ասվեց վերը, իր ծերացած ձին տալիս է գյուղապետին, որպեսզի սա կերակրի, պարարտացնի ու զոհ բերի արևին, իսկ փոխարենը վերցնում է նրա ձիաքուռակներից մեկը: Նման փոխանակության նախաձեռնողը գյուղապետն էր, որը գերադասեց ծեր ձի զոհաբերել իր մատղաշի դիմաց: Այնուհետև գյուղապետի խորհրդով հունական հեծելազորի ձիերը փրկվում են սառչելուց*. «Գեղջավագը սովորեցրեց ձիերի և գրաստների ոտքերին ձյան միջով գնալիս պարկեր փաթաթել. քանզի առանց պարկերի անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ» [«Անաբասիս», IV, 34, էջ 98], – գրում է պատմիչը: Ձիաբուծության նպատակասլաց զարգացմանը նպաստում էր ընդարձակ արոտավայրերի առկայությունը Հայկական լեռնաշխարհում: Ձին հայոց մեջ հնուց ի վեր գործածվել է հիմնականում ռազմական արվեստում և միայն հազվադեպ՝ տնտեսության մեջ:

Քսենոփոնի հիշատակություններից երևում է, որ հայերի զբաղմունքներում կարևոր տեղ է գրավել նաև որսորդությունը: Հայկա-

---

* Այս առիթով պատմագիրը նկարագրում է նաև Հայաստանի ձմեռը. «Ձյունը հասնում էր ձիերի փորին: Անսովոր զինվորները շատ տառապանքներ կրեցին, շատ մարդիկ և անասուններ ցրտամահ եղան: Ձյան անհուն տարածությունները վատ էին ազդում մանավանդ տեսողության վրա, և զինվորները ստիպված էին իրենց աչքերի առջև մի սև առարկա բռնել: Մի հայ գյուղի տանուտեր սովորեցրեց նրանց, թե ինչպես պետք է պաշտպանվել ցրտից («Անաբասիս», IV, 5):

կան գյուղերից մեկի գյուղապետի փեսան, ինչպես տեսանք վերը, գնացել էր նապաստակ որսալու, իսկ հայերի տներում հույները ճաշակել են որսի միս [«Անաբասիս», IV, 24, էջ 97]:

Ըստ Քսենոփոնի՝ որսորդությունը ինչպես պարսիկների, այնպես էլ նրանց հարևան հայերի կենցաղի շատ բնորոշ կողմերից մեկն է եղել: Այն պետականություն ունեցող արևելյան ժողովուրդների մեջ «պետական գործ է համարվել, որի ժամանակ նրանց գլխավորում է, ինչպես պատերազմի ժամանակ, ինքը՝ թագավորը, իսկ թագավորը ոչ միայն անձամբ է որս անում, այլև հետևում է, որ մյուսները ևս մասնակցեն դրան, քանի որ որս անելը համարում են պատերազմի վարժվելու ամենաճշգրիտ եղանակը: Որսորդությունը սովորեցնում է կանուխ վեր կենալ, դիմանալ ցրտին և տապին, վարժեցնում է ճամփա գնալ և վազել, ինչպես նաև նետահարել գազանին կամ նրան խոցել տեգով, որտեղ որ պատահի: Որս անելը մեծապես կոփում է նրանց արիությունը, քանզի նրանք ուժեղ գազանների դեմ կռվելիս ստիպված են լինում մոտիկից հարվածել և կամ խուսափել: Ուստի հեշտ չէ որսորդության մեջ գտնել մի բան, որը հատուկ չլիներ պատերազմին» [«Կյուրոպեդիա» I, II, էջ 9–10]: Քսենոփոնը Հայաստանը Մարաստանին հարկատու դարձնելու առիթով գրում է, թե մարաց արքա Կյուաքսարեսը, հայ-արմենևներից ռազմական օգնություն ստանալու հույսով դիմելով իր զորապետներից Կյուրոսին, ասում է. «Ես նույնպես հույս ունեմ, որ նրանք ավելի շուտ քեզ մոտ կգան, քան ինձ: Քանզի լսել են, որ (արմենևների թագավորի) որդիներից ոմանք քեզ որսակից են եղել» (խոսքը Երվանդ Սակավակյացի ավագ որդի Տիգրան Երվանդյանի մասին է – Ռ. Ն.): Այս շրջանում Հայաստանը որոշ կախվածություն ուներ Մարաստանից: «Կյուրոպեդիա» աշխատության II, IV, 16-17 հատվածներում նշվում է արմենևների երկրում Կյուրոսի և որսակից ընկերների, այդ թվում՝ Տիգրանի հետ որս անելու սովորույթի մասին. «–Ուրեմն՝ լսի՛ր, – Կյուրոսը խոսքը ուղղում է մարաց թագավորին (Մարաց պետության հիմնադիր Կիաքսարի՝ (624-584) որդուն՝ Աստիազեսին (584-553), որի անունը այստեղ վիպական, մտացածին կերպար է – Ռ. Ն.), թե, ի՞նչ կասեմ քեզ, – ես հաճախ իմ բոլոր ընկերների հետ որս եմ արել քո և արմենևների սահմանների մոտ, և այստեղ եղած իմ հեծյալ ընկերներից ոմանց ևս վերցնելով՝ գնացել եմ այնտեղ»: Հայոց արքային վերստին հարկատու դարձնելու նպատակով մարաց զորքերը, երկու մասի բա-

ժանված, մեծ մասը՝ արքայի, իսկ մյուսը՝ Կյուրոսի գլխավորությամբ, շարժվում են դեպի հայկական ամրությունները: Կյուրոսը, օգտվելով իր նկատմամբ հայերի բարեհաճ վերաբերմունքից, նրանց զգոնությունը թուլացնելու, կասկածի տեղիք չտալու համար, որպես հայոց թագաժառանգ Տիգրանի որսընկեր՝ հեծյալ ջոկատով անցնում է Հայաստանի ամրությունները, և Քսենոփոնի հիշատակմամբ երկու օր առատ որս են կատարում: Նրանք «այստեղ որսացին մեծ թվով կինճեր, եղնիկներ, քարայծեր և վայրի էշեր» («Կյուրոպեդիա», III, IV, 19-20): Առիթից օգտվելով՝ Կյուրոսի հեծյալ ջոկատին են միանում մարաց արքայի մեծաքանակ զորքերը և անակնկալի բերում հայ-արմենևներին:

Արհեստագործություն: «Անաբասիսում» հաղորդվում է, որ հունական զորքը, հարձակվելով հայ կառավարիչներից Տիրիբազի բանակի վրա, գրավել է նրա վրանը և վրանում եղած «արծաթե ոտքերով գահույքներ ու ըմպանակներ, և գերի էին վերցրել նրա հացարարներին ու մատռվակներին» [«Անաբասիս», IV, 21, էջ 94]՝: Քսենոփոնը երկու անգամ ակնարկում է հայկական գեղարվեստական մետաղագործության, մասնավորապես արծաթյա ըմպանակների մասին [«Անաբասիս», IV, 3, 4, 24, 25, էջ 98]: Նա ունի նաև Հայաստանում գորգագործության վաղ ավանդույթներին վերաբերող վկայություններ: «Անաբասիսում» Հայաստանին վերաբերող գորգերի մասին հիշատակում է. «Տիմասիոն Դարդանացին [հունական զորքի առաջնորդներից մեկը – Ռ. Ն.], որ բարբարոսական արծաթե ըմպանակներ և գորգեր ուներ, խմելով Սևթեսի կենացը՝ նրան նվիրեց արծաթե մի բաժակ և մի գորգ, որն արժեր տասը մինա» [«Անաբասիս», VII, 27, էջ 174]:

Հիշատակում է հայ արհեստավորներին՝ հյուսների և քարագործ վարպետների: «Կյուրոպեդիա» աշխատության մեջ Քսենոփոնը գրում է. «Կյուրոսը Տիգրանին պատվիրեց մարդ ուղարկել հոր մոտ և հայտնել, որ գա ու բերի իր հետ հյուսներ և քարագործ վարպետներ» [«Կյուրոպեդիա» III, II, էջ 110]:

Ուշադրության են արժանի Հայաստանի ներքին և արտաքին առևտրի գոյության մասին հիշատակված թռուցիկ ակնարկները: Առևտրական ուղիները հայերին ջրային ճանապարհներով Բաբելոնից էլ շատ հեռու էին տանում, բայց այլ ուղղությամբ: «Կյուրոպեդիա» աշխատության մեջ, ըստ Քսենոփոնի, «Կյուրոսը, կամենալով դեսպանություն ուղարկել Հնդկաստանի թագավորի մոտ, դիմեց արմեններին, որ նրանք մարդ տան՝ առաջնորդելու համար այդ դեսպա-

նությունը մինչև Հնդկաստան» («Կյուրոպեդիա», III, II, էջ 110): Իսկ սա նշանակում է, որ արմենները կանոնավոր առևտրական երթևեկություն են ունեցել Հնդկաստանի հետ:

Չափ ու կշիռ: Հաղորդակցությանը, ժողովրդական փոխադրամիջոցներին վերաբերող տեղեկություններ: Քսենոփոնի տեղեկություններից իմանում ենք հնագույն ժամանակներում երթուղիների ժամանակի ու դրանց հեռավորության որոշման չափանիշների մասին: Այսպես, խոսելով Հայաստանով և այլ երկրներով հունական բազմահազարանոց բանակի նահանջի մասին, տարբեր առիթներով բազմիցս շեշտում է, թե քանի փարսախ (մեկ փարսախը հավասար է 5250 մ-ի) ճանապարհ անցան, և թե դա քանի օրվա ճանապարհ էր: Նա գրում է. «Այստեղից գնացին երկու օրվա ճանապարհ, տասը փարսախ, մինչև որ անցան Տիգրիս գետի ակունքները: …Այնուհետև գնացին երեք օրվա ճանապարհ, 15 փարսախ մինչև Տելեբռաս (այժմ՝ Կարասու) գետը, ապա նրանք գնացին յոթ օրվա ճանապարհ, օրական հինգ փարսախ» ([«Անաբասիս», I, 14, էջ 27, II, 6, էջ 41, 48-50, III, 7, էջ 74, IV, 1, էջ 93, 98-99] և այլն: Ակնարկներ ունի երկարության չափի «**սքոյնոս**» անվամբ միավորի մասին (1 սքնոյնոսը = 40 ասպարեզի կամ 7 կմ-ի): Հաճախ է հիշատակվում **ասպարեզ** (ստադիոն) երկարության չափը, որը հավասար է 185 մետրի, և **պլեթրոն** երկարության չափը, որը հավասար է եղել 30,86 մետրի [«Կյուրոպեդիա» VII, V, էջ 290]:

«Կյուրոպեդիա» երկասիրությունում հանդիպում ենք «օրվա ճանապարհ» տարածության չափի միավորին. «Բայց երբ իմացանք պարսիկ Կյուրոսի մասին, թե նա նվաճել և հպատակեցրել է բազմաբազում մարդկանց, բազմաթիվ քաղաքներ և բազում ազգեր…, որին [Կյուրոսին – Ռ. Ն.] հոժարակամ հնազանդվել են ազգեր, որոնք գտնվում են **բազմօրյա ճանապարհի**, ուրիշները՝ ամիսներ տևող ճանապարհի հեռավորության վրա…» [«Կյուրոպեդիա» I, I, էջ 4]: Որպես երկարության ավելի փոքր չափ՝ հիշատակված է **կանգունը**, որը 0,5 մետր է: «Կյուրոպեդիա» աշխատության մեջ Բաբելոնի պարիսպները բնութագրվում են «հզոր ու բարձր», որոնք Հերոդոտոսի մոտ համարվում է 200 արքունի կանգուն, այսինքն՝ ավելի քան 100 մետր, որը, մեր կարծիքով, անհավանական է, մինչդեռ Ստրաբոնի մոտ հիշատակված է 50 ոտնաչափ կամ 50 կանգուն [Ստրաբոն, XVI, 1, 5]: Սա ավելի հավանական է, այսինքն՝ 25 մետր: Նույն գրքի համաձայն՝ Եփրատ գետի լայնությունը՝ այն հատվածը, որտեղով անցել են հույ-

ները, ավելի քան 2 ասպարեզ է [«Կյուրոպեդիա» VII, V, էջ 289], այսինքն՝ 370 մետր, իսկ Ստրաբոնի հիշատակմամբ՝ մեկ ասպարեզ: Ի դեպ՝ Հերոդոտոսն էլ հաղորդում է, որ «Բաբելոն քաղաքը բաժանվում է երկու մասի, քանզի նրա միջով հոսում է գետ, որի անունն է Եփրատ: Այն հոսում է Արմենիայից, մեծ է, խորը և արագահոս» [Հերոդոտոս, I, 180, էջ 74]:

Քսենոփոնը օգտագործել է նաև **նետընկեց** հեռավորության չափը [«Կյուրոպեդիա», I, IV, 23, էջ 31]: Դա այն հեռավորությունն է, մինչև ուր կարող է հասնել աղեղից արձակված նետը[61]: Որպես ձյան խորության միավոր՝ հիշատակված է **գրկաչափը,** որը 1,85 մետրի է հավասար, և ոտնաչափը՝ 0,5 մետր [«Կյուրոպեդիա» VII, V, էջ 289]: Նա «Անաբասիս» աշխատության մեջ գրում է. «Ձյան խորությունը (Հայաստանում) հասել էր մեկ գրկաչափի այնպես, որ բեռնատար անասուններից ու ստրուկներից շատերը կորստի մատնվեցին, ինչպես նաև երեսուն հոգի զինվորներից» [«Անաբասիս», IV, 4, էջ 95]: Մեկ այլ տեղում նշված է. «Ճանապարհին խրամատ էր փորված հինգ գրկաչափ լայնքով և երեք գրկաչափ խորությամբ» [«Անաբասիս», I, 14, էջ 26-27]: Հանդիպում էին նաև պարսկական կշռի չափի միավորի՝ **կապիթե** անվամբ, որը 2,3 լիտր է: Որպես կշռի և դրամական չափի միավոր՝ հին աշխարհում գործածվել է նաև **տաղանդը:** 1 տաղանդը կշռում էր 26,2 կգ և արժեր 6 հազար **դրաքմե:** Հիշատակվում է նաև **դահեկան** պարսկական ոսկեդրամը, որը կշռում էր 8,4 գրամ: 1 դահեկանը հավասար էր ատտիկյան 20 արծաթ դրաքմեի (դրախմա): 3000 դրաքմեն հավասար էր 1 տաղանդի: Դրաքմեն և՛ փողի, և՛ կշռի միավորներից էր [«Կյուրոպեդիա» III, III, էջ 123]:

Պատմիչը ակնարկներ ունի հաղորդակցության ազդանշանային պայմանական միջոցների մասին: Մի ուշագրավ վկայություն կա հնում գոյություն ունեցած ազդանշանային համակարգերի մասին: Քսենոփոնը հիշատակում է, որ Հայաստանի տարածքով նահանջող հույները գիշերը «բանակեցին գյուղերում, իսկ կարդուխները լեռների վրա չորս կողմը կրակ էին վառում և իրար ազդանշան էին տալիս» [«Անաբասիս», IV, էջ 83, 93]: Խոսելով Հայաստան ներխուժած պարսից զորավար Կյուրոսի մասին՝ հաղորդում է. «…Նա [Կյուրոսը]

---

[61] Տե՛ս **Ս. Մալխասյանց,** Հայերեն բացատրական բառարան, հ. III, (Հ-Ո), ԵՊՀ հրատ., Ե., 2010, էջ 451:

հարցրեց Տիգրանին [արմենների թագավորի որդին], թե որո՞նք են այն լեռները, որտեղից խալդայները [խալդերը] ցած են արշավում և կողոպտում (արմեններին): Տիգրանն այդ լեռները ցույց տվեց: Եվ նա հարցրեց նորից. «Այդ լեռներն այժմ անմարդաբնա՞կ են»: «Հարկավ, ոչ, – ասաց Տիգրանը, – այլ միշտ այնտեղ են նրանց լրտեսները, որոնք մյուսներին **ազդանշանով** իմաց են տալիս, ինչ որ տեսնում են»: «Իսկ ի՞նչ են անում դրանք»: «Օգնության են գալիս,– ասաց Տիգրանը» [«Անաբասիս», IV, էջ 83]: Հայերի սովորույթի համաձայն՝ լեռների գագաթներին կրակ վառելը թշնամական հարձակումների ահազանգ էր [«Անաբասիս», IV, 2, էջ 85, 2, էջ 95]: «Ոմանք, որ բանակից դուրս գալով, թափառել էին, պատմում էին, թե իբր գիշերը իրենք տեսել էին փայլող բազմաթիվ կրակներ: Ուստի զորավարները վտանգավոր համարեցին տներում [արմենների] ցրված մնալը և որոշեցին զորքը դարձյալ ի մի հավաքել» [«Անաբասիս», IV, 9, էջ 93, 16, էջ 94]:

Կյանքի անապահով վիճակը, անընդհատ հարձակման ենթարկվելու վտանգը գյուղական համայնքին ստիպել են աչալուրջ հետևել իր շրջակայքին: Այդ նպատակով, ելնելով տեղանքի պայմաններից, գյուղացիները կառուցել են հատուկ դիտարան-աշտարակներ, ինչպես գյուղից դուրս՝ լեռնագագաթներին, այնպես էլ գյուղամիջում: Բնորոշ է Քսենոփոնի վկայությունը հայ գյուղի կառուցվածքի մասին. «…Այն գյուղը,– գրում է նա, ուր նրանք (հույները) եկան՝ մեծ էր, ուներ սատրապի համար ապարանք-ամրոց, և տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ» [«Անաբասիս», IV, 2, էջ 93]: Ձայնային ազդանշան էր շեփոր հնչեցնելը [«Անաբասիս», IV, 2, էջ 85, 95]: Շեփոր էին հնչեցնում սպառնացող վտանգի և պատերազմում հարձակման անցնելիս. «Երբ եղջյուրները հանգիստ շեփորեն, կհանդերձավորվեք. երկրորդ շեփորով սայլերը կբարձեք. երրորդ շեփորումից հետո կհետևեք առաջ գնացողին՝ գրաստները պահելով գետի կողմը…» [«Անաբասիս», II, 4, էջ 41]:

Քսենոփոնը ակնարկներ ունի նաև տեղափոխման, փոխադրության միջոցների ու հարմարանքների մասին: Այսպես, նա հաղորդում է, որ «առաջ գնացողներից (հելլեններից) Խեյրիսոֆոսը հասնում է երեկոյան դեմ մի գյուղ (արմենների) և պատահեց ամրության առջև աղբյուրից ջուր տանող կանանց և աղջիկների» [«Անաբասիս», IV, 9, էջ 95]: Անշուշտ, հայերը հնուց ի վեր ջուրը կրել են կավե, փայտե և պղնձե սափորներով ու դույլերով, իսկ հեռու տարածություններ-

րի վրա նաև՝ կաշեպարկերով (տիկ, տկճոր, մոթալ)։ Ազգագրական տեսանկյունից ուշագրավ է, օրինակ, որ հնագույն ժամանակներից սկսած՝ տնային պետքերի համար անհրաժեշտ ջուր մատակարարելը միշտ էլ եղել է հայ կնոջ կամ աղջկա պարտականությունը։

Քսենոփոնը ակնարկներ ունի նաև կառքերի, սայլերի՝ որպես փոխադրամիջոցների գործածության մասին։ Նկարագրելով Կյուրոսի՝ արմենների երկիր ներխուժելու մանրամասները՝ նա հաղորդում է, որ պարսից զորավար Կյուրոսը «…կառքերի (սայլերի) մեջ գտնվող [արմեն մեծամեծների] կանանց, որոնք ներկա էին [արմենների թագավորի հարցաքննությանը], … չհեռացրեց, այլ թույլ տվեց, որ լսեն» («Կյուրոպեդիա», III, I, էջ 96]։ Ուշագրավ վկայություն է թողել Տիգրիս գետից հոսող ջրանցքներում հացատար նավերի նավարկության մասին։ Նա գրում է. «Այստեղ են գտնվում Տիգրիս գետից հոսող ջրանցքները, որոնք չորսն են։ Դրանց լայնքը մեկ պլեթրոն է, և մեծ խորություն ունեն, այնպես, որ նրանցում լողում են **հացատար նավեր**։ Ջրանցքները թափվում են Եփրատ գետը և գտնվում իրարից մեկական փարսախ հեռավորության վրա, իսկ նրանց վրա կամուրջներ կան» («Անաբասիս», I, 14, էջ 26-27]։

Քսենոփոնը խոսում է հայերի՝ հյուրերին անվտանգ, ապահով ճանապարհելու, վտանգավոր և անծանոթ տեղանքներում ուղեցույց-առաջնորդ լինելու սովորույթի մասին։ Նկարագրելով Հայկական լեռնաշխարհով հունական զորքերի նահանջը՝ նա գրում է, որ ինքը «գյուղի ավագին սեղանակից դարձրեց ու նրան խորհուրդ տվեց չվհատվել՝ ասելով, որ նա իր զավակներից չի զրկվի և փոխարենը հեռանալիս իրենք նրա տունը կլցնեն մթերքներով, եթե նա լավ ծառայություն մատուցի զորքին և դառնա ուղեցույց, մինչև իրենք կհասնեն մի այլ ժողովրդի երկիր։ Եվ գեղջավագը խոստացավ այդ… Քսենոփոնը գյուղապետին որպես ուղեցույց հանձնեց Խեյրիսոփոսին, իսկ նրա տնեցիներին բաց թողեց, բացի նոր չափահաս դարձող որդուց» («Անաբասիս», IV, 6, 98-99)։

Քսենոփոնի հաղորդումներից երևում է, որ իր ժամանակ հույների աշխարհագրական պատկերացումները Հելլադայից հեռու գտնվող երկրների մասին դեռևս շատ աղոտ էին և անստույգ։ Նրա նկարագրություններից հետևում է, որ Կյուրոս Կրտսերի հելլեն վարձկանները քարտեզներ չեն օգտագործել։ Նահանջի ճանապարհին բոլոր դեպքերում դիմել են տեղացի բնակիչներից գերի վերցրած

ուղեցույցների օգնությանը:

Հայերի սովորույթի համաձայն՝ հյուրը անձեռնմխելի է եղել տանտիրոջ համար, քանի դեռ նա գտնվում էր վերջինիս տանը: Սակայն, նկատելի է, որ հայերը սովորույթ են ունեցել նաև անվտանգ տեղ հասցնել: Ի դեպ՝ հույների սովորությամբ ևս հյուրը անձեռնմխելի էր տանտիրոջ համար: Այդ սովորույթը ամրապնդված էր կրոնական հավատալիքներով, և հյուրասիրության սրբազան օրենքների պահապանը համարվում էր աստվածների հայր Զևս-Հյուրընկալը:

Հայերի նյութական մշակույթը: Բնակավայր և բնակարան: Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները գյուղական բնակարանաշինության, զենքերի և կենցաղային առարկաների մասին: Ըստ Քսենոփոնի՝ թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում կային բազմաթիվ մեծ ու փոքր շեն գյուղեր, որոնց միջով անցնում էին հույները: Մեծ գյուղերում նստում էին «թագավորները»՝ Արևելքում՝ Օրոնտը, իսկ Արևմուտքում՝ Տիրիբազը (նա հորջորջված է որպես Արևմտյան Արմենիայի կառավարիչ՝ հյուպարքոս): Մեծ գյուղերից Արևելյան Հայաստանում նշանավոր է եղել նաև սատրապանիստը: Մյուս գյուղերը, որոնք կառավարվում են իրենց իշխաններով կամ գյուղապետերով («քոմարխէս»), ցրված էին երկրի զանազան կողմերում: Մեծ ու փոքր գյուղերը. մեծ մասամբ շինված էին ջրառատ տեղերում, գետի ափերին: Բայց քանի որ այդ գյուղերը թշնամիների կողմից միշտ ենթակա էին ամեն տեսակ ասպատակությունների, կողոպուտի ու հափշտակությունների, ինչպես, օրինակ, անում էին Քսենոփոնի իշխանության տակ եղած զորքերը, պարզ է, որ պետք է շինված լինեին ամուր տեղերում, լեռների վրա:

Քսենոփոնի տեղեկացմամբ հույները, կարդուխների երկրից անցնելով Կենտրիտես գետը, որը սահմանն էր նրանց և Արմենիայի միջև, չեն հանդիպել գյուղերի, որը հետևանք էր հայերի և կարդուխների միջև բախումների: Գետից 5 **փարսախ** կամ մոտավորապես 25 կմ հեռավորության վրա՝ այժմյան Սղերդի կամ Ռնդվանի շրջանում, հույները մտել են մի մեծ գյուղ, որտեղ տների մեծամասնության վրա եղել են աշտարակներ: Մեծ գյուղերն ունեցել են ամրության ու պաշտպանության համար շինված բերդեր կամ աշտարակներ, ինչպես սատրապանիստ գյուղում: Հայաստանի հարավային սահման-

ներով անցնելիս «այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ» («Անաբասիս», IV, 4, էջ 93): Քսենփոնի այս նկարագրությունը ենթադրել է տալիս, որ նշված խոշոր բնակավայրը Հայաստանի հնագույն քաղաքներից մեկն էր: Այն, որ այդ բնակավայրը Քսենոփոնը համարում է գյուղ, պետք է բացատրել այն հանգամանքով, որ հելլենները քաղաք չէին համարում պարսպով չշրջապատված բնակավայրը: Նույնիսկ 15 դար անց բյուզանդական մի հեղինակ միջնադարյան Հայաստանի խոշորագույն քաղաքներից մեկը՝ առևտրի հայտնի կենտրոն Արծնը, համարում էր գյուղաքաղաք՝ հակառակ նրան, որ այն ուներ ավելի քան հարյուր հազար բնակիչ: Եվ դա, հավանաբար, սոսկ այն պատճառով, որ Արծնը շրջապատված չէր քաղաքային պարսպով:

Գյուղական տների ակնարկային նկարագրությունից երևում է, որ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների տները տարբերվում էին կենտրոնական և հյուսիսային շրջաններից: Այդ առանձնահատկությունը սահմանամերձ շրջաններում բացատրվում էր պաշտպանական նկատառումներով: Առաջինները աշտարակավոր էին: Նման բնակարանները, ըստ ազգագրական դիտարկումների, կոչվում են **քոշք**, որը բնորոշ էր Սասունին, նաև Պոնտական Հայաստանին: Դրանք 2-3 հարկանի ամրոցատիպ, լեռ քարերից պատրաստված տներ էին, որոնց առաջին հարկը կթու և լծկան անասուններին էր հատկացվում, երկրորդը՝ մարդկանց, իսկ երրորդը, որ կոչվում էր **ռոշ,** գյուղատնտեսական մթերքների պահպանմանը և վտանգի դեպքում՝ պաշտպանվելուն[62]: Ըստ երևույթին, նման տների կառուցվածքի ակունքները պետք է որոնել ուրարտական ճարտարապետության մեջ, որտեղ կիրառվել են աշտարակաձև կառույցները, հավանաբար՝ աշտարակաձև բնակարանները[63]:

Առանձնապես հետաքրքրական է տների նկարագրությունը: Ըստ Քսենոփոնի՝ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային մասերի տներն «այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունն-

---

[62] Այս մասին մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան,** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե., 2004, էջ 43-51 և գրչանկարների հավելված, էջ 222-227:

[63] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** Искусство Урарту, Л., 1962, նկ. 55, 56:

րի համար մուտքը փորված էր [գետնի միջով], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով» («Անաբասիս», IV, 25, էջ 97):

Հայոց լեռնաշխարհի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի հնագիտորեն ուսումնասիրված տների մեջ հետազոտողները տեսնում են հայկական ժողովրդական տան վաղ օրինակը, որը ճարտարապետական ավելի զարգացած ձևի՝ գլխատան նախատիպն է[64]: Հարյուրամյակների ընթացքում գետնափոր բնակարանը վերածվեց գլխատան՝ իր տարբեր ծածկերով:

Ըստ հեղինակներից մեկի՝ «եթե այդ… տների հետ համեմատելու լինենք ներկայումս [XX դարի սկզբին] Շիրակում, Ապարանում և ուրիշ հայկական գավառներում գտնվող բազմաթիվ գյուղերի տները կամ «օդա»-ները, որոնք նույն դերն են կատարում, ինչ կատարում էին Քսենոփոնի նկարագրածները, կտեսնենք, որ հայ գեղջուկի տունը, գրեթե նույնն է մնացել, ինչ եղել է դեռ այդ խավար ու մութ դարերում: Իսկ թե ինչ հանգամանքներ են նպաստել հայ գեղջուկին մնալու զարգացման նույն աստիճանի վրա, որ եղել է նախնական դարերում, նշված հարցի պատասխանը, անշուշտ, պատմական կյանքի զանազան աննպաստ պայմաններում պետք է որոնենք»[65]:

Այսպիսի տների մասին ուշագրավ աշխատություն ունի Փարսադան Տեր-Մովսիսյանը[66]: Քսենոփոնը հիշատակում է բազմաթիվ գյուղեր, սակայն չի նշում բերդերի, ամրոցների, քաղաքների մասին, հավանաբար պատճառն այն է, որ նահանջող զորքը խուսափել է մոտենալ խոշոր բնակավայրերին, որոնք դիմագրավելու մեծ կարողություն ու բնակչություն ունեին:

Տարազ, ագանելիք, զենք ու զրահ: Քսենոփոնը ուշագրավ տեղեկություններ է թողել հայոց տարազի և զարդարանքի առանձնահատկությունների մասին: Այսպես, նա գրում է արմեն երեխաների «բարբարոսական զգեստների» մասին. արմենների տներում «չոր խոտե պսակներով զարդարված հելլեն զինվորներին սպասավո-

---

[64] Տե՛ս **Գ. Տիրացյան,** «Անաբասիսը» և Հայաստանը, տե՛ս «Անաբասիս», Ե., 1970, էջ 234:

[65] **Գ. Ղազարյան,** Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի, Թիֆլիս, 1908, էջ 21:

[66] Տե՛ս **Փարսադան Տէր-Մովսիսեան,** Հայ գիւղական տունը, թարգմ.՝ Պիլեզիկճեան, Վիեննա, 1894:

րություն էին անում արմենների երեխաները՝ բարբարոսական զգեստներ հագած» «Անաբասիս», IV, 33, էջ 98): Հայաստանով նահանջող հույների մասին Քսենոփոնը հաղորդում է, որ զինվորները իրենց ոտնամանները փոխարինել էին տեղականով: «Հին ոտնամանները մաշվելուց հետո,– գրում է նա,– նրանց (հույների) ոտնամանները գեղջկական էին՝ եզան նոր քերթած կաշուց պատրաստված» («Անաբասիս», IV, 14, էջ 96): Դա հայկական ավանդական տրեխի (չարոխ) գործածության վերաբերյալ հնագույն գրավոր տեղեկություն է, որի վկայությունը հաստատվեց Արենի բնակավայրի մոտակայքում քարանձավի պեղումներից. գտնվեց ավելի քան վեց հազար տարվա վաղեմությամբ կոշիկ, որը իր տեսքով ու ձևով ոչնչով չի տարբերվում XX դարի առաջին կեսերին գործածված տրեխներից: Այն աշխարհի հայտնաբերված հնագույն կոշիկն է[67]:

Հայերի հետ հարաբերությունները լավացնելուց հետո, նրանց խորհրդով, լեռնաշխարհի ձյունառատ վայրերը կտրել-անցնելու և ձյան մեջ չխրվելու համար հույները հագել են հյուսածո ոտնամաններ կամ հաստ թաղիքով փաթաթել են անասունների և իրենց ոտքերը. «Արմենների գեղջավագը սովորեցրեց ձիերի ու գրաստների ոտքերին ձյան միջով գնալիս պարկեր փաթաթել, քանզի առանց պարկերի անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ» («Անաբասիս», IV, 36, էջ 98):

Քսենոփոնի մի ակնարկից պարզվում է, որ հայ ունևոր կանայք զարդեր կրելու սովորություն են ունեցել: Իսկ Կյուրոսի հետևյալ խոսքից երևում է, որ զարդեր կրել են նաև տղամարդիկ: «Դու ուղարկի՛ր որդուդ զորքի մեջ (ասում է Կյուրոսը հայոց թագավորի կնոջը) ու նրանցով (այսինքն՝ ոսկե դրամներով) ամենագեղեցիկ կերպով նրան զարդարի՛ր» [«Կյուրոպեդիա» III, III, էջ 116–117]:

Հետաքրքիր է հայ զինվորների զինվածության և ճարպկության նկարագրությունը. «Նրանք այնքան ճարպիկ էին, որ անգամ մոտիկ լինելիս կարողանում էին փախչելով ազատվել, քանզի նրանք ուրիշ ոչինչ չէին կրում, բացի աղեղներից ու պարսատիկներից: Նրանք գերազանց

---

[67] Տե՛ս **Բ. Գասպարյան,** Արենի 1 քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները: Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Զեկուցումների դրույթներ, 17-19 հոկտեմբերի, 2013, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 77-78:

նետաձիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր» («Անաբասիս», IV, 28, էջ 88): «…Իսկ մակրոնները, որոնք ունեին հյուսկեն կաշեպատ վահաններ, տեգեր ու նիզակներ և այծի մազից պատրաստած խիտոններ (զգեստներ)…» («Անաբասիս», IV, 8, էջ 105):

Հիշատակում է ձերբակալված պարսիկ զինվորական պատանդի հագուկապը, զենքն ու զրահը: Պարսկական տարազի տարրերի նկարագրությունը դարձյալ եզակի նշանակություն ունի, քանզի պարսկական տիրապետության տակ հայտնված հայ զինվորականի, հայ տարրի վրա պետք է որ մեծ ազդեցություն գործած լիներ: Ըստ Քսենոփոնի՝ պարսիկ զինվորականը կրում էր՝ **խիտոն**՝ վերնաշապիկ՝ առանց թևերի, **կնեմիս**՝ մետաղյա զրահ, որը կռվի ժամանակ ռազմիկի ծունկն ու սրունքը պահպանում էր հարվածներից: **Արքունի ծիրանակիր** տիտղոսը կրում էին պարսկական զորքի դրոշակակիրները, քանի որ դրոշները ծիրանագույն էին: **Կանդիսը** պարսկական երկար, ծիրանագույն թևավոր վերնազգեստ էր, **անաքսիրիդը**՝ երկար ու նեղ անդրավարտիք, **տիարան**՝ խույրը, որը գլխին ուղիղ դնելու իրավունքը միայն պարսից արքայից արքան ուներ, մյուսները պարտավոր էին այն գործածել վերևի սուր ծայրը դեպի ներքև ծռելուց հետո միայն [«Կյուրոպեդիա» I, II, էջ 9, 11]: **Դիադեման** պարսկական խույրի տարատեսակ է, որը պարսիկները անվանում էին «կիդարիս», զարդարված էր լինում մանիշակագույն և սպիտակ երիզներով [«Կյուրոպեդիա» VIII, III, էջ 329]:

Քսենոփոնի մոտ կան հիշատակություններ այն մասին, որ թագավորական պատմուճանները ծիրանագույն էին, իսկ երբեմն էլ՝ սպիտակավուն խառը գծերով: Այդ գույները գործածական էին նույնիսկ պարսկական արքաներ Կյուրոսի և Դարեհի ժամանակ: Նույն գույնի պատմուճանի գործածությունը տեսնում ենք Ալեքսանդր Մեծի մոտ[68]: «Կյուրոպեդիա» երկում լավ է ներկայացված պարսկական և մեդական արքաների արտաքին կերպը, որի շատ գծեր ընդհանրական էին հայ արքայական դասի համար: Ըստ Քսենոփոնի՝ Մեդիայի արքան [Աստյուագեսը՝ Կյուրոսի պապը – Ռ. Ն.] «զարդարված, աչքերը՝ ծարիրված, երեսը՝ սնգուրած, գլխին կեղծամ, ըստ մեդական սովորության՝ ծիրանի խիտոնը (անթև երկար վերնազգեստ) հագին,

[68] Տե՛ս **Վ. Հացունի,** Պատմություն հին հայ տարազի, Վենետիկ, 1923, էջ 73:

վզից կախված մանյակները և թևերի ապարանջանները [փայլ էին տալիս արքային], մինչդեռ պարսից երկրում [ըստ Քսենոփոնի – Ռ. Ն.] մինչև այժմ էլ զգեստը շատ ավելի համեստ է: Մեդիացիները առավել փափկակենցաղ էին և վարում էին շռայլ ու զեխ կյանք, պարսիկների ապրուստը ավելի պարզ էր» [«Կյուրոպեդիա» I, III, էջ 13–14]:

§ 1.2.5.ա ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ

Քսենոփոնը զգալի տեղեկություններ է հաղորդում հին հայկական ընտանիքի և ժառանգական իրավունքի մասին: «Կյուրոպեդիայում» արմեն թագավորի ընտանիքի՝ լեռներում թաքնվելու, Կյուրոսի կողմից գերվելու և ապա դատվելու մասին խոսելիս նա բացահայտում է այդ գերդաստանի ներքին կապերը: Ներկայացնենք Կյուրոսի և հայոց թագաժառանգի երկխոսությունը.

«–Դու ևս, ո՛վ Տիգրան,– ասում է Կյուրոսը,– ասա՛ ինձ, որքան կվճարես, որպեսզի ստանաս կնոջդ:

Եվ Տիգրանը (թագավորի որդին), որը նոր էր ամուսնացել և շատ էր սիրում իր կնոջը, ասաց.

«–Ես, ո՛վ Կյուրոս, նույնիսկ իմ կյանքը կտամ, որպեսզի նա երբեք ստրուկ չդառնա»:

«–Ուրեմն դու,– ասաց Կյուրոսը,– տար կնոջդ. ես չեմ համարում, որ նա գերի է բռնվել, քանզի դու երբեք չես լքել մեզ: Դու ևս, ո՛վ արմենների թագավոր, տար կնոջդ և զավակներիդ առանց փրկագնի, որպեսզի իմանաս, որ քեզ մոտ իրենք ազատ են վերադառնում» [«Կյուրոպեդիա», III, I, 36, էջ 105-106]:

Այս խոսակցությունից հետո խանդից դրդված թագավորազն Տիգրանը իր կնոջը հարց է ուղղում.

«–Իսկ քեզ, ո՛վ, արմենուհի, Կյուրոսը նույնպե՞ս գեղեցիկ թվաց»:

«–Վկա է Զևսը (Հ. Մանանդյանը թարգմանել է «Արամազդ», հավանաբար այն պատճառով, որ հայկական միջավայրում Արամազդը համարվում է գերագույն աստված, ինչպես հույների մոտ՝ Զևսը),– ասաց կինը, որ ես նրան չէի նայում»:

«–Հապա ո՞ւմ էիր նայում»,– հարցրեց Տիգրանը:

«–Վկա է Զևսը, ես նրան էի նայում, ով ասաց, թե իր կյանքը կտա, որ ես ստրուկ չլինեմ» [«Կյուրոպեդիա», III, I, 41, էջ 106]:

Ուշագրավ է, որ թագավորազն Տիգրանը Կյուրոսի բանակ է մեկնում կնոջ հետ: Իսկ կինը, որ արիաբար կռվել էր, Կյուրոսի կողմից նվերների է արժանացել:

«Կյուրոպեդիա»-ում [III, I, էջ 94] ակնարկ կա հայոց արքայի բազմաթիվ կանանց և հարճեր ունենալու մասին: Հայոց արքան, անհանգստացած պարսից Կյուրոս արքայի դատաստանից (հարկ, տուրք, զորք Պարսկաստանին տալու պահանջը չկատարելու պատճառով), «առավել վախեցավ, որ կնկատվի, թե ինքը սկսել էր ամրացնել արքայանիստը, որպեսզի կարողանար դիմադրություն ցույց տալ: Այս բոլորի պատճառով անհանգստացած՝ նա միաժամանակ ոմանց ուղարկեց տարբեր կողմեր՝ զորք հավաքելու, իսկ կրտսեր որդուն՝ Սաբարիսին (Շավարշին), և ավագ որդուն (Տիգրան Երվանդյանին)[69] **ու իր կանանց, ինչպես նաև դուստրերին ուղարկեց** լեռները (ապահովության համար), նրանց հետ ուղարկեց նաև զարդերն ու առավել արժեքավոր իրերը՝ տալով նրանց ուղեկիցներ»: Դժվար չէ նկատել, որ VI-V դարերում Հայաստանում արքաներին տրված էր բազմաթիվ կանայք ունենալու իրավունք:

«Կյուրոպեդիա» գրքում բերվում է անտիկ դարաշրջանում լայն կիրառություն գտած այն սովորությունը, որ անհրաժեշտ արիություն չդրսևորած քաղաքացիները [Սպարտայում,– Ռ. Ն] պատժվում էին խստագույնս: Նրանք դատապարտվում էին պատվազրկության, այսինքն՝ զրկվում էին քաղաքացիական իրավունքներից և դառնում համընդհանուր արհամարհանքի առարկա: Փողոցում հանդիպելիս ամեն քաղաքացի իրավունք ուներ նրանց անպատիժ վիրավորել: Այդպիսիներին ոչ մի քաղաքացի իր աղջկան կնության չէր տալիս: Նման մարդկանց որդիները նույնպես ենթարկվում էին հասարակության արհամարհանքին [«Կյուրոպեդիա» III, III, էջ 128]: Այդ մասին Քսենոփոնը պատմում է նաև «Անաբասիսում» [I, 8, 16, էջ 29]:

Քսենոփոնի հավաստմամբ մի կարևոր հիշատակություն ևս. մեդական և պարսկական սովորույթը թույլ էր տալիս մերձավորների ամուսնություն: Այսպես, Կյուրոսը ամուսնանում է իր մորաքրոջ՝

---

[69] Մանրամասն տե՛ս **Ս. Կրկյաշարյան,** Երվանդունի թագավորության հարստության մասին, ՊԲՀ, 1973, թիվ 4:

Մեդիայի արքայադստեր հետ: Մեդիայի արքա Կյուաքսարեսը «Կյուրոսի մոտ ուղարկեց իր դստերը, որպեսզի նրան մատուցի ոսկե պսակ, ապարանջաններ, մանյակ և ամենագեղեցիկ մեդական տարազ: Աղջիկը պսակազարդեց Կյուրոսին, իսկ Կյուաքսարեսն ասաց. «Ով Կյուրոս – կնության եմ տալիս քեզ այս աղջկան՝ իմ հարազատ դստերը: Որպես օժիտ՝ ես նրա հետ քեզ տալիս եմ նաև ամբողջ Մեդիան, քանի որ ես հարազատ արու զավակ չունեմ: Քո հայրը ևս ամուսնացել էր իմ հոր դստեր հետ, որից դու ես ծնվել» [«Կյուրոպեդիա» VIII, V, 19, էջ 351]: Մեկ այլ ընդհանրական սովորույթի մասին. «Ճանապարհին իրար հանդիպած պարսիկներին հեշտ է որոշել, թե արդյոք նրանք հավասար են կամ ազգական. այս դեպքում ողջույնի փոխարեն նրանք իրար բերան են համբուրում» («Կյուրոպեդիա», IV, 27, էջ 33): «Ազգականները,– շարունակում է պատմիչը,– որևէ տեղ մեկնելիս, իրարից բաժանվելիս կամ երկար ժամանակ իրար չտեսնելիս, տևական ժամանակ անց հանդիպելիս իրար բերան են համբուրում» (նույն տեղում, 28, էջ 34): Փոշտալը, ըստ պարսկական սովորույթի բարի նշան էր համարվում: Փոշտոցին ներկա եղողները պատասխանում էին՝ «խեր», «աստված օգնական»: Սովորույթներ են, որոնք բնորոշ են եղել նաև հայերին:

Ակնարկ կա նաև հայերի՝ մահվան ու հուղարկավորման հեթանոսական սովորույթների վերաբերյալ: Երբ արքայազն Տիգրանը լսեց հոր՝ հայ-արմենների արքայի մահապատժի մասին, ***«պոկեց խույրը գլխից և սկսեց զգեստը պատառոտել, իսկ կանայք աղաղակելով ճանկռոտում էին երեսները՝ կարծելով, որ արդեն կորստյան էր մատնվել իրենց հայրը, և կորչում էին իրենք ևս»*** [«Կյուրոպեդիա» III, I, 13, էջ 97-98]:

Նման բովանդակությամբ բազմաթիվ հաղորդումների հանդիպում ենք նաև հետագայում վաղմիջնադարյան հայ պատմիչների երկերում. Փ. Բուզանդը հայոց Տիրան արքային պարսիկների կողմից կուրացնելու և երկիրը ավարի ու ավերի ենթարկելու առթիվ գրում է. «Մի տեղ ժողովվելով կոծում, սգում ու ողբում էին իրենց բնիկ տիրոջը՝ Հայոց թագավորին, ինչպես և աշխարհի կորուստն և իրենց անտիրական մնալն ու կործանվելը. աղիողորմ կերպով լալիս էին»[70]: Նույն պատմիչի հավաստմամբ՝ սպանվածի (Գնել Արշակունու –

[70] **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ս. Մալխասյանցի, ԵՊՀ հրատ., Ե., 1987, III դպր., գլ. Ի, էջ 85:

Ռ. Ն.) կինը՝ Փառանձեմը, զգեստները պատառոտած, վարսերը արձակած, կուրծքը բաց, կոծում էր սգատեղում, բարձր ճչում էր, աղիողորմ ողբով և արտասուքով բոլորին լացացնում էր», «մազերը փետում էր, ճչում էր կոծելիս»[71]: Իսկ [կաթողիկոս] Ներսեսի մահից հետո ողբում էին փողերով, փանդիռներով ու վիներով, կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ, դեմ առ դեմ ճիվաղական պարեր խաղալով, ծափ զարնելով հուղարկավորում էին մեռելները»[72]: Նման սովորությունը, հակառակ եկեղեցու կանխարգելիչ որոշումների, շարունակում էր գոյատևել Հայաստանի տարբեր գավառներում մինչև XX դարի սկզբները[73]:

«Կյուրոպեդիա» աշխատության մեջ [III, III, 3, էջ 116–117] խոսվում է հայերի հուղարկավորման մեկ այլ սովորույթի մասին ևս. արքունի մարդկանց, թագավորի և նրա ընտանիքի անդամների մահվան ժամանակ մեռնողի հետ հուղարկավորում էին ոչ միայն իր զենքն ու զրահը, անձնական իրերը, զարդեղենը, այլև նրա ոսկե դրամները: Ահա այդ սովորույթի նկարագրության մի օրինակ. «…Արմեն թագավորի կինը իր դուստրերի և կրտսեր որդու հետ Կյուրոսի դիմավորման ժամանակ նրան այլ ընծաների հետ բերեց նաև ոսկի, որը նախապես Կյուրոսը չէր ուզեցել վերցնել: Կյուրոսը այդ տեսնելով, ասաց. «Դուք այնպես մի արեք, որ ես այս ու այն տեղ շրջելիս բարեգործություն անեմ հանուն վարձատրության. բայց դու, ով թագուհի, վերցրու քո բերած փողերը և գնա ու այլևս մի տուր դրանք արմենին [ամուսնուն – Ռ. Ն.], որ **նա գետնի մեջ թաղի** [հուղարկավորման ժամանակ – Ռ. Ն.], այլ այդ դրամով որդուդ զարդարի՛ր ամենագեղեցիկ ձևով և նրան ուղարկի՛ր զորքի մեջ, իսկ մնացածով քեզ, ամուսնուդ, դուստրերիդ ու որդիներիդ համար գնի՛ր այնպիսի բաներ, որոնցով զարդարվելով՝ ձեր կյանքը կանցկացնեք առավել գեղեցիկ և ուրախ: **Իսկ հողում,– ասաց նա,– բավական կլինի, որ մեր մարմինները թաղվեն, երբ մեզանից որևէ մեկը վախճանվի»** («Կյուրոպեդիա», III, 3, էջ 117)**:** Այս երկխոսությունից հայտնի է դառնում նաև, որ հնում հայ տղամարդիկ նույնպես զարդեր կրելու սովորություն են ունեցել:

---

[71] Նույն տեղում, IV դպր., գլ. ԺԵ, էջ 191:

[72] Նույն տեղում, V դպր., գլ. ԼԱ, էջ 351:

[73] Տե՛ս մանրամասն **Ռ. Նահապետյան,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, էջ 49-59:

Հույների սովորույթի համաձայն՝ մեծագույն սրբապղծություն էր սպանվածներին առանց հողին հանձնելու լքելը: Ահա թե ինչու, հույների և կարդուխների միջև ժամանակավոր զինադադար էր կնքվում մեռյալներին հողին հանձնելու համար: «Նրանք [կարդուխները- Ռ.Ն.] հոժարեցին վերադարձնել (սպանված հույն զինվորներին) պայմանով, որ հելլենները չհրկիզեն տները: Քսենոփոնը համաձայնվեց այդ պայմանին» («Անաբասիս» IV, 18-19, էջ 87): Անտիկ աշխարհի մի շարք գրական հուշարձաններում՝ «Իլիական», «Ոդիսական», «Անտիգոնե», այս երևույթը հելլենների և նրանց դեմ պատերազմողների միջև դարձել էր հիմնական բախումներից մեկը:

«Կյուրոպեդիա» աշխատության մեջ պատմագիրը նշում է հայերի ազատատենչ ոգու մասին, որ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել և օգտվելով բարեհաջող հանգամանքներից՝ պարբերաբար ապստամբել են և աշխատել են թոթափել օտար տիրապետության լուծը («Կյուրոպեդիա», III, 1, 1-3, էջ 94):

§ 1.2.5. Բ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ

Ուշագրավ են պատմիչի վկայությունները Հայաստանի հասարակության կառուցվածքի վերաբերյալ: Բնական է, որ հին Հայաստանի հասարակության ուսումնասիրողները իրենց ուշադրությունը սևեռում են այն կարևոր տվյալների վրա, որոնք թողել է Քսենոփոնը գյուղական կենցաղի և կացութաձևի վերաբերյալ:

Հին հայկական գյուղական համայնքի մասին մեկ-երկու ուղղակի, բայց մեծ մասամբ անուղղակի վկայություններ է թողել Քսենոփոնը վերը նշված աշխատություններում: Պատմիչը Արմենիան կոչել է «մեծ ու բարեկեցիկ» երկիր: Այս «մեծ ու բարեկեցիկ» երկրի բնակչությունը նստակյաց էր. զբաղվում էր ոչ միայն երկրագործությամբ, այլև այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, մշակում էր տեխնիկական բույսեր: Արմեն-հայերը ցանում էին ցորեն, գարի և այլ հացաբույսեր, ստանում խաղող, սեխ, ձմերուկ, կորիզավոր բազմատեսակ պտուղներ: Այգեգործության արդյունքներից ստանում էին անուշահոտ գինիներ, օղի, ոգելից այլ խմիչքներ, պատրաստում էին չամիչ, ունեին բոլոր տեսակի ընդեղենները, մշակում էին քնջութ, ձի-

թապտուղ, խոզի ճարպ, դառը նշի և բևեկնի յուղեր: Ունեին ընտանի կենդանիներ՝ եզներ, կովեր, ձիեր, ոչխարներ, այծեր և թռչուններ [«Անաբասիս», IV, էջ 88-98]:

Արմենների գերակշիռ մասը, հայտնում է Քսենոփոնը, ապրում էր գյուղերում: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր գյուղապետ-գեղջավագը կամ կոմարխոսը: Գյուղի կառավարչական բարձրագույն օրգանը համարվում էր համայնաժողովը. համայնաժողովը համայնքի գործերը կառավարելու համար ընտրում էր «ավագների» կամ «ծերերի» խորհուրդ, որի մեջ մտնում էին «երևելի և պատվելի արմենները»: Գյուղապետ-կոմարխը մյուս արմեններից տարբերվելու համար ապրում էր իր համար կառուցված «ապարանք-ամրոցում»: Նա կառավարում էր գյուղը, բաժանում և վերաբաժանում հողերը, պարտավոր էր ռազմական արշավանքների ժամանակ մատակարարել բանակին, կազմակերպել և դուրս բերել գումակ:

Հայկական համայնքում ընդգրկված յուրաքանչյուր «տուն», «ծուխ», «երդ» ուներ իր առանձին բնակարանը, որտեղ մարդկանց հետ ապրում էին նաև ընտանի կենդանիները: Ահա այս առանձին տների կոլեկտիվ կազմակերպությունն էլ կազմում էր գյուղական այն համայնքը, որի հիմքում արդեն ընկած էին ոչ թե արյունակցական-ազգակցական, այլ տարածքային-տնտեսական կապերն ու հարաբերությունները:

Քսենոփոնի մոտ կան մի շարք այլ վկայություններ, որոնք հիմք են տալիս ասելու, որ պատմաշրջանում արմեն հասարակությունը ներառված էր նյութական և սոցիալական ընդգծված շերտավորման ոլորտի մեջ: Նստակյաց և երկրագործ արմենները տնտեսության մեջ լայնորեն օգտագործում էին մետաղական գործիքները, ունեին երկաթե խոփով արոր, գութան: Քսենոփոնը փաստեր է բերում, որոնք հաստատում են, որ այս շրջանում մասնավոր սեփականությունը և անհատական հարստություններն աճում են արտակարգ չափերով: Արմեն-հայերի թագավորի և նրա ընտանիքի հարստությունը կազմում էր 3000 տաղանդ (ատտիկյան տաղանդը կշռում էր 26,2 կգ): Բավականին հարստություն ունեին իշխանները, «երևելի և պատվելի արմենները»: Արմենիայում, բացի թագավորից, մեծամեծ իշխաններից, գյուղացիներից, կային նաև ծառա աղախիններ, ստրուկներ, ջրկիրներ, փայտակիրներ, գումակավորներ, վարձկան զինվորներ [«Կյուրոպեդիա», III, I, 31-37, էջ 103-105]: Անտարակույս, այս հասա-

րակությունը չէր կարող տոհմային հասարակություն լինել. հասարակական արտադրական միավորն այս շրջանում արդեն գյուղական համայնքն էր:

Նշված վկայությունների առաջին լուրջ ուսումնասիրողը եղել է Նիկողայոս Ադոնցը: Նա հանգել է այն եզրակացության, որ Քսենոփոնի նկարագրած Հայաստանի գյուղերը եղել են տոհմական, իսկ հիշատակված գյուղապետերը՝ կոմարխները՝ տոհմի առաջնորդներ, տոհմապետեր: «Հայաստանը,– գրում է Ադոնցը,– բաղկացած էր բացառապես գյուղերից, որոնց գլուխ կանգնած էր պետը (կոմարխը): Հույն պատմիչի նկարագրած գյուղի նահապետական պատկերից դժվար չէ կռահել, որ կոմարխները տոհմապետեր էին, որոնք ապրում էին գյուղերում: Գյուղը, իրեն բնորոշ պատնեշներով, նահապետական տնտեսության գետնափոր տներով, որտեղ մարդկանց հետ միասին տեղավորված էին անասունները… այս բոլորը պատկանում են ոչ այլ, քան միայն տոհմային կացութաձևին»[74]: Այս հանգամանքը, Ադոնցի կարծիքով, հաստատվում է նաև գյուղապետի՝ իր ազգակիցների նկատմամբ կարեկցանքի դրսևորման փաստով, ինչպես նաև պարսից թագավորին գյուղի կողմից տրվող տուրքի կոլեկտիվ բնույթով: Սակայն հայկական գյուղերի վճարած տարեկան, որոշակիորեն կարգավորված հարկի մասին Քսենոփոնի հիշատակությունները ևս չեն ներդաշնակում հայկական համայնքների մասին Ն. Ադոնցի ունեցած պատկերացումներին: Վերջապես, Քսենոփոնի ուշագրավ տեղեկությունները գյուղապետի մասին, որն իր ազգակիցներին հանդիպում է իր գյուղից դուրս, այլ գյուղերում, բացահայտում է գյուղական տերիտորիալ համայնքի հիմնական հատկանիշներից մեկը՝ տոհմական համայնքի տարատեղ բնակեցումը[75]:

Հ. Մանանդյանը այս հարցում հիմնականում համակարծիք է Ն. Ադոնցի հետ՝ նշելով աքեմենյան ժամանակաշրջանի հայկական գյուղերի տոհմական կազմակերպության մասին[76]: Ս. Երեմյանը և արդի հայագիտությունը բացահայտել են, որ Քսենոփոնի նկարագրած գյուղերը ոչ թե տոհմային կապերի վրա հիմնված միավորներ էին, այլ տարածքային և տնտեսական հատկանիշներով միավորված

---

[74] **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 390-391:

[75] Տե՛ս **Գ. Տիրացյան,** Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 457-463:

[76] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն, էջ 81:

գյուղական համայնքներ[77]: Քսենոփոնի նկարագրությունից իսկապես երևում է, որ մենամուսնության վրա հիմնված ընտանիքները ունեին իրենց տները, անասունները, գյուղատնտեսական մթերքները: Այլ կերպ ասած՝ առանձին ընտանիքներ արտադրության միջոցների, սպառման առարկաների նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք ունեին: Քսենոփոնը «պատվավոր արմենևներ» է համարել հայոց մեծամեծերին և իշխանավորներին: Այս փաստը կարևոր վկայություն է մ.թ.ա. VI դ. հայ հասարակության սոցիալական շերտավորման մասին: Նման ընտանիքների ամբողջությունից էլ հենց կազմվում էր գյուղական այն համայնքը, որը միավորված էր նախ և առաջ տնտեսական և ապա միայն (այն էլ մասնակիորեն) ազգակցական կապերով: Սակայն այդ վկայություններից էլ երևում է, որ գյուղական համայնքների մեջ դեռ շատ ուժեղ էին տոհմային համայնքի վերապրուկները:

Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ Քսենոփոնի տեղեկությունները չեն տալիս ժամանակի հայ հասարակության ամբողջական պատկերը, քանի որ չնչին բացառություններով վերաբերում են միայն գյուղական համայնքներին: Այդուհանդերձ, նրա վկայությունները չափազանց կարևոր ու արժեքավոր են, քանի որ գրի են առնվել ականատեսի կողմից և անկեղծորեն վկայում են հին աշխարհում հայերի ունեցած կարևոր դերի ու դիրքի մասին:

§ 1.3. ԴԻՈԴՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիոդորոս Սիկիլիացին (Ք.ա. 90-23թթ.) հունական անտիկ պատմագրության աչքի ընկնող դեմքերից է: Հռչակվել է «Պատմական գրադարան» երկով, որի վրա աշխատել է շուրջ 30 տարի: Աշխատությունը բաղկացած է եղել 40 գրքից, որոնցից մեզ են հասել 1-5-րդ և 11-25-րդ գրքերը, իսկ մյուսներից պահպանվել են միայն պատառիկներ: Աշխատությունն ընդգրկում է Հունաստանի, Հռոմի, Հին Արևելքի ու հելլենականացված երկրների պատմությունը, աշխար-

[77] Տե՛ս **С. Еремян,** Основные черты общественного строя Армении в эленистическую эпоху, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. 1948, թիվ 11:

հագրությունը՝ չանտեսելով ազգագրական ու մշակութային հարցերը: Պատմիչը առատ և բազմաբնույթ տեղեկություններ է գրի առել ոչ միայն ռազմաքաղաքական անցքերի ու իրադարձությունների, այլև աշխարհագրական բնույթի հարցերի ու տարբեր երկրներում բնակվող զանազան ժողովուրդների վարքուբարքի, նրանց սովորույթների, արհեստների և հավատալիքների վերաբերյալ: Առաջին հինգ գրքերում Սիկիլիացին ազգախոսական եղանակով շարադրել է ավանդական ժամանակների պատմությունը (մինչև Տրոյայի կործանումը), մյուսներում տարեգրության ձևով պատմությունը հասցրել է մինչև Հուլիոս Կեսարի Գալլիական պատերազմները (Ք.ա. 60 թ.):

Ի շարս վերոնշյալի՝ «Պատմական գրադարան»-ում արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նաև հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերի, այդ թվում՝ և հայ ազգագրության վերաբերյալ:

Դիոդորոսի երկի նշանակության մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ այն եղել է Մովսես Խորենացու գլխավոր աղբյուրներից մեկը: Պատմահայրը «Հայոց պատմության» երրորդ գիրքն սկսում է այսպիսի խոստովանությամբ. «Ոչ հին տարիների պատմություն է ունեցել մեր աշխարհը, ոչ էլ ժամանակի կարճության պատճառով կարողացանք անցնել բոլոր հունական (աղբյուրները), ոչ նույնիսկ Դիոդորոսի գրվածքները մեր ձեռքի տակ են, որ աչքերս նրա վրա պահելով՝ բոլորն անմոռաց անցնեինք, որպեսզի բաց չթողնեինք որևէ գլխավոր և պիտանի բան, որ արժան է մեր շարադրության մեջ հիշատակվելու»[78]: Կարծիք կա, որ Տրոյական պատերազմի մասին Խորենացին գիտի ոչ թե Հոմերոսի, այլ Դիոդորոսի միջոցով, քանի որ «Հայոց պատմության» համապատասխան հատվածներն առավելապես համընկնում են ոչ թե Հոմերոսի «Իլիականին», այլ Դիոդորոսի պատմածներին[79]: Բացի այդ՝ Շամի-

---

[78] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները՝ Ս. Մալխասյանի, ԵՊՀ հրատ., Ե., 1981, էջ 307:

[79] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Դիոդորոս Սիկիլիացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Ե., 1985, էջ 10: Սույն մենագրության նյութերը քաղված են այս հրատարակությունից՝ նշելով գիրքը, գլուխը, ենթագլուխը: Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկի Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ հրատարակված է նաև «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից

րամի մասին Խորենացու պատմածների հիմքում ընկած են ոչ միայն ժողովրդական բանահյուսությունից պատմահոր քաղած տեղեկությունները, այլև Դիոդորոսի համապատասխան վկայությունները: Մեզ համար վերջինիս երկը արժեքավոր է նաև այն տեսանկյունից, որ դրանում կա մի ընդարձակ հատված [գիրք XIV, գլ. 19-31], որտեղ համառոտակի պատմվում են այն նույն դեպքերը, որոնք մանրամասն շարադրված են Քսենոփոնի «Անաբասիս»-ում: Բայց, քանի որ Դիոդորոսն օգտվել է նաև այլ աղբյուրներից, ապա նրա հաղորդած որոշ տեղեկություններ ոչ միայն լրացնում են Քսենոփոնին, այլև բազմազանությամբ երբեմն տարբերվում են նրա պատմածներից[80]:

§ 1.3.1. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ, ԱՐՄԵՆԻԱ ԱՆՎԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԴԻՈԴՈՐՈՍԻ

Նախքան Դիոդորոս Սիկիլիացին, այլ հեղինակների մոտ Հայաստանի աշխարհագրական տարածքը բնորոշող որևէ անվանման չենք հանդիպում. առաջինը նա է, որ «Պատմական գրադարանում» տվել է Արմենիա անվանումը: Երկի գիրք II, գլ. I, 8-10-րդ ենթագլուխներում նշված է, որ «Ասորեստանի թագավոր Նինոսը, մեծ զորքով ներխուժելով Արմենիա, մի շարք քաղաքներ ավերելուց հետո կոտորեց նաև տեղի բնակիչներից շատերին, ուստիև նրանց [Արմենիայի] թագավոր Բարզանեսը, տեսնելով, որ ինքն ի վիճակի չէ նրա [Նինոսի] դեմ կռվելու, առատ նվերներով դիմավորեց նրան և ասաց, որ ինքը կկատարի նրա բոլոր հրամանները: Իսկ Նինոսը [Արմենիայի թագավորին] վերաբերվում է մեծահոգաբար և համաձայնում, որ նա տիրի Արմենիային և մնալով որպես իր բարեկամը՝ [բավարարվի միայն] զորք ուղարկելով և միջոցներ՝ իր բանակի համար»:

Նկատենք, որ առ այսօր հստակեցված չէ՝ պատմական ինչ անձնավորություններ են եղել Նինոսը և Բարզանեսը և որ ժամանակաշրջանում: Կարծիք է հայտնվել, որ Ասորեստանի թագավոր Նի-

---

մինչև Ք. հ. 298 թվականը» գրքում, (կազմողներ՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան, ԵՊՀ հրատ, Ե., 2007, էջ 138-141, 255-265, 267-268):

[80] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Դիոդորոս Սիկիլիացու վկայությունները Հայաստանի, հայերի և հարևան ժողովուրդների մասին, ՊԲՀ, 2016, № 3, էջ 125-140:

նոսը պետք է եղած լինի Ասորեստանի արքա Շամշի-Ադադ V-ը (823-811)՝ հռչակավոր Շամիրամի ամուսինը (Շամմուրամաթ, Սեմիրամիս), ինչպես որ ասված է նաև Մ. Խորենացու աշխատությունում[81]՝ հաշվի առնելով, որ, իրոք, վերջինս 823-820 թթ. արշավանքներ է կազմակերպել դեպի Ուրարտու-Նաիրի և Մարաստան: Այս նույն կարծիքի համաձայն՝ Արմենիան, իբր, եղել է ոչ թե պետական կազմավորման անվանում, այլ աշխարհագրական հասկացություն, քանի որ դեռևս գոյություն չուներ Արմենիա պետությունը, փոխարենը եղել է Ուրարտու պետությունը, իսկ Բարզանեսն էլ նույնացվել է Ուրարտուի թագավոր Իշպուինիին (մոտ 825-811)[82]: Այսպիսով՝ կարելի է վստահաբար ասել, որ Ք.ա. IX դարի իրադարձությունների հետ կապված Արմենիա անվանման այս հիշատակությունն ամենահինն է օտար հեղինակների երկերում:

Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան»-ում պահպանվել է նաև Սատրապական Հայաստանում Ք.ա. V դարավերջի իրադարձությունների, մասնավորապես տասը հազար հույների նշանավոր արշավանքը դեպի Պարսկաստան և այնտեղից Հայաստանի վրայով դեպի Սև ծով և ապա Հունաստան նահանջի նկարագրությունը, որն առավել հանգամանորեն ներկայացված է Քսենոփոնի «Անաբասիսում»:

Քսենոփոնի նման Դիոդորոսը ևս Կենտրիտես [Արևելյան Տիգրիս կամ Ջերմ] գետը համարում է կարդուխների երկրի և Արմենիայի սահմանը: Հեղինակը նշում է, որ հույները, անցնելով Կենտրիտես գետը, մտան Արմենիա [գիրք XIV, գլ. 27, 4-8]: Իսկ Քսենոփոնի «Անաբասիս»-ում ասված է, թե «հելլենները մտան Արևմտյան Արմենիա» [«Անաբասիս», III, 5, 17]: Դիոդորոսի հավաստմամբ՝ «Արմենիայի սատրապն էր Տիրիբազոսը, որի հետ դաշինք կնքեցին (հույները) և երկրի միջով անցան իբրև բարեկամներ» [գիրք XIV, գլ. 27, 4-8][83]:

Սիկիլիացու երկի գիրք XVII, գլ. 64-ում նշված է, որ 334 թ. Ալեքսանդր Մակեդոնացին Արմենիան Սարդեսի (Լիդիական սատրա-

---

[81] Տե՛ս **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, էջ 61:

[82] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 140, ծանոթ. 2, 3:

[83] Մինչդեռ ըստ Քսենոփոնի՝ Արմենիայի սատրապն էր Օրոնտաս-Երվանդը [«Անաբասիս», III, V, 17], իսկ Տիրիբազոսը սոսկ Արևմտյան Արմենիայի հյուպարքոսն էր, այսինքն՝ Օրոնտասի ստորադրյալը:

պության մայրաքաղաքի) հետ հանձնեց Միթրենեսին՝ Լիդիայի նախկին կառավարչին: Սակայն դա իրականում ձևական բնույթ ուներ, ուստի և Միթրենեսը երբեք չիշխեց Արմենիայում: Պատմիչը գրում է նաև սատրապական շրջանի Արմենիայի սատրապ Օրոնտասի [Երվանդի] մասին, որը Ք.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտի ժամանակ պարսիկների կողմում գլխավորում էր հայկական այրուձին: Աքեմենյան տերության կործանումից հետո Երվանդը հանդես եկավ որպես Հայաստանի անկախ կառավարիչ ու թագավոր [գիրք XIX, գլ. 23, 1-3]: Սա Երվանդ III-ն է (331-300): Մի առիթով էլ Սիկիլիացին հայտնում է, որ Երվանդը Պնկեստեսի բարեկամն էր, իսկ վերջինս Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվել էր Պերսիս [Պարսք] երկրի սատրապ: Այդ պաշտոնում նա մնաց անգամ Մակեդոնացու մահից (Ք.ա.323թ.) հետո: Ուշագրավ տեղեկություններ ենք ստանում նաև Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո տեղի ունեցած իրադարձությունների, նրա տերության տրոհման և Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ: Այսպես, Ալեքսանդր Մակեդոնացու մերձավոր զինակից Պերդիկկասը, որը զորավարի մահից հետո դարձել էր նրա տերության խնամակալը, Մակեդոնացու անձնական քարտուղար Եվմենես Կարդիացուն է հանձնում Պափլագոնիան և Կապադովկիան, իսկ վերջինիս թագավոր Արիարաթես II-ը ապաստանում է Հայաստանում: Արիարաթես II-ը, ըստ պատմագրի հիշատակության, «հայերի թագավոր Արդուատեսից (հավանաբար Օրանտաս-Երվանդից) օգնական զորք ստանալով, երկրից (Կապադովկիայից) վտարում է մակեդոնացիներին և վերանվաճում իր հայրենի իշխանությունը» [գիրք XXXI, գլ. 19, 4-5]: Հատկանշական է, որ Ալեքսանդր Մակեդոնացու հրամանատարների միջև բաժանված սատրապությունների թվում հիշատակված չէ Հայաստանը, հետևաբար, չի կարող կասկած լինել, որ Հայաստանը նվաճված չէր մակեդոնացիների կողմից, ուստի և երկիրը, ինչպես այս հատվածում նշում է Դիոդորոսը Ասիայի մյուս սատրապությունների մասին խոսելիս, «թողնվեց նախկին կառավարչի իշխանության տակ» [գիրք XVIII, գլ. 3, 3]:

Երկի գիրք XXXI-ում խոսվում է նաև Արտաշեսյանների հայկական պետության, Արտաշես I-ի թագավորության մասին: Այսպես, պատմիչը 17a ենթագլխում գրում է. «Հայաստանի թագավոր Արտաքսիասը [Արտաշես Ա Բարի, 189-160 թթ. Ք.ա.], ապստամբելով

Անտիոքոսից [խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծի մասին է՝ Ք.ա. 223-187 թթ.], իր անունով քաղաք հիմնեց [Արտաշատ մայրաքաղաքը, որ կառուցվել է Ք.ա. II դարի 70-ական թվականներին] և ժողովեց հզոր արանց: Իսկ Անտիոքոսը [սա արդեն Անտիոքոս IV Էփիփանես թագավորն է՝ 175-164 թթ.], որն այդ տարիներին հզոր էր, ինչպես ոչ ոք մյուս թագավորներից, արշավեց նրա վրա և, հաղթելով, ստիպեց նրան հնազանդվել» [գիրք XXXI, գլ. 17][84]:

Գիրք XXXI-ի 22-րդ ենթագլխում էլ պատմագիրը հավաստում է. «Այն բանից հետո, երբ Արիարաթեսը [Կապադովկիայի Արիարաթես V թագավորը՝ 163-130 թթ.] Միթրոբուզանեսին [խոսքը Ծոփքի թագավոր Զարեհի որդի Մեհրուժանի մասին է – Ռ. Ն.] վերականգնեց հայրենի տերության վրա, Արտաքսիասը՝ Հայաստանի թագավորը, չհրաժարվելով [Ծոփքի] իշխանության նկատմամբ իր ունեցած ընչաքաղցությունից, դեսպաններ ուղարկեց Արիարաթեսի մոտ՝ առաջարկելով նրան համաձայնել իր հետ և, յուրաքանչյուրն իր մոտ եղած երիտասարդին մահվան ենթարկելու գնով, իրար միջև բաժանել Սոփենեն» (Ծոփաց աշխարհի հունական անվանական ձևն է) [գիրք XXXI, գլ. 22]: Այս տեղեկությունից պարզ է դառնում, որ Կապադովկիայի Արիարաթես V թագավորը Միթրոբուզանես-Մեհրուժանին՝ Զարեհ թագավորի որդուն, օգնում է 163 թ. Ծոփքի թագավոր հռչակվելու: Արտաշես Ա Բարի Հայոց արքան դեսպանների միջոցով Կապադովկիայի թագավորին առաջարկում է իրար միջև բաժանել Ծոփքը՝ նրա մահացած թագավոր Զարեհի երկու որդիներին (որոնցից մեկը պատանդության մեջ էր Կապադովկիայի թագավորությունում, մյուսը՝ Մեծ Հայքի թագավորությունում) վերացնելու պայմանով: Հայոց արքան մերժում է ստանում, և Ծոփքը մնում է առանձին մինչև Տիգրան Բ Մեծի գահակալությունը: 27a ենթագլխում էլ խոսում է Սելևկյան երբեմնի հզոր պետության տրոհման, նրա դեմ հայ-մեդական՝ Տիմարքոս-Արտաշես II արքաների դաշինքի, Հայաստանի քաղաքական անհամեմատ բարձր դերակատարության մասին:

---

[84] Այս իրադարձությունների աղբյուրագիտական քննությունը կատարվել է Գ. Խ. Սարգսյանի կողմից (տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Ե., 1966, էջ 242-247):

§ 1.3.2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԻ ՈՒ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սիկիլիացու երկում տեղեկություններ կան Հայաստանի բնակլիմայական դաժան պայմանների վերաբերյալ: Ըստ նրա՝ «Արմենիայի լեռների միջով ուղևորվելիս, հույները առատ ձյան հանդիպեցին և բոլորը կործանման վտանգի տակ ընկան: …Ձյունը այնպես էր տեղում և երկիրը ծածկում, որ ո՛չ ճանապարհն էր երևում, ո՛չ էլ հնարավոր էր տեղանքի բնույթը տեսնել: …Հուսահատությունը և սարսափը համակել էր զինվորներին: …Երբ գիշերն անցավ, պարզվեց, որ բեռնակիր անասունների մեծ մասն արդեն սատկել է, և շատ մարդիկ մահացել են, ոմանց էլ աչքերը կուրացել էին ցրտից և ձյան արտացոլանքից» [գիրք XIV, գլ. 28, 1-5]:

Պատմիչը ուշագրավ նկարագրություն է թողել նաև հայ-արմենների տնտեսական կյանքի և նյութական մշակույթի առանձին տարրերի վերաբերյալ: Այսպես, կարդուխների երկրից Հայաստանի սահմանն անցնելով՝ հույները փրկվում են ոչնչանալուց: Նա բառացի գրում է. «Եվ բոլորն էլ կատարելապես կոչնչանային սովամահ լինելուց, եթե կարճ ճանապարհ անցնելուց հետո չպատահեին պարենաշատ գյուղերի: Այս գյուղերի տներում բեռնակիր անասունների մուտքը գետնափոր էր, իսկ մարդիկ իջնում էին աստիճաններով. բնակարաններում անասունները սնվում էին խոտով, իսկ մարդիկ վայելում էին կյանքի համար անհրաժեշտ բարիքների առատությունը» [գիրք XIV, գլ 28, 1-5]: Գրեթե այս նույն, բայց ավելի հանգամանալի նկարագրությանը հանդիպում ենք Քսենոփոնի մոտ» [«Անաբասիս», IV, 5-6, էջ 93]:

Գրքի XIV, գլ. 29, 1-6 հատվածում հանդիպում ենք ավելի ուշագրավ վկայության. Արաքս գետի վերին հոսանքում՝ «Փասիս գետի» մերձակա գյուղերում, «խայոյների» և «փասիաների» երկրի տները ևս լեցուն են եղել բարիքներով, ամենուրեք հույները մինչև համաձայնության գալը վարվել են դաժանորեն, «որոնց հետ կռվում հաղթելով, նրանցից շատերին սպանելով և գրավելով տեղաբնիկների լեցուն տները, ուր մնացին տասնհինգ օր»:

Հայաստանի հարևանությամբ «անցնելով Հյուրկանիան [հայ մատենագրության մեջ հիշատակվել է Վրկանաց երկիր անվամբ]՝

Ալեքսանդրը [Մակեդոնացին] հասավ Բարեբախտ (կոչվող) գյուղերը (Մարդերի երկիրը տանող ճանապարհի վրա), որոնք հիրավի այդպիսիք էին, քանզի այստեղ երկիրը ավելի բերքատու է, քան մեկ այլ վայրում: Ինչպես պատմում են, յուրաքանչյուր որթատունկ (այստեղ) տալիս է մեկ մետրետե (32,5 լիտր) գինի, իսկ թզենիները երբեմն տալիս են տասը մեդիմնոս (1 մեդիմնոսը, ինչպես ասվեց վերը, 52,5 լիտր է) չորացրած թուզ: Հնձելու ժամանակ լքված ցորենը հողին ընկնելիս, առանց ցանված լինելու, ծլում է և հասցնում առատ բերք: Տեղաբնիկներին հայտնի է մի ծառ, արտաքինով կաղնու նման, որի տերևներից մեղր է կաթում, ոմանք այն հավաքում են և առատորեն օգտագործում իրենց կարիքների համար: Այնտեղ կա նաև թռչող մի կենդանի, որը կոչում են **անթրեդոն** (բոռի նման), սա մեղվից փոքր է, բայց մեծագույնս օգտավետ: Այն թափառում է սարերում և բազմապիսի ծաղիկներից (նեկտար) հավաքում ու բնակվելով ժայռերի խոռոչների և շանթահարված ծառերի փչակների մեջ՝ այնտեղ խորիսխ է պատրաստում և արտադրում այնպիսի մի հեղուկ, որն իր քաղցրությամբ մեր մեղրին շատ չի զիջում» [գիրք XVII, գլ. 75, 3-6]: Նույնը գրեթե բառացի ասված է Ստրաբոնի երկում. «Ասում են, թե Հյուրկանիայում որթատունկը տալիս է մեկ մետրետե գինի, թզենին՝ վաթսուն մեդիմնոս (Դիոդորոսի մոտ՝ տասը), իսկ հասկից ընկած ցորենը նորից ծլում է, և մեղուները ծառերի մեջ պարսավորվում են ու տերևներից մեղր է ծորում. այսպես է լինում նաև Մեդիայի Մատիանեում և Արմենիայի Սակասենեում և Արաքսենեում»[85]: Ինչ վերաբերում է վերը նշված այն տեղեկությանը, թե «արտաքինով կաղնու նման ծառի տերևներից մեղր է կաթում», այն հայերը անվանում են **գազպեն** (մանանա), որն օգտագործվել է որպես սնունդ և դեղամիջոց: Սասունցիները մեղրանման այդ թանձր հյութը պահում էին կարասներում և գործածում մինչև նոր բերքահավաք[86]:

---

[85] Օտար աղբյուրները հայերի մասին: Հունական աղբյուրներ № 1, Ստրաբոն, գիրք II, I, 14, նաև՝ գիրք XI, VII, 2: Ավելի մանրամասն տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ՊԲՀ, 2015, թիվ 1, էջ 208-229:

[86] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Ե., 2012, էջ 212:

§ 1.3.3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԱՓ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սիկիլիացու երկում տեղեկություններ կան հին աշխարհում ընդունված տարածության և ժամանակի չափման միավորների վերաբերյալ: Այսպես, երկարության չափի միավոր է համարվել **պլեթրոնը**, որ հավասար էր 30,8 մետրի (գիրք XIV, գլ. 29, 1-6), իսկ **փարսախը** հավասար էր մոտ 5250 մետրի: Երկարության չափ էր **ասպարեզը**, որը հավասար էր 177 մետրի կամ 185 մետրի [գիրք II, գլ. 8, 1], իսկ գրկաչափը՝ որպես երկարության չափ, հավասար էր 1 ասպարեզի հարյուրերորդ մասին՝ 1,77 կամ 1,85 մետրի (գիրք II, գլ. 8, 6): Որպես բարձրության չափ՝ տարածված էր կանգունը (գիրք XIV, գլ. 27, 4-8): Կանգունը հավասար էր 0,5 կամ 1/4 գրկաչափի՝ 24 մատնաչափի: Կար նաև **արքունի կանգուն**, որը հավասար էր 27 մատնաչափի (գիրք II, գլ. 7, 4): Մակերեսի և երկարության չափման միավորն էր ոտնաչափը: Այսպես, Հայաստանից Բաբելոն տարված վիթխարի քարն ուներ 130 ոտնաչափ բարձրություն, 25 ոտնաչափ լայնություն և հաստություն [գիրք II, գլ. 11, 4]: Ոտնաչափը (ոտքի երկարության չափն է, որ հավասար է 30,8 սմ-ի) [գիրք II, գլ. 8, 1-4]: Ժամանակի և տարածության չափման միավոր է եղել օրը, օրվա անցած ճանապարհը: 1 օրվա ճանապարհը հավասար էր 1 փարսախի [գիրք XIV, գլ. 29, 1-6]: Որպես ծանրության չափ՝ հին աշխարհում ծառայել է տաղանդը: Ատտիկյան տաղանդը կշռել է 26,2 կգ: Հետագայում տաղանդը դարձել է նաև դրամի խոշոր միավոր, որը հավասար էր 60 արծաթ մինայի: Բաբելոնյան տաղանդը հավասար էր 100 մինայի և կշռում էր 44 կգ [գիրք II, գլ. 9, 1-6]: Մինան և՛ կշռի, և՛ դրամական միավոր էր. կազմում էր տաղանդի 1/60 մասը և հավասար էր 100 դրախմայի [գիրք XVII, գլ. 64, 6]: Դահեկանը պարսկական ոսկեդրամ էր և լայն շրջանառություն ուներ նաև Հռոմեական կայսրությունում, նրա ազդեցության տակ գտնվող երկրներում: Այն կշռում էր 8,40 գրամ: 300 դահեկանը կշռում էր 1 տաղանդ (26,2 կգ): 1 մեդիմնոսը տարողության չափ էր և կշռում էր 52,5 լիտր, իսկ մետրետեն հեղուկների չափ էր. 1 մետրետեն կշռում էր 32,5 լիտր:

§ 1.3.4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՐՈՇ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գիրք II, գլ. 11-ում խոսվում է մի ուշագրավ երևույթի մասին, որը մեծ արձագանք է ունեցել անտիկ դարաշրջանում: Այնտեղ ասվում է, թե «Շամիրամը (բնագրում՝ Սեմիրամիս) Հայկական լեռներից [պատմագիրը նկատի է ունեցել Հայկական Տավրոսի լեռները] մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25: Նա զորքերի և եզների բազմաթիվ լծերով այդ քարը իջեցրեց դեպի գետը [նկատի ունի Եփրատը] և այնտեղ բարձեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոն, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին՝ որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն իր ձևի պատճառով անվանում են կոթող և համարում այսպես կոչված յոթ հրաշալիքներից մեկը» [գիրք II, գլ. 11, 4][*]:

Ո՞վ է եղել Շամիրամը [Շամմուրամաթ, Սեմիրամիս]: Նա Ասորեստանի կիսաառասպելական-կիսապատմական թագուհին էր: Ըստ ասուրական առասպելի՝ Շամիրամը Դերկետո աստվածուհու դուստրն էր և պտղաբերության ու սիրո աստվածուհին: Ամուսնացել է Ասորեստանի Նինոս թագավորի հետ, որից ունեցել է Նինուաս անունով որդուն: Շամիրամը կառուցել է Բաբելոն քաղաքը, գրավել է Եգիպտոսը, Եթովպիան և Լիբիան, իսկ այնուհետև արշավել է դեպի Բակտրիա ու Հնդկաստան: Հայտնի էր իր գեղեցկությամբ, վավաշոտությամբ և պատերազմասեր բնավորությամբ: Նրա պաշտամունքը տարածվել էր նաև Հայաստանում և կապվել Արա Գեղեցիկի կերպարի հետ: Ինչպես վկայում են պատմական վավերագրերը, Ք.ա. IX դարի վերջերին Ասորեստանում իշխել է Շամմուրամաթ անունով թագուհի (810-806)՝ Շամշի-Ադադ V-ի կինը և Ադադ-Ներարի III-ի (810-783) մայրն ու խնամակալուհին: Ասորեստանի Շամմուրամաթ թագուհու օրոք Ասորեստանի և Ուրարտուի միջև մի շարք ընդհարումներ են եղել, որոնց արձագանքներն իրենց տեղն են գտել Արա Գեղեցիկի և Շամիրամի ավանդազրույցների մեջ, ուստի Շամմուրամաթ թագուհին Շամիրամ աստվածուհու երկրային նախատիպն էր[87]:

Երկի XIV գրքի 29 գլխում՝ 1-6 հատվածներում, խոսվում է հին

---

[*] Ստացվում է 40x7.7x7.7 մետր չափի մի կոթող:

[87] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 141, ծանոթ. 5:

աշխարհում ընդունված համընդհանուր մի սովորույթի մասին ևս. որևէ հաջողության հասնելու համար տարածված էր հեթանոս աստվածներին շնորհակալություն հայտնելու, զարդարված ձիեր, նաև եզներ զոհաբերելու սովորույթը:

Պատմագիրը տեղեկություն է հաղորդում նաև Հայաստանում արամեական գրի կիրառման մասին: Ըստ այդմ՝ Ք.ա. 317 թ. Երվանդը՝ Հայաստանի կառավարիչը, պարսից աշխարհի սատրապ Պնկեստեսին արամեերեն՝ «սիրիական տառերով» նամակ է ուղարկում [գիրք XIX, գլ. 23, 1-3]: Այստեղ բառացի ասված է. «Նամակը որ գրված էր ասորերեն գրերով, ուղարկված էր Օրոնտեսի [Երվանդ] կողմից, որը տիրում էր Արմենիայի սատրապությանը և Պնկեստեսի բարեկամն էր»: Հարկ է նշել, որ Սիկիլիացին սեպագրերը, այդ թվում՝ նաև Բեհիսթունի հայտնի արձանագրությունը համարում է ասորերեն գրեր: Նամակի վերաբերյալ նրա «ասորերեն գրերով» արտահայտությունը պիտի համարել ճիշտ: Ուսումնասիրողները, ոչ առանց հիմքի, ենթադրում են, որ սատրապական շրջանի Հայաստանում, ինչպես նաև մյուս սատրապություններում, գոյություն է ունեցել դիվան, գրասենյակ՝ իր գրագիր դպիրով և համապատասխան անձնակազմով[88]:

Հայաստանում արամեերենը՝ որպես գրասենյակային լեզու, առավել գործածական է եղել հատկապես մինչև Ալեքսանդր Մակեդոնացին: Նրա արշավանքները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Արևելքում հունարենի տարածման համար: Հավանաբար Ք.ա. III դարի սկզբից հունարենը պաշտոնական լեզու է դարձել Հայաստանում: Համենայնդեպս, Արմավիրի արձանագրությունները վկայում են, որ Ք.ա. III դարի վերջերին Երվանդունիների պետական գրասենյակային լեզուն հունարենն էր[89]: Ուշագրավ է, որ այդ նույն ժամանակ՝ Ք.ա. II դ. սկզբին, Արտաշես I-ի սահմանաքարերը արամեատառ են: Մակեդոնացու վերաբերյալ Դիոդորոս Սիկիլիացին հաղորդում է, որ մեծ զորավարի նպատակն է եղել Ասիայի և Եվրոպայի «Միաբան համերաշխությունը և տոհմակցական բարեկամությունը» [գիրք XVIII, գլ. 4, 4]:

---

[88] Տե՛ս **Г. А. Тирацян,** Некоторые аспекты внутренней организации Армянской сатрапии, ՊԲՀ, 1972, № 2, էջ 106-109:

[89] Տե՛ս **К. В. Тревер,** Очерки по истории культуры древней Армении, М-Л., 1953, էջ 137-147:

§ 1.3.5. ԱՐՄԵՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՊՐՈՂ ՑԵՂԵՐԻ ԵՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԴԻՈԴՈՐՈՍԻ

Հայոց պատմության պատմաքաղաքական կարևոր դրվագները ներկայացնելուց բացի՝ պատմագիրն անդրադառնում է նաև հայերի և նրանց հետ հարևանությամբ ապրող ցեղերի ու ժողովուրդների կենցաղամշակութային կյանքին:

XVI գրքի 77-րդ գլխի 5-րդ հատվածում Սիկիլիացին ուշադրություն է դարձնում այն իրողության վրա, որ Ալեքսանդր Մակեդոնացին՝ որպես աշխարհակալ նվաճող, հունականություն տարածող արքա, ինքն էլ է ազդեցություն կրում նվաճված արևելյան ժողովուրդներից. «Սկսեց հետևել պարսկական շքեղության և Ասիայի արքաների պերճանքին…, գլխին դրեց պարսկական դիադեման և հագավ ճերմակ խիտոն (շապիկ առանց թևերի), կապեց պարսկական գոտին և մնացած մյուս բաները՝ բացի անաքսիրիդից (երկար և նեղ անդրավարտիք) և կանդիսից (թևավոր վերնազգեստ): Իր ընկերներին ևս բաժանեց ծիրանի եզրակարերով համազգեստներ, իսկ ձիերին հագցրեց պարսկական հանդերձանք»: Ի դեպ, հին պարսիկների, մարերի (կամ մեդիացիների) զգեստը որոշակիորեն տարբերվում էր հին հունականից, այն բաղկացած էր գլխի համար կնգուղից, երկար մի վերնազգեստից, որի թևերն իջնում էին ձեռքերի վրա, տաբատից և երկարաճիտ կոշիկներից: Ինչպես ստորև կտեսնենք, Ստրաբոնն ընդհանրապես այդ զգեստի մասին հույների տածած արհամարհանքն է արտահայտում՝ գրելով, որ պարսիկները «հանդուրժում են հագնել կանացի զգեստներ, փոխանակ մերկ կամ թեթև հագնված շրջելու, և իրենց ամբողջ մարմինը պատում էին զգեստներով» [գիրք XI, գլ. 13, 9]: Ազգագրական առումով այս հիշատակությունը կարևոր է նրանով, որ «Արմենները՝ որպես մարերի հարևան, դաշնակից կամ իշխանությանը ենթակա, տարազային ձևերով որոշ նմանություններ ունեին նրանց հետ», «մարերը և հայերը ցեղակից են, որովհետև հագնվում են գրեթե միանման…»[90]:

Դիոդորոս Սիկիլիացին առավել ընդարձակ նկարագրություն է թողել կարդուխների մասին: Աշխատությունում (գիրք XIV, գլ. 27, 4-8

---

[90] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ՊԲՀ, 2015, թիվ 1, էջ 225:

հատվածներ) նշվում է, որ հելլենները յոթ օրում անցնում են կարդուխների (Կորդվաց) լեռները և հանդիպում լեռնային ցեղերի՝ «ռազմասեր, տեղանքին քաջածանոթ», «ազատ», «ռազմական կյանք վարող, վարժ պարսատիկներով խոշորագույն քարեր արձակելու և հույժ խոշոր նետեր օգտագործելու մեջ, որոնցով էլ նրանք, հարմար դիրքերից հելլեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանեցին և շատերին էլ լուրջ վնասներ պատճառեցին»: Այնուհետև նկարագրում է նրանց գործածած նետերի անսովոր չափերը և թշնամուն դրանով պատճառած զգալի վնասները. «Նրանց նետերը երկու կանգունից ավելի երկար էին ու ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի զրահ չէր դիմանում դրանց հարվածներին: Այնպիսի խոշոր նետեր էին օգտագործում, որ հելլենները, նրանց արձակած նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում» [գիրք XIV, գլ. 27, 4-8]:

Թե՛ Քսենոփոնի և թե՛ Դիոդորոս Սիկիլիացու վկայություններից երևում է, որ կարդուխները նստակյաց ժողովուրդ էին և ունեին համեմատաբար բարձր մշակույթ: Հելլենական զորքերը, որ բանակել էին նրանց լքված գյուղերում՝ կարդուխների գեղեցիկ տներում, որ կահավորված էին պղնձե ամաններով, գտել էին պարենի առատ պաշարներ ու նաև շատ գինի, որ նրանք պահում էին ծեփված հորերում: Ըստ նույն հեղինակի՝ կարդուխները, որոնց երկիրը Հայաստանից բաժանված էր Տիգրիսի վտակ Կենտրիտես (Բոհտան-սու) գետով, այդ ժամանակ ունեցել են հարուստ գյուղեր, զբաղվել են երկրագործությամբ, գինեգործությամբ, անասնապահությամբ, ինչպես և արհեստագործությամբ. հատկապես զարգացած է եղել պղնձագործությունը:

XIV գրքի, գլուխ 19, 1-6-րդ հատվածում պատմվում է, որ հելլենները Կորդուքին սահմանակից հայկական գյուղերում ձմռանը 8 օր մնալուց հետո ուղևորվում են Փասիս (Արաքս գետի վերին հոսանքը) գետը [գիրք XIV, գլ. 29, 1-6], որտեղ չորս օր մնալուց հետո իրենց ճանապարհը շարունակում են խայոյների [«Անաբասիս»-ում՝ տաոխներ, IV, III, 4, 5, 18] և փասիաների երկրի միջով: Բացառված չէ, սակայն, որ այս դեպքում գործածված է որպես հայերի «հայ-խայ» ինքնանվանումը: Խայոյներ ցեղանվան հիմքում, ըստ Ս. Տ. Երեմյանի, թերևս նշմարվում է նույն «Հայասա» անունը՝ առանց լուվիախեթա-

կան «սա» վերջավորության[91]: Նշենք, որ Արաքս գետը, սկիզբ առնելով Բյուրակնյան լեռնային զանգվածից, հոսում էր դեպի հյուսիս, որտեղ նրա մեջ էր խառնվում արևմուտքից հոսող Մուրց գետը, այնուհետև հոսելով Բասեն գավառով՝ Դիոդորոսի հիշատակած «փասիանների երկրով», Արաքսը ստանում է Բասեան կամ Բասեն անունը (այժմ՝ Բասեն-սու): Այս գետն է, որ «Պատմական գրադարան»-ում և նաև Քսենոփոնի «Անաբասիս»-ում ստանում է Փասիս անվանումը [գիրք XIV, գլ. 29, 1-2], որը չպետք է շփոթել Կողքիսի [Վրաստանի] Փասիսի (Ռիոնի) հետ [գիրք XVII, գլ. 77, 1,]: Ուրեմն, փասիանները Արաքս գետի վերին հոսանքի շուրջը բնակվող ցեղերն են եղել: Բասենից դուրս գալով՝ Արաքսը մտնում է խոր, նեղ կիրճի մեջ, որը կոչվում էր Երասխաձոր (ներկայիս՝ Կաղզվանի շրջանում), որից հետո գետը կոչվում էր Երասխ[92]:

Ուսումնասիրողների համոզմամբ տառխների և փասիանների անուններից ծագել են պատմական Հայաստանի «Տայք» և «Բասյան» գավառների անունները[93]: Այնուհետև Դիոդորոս Սիկիլիացին [գիրք XIV, գլ. 29, 1-6] նշում է, որ յոթ օրվա ընթացքում հույները անցնում են խալդայներ կոչված ցեղերի երկրով և հասնում են Հարպագոս գետը, որի լայնությունը 4 պլեթրոն էր: Հարպագոս գետը Քսենոփոնի մոտ էլ («Անաբասիս», IV, VII, 18) հիշատակված է Հարպասոս: Ենթադրվում է, որ Հարպասոսը Ճորոխի միջին հոսանքն է:

Ըստ ուսումնասիրողների՝ խալդայները Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևմտյան ծայրամասերում բնակվող ցեղախումբն էր, որից հետագայում առաջացավ պատմական Հայաստանի Խաղտիք երկրամասը: Այս խալդայներին չպետք է շփոթել Հարավային Միջագետքի նույնանուն ցեղի հետ: Սրանք բնակվում էին Սև ծովի հարավարևելյան ափից ոչ հեռու: Ի դեպ, Քսենոփոնը [«Անաբասիս», IV, III, 4] նշում է, որ սրանք «ազատ են ու ռազմունակ: Իրրև զենք գործ են ածում երկար վահաններ ու նիզակներ»: Խալդայները եղել են ինքնուրույն և չեն հպատակվել պարսից թագավորին:

---

[91] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայասա-Ազզի տեղորոշումը, էթնիկական կազմը և լեզուն, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 193:

[92] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանի գետերն ու լճերը, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 28:

[93] Տե՛ս նշվ. աշխ., էջ 77:

Խիստ երկյուղալի թշնամիներ էին. մեզ հնազանդեցրինք, որովհետև պետք է [նրանցից] վերցնեինք կենսամթերքներ, որ նրանք չէին ուզում մեզ մատակարարել [«Անաբասիս», V, V, 17]: Պատմագիտության մեջ խալդայներին ուրարտացիների հետ նույնացնելու փորձերը այժմ վերջնականապես մերժվում են[94]: Այստեղից էլ,– գրում է Դիոդորոս Սիկիլիացին,– հույները «առաջացել են սկյութների երկրի միջով, որտեղ էլ հանգստանում են երեք օր ամեն տեսակ բարիքների մեջ» [գիրք XIV, գլ. 29, 1-6,]: Ի դեպ, խոսքը Տրապիզոնից հարավ գտնվող լեռնային վայրերում բնակվող սկյութական ցեղերի մասին է: Սրանք հետևորդներն էին Ք.ա. VIII դարի վերջերին Հյուսիսային Կովկասից Փոքր Ասիա ներխուժած սկյութական ցեղերի, որոնց հարվածներից մեծապես տուժեց Ուրարտու պետությունը[95]: Սկյութների երկիր Դիոդորոսը անվանում է Տանայիս (Դոն) գետի՝ Եվրոպան Ասիայից բաժանող տարածքը [գիրք I, գլ. 55, 2-6]: Հարկ է նշել, որ վերոնշյալ ցեղերի զգալի մասը նախահայեր են և արմենների հետ միասին մասնակցել են հայ ժողովրդի կազմավորման գործընթացին:

«Պատմական գրադարան» գրքում հիշատակված են նաև Սև ծովի առափնյա՝ մակրոնների և կոլխերի երկրները [գիրք XIV, գլ. 29, 1-6]: Մակրոնների ցեղն ապրում էր Պոնտոսում: Մակրոնների մասին պատմագիրը ուշագրավ մի սովորույթ է արձանագրում: Նա գրում է. «Հելլենները, մտնելով մակրոնների երկիրը, նրանց հետ դաշն կնքեցին և իբրև երաշխիք նրանցից ստացան բարբարոսական մի նիզակ, իսկ փոխարենը տվեցին հելլենական (նիզակ). բարբարոսները ասացին, թե իրենց նախնիների ավանդույթի համաձայն՝ այդպիսի փոխանակումը հավատարմության ամենահաստատուն երաշխիքն է» [գիրք XIV, գլ. 29, 1-6]: «Այս վայրերում էլ [գիրք XIV, գլ. 30, 1-2] նրանք (հույները) գտան նաև մեծ քանակությամբ մեղվափեթակներ, որոնցից ստացվում էր թանկագին խորիսխ: Բայց դրանց ճաշակողները բռնվում էին ինչ-որ տարօրինակ ախտով, քանզի այդ մեղրից ուտողները կորցնում էին իրենց բանականությունը և ընկնելով գետին՝ նմանվում էին մեռյալների: Ու քանի որ դրա քաղցր համի պատճառով շատերն էին դրանից կերել, ապա այնքան մեծ բազմություն էր գետին ընկել, ասես պատերազմում ջախջախվել էին: …Սա-

---

[94] Տե՛ս **Գ. Ա. Տիրացյան,** Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 459:

[95] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** История и культура Урарту, Е., 1944, էջ 295-324:

կայն հաջորդ օրը, գրեթե նույն ժամին բոլորն ուշքի էին գալիս և, աստիճանաբար վերագտնելով իրենց դատողությունը, վեր կացան, նրանց մարմնական վիճակն այնպիսին էր, ասես թունավորումից էին փրկվել»: Սև ծովի հարավարևելյան ափերին պատահող նման թունավոր հատկություններով օժտված մեղրի մասին հաղորդում են անտիկ այլ հեղինակներ ևս: Վնասակար այդ հատկությունները կապված են եղել տեղի թունավոր բուսականության հետ: Ճանապարհորդները պատմել են, թե այդպիսի մեղր մինչև օրս էլ պատահում է այդ վայրերում: Այդ մեղրը վնասազերծելու նպատակով բնակիչները այն եռացրել են ու խառնել շաքար, որից հետո մեղրը դարձել է օգտագործելի (Դիոդորոս Սիկիլիացի, էջ 178 ծանոթ. 204):

Դիոդորոս Սիկիլիացին ակնարկներ ունի նաև մարդերի, մոսինոյկների, Տիբարենե երկրի, կադուսիների, սակերի, կոլխերի վերաբերյալ: «Ալեքսանդրը (Մակեդոնացի), առաջանալով Հյուրկանիայի առափնյա մասով մտավ, Մարդեր կոչված (ցեղերի)» երկիրը: Քանի որ սրանք հատկապես աչքի էին ընկնում իրենց արիությամբ, արհամարհեցին Ալեքսանդրի զորությունը և հարգանքի ոչ մի տուրք չմատուցեցին նրան, այլ… անվախ կերպով դիմագրավեցին մակեդոնացիների արշավանքը…» [գիրք XVI, գլ. 76, 3-4]: Անտիկ հեղինակները մի շարք անգամ հիշատակել են Հայկական լեռնաշխարհում բնակվող մարդերին: Դիոդորոսի մոտ հիշատակված մարդերը, հավանաբար նույն ցեղերն են: Պատմագիրը Սև ծովի հարավարևելյան մերձափնյա անտառախիտ լեռներում բնակվող մոսինոյկներ անվամբ ցեղեր ևս հիշատակել է, որ բառացի նշանակում է փայտե կառույցներում ապրողներ [գիրք XIV, գլ. 30, 5-7], իսկ Ստրաբոնը նրանց տվել է «Հեպտակոմետներ»՝ «յոթ գյուղերում ապրողներ» անվանումը: Դիոդորոսը սրանց անվանում է ամենաբարբարոսը իրենց հանդիպած ցեղերի մեջ. «Սրանք ամենաբարբարոս ազգն են այն բոլորից, ում երկրների միջով իրենք անցել են, տղամարդիկ կանանց հետ մոտ են լինում ի տես բոլորի, ամենաուսնոորների երեխաները սնվում են խաշած շագանակներով, և բոլորը դեռ մանկուց իրենց թիկունքն ու կուրծքը դաջելով նկարազարդել են» [գիրք XIV, գլ. 30, 7]: Այնուհետև, ըստ պատմագրի հավաստման, հույն զինվորները անցնում են մոսինոյկների, կոլխերի, խալյուբների հարևանությամբ տիբարենե ցեղերի երկիրը [նույն տեղում]: Պատմագիրը նկարագրություն ունի կադուսիների ռազմաշունչ ցեղերի մասին, որ միշտ թշնամության

մեջ են գտնվել մեդիացիների հետ, որոնք բնակվում էին Ուրմիա լճի և Կասպից ծովի հարավարևմտյան ափերի միջև [գիրք II, գլ. 33, 1]: Դիոդորոսի հիշատակած ցեղերից են նաև մեր հայրենիքի վրա հարձակումներ գործած սկյութական ցեղերից սակերը: Նա այս դեպքում անդրադառնում է սակերի և մեդիացիների միջև ընթացող պատերազմներին: Սրանք Միջին Ասիայի տափաստաններում բնակվող վաչկատուն սկյութական ցեղեր էին [գիրք II, գլ. 34, 1-6]:

Այսպիսով՝ հունական դասական պատմագրության աչքի ընկնող դեմքերից մեկի՝ Դիոդորոս Սիկիլիացու աշխատությունը հայագիտության համար կարևոր նշանակություն ունի, քանի որ, ի շարս տարածաշրջանի պատմության, կենցաղամշակութային արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի, հայերի և նրանց հետ հարևանությամբ ապրող նախահայկական այլ ցեղերի ու ժողովուրդների մասին: Առանձնապես օգտակար են տեղեկությունները Սատրապական Հայաստանի (Ք.ա. V դարավերջ) վերաբերյալ:

§ 1.4. ՀՈՒՅՆ ԱՇԽԱՐՀԱԳԻՐ ՍՏՐԱԲՈՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստրաբոնը ծնվել է Ք. ա. մոտ 63 թ. Պոնտոսի Ամասիա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում: Վախճանվել է Ք.հ. 20 թ.: Նրա գրչին է պատկանում «Պատմական հիշատակարաններ» վերտառությամբ մի աշխատություն՝ բաղկացած 43 գրքից, որը, սակայն, չի պահպանվել, ինչը պետք է համարել պատմական գրականության ամենամեծ կորուստներից մեկը: Մոտավորապես Ք. ա. 7 թ. նա սկսել է աշխատել հոչակավոր «Աշխարհագրություն» գրքի[96] վրա, որն ա-

[96] Օտար աղբյուրներ հայերի մասին: Հունական աղբյուրներ -1: Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940: Հ. Աճառյանը թարգմանել է Ստրաբոնի «Աշխարհագրություն» երկի 17 գրքերի այն հատվածները, որոնք վերաբերում են Հայաստանին և հայերին: 2011 թ. Սեն Հովհաննիսյանը վերահրատարակել է այն՝ ավելացնելով հայերեն տեքստի անգլերեն և ռուսերեն թարգմանությունը (տե՛ս Ստրաբոն, Աշխարհագրություն (կազմ. և առաջաբանի հեղ. Սեն Հովհաննիսյան, Ե., 2011 թ.): Սույն աշխատության մեջ օգտագործել ենք վերջինից բերված քաղ-

վարտել է մահից քիչ առաջ՝ Ք. հ. 20 թվականին: «Աշխարհագրությունը» բաղկացած է 17 գրքից: Ստրաբոնը այստեղ շարադրել է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների ֆիզիկական ու պատմական աշխարհագրությունը, ինչպես նաև բազմահարուստ տեղեկություններ է հաղորդել այդ երկրների քաղաքական պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ:

Երկն իր ժամանակի մասին յուրատեսակ հանրագիտարան է: Այս կամ այն երկրի աշխարհագրական տվյալները նկարագրելիս Ստրաբոնը պատմական էքսկուրսներ է կատարում դեպի դարերի խորքը և պատմում այդ երկրամասերի բնակչության հեռավոր անցյալի մասին, միաժամանակ նկարագրում նրանց վարքն ու բարքը, կենցաղը: «Աշխարհագրություն» երկի XI–XVI գրքերը հույժ արժեքավոր աղբյուր են Փոքր Ասիայի ու Կովկասի ժողովուրդների պատմության և մշակույթի ուսումնասիրության համար:

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» անգնահատելի ու ճշմարտապատում աղբյուր է նաև Հայաստանի բնության, աշխարհագրության, պատմության ու հատկապես տնտեսամշակութային բնութագրի ուսումնասիրության համար[97]: Որոշ դեպքերում նրա հաղորդած տեղեկությունները եզակի են, առանց որոնց հնարավոր չէ բավարար չափով կողմնորոշվել Ք.ա. II-I դարերի հայոց պատմության բազմաթիվ հարցեր ուսումնասիրելիս: Ստրաբոնը քննադատաբար է օգտագործել սկզբնաղբյուրները՝ ճշտելով ու լրացնելով դրանք:

§ 1.4.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝ ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ

Ըստ Ստրաբոնի՝ Հայաստանի հարավը պաշտպանում են Տավրոսյան լեռները, արևելքից այն սահմանակից է Մեծ Մեդիային (Մարաստան) և Ատրոպատենեին (Ատրպատական), հյուսիսից՝ Կասպից ծովի վերևի Պարաքոաթրա կամ Պարիադրես (Հայկական աղբ-

---

վածքները՝ հայերեն ու անգլերեն տեքստերի համեմատությամբ: Մեջբերումները նշված են՝ ըստ գրքերի և համապատասխան հատվածների համարների:

[97] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ՊԲՀ, 2015, թիվ 1, էջ 208-230:

յուրների Խաղտյաց կամ Պարխարյան լեռնաշղթան է) լեռներին, աղվաններին, իբերներին և կովկասյան ցեղերին, արևմուտքից՝ տիբարեններին, Սկյուդիսես (Պոնտական լեռների բազուկներից մեկը, որ վերջինս կապում է Անտիտավրոսի հետ) լեռներին մինչև Փոքր Հայք և Եփրատահուն [գիրք XI, XIV, 1]:

Ստրաբոնը լավ պատկերացում ունի Մեծ Հայքի պետության սահմանների մասին: Այդ սահմանները, ըստ նրա, հյուսիսում սկսվում էին արևմտյան ծայրամասում գտնվող Դաստեյրա ամրոցից [գիրք XII, III, 28]: Աշխարհագրի վկայությամբ՝ այդ բերդը գտնվում էր Փոքր Հայքում՝ Մեծ Հայքի Ակիլիսինե (Եկեղեաց) գավառի սահմանի մոտ (այժմ՝ Դոստալի գյուղ)[98]: Այստեղից դեպի արևելք ձգվում են Սկյուդիսես լեռները (այժմ՝ Սուրբ Գրիգոր կամ Սիպկորդառ), որոնք Ակիլիսենե երկիրը բաժանում էին Փոքր Հայքից [գիրք XI, XIV, 1]: Սահմանն այնուհետև ձգվում էր Պարիադրես լեռներով և նրա շարունակությունը կազմող Մոսխիկայի լեռներով (վրաց. Մեսխեթի լեռներ, այժմ՝ Կարճխալի և Աջարիայի լեռները)[99]: Այնուհետև, ըստ աշխարհագրի գրքի, Մեծ Հայքը սահմանակից է Իբերիային (Վիրք)՝ Խորզենե (Կղարջքը՝ Գուգարաց բդեշխության 9-րդ գավառը) և Գոգարենե (Գուգարք) երկրամասերով: Նրա ներկայացմամբ հստակորեն տրված են մեր երկրի սահմանները բոլոր ուղղություններով՝ հյուսիսում՝ Կուր գետով, մինչև նրա Կասպից ծով թափվելը [գիրք XI, III, 2–3], որով բաժանվում էր Իբերիայից (Վիրք) և Ալբանիայից (Աղվանք)՝ Մեծ Հայքի կազմում թողնելով Կուր գետի աջափնյա ամբողջ տարածությունը՝ Սակասենե (Շակաշեն) [գիրք XI, XIV, 4] և Ուիտիա (Ուտիք–Առանձնակ) երկրամասերով: Այնուհետև՝ Կուրի գետաբերանից հարավ ձգվող Կասպից ծովի ափերը, մինչև այն մասը, որտեղ Պարախոաթրասը (այժմ՝ Թալիշի և Գիլանի լեռնաշղթան) մոտենում է ծովափին (մոտավորապես՝ ներկայիս Աստարայի մոտ), Կասպիանե երկրի (Փայտակարան նահանգ) արևելյան սահմանն էր, իսկ Կասպիանեն Մեծ Հայքի կազմում էր: Հետո սահմանագիծն անցնում էր Հայկական լեռներով (այժմ՝ Ղարադաղ)[100], որից հարավ գտնվում

---

[98] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Ե., 1963, էջ 48:

[99] Տե՛ս նույն տեղում, էջ 67:

[100] Տե՛ս նույն տեղում:

էր Ատրոպատյան Մարաստանը կամ Ատրպատականը: Մեծ Հայքի հարավարևելյան սահմանը Սպավտան [իմա՝ Կապուտան] լիճն էր [գիրք XI, XIII, 2]: Հարավում սահմանակից էր Ադիաբենե [գիրք XI, XIV, 12, գիրք XVI, I, 8, գիրք XVI, I, 19] երկրին, Մեծ Հայքի կազմում էր Կորդուք երկիրը [գիրք XVI, I, 24–25] և նրա Տամոնիտիս ու «Երետրիացուց» երկրամասերը [գիրք XI, XIV, 5]: Ըստ Ս. Երեմյանի դիտարկումների՝ վերջիններս պատմական Կորդուքի Թման (այժմ՝ Հեշտանե) և Ա[յր]տրուանք (Այտրուանք, այժմ՝ Տիարի) գավառներն են[101]: Սահմանագիծը Միջագետքում անցնում էր Միգդոնիայի [գիրք XVI, I, 23] (Արուաստան) և «Միջագետք Հայոց»-ի սահմաններով մինչև Եփրատ, որը Մեծ Հայքը բաժանում էր արևմուտքում Փոքր Հայքից, Կապադովկիայից և Կոմմագենեից: Ստրաբոնը մանրամասնում է նաև մեր անմիջական հարևանների հետ ունեցած սահմանները. «Հայաստանից Վրաստան կարելի է մտնել Կուրի և Արագոսի կիրճով: Կուրը և Արագոսը իրարից իբր 16 ստադիոն հեռու են: Արշավելիս այս անցքով են Հայաստանից Վրաստան անցնում (ինչպես, օրինակ՝ Պոմպեոսը և հետո՝ Կանիդիոսը» [գիրք XI, III, 5]: Ի դեպ, ստադիոնը հունական երկարության չափ է և հավասար է 185 մետրի: Դա նշանակում է, որ երկու գետերի միջև հեռավորությունը կազմում է 2960 մետր:

Պարզ ներկայացված են Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի սահմանները ևս: Պատմիչը գրում է. «Աղվանքը գտնվում է Վրաստանի և Կասպից ծովի միջև, արևելքից հասնում է ծովին, արևմուտքից սահմանակից է Վրաստանին, իսկ հարավային սահմանի ամբողջ երկարությամբ տարածվում է Հայաստանը, որ հարուստ է դաշտերով ու լեռներով, ինչպես Կամբյուսենեն, որ գտնվում է այնտեղ, ուր Վիրքը, Աղվանքը և Հայաստանը իրար են կտրում» [գիրք XI, IV, 1–2, 4]: Մի այլ առիթով էլ հիշատակում է, որ Աղվանքի և Հայաստանի սահմանագիծը հասնում է մինչև Կասպից ծով, ուր թափվում են Հայաստանից հոսող Արաքսը, իսկ Կուրը, որ սկիզբ է առնում Հայաստանից, անցնում է Վիրք՝ իր մեջ ընդունելով Արագոս գետը և այլ ջրեր, ու մի նեղ հովտի միջով մտնում է Աղվանք:

Մի այլ տեղ նա գրում է. «Մասամբ Վրկանաց ծովի (Կասպից ծով) և սրա ու Պոնտոսի միջև գտնված ամբողջ պարանոցի հարավում գտնվում է Հայաստանի մեծ մասը և Կողքիսը, Կապադովկիան ամբողջապես մինչև Եվքսինյան Պոնտոսը և Տիբարանյան ցեղերը…»

---

[101] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** նշվ. աշխ., էջ 68, 125:

[գիրք V, 31]: Ապա նշում է, որ Եփրատը արևմտյան սահմանն է որոշում [գիրք I, 23]: «Տիգրիս գետն ու Եփրատը, հոսելով Հայաստանից հարավ …, թափվում են Պարսից ծոցը» [գիրք I, 25–26]:

Մեր երկրի սահմանների մասին խոսելիս Ստրաբոնը նախ ներկայացնում է հույն աշխարհագիր, Ք. ա. 66 թ. դեպի Հայաստան՝ Պոմպեոսի արշավանքին մասնակից Թեոփանես Միտիլենացու վկայությունը, ըստ որի՝ Հայաստանի տարածքի լայնությունը հարյուր սքոյնոս է (երկարության միավոր, մեկ սքոյնոսը հավասար է 40 ստադիոնի), երկարությունը՝ կրկնակի: Ուրեմն, ըստ Թեոփանեսի՝ Հայաստանի լայնությունը հասնում էր 740 կմ-ի, իսկ երկարությունը՝ 1480: «Սա չափազանցությամբ է ասված: Ավելի մոտ է ճշմարտության՝ երկարությունը դնել, ինչ որ ասել է լայնության համար, իսկ լայնությունը նրա կեսը կամ մի քիչ ավելի»,– ավելացնում է Ստրաբոնը (գիրք XI, XIV, 11): Ակադ. Ս. Երեմյանը ավելի հավանական է համարում Թեոփանես Միտիլենացու հաշվումները[102]: Ակնհայտ է, որ Ստրաբոնի և այլ հայտնի հույն պատմագիր-աշխարհագիրների՝ Հայաստանի սահմանների մասին հաղորդած տեղեկությունների հիման վրա չի կարելի հստակորեն որոշել հայկական ամբողջ տարածությունը, քանի որ այն խիստ փոփոխություններ է կրել պատմական տարբեր ժամանակաշրջաններում[103]:

Ստրաբոնը տեղեկացնում է, որ հայոց Արտաշես արքայի կառավարման տարիներին Հայաստանի սահմաններն ընդարձակվում են, ետ են վերցվում հարևան երկրների կողմից զավթված հայոց երբեմնի գավառները: Այսպես [գիրք XI, XIV, 5], Սելևկյան երկրի արքա Անտիոքոս III Մեծի (Ք. ա. 223–177 թթ.) Արտաքսիաս և Զարիադրիս [խոսքը Արտաշիսյան հարստության հիմնադիր, Մեծ Հայքի թագավոր Արտաշես I Բարեպաշտի (189–160) և Ծոփքի թագավոր Զարեհի մասին է] ստրատեգոսները (քաղաքացիական վարչական և ռազմական իրավասություններով օժտված կառավարիչ) Սելևկյան պետության կարճատև գերիշխանության տարիներին (Ք. ա. 200–190 թթ.) իշխում էին Հայաստանում՝ առաջինը Մեծ Հայքում, երկրորդը՝ Ծոփքում: Սակայն Ք. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III թագավորի՝ հռոմեացիներից կրած պարտությունից հե-

---

[102] Տե՛ս նույն տեղում, էջ 68:

[103] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 107:

տո հայ կառավարիչներ Արտաշեսն ու Զարեհը, անցնելով հաղթող հռոմեացիների կողմը, իրենց հայտարարեցին անկախ թագավորներ և «սկսեցին իշխել ինքնուրույն, թագավորի կարգավիճակով (Ք. ա. 189 թ.), ինչից հետո Հայաստանը սկսեց հզորանալ: Նրանցից մեկը թագավորում էր Սոփենե (հունական աղբյուրներում՝ Ծոփքը, Ակիսենես (Անթիսենես՝ գավառ Արևմտյան Հայաստանում՝ Ծոփքի հարևանությամբ), Օդոմանտիս և մի շարք այլ գավառներում, իսկ մյուսը՝ Արտաշատի շուրջ գտնվող երկրում: Այս երկուսն իրենց հզորացումն ապահովում էին շրջակա ազգերից տարածքներ գրավելու հաշվին. մարերից՝ Կասպիանեն (Կուրի և Արաքսի գետախառնուրդի շրջանը և դրանից արևելք՝ մինչև Կասպից ծովն ընկած տարածքը), Փավնիտիդեսը (նույնացվում է Փայտակարանի հետ) և Բասորոպետան (սա համընկնում է Վասպուրականի Պարսպատունիք գավառին), իբերներից՝ Պարիադրոս լեռան ստորոտի գավառները (համապատասխանում է հայոց Գոդերձական գավառին) և Խորզենեն (Կուր գետի շուրջն ընկած տարածքը, հետագայում՝ Կղարջք գավառը), Գոգարենեն (Գուգարքը), որն ընկած է Կուր գետի մյուս կողմում, խալիբներից և մոսյունոյկներից (փայտե կառույցներում ապրողներ, մերձսևծովյան ցեղեր) Կարենիտին (Կարնո աշխարհը՝ Բարձր Հայքի իններորդ գավառը) և Դերքսենեն (Դերջանը՝ Բարձր Հայքի վեցերորդ գավառը), որոնք սահմանակից են Փոքր Հայքին, թեև նրա մասերը չեն, կատառոններից՝ Ակիլիսենեն [Եկեղիքը] և Անտիտավրոսի գավառը, ասորիներից՝ Տամորիտիսը (Տմորիքը), այնպես որ բոլորը միալեզու եղան» [գիրք XI, XIV, 5]:

Ստրաբոնի այս հաղորդման հիման վրա նշանավոր հայագետ Հյուբշմանը ենթադրում է, որ Արտաշեսի և Զարեհի ժամանակ եփրատյան ընդարձակված այս Հայաստանն իր մեջ բովանդակում էր Փայտակարանը, Սյունիքը, Վասպուրականը, Այրարատը, Գուգարքը, Տայքը, Բարձր Հայքը, Տուրուբերանը, Աղձնիքը, Մոկքը, Կորճայքի մեծ մասը և Ուտիքն ու Արցախը, այսինքն՝ պատմական Հայաստանի 15 նահանգներից 13-ը[104]:

Ուշագրավ է Ստրաբոնի՝ «այս միացման շնորհիվ թվարկված երկրների բնակիչները այժմ խոսում են միևնույն լեզվով» [գիրք XI,

---

[104] Տե՛ս **Հ. Հյուբշման**, Հին հայոց տեղվո անունները, թարգմ.՝ Հ. Բ. Պիլեզիկճյանի, Վիեննա, 1907, էջ 22–23, նաև՝ **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 121–122:

XIV, 5] հավաստումը: Բնական է, որ այդ լեզուն պետք է լիներ հայերենը, քանզի, ըստ Ստրաբոնի, Արտաշեսյան թագավորության և Տիգրան Մեծի ժամանակ հայերը ոչ միայն միավորված են եղել ողջ Հայկական լեռնաշխարհում, այլև մեծ թիվ են կազմել հարևան երկրներում՝ Ադիաբենում՝ պատմական բուն Ասորեստանի մեծ մասում և Հյուսիսային Միջագետքում [գիրք XVI, 1, 19, 26]: Միալեզու դառնալու պատճառը ոչ թե նվաճումների, այլ մեծ չափով դրանց նախորդած ազգակազմավորման (էթնոգենեզի) այն գործընթացների մեջ էր, որոնցով արդեն մեկ հազարամյակ է, ինչ ապրում էր Հայկական լեռնաշխարհը: Նվաճումները, իհարկե, քաղաքական ձևավորում տվեցին արդեն որոշ չափով գոյություն ունեցած էթնիկական կարգավիճակին, նպաստեցին հայկական էթնոսի զարգացմանը: Նկարագրված իրադարձությունները ճիշտ է բնութագրել «միավորում» և ոչ «նվաճում» արտահայտություններով: Ստրաբոնի հաղորդածից երևում է, որ Հայկական պետությունն ընդարձակվել է բոլոր չորս ուղղություններով՝ դեպի արևելք՝ Ատրպատական-Մարաստանի կողմը, հյուսիս՝ Վիրքի կողմը, արևմուտք՝ Փոքր Հայքի կողմը և վերջապես հարավ՝ Ասորիքի, այսինքն՝ Սելևկյանների պետության կողմը:

Արտաշեսի և Զարեհի կառավարման շրջանում, Մեծ Հայքից ու Ծոփքից բացի, ընդարձակվել էր նաև Փոքր Հայքը (որտեղ էլ թագավորում էր Երվանդունի արքայաճյուղի ներկայացուցիչ Միհրդատը – Ռ. Ն.), ինչի մասին իմանում ենք աշխարհագրի հետևյալ հաղորդումից. «Փոքր Հայքը բավական բարեբեր երկիր է: Այն ևս, ինչպես Սոփենեն (Ծոփքը), միշտ կառավարել են սեփական իշխանները, որոնք մերթ եղել են մյուս հայոց (նկատի ունի Մեծ Հայքը – Ռ. Ն.) բարեկամ ու դաշնակից, մերթ էլ իրենց գործերը վարել են ինքնուրույն» [գիրք XII, III, 28]: Փոքր Հայքը Ք. ա. III– II դդ. (մինչև Պոնտոսին միացվելը) հայկական առանձին թագավորություն էր՝ Եփրատի և Անտիտավրոսի միջև ընկած տարածքում: Ստրաբոնի հաղորդմամբ՝ «Փոքր Հայքին հպատակվել էին խալդայներն [Խաղտիք] ու տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա» [գիրք XII, III, 28]:

Այսպիսով՝ Ստրաբոնի հավաստմամբ՝ Հայաստանում և Կապադովկիայի հյուսիս-արևելքում առաջացել էին հայկական երեք անկախ միաձույլ թագավորություններ, որոնց երևան գալը քաղաքական տեսանկյունից հայ ժողովրդի պատմական անցյալում մի

նոր դարագլուխ էր: Դրանցից ամենամեծը Արտաշեսի թագավորությունն էր՝ Մեծ Հայքը, որն այնքան զորեղացավ, որ մրցակցում էր Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունների հետ[105]:

Աշխարհագիր պատմիչը ներկայացնում է Փոքր Հայքի՝ Պոնտոսին միացվելը՝ փաստելով, որ դրանից հետո Միհրդատ Եվպատորը այս վայրերում բազմաթիվ ամրոցներ է կառուցել [գիրք XII, III, 28]:

Ստրաբոնը բացառիկ ուշագրավ վկայություն է թողել Արտաշատ մայրաքաղաքի վերաբերյալ, որը հիմնել էր Արտաշես I Ք. ա. 166 թ.: «Հայաստանի քաղաքներն են, – ասում է նա, – Արտաքսատան և Արքսատան: Երկու քաղաքն էլ գտնվում են Արաքսի վրա՝ Արքսատան Ատրպատականի սահմանների մոտ, իսկ Արտաքսատան՝ Արաքսյան դաշտում: Այս վերջինը գեղեցիկ է կառուցված և երկրի թագավորանիստ քաղաքն է: Նա գտնվում է գետաձոցում [Երասխ և Մեծամոր – Ռ. Ն.], որը նման է թերակղզու, և նրա շուրջը, բացի պարանոցից, պարսպապատ է գետափի երկայնքով, իսկ պարանոցը փակված է փոսով և պատնեշով» [գիրք XI, XIV, 6]: Հզոր բերդ լինելուց բացի՝ Արտաշատը եղել է Հայաստանի մշակութային ու տնտեսական կյանքի կենտրոնը: Ստրաբոնի հավաստմամբ՝ Արտաշատից ոչ հեռու գտնվել են Տիգրան և Արտավազդ արքաների գանձատները՝ անառիկ ամրոցներ Բաբյուրսան և Օլանեն [գիրք XI, XIV, 6]:

Ստրաբոնը հարուստ տեղեկություններ է հաղորդում Հայաստանի ջրային պաշարների, հատկապես գետերի մասին, որոնք ծառայում են որպես աշխարհագրական նկարագրությունների յուրահատուկ կողմնորոշիչներ: Այս երկրում շատ գետեր կան. «ամենից նշանավորներն են Կուրը և Արաքսը, որ թափվում են Կասպից ծովը, Եփրատը և Տիգրիսը՝ Երիթրյան (Հնդկ. օվկիանոսի մի մասը՝ Պարսից ծոցը) ծովը» [գիրք XI, XIV, 7]: «Եփրատը սկիզբ է առնում Տավրոսի հյուսիսային կողմից և հոսում Հայաստանի միջով դեպի արևմուտք, ապա շրջվում է դեպի հարավ և կտրում Տավրոսը Հայաստանի, Կապադովկիայի ու Կոմմագենեի միջև, այնտեղից դուրս գալով՝ հասնում է Սիրիա: Սիրիայից շրջվում է դեպի ձմեռային արևելք՝ մինչև Բաբելոն, և Տիգրիսի հետ ստեղծում Միջագետքը» [XI, XIV, 2]: Իսկ Տիգրիս գետը, «Նպատ լեռից իջնելով, կտրում անցնում է այս լիճը (նկատի ունի Վանա լիճը)՝ առանց խառնվելու ջրերին հոսանքի

[105] Տե՛ս **Հ. Մանանդյան**, նշվ. աշխ., էջ 123:

ուժգնության պատճառով, որից էլ առել է իր անունը, ըստ որում՝ մարերեն «Տիգրիս» նշանակում է «նետաձգություն», «նետ արձակել»: Տիգրիս գետն ունի բազմատեսակ ձկներ, մինչդեռ Վանա լիճը, որի միջով արագ անցնում է Տիգրիսը, միայն մի տեսակ»՝ տառեխ անվամբ [գիրք XI, XIV, 2, 3, 4, 7, 8]: Ուրեմն գետի ձկներն էլ հոսանքի հետ արագ անցնում էին լճի միջով՝ առանց մնալու բորակային ջրերի մեջ: Հասնելով լճի մյուս ափը, շարունակում է հույն աշխարհագիրը, Տիգրիսը կորչում է անդունդների մեջ և երկար ժամանակ գնալով գետնի տակով՝ նորից դուրս է գալիս հողի երեսը: Մյուս առավել գլխավոր գետը Արաքսն է, որը, սկիզբ առնելով Աբոս լեռից, հոսում է դեպի արևելք՝ մինչև Ատրոպատենե, ապա թեքվում է դեպի արևմուտք, հետո՝ հյուսիս, հոսում նախ Ազարայի (քաղաք Արտաշատից դեպի արևմուտք, տեղադրությունը հայտնի չէ), ապա Արտաշատի մոտով: Նշվում է նաև Փասիս (Ճորոխ) և Լյուկոս (Գայլ գետ) գետերի մասին, որոնք թափվում էին Պոնտական (Սև) ծովը:

Ստրաբոնի հաղորդմամբ՝ Հայաստանում կան նաև մեծ լճեր. սրանցից մեկը Մանտիանեն է (Կապուտան, Ուրմիա լճի մասին է խոսքը), որը տարածվում է մինչև Ատրոպատենե (Ատրպատական): Վկայակոչելով այլ աղբյուրներ՝ պատմիչը նշում է, որ Մայոտիսից (Ազովի ծովն է) հետո այս լիճը մեծագույնն է աղի լճերի մեջ: Հաջորդը Արսենեն է, որը կոչվում է նաև Թոպիտիս [Թո[ս]պիտիս] (Տոսպ, Վանա լիճն է):

Խոսելով Հայաստանի լեռների մասին՝ Ստրաբոնը փաստում է, որ հարավային կողմում երկիրը գրեթե ամբողջությամբ լեռնային է ու կորդ (անմշակ). Մեծ Հայքը Միջագետքից եզերվում է Տավրոս լեռնապարով՝ հավելելով Մասիոս և Անտիտավրոսի լեռների գրաված դիրքը, Կոմմագենե, Մելիտինե, Միգդոնիա, Մծբին, Ծոփք պատմական երկրների ջրբաժան սահմանները [գիրք XI, XIV, 2]: Մասիոսից վերև գտնվում են Նիփատեսը (Նպատ լեռը), Աբոսը (Սրմանց կամ Բյուրակն, այժմ՝ Բինգյոլ) և Նիբարոս լեռնաշղթան, որը ձգվում է մինչև Մեդիա [գիրք XI, XIV, 2]: Այսպիսով՝ Ստրաբոնը նշում է այն լեռները, որոնք Տավրոսի մասն են կազմում և ստեղծում Հայաստանի հարավային սահմանը (գիրք XI, 2, 15):

Հայաստանի բնական հարստությունները

Մանտիանե (Ուրմիա) լիճը հարուստ է աղահանքերով [գիրք XI, XIV, 8]: Աղի հարուստ պարունակության տեսանկյունից պատմիչը հիշատակում է նաև Վանա լիճը: Ըստ նրա՝ լիճը պարունակում է բորակ, որով շորեր են լվանում ու մաքրում [գիրք XI, XIV, 8]:

Հույն պատմիչներից Ստրաբոնն է, որ, տալով պատմական Սպեր գավառի նկարագիրը, գրում է, թե «Սիսպիրիտիս (Սպեր՝ Բարձր Հայքի յոթերորդ գավառը Ճորոխ գետի վերին հոսանքում) երկրի մեջ Կաբալլայի մոտ կան ոսկու հանքեր, ուր Ալեքսանդր Մեծն ուղարկեց Մենոն զորավարին զորքով, սակայն վերջինս տեղացիներից խեղդամահ եղավ» [գիրք XI, XIV, 9]: Այս վկայությունը խոսում է այն մասին, որ անտիկ դարաշրջանում հույներին արդեն հայտնի են եղել Սպերի ոսկու հանքերը, ուր մակեդոնացի աշխարհակալի կողմից ուղարկվել է Մենոն զորավարն իր զորքով՝ ոսկու հանքերը գրավելու համար, սակայն նա խիստ դիմադրության է հանդիպել տեղի բնակչության կողմից, որոնք խեղդամահ են արել նրան՝ այդպիսով խափանելով հանքերի զավթումը:

Այնուհետև Ստրաբոնը հիշատակում է նաև ուրիշ հանքերի մասին, ինչպես սանդիքս կոչվածը, որ անվանում է նաև «Հայկական գույն և նման է կալքեյի» (ծիրանի խեցի): Այն նման էր պուրպուրին, և անվանում էին հայկական ներկ (գիրք XI, XIV, 9): Պատմիչը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նաև հանքերում աշխատողների վերաբերյալ: Այսպես, երբ նա խոսում է Խաղտիքի մասին, որ հարևան էր Սպերին, նշում է, որ այդ երկրամասը հարուստ է մետաղի հանքերով՝ երկաթով ու արծաթով, և որ այդտեղ ապրողները հիմնականում զբաղվում են հանքարդյունահանությամբ[106]: Ստրաբոնը հիշատակել է նաև նավթի և «գանգեության» կոչված քարի առկայությունը Հայաստանում, քար, որով հալածում էին օձերին [գիրք XVI, I, 24]:

[106] Տե՛ս նաև **Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Ե., 1941, էջ 277-278:

§ 1.4.2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ

«Աշխարհագրություն» երկի մեջ Ստրաբոնն անդրադարձել է նաև հայ ժողովրդի ծագումնաբանության հարցին: Նա համամիտ էր իր ժամանակներում տարածում գտած այն վարկածին, թե արմենները իբրև ունեն թեսալական ծագում[107], և որ նրանց անվանադիր նախնին եղել է Արմենոս Թեսալացին: Վերջինս առասպելական անձնավորություն է, Յասոնի (Թեսալիայի արքա Էսոնի որդին) զինակիցը, արգոնավորդների[108] արշավի մասնակիցը: Ըստ առասպելի՝ նա Յասոնի մահից հետո հավաքեց վերջինիս ցրված զորքերը և անցնելով Հայաստան՝ բնակություն հաստատեց Եկեղիք ու Սպեր գավառներում, որից էլ, իբր, ծագել են երկրի «Արմենիա» և ժողովրդի «արմեն» անվանումները: «Ասում են,– գրում է Ստրաբոնը,– թե Յասոնը Թեսալացի Արմենոսի հետ դեպի Կողքիս նավարկության ժամանակ առաջացել է մինչև Կասպից ծով, և անցել է Վրաստանը, Աղվանքը և Հայաստանի ու Մարաստանի շատ մասը, ինչպես վկայում են Յասոնականքը (նմանները Յասոնի այն տաճարին, որ կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացու ամենանշանավոր զորավարներից Պարմենիոնը Թրակիայի Աբդերա քաղաքում) և շատ բազմաթիվ հիշատակարաններ: Ասում են նաև, թե Արմենոսը Արմենիոն (Թեսալիայում) քաղաքից էր, որ գտնվում է Բոյբեիս լճի մոտ՝ Ֆերեսի և Լարիսայի միջև, թե իր հետ եղողներն էլ բնակեցան Ակիլիսենե [Եկեղիք] և Սուսպիրիտիս [Սպեր]՝ մինչև Կալաքանե և Ադիաբեն, – սա է, որ իր անունը թողել է Հայաստանին» [գիրք XI, IV, 9]:

---

[107] Թեսալական վարկածի հեղինակներն են Թեսալիայի Փարսալա և Լարիսա քաղաքներից դուրս եկած Ալեքսանդր Մակեդոնացու (336–323) զորահրամանատարներ Կիրսիլիոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին: Նրանք արմենների և Արմենիայի մասին թողել են մի գրվածք, որի փշրանքներն են հասել մեզ Ստրաբոնի միջոցով (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հնագույն ժամանակներից մինչև Ք. հ. 298 թ., կազմողներ՝ **Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան,** հ. 1, Ե., 2007, էջ 34):

[108] Արգոնավորդներն այն 50 նավագնացներն են, որոնք Թեսալիայի Յոլկոս քաղաքի արքայազն Յասոնի առաջնորդությամբ «Արգո» կոչվող նավով (որտեղից էլ՝ Արգոնավորդներ անվանումը) արշավեցին Կողքիս (Կոլխիդա)՝ «Ոսկե գեղմը» բերելու:

Մեզ հայտնի է, որ արգոնավորդների առասպելը ձևավորվել է մինչհոմերոսյան դարաշրջանում, մոտավորապես Ք. ա. XI–X դարերում, այսինքն՝ այն ժամանակ, երբ դեռևս Արմենիա պետական միավորումը չէր կազմավորվել, հետևաբար Արմենոսի անունից չէ, որ պետք է բխեցնել «Արմենիա» անվանումը, որն ավելի ուշ շրջանի (մոտ Ք. ա. VII–VI դդ.) երևույթ է: Առասպելի հեղինակները վերոհիշյալ երկու հույն զորավարներն են[109]: Վերջիններս, մի առիթով այցելելով Հայաստան, ուշադրություն են դարձնում Հայաստանի և իրենց հայրենի Թեսալիայի որոշ տեղանունների համահնչունության ու կենցաղային նմանություններին և հանգում այն եզրակացության, որ հայերն ունեն թեսալական ծագում: Նրանք փորձում են նաև բացատրել հայերի «արմեն» անվանումը և կամայականորեն այն կապում են արգոնավորդ Արմենոս Թեսալացու հայտնի անվան հետ: Այս բոլորից բխում է, որ հայ ժողովրդի ծագման մասին սույն հունական առասպելը զուրկ է պատմական հենքից, որ այն հորինվել է հենց Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, երբ հույները նման առասպելներ հորինել էին նաև պարսիկների, մարերի և արևելյան այլ ժողովրդների Բալկանյան թերակղզուց գաղթած լինելու վերաբերյալ, և որ նման առասպելի ստեղծումն ունեցել է իր քաղաքական դրդապատճառները: Փաստորեն, Ստրաբոնը առաջինն է, որ գրի է առել Արմենիա անվան ծագման վերաբերյալ ժամանակին տարածված ավանդությունը:

Պատմիչը թյուրըմբռնում ունի նաև հայերի, ասորիների ու արաբների ցեղակից ու լեզվակից լինելու մասին. «Հայոց, Ասորիների և Արաբների ժողովուրդը մեծ ցեղակցություն է ցույց տալիս լեզվի, կյանքի և մարմնի նկարագրի կողմից, անշուշտ, որովհետև իրար հարևան են: Հայտնապես Միջագետքում, որ այս երեք ժողովուրդներից է բաղկացած, նմանությունը ավելի շատ է երևում նրանց մեջ: Եթե իսկ կլիմայի պատճառով լինի զգալի տարբերություն հյուսիսայինների և հարավայինների միջև, և սրանց ու միջին սահմանի բնակիչների միջև, այնուամենայնիվ, ընդհանուր հատկությունները գերակշռում են: Ասորեստանցիք և Արիացիք էլ թե՛ այս ժողովուրդների և թե՛ իրար հետ մեծ նմանություն ունին: Այդ ժողովուրդների անվանակոչությունը ենթադրել է տալիս նաև իրար հետ նմանություն: Այն ժողովուրդները, որոնց մենք Ասորի ենք կոչում, իրենք Ասորիները

[109] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 33:

[հայ և] Արամայեցի են կոչում. սրան նման է Հայոց, Արաբների և Երեմբների անունը: Երեմբ էին կոչում հին Հույները Արաբներին, ինչպես որ բառի ստուգաբանությունից էլ իմացվում է» [գիրք I, II, 34]:

Ստրաբոնը խոսում է նաև Մարաստանի՝ «Հայոց, Ասորաց և Պարթևաց թագուհիների հետ կնքված խնամիության» կապերի մասին: Հայտնի է, որ մայրական գծով Հայաստանի Երվանդունի թագավորները սերված էին Աքեմենյաններից Արտաքսերքսես Բ-ի դստեր՝ Հոդոգունեի միջոցով, որը Երվանդունի թագավորների նախնի՝ սատրապ Երվանդի կինն էր[110]: Մարաստանի մասին խոսելիս ուղղակի ասում է. «Մարերը և հայերը ցեղակից են» [գիրք XI, XIV, 15]:

§ 1.4.3. ՍՏՐԱԲՈՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իր երկում Ստրաբոնը զգալի տեղ է հատկացնում հայերի հարևանությամբ ապրող ժողովուրդներին: Այսպես, գովում է աղվանների գեղեցկությունը, նկարագրում նրանց պարզ ու նահապետական վիճակը. «…Չափ ու կշիռ չունեին և հարյուրից ավել հաշվել չգիտեին, սակայն պատերազմում էին հետևակ և ձիավոր, թե թեթևազեն և թե զրահավորված, ինչպես հայերը»: Իբերների մասին էլ գրում է, թե «Վիրքի դաշտում բնակվող ժողովուրդը … հագնվում է հայ և մարական ձևով, իսկ լեռնաբնակները, որոնք ավելի բազմաթիվ և պատերազմասեր են, ապրում են սկյութացոց և սարմատացոց կարգերով, ինչպես որ նրանց սահմանակից և ցեղակից են» [գիրք XI, III, 2–3]: Ըստ Ստրաբոնի՝ հայերի սովորույթները շատ նման են մարականին: Հայերն ու մարերը պաշտում են պարսից բոլոր պաշտամունքները (XI, 13, 9-10): Հետաքրքիր է նաև Ստրաբոնի վկայությունը [գիրք XVI, գլ., I, 24] կարդուխների վերաբերյալ: Ըստ Ստրաբոնի վկայության՝ կարդուխները համարվում էին նշանավոր ճարտարապետներ և փորձառու էին քաղաքների ու բերդերի պաշարման աշխատանքներում: Հ. Մանանդյանի համոզմամբ՝ նստակյաց և երկրագործ այս հին ժողովուրդը, ինչպես ասվել է վերը, չէր կարող լինել այժմյան խաշնարած ու թափառական քուրդերի նախահայրը[111]:

---

[110] Տե՛ս **Г. Х. Саркисян,** Тигранакерт. Из истории древнеармянских городских общин. М., 1960, с. 42:

[111] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկերը, հ. Ա, էջ 72-73:

§ 1.4.4. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ստրաբոնի երկում կան նաև ժողովրդագրական ուշագրավ տեղեկություններ, ինչպես, օրինակ, Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրման և Տիգրան Մեծի կողմից հունական 12 քաղաքների ավերման ու այդ քաղաքներում օտար բնակչության վերաբնակեցման մասին: Տիգրան Մեծի և նրա կատարած նվաճումների վերաբերյալ պատմիչը հաղորդում է փաստական ուշագրավ տվյալներ. «Արտաշեսի շառավիղն էր Տիգրանը. նա իշխում էր բուն Արմենիայում, որը սահմանակից էր Մարաստանին, Աղվանքին և Իբերիային՝ մինչև Կողքիս և Եվքսինյան Կապադովկիային, իսկ Զարեհի շառավիղն էր Արտանես Ծոփացին, որն իշխում էր հարավային և մանավանդ հարավարևմտյան մասերում: Տիգրանը սրան հաղթեց և դառավ ինքը տեր բոլոր այդ երկրների» (գիրք XI, XIV, 15): Ծոփքի միացումից հետո Տիգրան Մեծի հզոր ու ընդարձակ թագավորությունը սահմանակից էր դառնում արևմուտքում, բացի Պոնտոսից, նաև Կապադովկիային: Հարավում և արևելքում Մեծ Հայաստանին հարևան ու սահմանակից էին պարթևների գերիշխանության տակ գտնվող մանր պետությունները՝ Օսրոյենը, Կորդուքը, Ադիաբենը և Ատրպատականը, իսկ հյուսիսում՝ Աղվանքը և Իբերիան: Այս երկրների նվաճումների մասին պատմագիրը գրում է. «Սակայն ինքն էլ շատ փոփոխական բախտ ունեցավ. սկզբում պատանդ էր պարթևների մոտ, հետո նրանցից ձեռք բերավ գահը՝ իբր գրավ տալով Հայաստանից 70 հովիտ. ավելի զորանալով՝ հետ առավ այդ ամբողջ գավառները և ավերեց նրանց երկիրը, հատկապես Նինվեի և Արբելայի շուրջը: Հնազանդեցրեց նաև Ատրոպատենը և Գորդիենեն, նրանց հետ նաև մնացյալ Միջագետքը: Բացի սրանից, անցնելով Եփրատը, զենքի ուժով գրավեց Ասորիքը և Փյունիկեն: Այս բոլորով հզորացած՝ Ուլիբերիայի մոտ կառուցեց մի քաղաք՝ այս տեղի և Եփրատի կամուրջի միջև, որ կոչեց Տիգրանակերտ, և ավերելով 12 հունական քաղաքներ՝ նրանց բնակիչներին այնտեղ հավաքեց…» [գիրք XI, XIV, 15]:

Ստրաբոնը հաղորդում ունի նաև Արտաշատ և Տիգրանակերտ քաղաքների հիմնադրման և բնակեցման մասին [գիրք XI, XIV, 15]: Դրանց բնակեցումը կազմակերպվում էր, այսպես կոչված, «սինոյկիսմոսի», այն է՝ համաբնակեցման միջոցով, որն ընդունված էր ողջ հելլենիստական աշխարհում՝ որպես հիմնադրվող քաղաքների շե-

նացման հիմնական եղանակ: Նոր քաղաքին իրենց բնակչության մի մասն էին հանձնում հին քաղաքները՝ կամավոր կամ հարկադրաբար: Երբեմն բնակչությունը բերվում էր բավական հեռու տեղերից: Հայաստանում, տեղական քաղաքային բնակչության սղության պայմաններում, օտարերկրյա քաղաքային բնակչության ներգրավումը մեծ չափերի պիտի հասներ: Այն, հավանաբար, իր դերն է խաղացել արդեն Արտաշատի «սինոյկացման» ժամանակ [գիրք XI, XIV, 6][112]: Իսկ այն, որ Տիգրանակերտի բնակչության մեծ մասը բաղկացած էր վերաբնակեցված օտարերկրացիներից, հանրահայտ փաստ է՝ վկայված հունահռոմեական պատմիչների կողմից: Քաղաքների ու քաղաքային քաղաքակրթության զարգացման համար անհրաժեշտ էր քաղաքակիրթ հարևան երկրներից Հայաստան փոխադրել ամբողջական քաղաքային բնակչություն, ինչը և բռնի միջոցով իրականացրեց Տիգրան Մեծը: Նա հարկադրված եղավ դրսից Հայաստան գաղթեցնել առևտրականների, արհեստավորների և աշխատավոր այլ օտարականների, որոնք հիմք էին ծառայելու Հայաստանում հելլենիստական քաղաքային կենցաղի առաջացմանը և նեցուկ էին լինելու տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Մեծ Հայքը, լինելով Հին աշխարհի երրորդ մեծ պետությունը, Ստրաբոնի հավաստմամբ, տարբերվում էր Հռոմից ու Պարթևստանից նրանով, որ մեր հայրենիքը Ք. ա. I դարում ներկայացնում էր միաձույլ մի էթնիկ թագավորություն: Այն բնակեցված էր մեկ ժողովրդով, որը խոսում էր մի լեզվով, դա հայ, «միալեզու» ժողովուրդն էր [գիրք XI, XIV, 5]: Ճիշտ է նկատել Հ. Մանանդյանը, երբ գրում է, թե Ստրաբոնի այս տեղեկությունը կարելի է ընդունել որոշ, իհարկե, վերապահությամբ: Հայաստանի զանազան շրջաններում, ինչպես հայտնի է, նույնիսկ Սասանյանների ժամանակ և անգամ նրանց տիրապետությունից հետո, կային օտարալեզու ցեղեր: Ուրեմն՝ Ստրաբոնի վկայությունը, պետք է, ըստ երևույթին, ենթադրել այն իմաստով, որ Հայաստանում նրա ժամանակ տարածված ու գերիշխող լեզուն եղել է հայերենը[113]:

---

[112] Տե՛ս **Ս. Կրկյաշարյան,** Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, № 1, էջ 111:

[113] Տե՛ս **Հ.Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 421-422:

§ 1.4.5. ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ

Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայերի տնտեսական զբաղմունքների մասին: Ըստ նրա՝ Հայաստանն իր բարեխառն կլիմայական պայմաններով ամեն տեսակ բարիքների երկիր է, որտեղ ժողովուրդը առավելապես երկրագործությամբ է զբաղվում:

Պատմագիրն իր աշխատության մեջ ակնարկային նկարագրություն է թողել տեղական վարող գործիքի՝ արորի մասին: Ժամանակի արորն ունեցել է բնականից ծռված ծառի ճյուղի տեսք, որի ծայրը հայերն անվանում էին «կեռ», և որի վրա հագցվում էր երկաթե խոփիկ, իսկ վերին ճյուղը կոթի՝ «մաճի» դեր էր կատարում: Հետագայում Արցախում «կեռ», «կըռ» տերմինը տարածվեց նաև սովորական արորի վրա[114]: Ստրաբոնն ունի նաև աղվանական արորի նկարագրությունը. «…Աղվանական արորը երկաթե խոփիկ չուներ և կազմված էր ամբողջությամբ փայտից» [գիրք XI, XIV, 4–5]:

Երկրագործություն: Այգեգործություն

Ըստ Ստրաբոնի՝ Հայաստանում այգեգործությունն ու գինեգործությունը եղել են բավականաչափ զարգացած: Նա, խոսելով Միջագետքի, Մարաստանի, Հայաստանի, Պարսկաստանի և Կարմանի մասին, հիշատակում է. «Այս երկրներից յուրաքանչյուրը մեծավ մասամբ այգեշատ և գինեվետ է» [գիրք XII, I, 58], «Կասպյան դռներից ներքև ցածր հողեր և ձորեր կան, որոնք շատ փարթամ և ամենաբեր են, բացի ձիթենուց: Տեղ-տեղ ձիթենի էլ է աճում, բայց պարարտ չէ և չոր է» [գիրք XI, XIII, 7]: Պատմական Կորդուքն էլ ներկայացնում է որպես «արոտավետ և այնպես բարեբեր, որ սնուցանում է նաև մշտադալար ծառեր ու համեմունք, ինչպես ամոմոն » [գիրք XVI, I, 24]:

Պատմիչը ուշադրություն է դարձրել նաև Հայաստանի բերրիության վրա: Նա վկայում է, թե «Հայաստանի ներսում կան շատ լեռներ և շատ լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի այգին հեշտութ-

---

[114] Տե՛ս **С. Т. Еремян,** Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении, Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Ե., 1964, էջ 23:

յամբ չի աճում, բայց կան նաև շատ հովիտներ, ոմանք չափավոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպես Արաքսենի դաշտը (Արարատյան դաշտը), որով Արաքս գետն է հոսում (արևելք) մինչև Աղվանքի ծայրը և թափվում է Կասպից ծովը: Արաքսենի դաշտի հետ նաև Շակաշենը՝ սահմանակից Աղվանքին և Կուր գետին, հետո՝ Գուգարքը: Ամբողջ այս երկիրը (նկատի ունի Կուր գետի աջափնյա շրջանը) առատ է հացահատիկներով, պտղատու այգիներով և մշտադալար ծառերով. կա նաև ձիթենի» [գիրք XI, XIV, 4]: Մի այլ տեղ, անդրադառնալով սակերի (շակերի) արշավանքներին, գրում է, որ «Հայաստանում նրանք տիրացել են լավագույն հողերին, որոնց տվել են իրենց անունը՝ Շակաշեն» [գիրք XI, VIII, 4]:

Այգեգործության վերաբերյալ ուշագրավ են Ստրաբոնի հետևյալ հավաստումները. Հայկական Միջագետքը համարում է այգեշատ և գինեվետ երկիր, Մելիտինեն դիտում է իբրև ամբողջապես բերքատու ծառերով ծածկված երկրամաս, որտեղ պատրաստվում էր ձեթ և մոնարիտ կոչված գինի, որը հունական գինիների մրցակիցն էր [գիրք XII, II, 1]: Հայաստանը համարում է խաղողի, թզի, ցորենի ու մեղրի երկիր, ինչպիսի Վիրքը և Մարաստանն էին: «Ասում են, թե մի որթատունկը տալիս է մի մետրետ (39 լիտր) գինի, մի թզենին 60 մեդինոս (հին հունական չափ, որ պարունակում է 51,84 լիտր, 60 մեդինոսը՝ 3110 լիտր) թուզ, իսկ հասկից ընկած մի ցորենը նորից է բուսնում, մեղուները ծառերի մեջ փեթակ են շինում, և մեղրը տերևներից հոսում է: Նույնպես լինում է Մատիանում՝ Մարաստան և Շակաշենում և Արաքսենում՝ Հայաստան: Բայց այդ տեղերում այնքան զարմանալի չէ այդ, որովհետև ավելի հարավ են, քան Վրկանիան, և մյուս երկրներից տարբերվում են չափավոր բարեխառնությամբ» [գիրք II, I, 14, գիրք XI, VII, 2]:

Աշխարհագիր պատմիչը, խոսելով Կուր և Արաքս գետերի ջրարբի լինելու, ոռոգող հատկությունների մասին, գրում է «Այս երկրի (Վիրք) և Հայաստանի մեջտեղով հոսելով (խոսքը Կուր գետի մասին է)՝ անցնում է հույժ մարդաշատ դաշտավայրերով», ապա ավելացնում. «Վրաց դաշտում բնակվող ժողովուրդը [նույնպես] լավ երկրագործ է և խաղաղասեր» [գիրք XI, III, 2–3]: Հայ մարդու հող մշակելու բացառիկ տաղանդի շնորհիվ մեր երկիրը, ըստ պատմագրի հավաստումների, լի է եղել պտղատու ծառերով, գինու և հացի առատ պաշարներով:

Անասնապահություն: Ձիաբուծություն

Ստրաբոնի հաղորդմամբ՝ հայերի տնտեսության երկրորդ ճյուղը եղել է անասնապահությունը: Նա վկայում է, թե «Հայաստանի գավառներից են նաև Փավենե (գուցե՝ Սյունիքը), Կոմիսենե (Փոքր Հայքին սահմանակից գավառ) և Որքիստենե (հին հայկական գավառ), ուր բուծում էին մեծաքանակ պատերազմական ձիեր…» [գիրք XI, XIV, 4]: Ապա տեղեկացնում է, որ Հայաստանում բուծում էին «Նեսեական» կոչվող հատուկ ցեղի ձիեր՝ տարեկան 20 հազար մտրուկ՝ պարսից թագավորին որպես տուրք տալու համար: Պատմիչը հիշատակում է նաև ձիաբուծության նպատակասլաց, ինտենսիվ զարգացմանը նպաստող ընդարձակ արոտավայրերի առկայությունը Հայկական լեռնաշխարհում. Հայաստանը «շատ հարուստ է ձիաբուծական արոտներով, որոնք Մարականներից վատ չեն, այնպես, որ Նեսեական ձիերը այնտեղից էլ էին բերում, որ գործ էին ածում Պարսից թագավորները, և Հայաստանի սատրապը Պարսից թագավորին ուղարկում էր տարեկան 20.000 քուռակ՝ Միհրական տոների համար» [գիրք, XI, XIV, 9][115]: Ստրաբոնի հավաստմամբ՝ «Արտավազդը Անտոնիոսին, բացի մյուս ձիավորներից 6000 զրահապատ ձիավորների զորահանդես արավ, երբ նրա հետ Մարաստան արշավեց: Այսպիսի հեծելազոր ոչ միայն Մարերն ու Հայերն են սիրում, այլև Աղվանները. նրանք էլ ունեին զրահավորված ձիեր» [գիրք XI, XIV, 9]: Ռազմական նպատակների և արքունական շքահանդեսների կազմակերպումից բացի՝ ձին որպես փոխադրամիջոց էր ծառայում հատկապես բարձր խավի համար:

Հնուց ի վեր Հայաստանը հայտնի է եղել որպես լավագույն տոհմական ձիերի հայրենիք: Տոհմական ձիաբուծությամբ լայնորեն զբաղվելու մասին է վկայում Ստրաբոնը: «Հայաստանը, ինչպես ասվեց վերը, ձիաբուծության համար հատկապես հարուստ է արոտներով: Կա մի մարգագետին …, որի մեջ ասում են, թե 50.000 զամբիկ էր արածում Պարսից իշխանության ժամանակ: Ասում են նաև, թե այս երամակները արքայական էին, և այն Նեսեական ձիերը, որ Պարսից թագավորները գործ էին ածում նրանց ազնվության և մեծության պատճառով, դուրս էին գալիս այդ երամակներից և կամ Հայաստա-

[115] Արևելքի մի շարք ժողովուրդներ ձին համարում էին Արև աստծու սրբազան անասունը:

նից: Սրանք առանձին ձև ունեին և ինչպես այժմ Պարթևական կոչված ձիերը, տարբեր են Հունական և մեզ մոտ եղած այլ տեսակի ձիերից» [գիրք XI, XIII, 7]: Բացի այդ՝ հայկական նժույգները թեև պարսկականից փոքր են, սակայն չափազանց ուժեղ են և ծառայում են որպես հիմնական փոխադրամիջոց:

Ստրաբոնի հավաստմամբ՝ հին հայերը օգտվում էին ամառային արոտավայրեր ընտանիքի մի մասով մեկնելու սովորույթից՝ մեր հայրենիքը համարելով ամառային արոտավայրերով հարուստ երկիր:

Ստրաբոնի մոտ պահպանված է հիշատակություն նաև ձկնաբուծության մասին. ըստ նրա հավաստման՝ «Տիգրիս գետը ունի բազմատեսակ ձկներ, մինչդեռ Վանա լիճը, որի միջով արագ անցնում է Տիգրիսը, միայն մի տեսակ՝ տառեխ անվամբ» [գիրք XI, XIV, 2, 3, 4, 7, 8]:

Արհեստագործություն

Իր երկում Ստրաբոնն ակնարկներ ունի նաև Հայաստանի արհեստագործության վերաբերյալ: Նրա հաղորդման համաձայն՝ Հայաստանից պարսկական արքունիքին էին ուղարկվում ոչ միայն ձիեր, այլև թանկագին մետաղից պատրաստված բարձրարվեստ անոթներ [գիրք XI, XIV, 9]: Երկրի շինարարական հմտություններին անդրադառնալով՝ գրում է, թե «կորդվացիները լավ ճարտարապետներ էին և պաշարողական գործի մեջ հմուտ» [գիրք XVI, I, 24]: Ապա հավելում է, որ հայոց արքա Տիգրան Մեծը պատերազմների ժամանակ պաշարողական ռազմարվեստում օգտագործում էր կորդվացիների հմտությունը:

Ըստ պատմիչի հիշատակության՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում ապրում էր խալիբ անունով մի ժողովուրդ, որը հռչակված էր իբրև վարժ ու փորձված երկաթագործ ցեղ: Հին հույները «խալիպ» էին անվանում պողպատը՝ մշակված երկաթի ամենաբարձր տեսակն ու ամենադժվար դարբնումի արգասիքը: Բնորոշ է, որ «խալիբ» բառը մետաղագործության առնչությամբ մինչև օրս էլ պահպանվել է հայ և հարևան ժողովուրդների բարբառներում. խալիբ է կոչվում այն կաղապարը, որի մեջ ձուլվում է մետաղը և իր վերջնական ձևը ստանում[116]:

---

[116] Տե՛ս **Խ. Սամուելյան,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, էջ 14, ծանոթ. 14:

Առևտուր, փոխանակություն, չափ ու կշիռ

Ստրաբոնի երկից տեղեկանում ենք Հայաստանի և Մարաստանի միջով հնդկական ու բաբելական ապրանքների՝ ուղտերով կատարվող առևտրի և «ոսկեհուռ զգեստներ» կրելու մասին [գիրք XI, V, 8]: Խոսելով տաճարային կենտրոնների մասին՝ նշում է, որ դրանք հաճախ նմանակում են քաղաքներին նաև իրենց արտաքին տեսքով, արհեստագործական ու առևտրական նշանակությամբ[117]: Այսպես, պոնտական Կոմանան համեմատելով հունական Կորնթոս քաղաքի հետ՝ նշում է, որ այն Հայաստանից եկած վաճառականների հայտնի վաճառատեղին էր [գիրք XII, 3, 36]: Ուշագրավն այն է, որ եթե Հերոդոտոսի ժամանակ Հայաստանի և Բաբելոնի միջև կատարվող առևտրի միջնորդները ասորեստանցի առևտրականներն էին, ապա Ստրաբոնի ժամանակ «Հայաստանից եկողները» հայերն էին, որոնք անմիջականորեն զբաղված էին առևտրով: Նշանակում է, որ քաղաքական անկախություն ձեռք բերելուց և Արտաշիսյան հայկական պետականության ամրապնդումից հետո երկրի տնտեսական կյանքում լուրջ տեղաշարժեր էին կատարվել: Անկասկած, ուշ հելլենիստական շրջանում հայերը ևս նշանակալից դեր էին խաղում Մերձավոր Արևելքի առևտրական կյանքում: Հայ առևտրականները զբաղվում էին ոչ միայն տարանցիկ, այլև իրենց հայրենական արտադրության՝ գյուղատնտեսական և արհեստագործական ապրանքների առևտրով: Հայաստանում մշակվող խաղողի առատ բերքի և ընտիր գինու մասին մեկ անգամ չէ, որ խոսում է Ստրաբոնը: Հայաստանից Եփրատ գետի վրայով կարասների մեջ գինու փոխադրումը, որը նկարագրում է Հերոդոտոսը, վկայում է Հայաստանում դեռ շատ վաղուց կավագործության զարգացած լինելու մասին: Կավե մեծ կարասները օգտագործվում էին ոչ միայն գինի փոխադրելու, այլև այն մեծ քանակությամբ պահեստավորելու համար: Հիշատակենք Կարմիր բլուրի պեղումների ընթացքում հայտնաբերված տեղական արտադրության կարասները, որոնց տարողությունը հաճախ հասնում էր 800-1200 լիտրի[118]: Հին Հայաստանում, ինչպես ասվեց վերը, շատ է

---

[117] Տե՛ս նաև **Ս. Կրկյաշարյան,** Դիտողություններ Հին Հայաստանի տաճարային քաղաքների առաջացման մասին, «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1963, № 9, էջ 65:

[118] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** Ванское царство. М., 1959, с. 145. Խեցեգործությունը ձևաբանորեն և տեխնիկապես էլ ավելի զարգացավ աքեմենյան և անտիկ դարա-

զարգացած եղել նաև ձիաբուծությունը: Հավանական է, որ ձիերի մի մասը արտահանվելու և վաճառվելու էր Հայաստանին հարևան, մինչև իսկ նաև հեռավոր երկրներում: Աստվածաշնչում կա հետաքրքիր վկայություն այն մասին, որ Հայաստանից բերված ձիերը վաճառվում էին փյունիկյան վաճառաշահ քաղաքներում. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և հեծելոք և ջորւովք լցին զվաճառս քոյ»[119]: Հայաստանում Ստրաբոնի հիշատակած ոսկու հանքերի և սանդիքս կոչված հայկական ներկի [գիրք XI, XIV, 9] առկայությունն ու մետաղյա իրերի արտադրանքը ևս ենթակա էր արտահանման: Ստրաբոնի հավաստմամբ Հայաստանը համարվել է նաև միջազգային տարանցիկ առևտրի, Ասիայի և Եվրոպայի միջև ծավալվող առևտրի կարևորագույն հանգուցակետ: Ստրաբոնը, խոսելով Ազով և Կասպից ծովերի միջև ասպատակող սիրակների ու առրսների մասին, հաղորդում է, որ նրանք «… տիրեցին Կասպերի ծովափի գրեթե մեծագույն մասին, որով ձեռք բերին Հնդկական և Բաբելական ապրանքների առևտուրը, որը կատարվում էր ուղտերով՝ Հայաստանի և Մարաստանի վրայով» [Ստրաբոն, էջ 35]:

Ստրաբոնը անդրադառնում է նաև չափ ու կշռի միավորներին. տարածության չափի միավոր է նշում ստադիոնը, որը հավասար է 177 (այլ աղբյուրներում՝ 185) մետրի, և սքոյնոսը (բառացի նշանակում է «չվան»), որն էլ հավասար է 40 ստադիոնի:

Երկում կարդում ենք, որ «Բակտրիան գտնվում է շատ ավելի հյուսիս, քան Կասպից կամ Վրկանաց ծովի բերանը, որ Կասպից ծովի խորքից և Հայկական ու Մարական լեռներից շուրջ 6000 ստադիոն հեռու է» [գիրք II, I, 17]: Մի այլ առիթով էլ գրում է, թե «Երատոսթենեսի ասելով՝ Բաբելոնից մինչև Հայաստանի լեռները 2100 ստադիոն է…» [գիրք II, I, 21]:

Իբրև ծանրության չափ՝ նշվում են մետրետը և մեդինոսը (1 մետրետը հավասար է 39 լիտր տարողության, իսկ մեկ մեդինոսը՝ 51,84 լիտրի): Աշխարհագիրը, խոսելով Հայաստանի հարստության և զորության մասին, գրում է, թե «փոքր նշան չէ այն, որ Պոմպեոսը, Տիգրանին (Արտավազդի հորը) նշանակած լինելով 6000 տաղանդ (1 տաղանդը = 30,3 կգ) արծաթ տուրք, իսկույն ևեթ զորքին բաշխեց՝

շրջանների Հայաստանում, որի վկայությունը Հայաստանի մայրաքաղաքներից և այլ հնավայրերից պեղված բազմազան հնագիտական նյութն է:

[119] **Եզեկիել,** ԻԷ, 14:

յուրաքանչյուր զինվորին 50 դրախմի, հարյուրապետերին 1000-ական, հեծելազորքի պետերին և հազարապետերին՝ մի մի տաղանդ» [գիրք XI, XIV, 10]:

Ժողովրդական փոխադրամիջոցներ և կապի միջոցներ

Ստրաբոնը հետաքրքրաշարժ տեղեկություններ է հաղորդում կովկասյան լեռնագագաթների անանցանելիության մասին՝ նկարագրելով, թե տեղացիները ինչպես էին բարձրանում և իջնում լեռներով. «Կովկասի գագաթները ձմեռը անանցանելի են. ամառը բարձրանում են՝ հագած եզան անաղաղ (անձայն) կաշուց կոշիկներ՝ տակին սուր գամերով, թմբուկի կաշիի պես լայն, ձյան և սառույցի պատճառով. իջնելու ժամանակ նստում են կաշու վրա՝ իրենց բեռներով և ցած սահում»: Ապա նշվում է, որ անանցանելի լեռնային գագաթներ հաղթահարելու նույն ձևը կիրառվում էր նաև Մասիոս լեռան վրա՝ Հայաստանում: Այստեղ կրունկների տակ դնում են նաև փայտե անվակներ՝ տակին սուր գամերով [գիրք XI, V, 6]: Ստրաբոնը ակնարկներ ունի նաև նավերով կատարվող փոխադրումների մասին:

Պատմիչը կարևոր նորություններ է հաղորդում կապի հնավանդ միջոցների մասին: Հայտնի է, որ բնակավայրերում և ռազմական ամրություններում աշտարակներ էին կառուցվում, կառույցների վրա դիտարաններ ստեղծվում: Անասնապահների համար դիտակետ էին բնական բարձունքները: Հին հայերը գործածել են նաև տեսողական և լսողական ազդանշանային համակարգեր[120]: Տեսողական ազդանշաններ էին կրակը, ծուխը, ձեռքերի շարժումները, ծառերի ու ժայռերի վրա պայմանական նշաններ գծելը, քարերին պայմանական դիրք տալը, ձողեր բարձրացնելը[121]: Անծանոթին կամ մոլորվողին ճիշտ ուղի ցույց տալու, օգնություն հայցելու վերաբերյալ հնագույն տեղեկություններից մեկը կարելի է համարել Ստրաբոնի հետևյալ վկայությունը. «Խորձյա (Խորզենե) և Կամբյուսենե՝ Հայաստանի ամենահյուսիսային գավառներն են և շատ ձյունառատ, որովհետև մոտ են Կովկասյան լեռներին և Վրաստանին ու Կողքիսին: Այնպես որ, ասում են, թե հաճախ լեռնանցքներում ու կիրճերում

---

[120] Տե՛ս **Լ. Ն. Պետրոսյան,** Հաղորդակցության ազդանշանային կամ պայմանական միջոցները հայերի մեջ, ՊԲՀ, 1968, № 3, էջ 191-198:

[121] Տե՛ս **Վ. Բդոյան,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Ե., 1974, էջ 65:

ամբողջ կարավաններ ձյան տակ են մնում բուքի ժամանակ» [գիրք XI, XIV, 4]: «Այսպիսի վտանգների համար,– գրում է Ստրաբոնը,– նրանք ունենում են ձողեր, որ բարձրացնում են վերև՝ շունչի անցք բանալու և նշան տալու համար անցորդներին, որպեսզի օգնության հասնեին, ձյան տակից հանեին ու ազատեին» [գիրք XI, XIV, 4]:

Տարազ և ագանելիք

Ստրաբոնը հայերի ծագման թեսալական վարկածն առաջ է քաշում՝ նաև հայկական և թեսալական զգեստավորման նույնականացման հանգամանքը նկատի ունենալով. «Ասում են, թե Հայոց զգեստը թեսալական է, ինչպես այն երկար վերարկուները, որ ողբերգությանց մեջ թեսալական են կոչում և գոտիով կապում են կրծքի վրա և այն շորերը, որ ողբերգակները օրինակել են թեսալացիներից: Նրանք վերցրել են այս հավելյալ զարդը, որ թեսալացիք հագնում էին լայն-լայն, և իրավամբ, որովհետև, ամբողջ Հունաստանի ամենից հյուսիսային և ամենից ցուրտ վայրերն էին բնակվում, դերասանների համար ամենից ավելի վայելուչ էր ներկայացումների մեջ երևալ այնպիսի դերասանական հարդարանքով» [XI, XIV, 12]: Իհարկե, հունական կամ արևմտահայկական զգեստի որոշ նմանություն, կամ սահմանակից շրջաններում դրա որոշ տեսակների փոխառության հնարավորությունը չի բացառվում: Ըստ Վ. Բդոյանի՝ XIX դարում Բարձր Հայքում և Հունաստանի որոշ շրջաններում նկատվում էին կանանց շրջազգեստների ու գոգնոցների նմանություններ, որոնք հաստատում են մեր ասածի հավանականությունը: Սակայն ամբողջ Հայաստանի մասշտաբով զգեստները թեսալական համարելու ստրաբոնյան վարկածը միանգամայն անընդունելի է: Չէ՞ որ մինչև XX դարի սկիզբը Հայաստանի ազգագրական բոլոր շրջաններում, թեկուզ հենց այն տարածքներում, որտեղ բնակվել են արմենները, հայկական տարազն ունեցել է ձևային տարբեր հատկանիշներ: Իսկ եթե Ստրաբոնի խոսքը վերաբերում է լոկ արմեններին, այստեղ արդեն գործ ունենք հենց այդ ցեղային միությանը բնորոշ զգեստի հետ[122]:

Ինչպես վերն ասվեց, պատմագիրն ուշագրավ տեղեկություններ է թողել նաև Հայաստանում ու հարևան երկրներում գործածվող այնպիսի կոշիկների մասին, որոնց ներբանները սուր-սուր գամեր

[122] Տե՛ս **Վ. Բդոյան,** նշվ. աշխ., էջ 96-97:

ունեին: Ճանապարհորդները այդ կոշիկներով դյուրությամբ հաղթահարում էին լեռնային ճանապարհների սառցապատ հատվածները: Դրանք, ինչպես երևում է, լեռնագնացների մարզակոշիկներ հիշեցնող ոտնամաններ են եղել: Ստրաբոնը վկայում է նաև հայերի մեջ «եզան անաղաղ կաշուց կոշիկների (տրեխների – Ռ. Ն.)»՝ որպես ագանելիք օգտագործելու մասին:

Մեկ այլ առիթով հայկական տարազը նմանեցվում է նաև մարականին: Վրացականի մասին խոսելիս գրում է. «Վրաց դաշտում բնակվող ժողովուրդը հագնվում է հայ և մարական ձևով, իսկ լեռնաբնակները, որոնք ավելի բազմաթիվ և պատերազմասեր են, ապրում են սկյութացոց և սարմատացոց կարգերով, ինչպես որ նրանց սահմանակից և ցեղակից են» [գիրք XI, III, 2–3]:

Արմենները՝ որպես մարերի հարևան, դաշնակից կամ իշխանությանը ենթակա, տարազային ձևերով որոշ նմանություն ունեին: Ստրաբոնը այդ մասին գրում է. «Շատ բաներում մարերի և հայերի սովորությունները նման են, որովհետև աշխարհներն էլ նմանվում են միմյանց … Ըստ այդմ, այժմ պարսկական կոչված երկար զգեստը և նետաձգության և ձիավարության տենչը, թագավորների շուքն ու պերճությունը և հպատակների աստվածաշուք մեծարանքը մարերից են անցել պարսիկներին: Այսպես, հագուստեղենի մեծագույն մասը հայտնապես, ինչպես ապարոշը (տիարա), խույրը (կիտարիս, դիադեմա), թաղիքե գլխարկը (պիլոս), երկար թևերով վերարկուները և լայն տաբատները, որոնք ցուրտ և հյուսիսային երկրներին հարմար զգեստներ են» [գիրք XI, XIII, 9–10]: Ապա տարազային փոխձեռքբերումները նկատի ունենալով՝ շարունակում է. «Սակայն նվաճյալների սովորությունները այնպես փառավոր և արքայական շքեղության հարմար թվեցան նվաճողներին, որ իրենց հասարակ և անզարդ շորերի փոխարեն վերցրին այդ կանացի շորերը և ծածկոցներով ծածկվեցին» [գիրք XI, XIII, 9–10]: Մեկ այլ տեղում ուղղակի գրում է. «Մարերը և հայերը ցեղակից են (որովհետև հագնվում են գրեթե միանման) …», իսկ աղվանների մասին խոսելիս նշում է, թե վերջիններս «և՛ թեթևազեն են, և՛ զրահավորված, ինչպես հայերը» [գիրք XI, IV, 4–5]: Թեև սրանք զինատեսակներ են, որ, ի տարբերություն հագուստի, ավելի մեծ ընդհանրություն կարող են ստանալ և արագ փոխառվել:

§ 1.4.6. ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստրաբոնը բացառիկ հաղորդում ունի Անահիտ դիցուհու պաշտամունքի վերաբերյալ: Հայտնի է, որ նրան նվիրված տոնական արարողակարգերը կատարվում էին տարին երեք անգամ՝ ապրիլին, երբ նախապատրաստվում էին երկրագործական աշխատանքները, և սկսվում էր վարուցանքը, ապա հուլիսի կեսերին՝ Վարդավառին՝ ջրային տարերքի տոնին, և օգոստոսի 21-ին՝ Նավասարդին, որը համընկնում էր բերքահավաքին[123]:

Անահիտը պտղաբերության, արգասավորության, մայրության, Լուսնի, Հայաստան երկրի հովանավորող աստվածուհին էր, որի պատվին կառուցում էին տաճարներ, որտեղ զոհաբերում էին երինջներ, որոնց ճակատները ջահաձև խարանում էին, որպեսզի ճանաչելի լինեին: Տոներին քրմապետը ծիսական ձևով հայտնվում ու առաջնորդում էր քրմերի և ուխտավորների մեծ զանգվածները: Անահիտի արձանը պտտում էին մեհյանի շուրջ, երգում ու աղոթում էին: Ապա սկսում էին պարահանդեսները, որոնց հետևում էին ազնվական դասերի անձնատրության ծեսերը՝ կուսությունն աստվածուհուն նվիրաբերելու սովորույթները: «Արդ, պարսից բոլոր սրբավայրերը,– գրում է Ստրաբոնը,– պաշտում էին նաև մարերը և հայերը, բայց Անահիտի պաշտամունքը հայոց մեջ գերազանցում է բոլորից: Այսպես, փոքրասիական երկրների՝ Կապադովկիայի, Պոնտոսի, բազմաթիվ տաճարների ու տաճարային քաղաքների մասին պատմելու ժամանակ Հայաստանի տաճարները հիշատակելիս ասում է. «Հայերն արտակարգ եռանդով են պաշտում Անահիտին. զանազան տեղեր նրա անվամբ տաճարներ են կանգնեցված և հատկապես Եկեղիքում: Նվիրաբերում են այդ տեղերում ստրուկներ և ստրկուհիներ» [գիրք XI, XIV, 16]: Հայտնի է, որ դիցուհու անունով Եկեղյաց գավառը կոչվել է Անահտական. այդ փաստը հիշատակում են ինչպես անտիկ, այնպես էլ հայ պատմիչները: Վերջիններիս մոտ տեղեկություններ են պահպանվել մի շարք այլ տաճարների մասին ևս, որոնք Անահիտի տաճարի նման հիմնվում են հելլենիստական կամ նույ-

---

[123] Տե՛ս **Ս. Մկրտչյան,** Հայոց տոնածիսական մշակույթ, Ե., 2016, էջ 142:

նիսկ շատ ավելի վաղ շրջանից[124]:

Ստրաբոնը Փոքր Ասիայի՝ Հայաստանին սահմանամերձ գոտու մի շարք տաճարներ է նկարագրում Պոնտական Կոմանայում, Կապադովկայի Կոմանայում, Զելայում և մի շարք այլ վայրերում: Հիշատակում է տաճարների քրմական խմբերը, տաճարային լայնատարած հողերը, նրանց վրա աշխատող հազարավոր հիերոդուլներին՝ տաճարային ստրուկներին [գիրք XII, III, 36, 37]: Այսպես, Կապադովկիական Կոմանայի մասին կարդում ենք. «Քուրմը տաճարի ղեկավարն է և տաճարային ստրուկների տերը. իմ այցելության ժամանակ դրանցից կային 6000-ից ավելի տղամարդ և կին: Տաճարին է պատկանում մի մեծ հողամաս, որի եկամուտներից օգտվում է քուրմը: Իր նշանակությամբ նա Կապադովկիայում թագավորից հետո երկրորդ դեմքն է: Սովորաբար քրմերը պատկանել են նույն տոհմին, ինչ որ թագավորները» [գիրք XII, III, 37]: Այստեղ ամեն ինչ հիշեցնում է Խորենացու նկարագրած Հայաստանի գլխավոր սրբավայր հանդիսացող Բագարանը՝ իր բազմաթիվ «ծառաներով և քրմապետով»: Վերջինս թագավորի հարազատ եղբայրն էր[125]:

Կրկին անդրադառնանք Անահիտ աստվածուհու պաշտամունքի վերաբերյալ Ստրաբոնի վկայություններին: Ազնվական դասի աղջիկների՝ Անահիտ աստվածուհուն անձնատրության ծեսերին անդրադառնալիս, գրում է. «Այս բոլորը զարմանալի չէ, այլ այն, որ ժողովրդի ամենանշանավոր մարդիկ իրենց կույս աղջիկներին նվիրաբերում են աստվածուհուն, և նրանք, ըստ օրինի, երկար ժամանակ պառնկում են աստվածուհու համար, որից հետո ամուսնանում են, և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ» [գիրք XI, XIV, 16]: Ակներև է, որ բարձրաշխարհիկ օրիորդների կրոնական այս հետերիզմը, որ կապված էր Անահիտի պաշտամունքի հետ, շատ ավելի հին ժամանակներում գոյություն ունեցած խմբամուսնության մնացուկ էր: Պատմիչի այս վկայությունները ոչ միայն եզակի են, այլև այլ աղբյուրներում Անահիտին նվիրված վկայություններին հակասող: Հայ պատմիչների գործերում անձնատրության այդ

---

[124] Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1966, էջ 237:

[125] Տե՛ս **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ՝ Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփղիս, 1913, գիրք երկրորդ, գլուխ ԽԸ, էջ 175, գլուխ ԾԳ, էջ 183:

սովորույթը չենք գտնում, կան միայն նման երևույթների վարագուրված ակնարկներ: Հայ մատենագրության մեջ Անահիտը հայտնի է «Մեծ մայր», «Մեծ տիկին», «Հայոց աշխարհի բարերար» և այլ տիտղոսներով: Քրիստոնեության ընդունումով՝ Անահիտ դիցուհու պաշտամունքը անցավ Մարիամ աստվածամորը, հետևաբար նրան կրոնական հետերիզմ վերագրելը սրբապղծություն էր:

Կ. Մելիք-Փաշայանի համոզմամբ՝ կրոնական այս հետերիզմը սերտ աղերսներ ունի պտղաբերության ու ծննդաբերության հետ, և պատահական չէ, որ այն տեղի էր ունենում հատկապես մայր աստվածներին՝ Անահիտին, Իշտարին, Կիբելլային նվիրված տաճարների շուրջը[126]: Այստեղ երեխա չունեցող կանայք օտար տղամարդկանցից հղիանալիս այդ ունակությունը վերագրում էին Անահիտին[127]: Վերոհիշյալ սովորույթների վերապրուկները պահպանվել են մինչև XIX դարի վերջերը, որոնք ապացուցում են հետերիզմի աղերսը ծննդաբերության հետ[128]: Գիտնականի կարծիքով՝ Անահիտի պաշտամունքին առնչվող կրոնական հետերիզմը ապրել է զարգացման երկու փուլ. սկզբնական շրջանում պարունակել է կուսությունը զոհաբերելու գաղափարը (հավանաբար, տղամարդիկ ևս, ինչպես քրմերը, զոհել են իրենց առնականությունը), իսկ երկրորդ շրջանում հետերիզմը վերափոխվել է՝ աղերսվելով ծննդաբերության և արգասավորության հետ, այսինքն՝ կրոնական ազատ կենակցությունը կորցնում է իր նախկին բովանդակությունը՝ ստանալով նոր նշանակություն, դառնալով բեղմնավորման միջոց[129]:

Ստրաբոնը հաղորդում է, որ Անահիտի մեհյանների շուրջը աղջիկներն ու կանայք ազատ սեռական հարաբերություններ էին ունենում, և ոչ ոք չէր խորշում նրանց հետ ամուսնանալուց. «… բոլորն էլ պոռնկում էին: Այնքան բարեհաճ են վերաբերվում այն հայ կույսերը ի-

---

[126] Տե՛ս **Կ. Մելիք-Փաշայան,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Ե., 1963, էջ 48:

[127] Տե՛ս նույն տեղում, էջ 51–52:

[128] Օրինակ՝ Խ. Սամուելյանը գրում է, թե Դարաշամբի Սուրբ Ստեփանոս վանքում կար ստորերկյա անցք: Այդ անցքով ամուլ կանայք իրենց ամուսինների գիտությամբ որևէ օտար մարդու հետ սողալով գնում են ստորգետնյա աղբյուրի մոտ, որտեղ մի փոքր հանգիստ են առնում և սեռական հարաբերություններ ունենում: Հավատում էին, որ վանքի սուրբը բուժում է ամլությունը, և կինը հղիանում է (տե՛ս **Խ. Սամուելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Ե., 1931, էջ 230):

[129] Տե՛ս **Կ. Մելիք – Փաշայան.** նշվ. աշխ., էջ 54–55:

բենց սիրահարներին, որ ոչ միայն հյուրընկալություն են ցույց տալիս, այլև տալիս են նրանց նվերներ, հաճախ ավելի շատ, քան թե իրենք են ստանում, ըստ որում՝ մեծահարուստ տներից են և լավ հասույթ ունեն: Բայց ամեն մի պատահական անձի հյուրասիրություն չեն ցույց տալիս, այլ հատկապես իրենց աստիճանի մարդկանց» [գիրք XI, XIV, 16]: Այս մասին ինչպես ասվեց վերը, գրում է նաև Հերոդոտոսը:

Այս առումով բացառիկ մի սովորույթի նկարագրություն ունի Ստրաբոնը: Նա խոսում է սակերի՝ սկյութական ցեղի մի օր ու գիշեր տևող բաքոսական (Բաքոս՝ գինու և զեխության աստված) տոնի մասին, ըստ որի՝ սակերը այդ օրը «մերկ պարում են բաքոսական զեխության մեջ», սովորույթ, որը հեղինակն անվանում է «Սակյան տոն»: Ըստ պատմիչի՝ այդ տոնն անցնում է պարսիկներին. «…հագնվում են սկյութական ձևով, խմում են միասին և գրգռում են իրար և իրենց խրախճանակից կանանց» [գիրք XI, VIII, 4–5]: Ստրաբոնը նման սովորույթ է արձանագրել նաև Պոնտոսում: «Կոմանան բազմամարդ քաղաք է և Հայաստանից եկած ապրանքների նշանավոր վաճառատեղի: Այստեղ աստվածուհու դուրս գալու ժամանակ [Անահիտի պաշտամունքի օրերին] գալիս հավաքվում են ամեն կողմից՝ քաղաքներից և գյուղերից, մարդիկ և կանայք այս տոնի համար. ուրիշներ ուխտի համար պանդխտում են միշտ այստեղ աստվածուհուն զոհ մատուցանելու համար. … բազմաթիվ կանայք վաճառում են իրենց մարմինը, ըստ որում՝ մեծ մասամբ հիերոդուլ են»: Այնուհետև Ստրաբոնը հաղորդում է մեկ այլ ուշագրավ վկայություն ևս. «Զելիտիսը ունի Զելա քաղաքը, որ շինված է Շամիրամի բարձունքի վրա և ունի Անահիտի մեհյանը, աստվածուհի, որին պաշտում են նաև հայերը: Այստեղ սրբագործությունները կատարվում են ավելի հանդիսավոր ծեսով» [գիրք XII, III, 36]:

Ըստ Մելիք-Փաշայանի՝ իզուր են այն գիտնականների ջանքերը, որոնք փորձում են ժխտել կրոնական հետերիզմի գոյությունը անտիկ Հայաստանում, մանավանդ որ նրա առկայության մասին անժխտելի փաստեր կան ոչ միայն Հայաստանում, այլև Փոքր Ասիայում, Միջագետքում, Հռոմում, Հունաստանում, Պոնտոսում և այլ երկրներում[130]:

Ստրաբոնը ունի հաղորդում, որ Հայաստանում և Պարսկաս-

[130] Տե՛ս **Կ. Մելիք-Փաշայան,** նշվ. աշխ., էջ 48:

տանում Եփրատ ու Տիգրիս գետերի հորդումները (վարարումները) կանխելու նպատակով շքեղազարդ ձիերի զոհաբերման ծիսակատարություններ էին անում: Նույնպիսի շքեղազարդ և նույնիսկ երամակներով ձիերի զոհաբերություններ էին կատարվում նաև Արևին ու Միհրական տոներին: (Ստրաբոն, էջ 61):

Ստրաբոնը հետաքրքիր հաղորդում ունի հուղարկավորության հետ կապված ժողովրդական հավատալիքների վերաբերյալ: Նա գրում է. «Եթե դին ճանկում էին գիշատիչ թռչունները, ապա հանգուցյալը երանելի էր համարվում, եթե պատառոտում էին գազանները, ապա՝ նվազ պատվելի, դին անեղծ թողնվելու դեպքում ննջեցյալը դժբախտ էր համարվում» [գիրք XI, 18]:

§ 1.4.7. ԱԿՆԱՐԿՆԵՐ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Աշխարհագրության» մեջ ակնարկ կա բժշկության մասին: Հին Հայկական դեղանյութերի շտեմարանում հատուկ տեղ ունեին սնդիկի միացությունները, այդ թվում՝ կարմիր ներկը: Նա վկայում է, որ Հայաստանում «կան նաև հանքեր, այդ թվում՝ այնպիսիք, ուր արդյունահանվում է այսպես կոչված սանդիկը (կարմիր ներկ, սուսր), որը կոչվում է հայկական ներկ և նման է ծիրանին» [գիրք XI, XIV, 9]: Ավանդական հայկական բժշկությունը դարեր շարունակ օգտագործել է սնդիկի միացությունները, մասնավորապես մաշկային հիվանդությունների ժամանակ:

Խոսելով Կապուտան լճի մասին՝ Ստրաբոնը գրում է՝ այստեղ «ջրի մակերեսին աղը հավաքվում և բյուրեղանում է. այս աղը քոր և անհանգստություն է պատճառում մարմնին, բայց յուղը բուժում է հիվանդությունը, իսկ անուշահամ ջուրը մաքրում է զգեստը, եթե որևէ մեկը սխալմամբ այն լիճն է մտցրել լվանալու համար» [գիրք XI, XIII, 2]:

Այսպիսով՝ արձանագրենք, որ Ստրաբոնի «Աշխարհագրությունը», ի շարս այլ երկրների, բարձրարժեք ու հավաստի աղբյուր է նաև Հայաստանի պատմության, աշխարհագրության և հատկապես տնտեսամշակութային կյանքի ուսումնասիրության համար: Այն լրջագույն վավերագիր - փաստաթուղթ է, որը ոչ միայն վկայում է հայ ժողովրդի հնագույն ազգ լինելը, այլև հստակ օրինակներով ու

փաստերով ներկայացնում է հայկական պետական հզոր միավորման դերը տարածաշրջանում:

§ 1.5. ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ «ԶՈՒԳԱՀԵՌ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՐԿԸ՝ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Բազմազան և մեծաթիվ են հելլենիստական դարաշրջանի վերաբերյալ մեզ հասած աղբյուրները: Սրանցից հիշատակելի են Հռոմեական կայսրության շրջանի հունական պատմագրության կարկառուն ներկայացուցիչ Պլուտարքոսի (Ք.հ. 45-127) աշխատությունները: Նրա 210 անուն երկերից մեզ է հասել 150-ը: Պատմագրի կարևորագույն աշխատություններից է «Զուգահեռ կենսագրությունները» («Զուգակշիռք»): Հռոմեացի զորավարներ և քաղաքական գործիչներ՝ Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեոսի, Հուլիոս Կեսարի, Մարկոս Կրասոսի և Մարկոս Անտոնիոսի կենսագրությունները, որոնցում բազմաթիվ տեղեկություններ են ընդգրկված նաև Հայաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ: Դրանք արժեքավոր նյութ են ուսումնասիրության համար[131]:

---

[131] Պլուտարքոսը ծնվել է Բեովտիայի Քերոնեա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում, Հռոմում վարել է արքունտի և պրոկուրատորի պաշտոններ, եղել է Դելփյան տաճարի քուրմ, միաժամանակ զբաղվել է նաև ճարտասանությամբ, գրականությամբ ու փիլիսոփայությամբ: Որպես պատմագիր՝ արտահայտել է Հռոմեական կայսրության վերնախավի շահերը, եղել է նրա նվաճողական քաղաքականության ջատագովը: Նրա «Զուգահեռ կենսագրություններ» երկը հունական և հռոմեական քաղաքական ու ռազմական հանրահայտ 70 գործիչների զուգահեռ շարադրված (մեկ հույն և մեկ հռոմեացի) կենսագրությունների մի հավաքածու է: Սրանցից մեզ են հասել 23 զույգ զուգահեռ կենսագրություններ և չորս կենսագրություն առանձին, ընդամենը՝ 50 կենսագրություն: Այստեղ մեծ թվով տեղեկություններ կան Ք.ա. I դարի Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքի վերաբերյալ: Տեղեկությունները հիմնականում վերաբերում են Ք.ա. I դարի Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքին: Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ» գրքի հայերեն հատվածական թարգմանությունը կատարել է Ս. Կրկյաշարյանը (**Պլուտարքոս,** Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ս. Գրքաշարյան, Ե., 2001), որտեղից էլ քաղված են ստորև ներկայացվող տեղեկու-

§ 1.5.1. ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զուգակշիռքի «Պոմպեոս»-ին նվիրված գլխում Պլուտարքոսը թվարկում է այն երկրները, որոնք նվաճվել էին Տիգրան Մեծի կողմից. բացի Ասորիքից և Պաղեստինից՝ նա հիշատակում է նաև Փյունիկիան, Կիլիկիան, Գալատիան [նկատի ունի Կապադովկիան] և Սոփենեն (Ծոփքը): Պլուտարքոսը հաղորդում է նաև պարթևների կողմից Կորդուքը գրավելու փորձերի մասին: Նա նշում է, որ պարթևները ներխուժել էին Կորդվաց երկիրը, որի տիրապետության համար վեճ էր առաջացել իրենց ու հայերի միջև: Սակայն Պոմպեոսը պահանջեց Հրահատ III-ից [70/69 – 57 Ք.ա.] մաքրել Կորդուքը՝ առարկելով, որ այդ երկիրը պատկանում է Տիգրան Մեծին: Չսպասելով նույնիսկ Հրահատ Գ-ի պատասխանին՝ նա հրամայեց իր օգնականներից Ափրանիոսին գրավել ու հանձնել Կորդուքը հայոց թագավորին: Պլուտարքոսի պատմելով [Պոմպեոս, 32, գլ. 36, 1]՝ հռոմեական այս զորապետը հալածեց պարթևներին մինչև Արբելա քաղաքը, որը գտնվում էր Ադիաբենեում: Պլուտարքոսի հաղորդմամբ՝ պարթևաց արքա Փրաատեսը, նույն ինքը՝ Հրահատ III-ը, «դեսպաններ ուղարկեց Պոմպեոսի մոտ՝ պահանջելով կրտսեր Տիգրանին՝ որպես իր փեսայի, հանձնել իրեն, միաժամանակ երկու տերությունների [Պարթևա-հռոմեական] սահման ճանաչել Եփրատը [որը Հայաստանի արևմտյան սահմանն էր], Պոմպեոսը պատասխանեց, թե Տիգրանը ավելի մոտ ազգական է իր հորը, քան աներոջը, իսկ ինչ վերաբերում է սահմանին, ապա այն կհաստատվի արդար կերպով» [հօգուտ Տիգրան Մեծի] [Պոմպեոս, 33]: Այդ նույն տեղում [Պոմպեոս, 34] Պլուտարքոսը նշում է նաև հայ-իբերական (վրացական) սահմանը. «Կյուռնոս [Քուռ գետի անվան հունական անվան ձևերից մեկը, այլ հեղինակների մոտ հանդիպում է ընդհանրապես «Կյուրոս» ձևը] գետը իր մեջ է առնում Հայաստանից հոսող Արաքսը և ապա տասներկու գետաբազուկով թափվում է Կասպից ծով: Ոմանք, սակայն, հա-

---

թյունները (այսուհետ տեքստում՝ գիրքը, գլուխը) Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ վկայությունները Պլուտարքոսի երկերում, «Էջմիածին», Օգոստոս (Ը), 2017, էջ 7-27:

վաստում են, թե Կյուռնոսը չի խառնվում Արաքսին, այլ ինքն իրեն, թեև Արաքսին շատ մոտիկ, թափվում է նույն այդ ծովը»:

Մեծ Հայքը Արտաշատի՝ Ք.ա. 66 թ. հայտնի պայմանագրով պահպանեց իր տարածքային ամբողջականությունը: Անգամ Պոմպեոսի աջակցությամբ Հայաստանին էր միացվել նաև Դերջանը, Ակիլիսենե գավառը, որը այդ ժամանակ, բուն Եկեղիքից բացի, ընդգրկում էր նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունն ու Մզուրը, որ գտնվում էր պոնտական պետության կազմում[132]:

Պլուտարքոսի երկում հստակ ընդգծվում էր Մարաստանի և Հայաստանի անմիջական սահմանակից լինելը: Ըստ նրա՝ Արաքս գետը բաժանում էր Մարաստանը Հայաստանից [Անտոնիոս, 49]:

§ 1.5.2. ԱՐՏԱՇԱՏ ԵՎ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պլուտարքոսը անտիկ շրջանի այն հեղինակներից է, որոնք կարևոր վկայություններ են թողել Ք.ա. երկրորդ դարում հայոց նշանավոր մայրաքաղաքներից մեկի՝ Արտաշատի հիմնադրման մասին: «…Պատմում են,– գրում է Պլուտարքոսը,– թե կարթագենացի Հաննիբալը, հռոմեացիներից Անտիոքոսի [խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծի մասին է – Ռ. Ն.] կրած վերջնական պարտությունից հետո [նկատի ունի Ք.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտը] գնաց հայ Արտաշեսի մոտ և խորհրդատու դարձավ նրան օգտավետ ձեռնարկներում: Բացի այդ, նկատելով երկրում չօգտագործված և անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի վայր [Արաքսի ձախ ափին՝ այժմյան Խոր Վիրապի շրջակայքում], ուրվագծեց քաղաքի հատակագիծը: Հաննիբալը այնտեղ տարավ Արտաշեսին [Արտաշես I հայոց արքային՝ Ք.ա. 189-160] և ցույց տալով տեղանքը՝ համոզեց նրան այդ վայրում քաղաք հիմնել» [Լուկուլլոս, 31]: Ապա նշում է, որ թագավորը սիրով համաձայնում է և խնդրում, որ նա ստանձնի այդ գործի ղեկավարությունը[133]:

---

[132] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Տիգրան Երկրորդը և Հռոմը, Ե., 1972, էջ 226:

[133] Գիտության մեջ հաստատված այն կարծիքը, որ Հաննիբալի այցը Հայաստան անհավանական է, այժմ ենթակա է վերանայման: Հաննիբալը կարող էր կարճ ժամանակ ապրած լինել Հայաստանում անմիջապես Անտիոքոս III-ի՝ Մագնե-

Ըստ պատմիչի՝ Արտաշատը ունեցել է մեկ միասնական հատակագիծ, ինչի մասին մտածելու հիմք է տալիս քաղաքի արտաքին տեսքը: Ընդ որում՝ դա ապացուցվում է նաև Արտաշատում կատարված հնագիտական պեղումների տվյալներով*: Այսպիսով՝ կառուցվում է մեծ և շատ գեղեցիկ քաղաք, որը կոչվում է թագավորի անունով և հռչակվում Հայաստանի մայրաքաղաք: Պլուտարքոսը այն անվանել է Հայաստանի Կարթագեն [նույն տեղում]:

Անշուշտ, քաղաքը պիտի կառուցապատված լիներ ժամանակի հելլենիստական քաղաքաշինության կանոններով՝ ուղղանկյուն թաղամասեր կազմող խաչավող փողոցներով ու շրջափակված լիներ հզոր պարիսպներով: Հենց այդ հանգամանքներն են, որ առիթ են տվել պատմագրին հիշատակելու Արտաշատին հռոմեացիների կողմից տրված «Հայկական Կարթագեն» պատվանունը, իսկ Ստրաբոնին՝ ասելու, որ Արտաշատը «գեղեցկապես շինված-բնակեցված է և երկրի թագավորանիստ քաղաքն է: Գտնվում է գետի թերակղզի կազմող անկյունում, պարսպապատ է գետափի երկայնքով՝ բացի պարանոցից, իսկ պարանոցը փակված է խրամով և պատվարով»[134]: Արտաշատ քաղաքը իսկույն ևեթ հռչակվում է քաղաքական և առևտրական խոշոր կենտրոն:

Պլուտարքոսը խոսում է նաև Միջագետքի երկրների վրա վերակացու կարգված Տիգրան Մեծի եղբոր Գուրասի նստավայր Մծբինի մասին[135], որը, ըստ նրա, ոչ միայն բազմամարդ ու հարուստ քաղաք

սիայի մոտ հռոմեացիներից կրած պարտությունից (190թ.) հետո (Տե՛ս **И. Ш. Кораблев,** Ганнибал, М., 1976, էջ 319):

* Տե՛ս **Б. Н. Аракелян**, Арташат. I, Е., 1982.

[134] Օտար աղբյուրները հայերի մասին: Հունական աղբյուրներ № 1: Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940, գիրք XI, XIV, 6:

[135] Դիոն Կասսիոսը դեպքերից ավելի քան երկուսուկես դար հետո գրում է. «Նիսիբիսի [Մծբին] քաղաքը կառուցված է Միջագետք կոչված երկրում, քանզի այսպես է կոչվում Տիգրիսի և Եփրատի միջև գտնվող ամբողջ (երկիրը) - և այժմ այն պատկանում է մեզ և համարվում է մեր գաղութը: Բայց այն ժամանակ Տիգրանը, պարթևներից վերցնելով այն, իր գանձերը և այլ հարստությունների մեծ մասը այնտեղ էր կենտրոնացրել և իր եղբորը [Գուրասին] այնտեղ բերդապահ կարգել: Լուկուլլոսը, ամռանը հասնելով այս քաղաքը, թեպետև հարձակվում էր ոչ իմիջիայլոց, բայց ոչինչ չկարողացավ վճռել, քանզի [քաղաքի] պարիսպները և՛ կրկնակի, և՛ աղյուսաշեն լինելով, մեծ հաստություն ունեին և բաժանված էին խորը խրամատով. այնպես որ ոչ մի տեղում չկարողացավ [պարիսպը] ո՛չ քան-

էր, այլև ուժեղ ամրոց՝ շրջապատված երկու շարք հաստ ու բարձրաբերձ պարիսպներով և շուրջը փորված լայն խրամով [Լուկուլլոս, 32]:

Խոսվում է նաև Տիգրան Մեծի տերության երրորդ մայրաքաղաք Անտիոքի մասին. ըստ Պլուտարքոսի՝ արքա Տիգրան Մեծի հետ հանդիպման համար Անտիոքի Եպիդափնե ժամանեց Լուկուլլոսի դեսպան Կլավդիոսը, որին հանձնարարված էր հռոմեական զորավարին հանձնել Միհրդատ Պոնտացուն: «Այստեղ նրան հրամայվեց սպասել Տիգրանին, որը բացակա էր՝ զբաղված լինելով Փյունիկյան մի քանի քաղաքների նվաճմամբ» [Լուկուլլոս, 21][136]: Անտիոքը հիմնադրել էր Սելևկոս I-ը Ք.ա. 300 թվականին և անվանել իր հոր անունով: Արդեն Ք.ա. II դարի վերջին այն ուներ 500 հազար բնակիչ և համարվում էր Հին աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը: Իր շքեղությամբ հայտնի էր հատկապես Անտիոքի արվարձանը՝ Դափնե զբոսավայրը, որի անունից քաղաքը հաճախ անվանում էին «Դափնեին կից Անտիոք»: Ք.ա. 83թ. Տիգրան II-ը, նվաճելով Սելևկյան Ասորիքը, Անտիոքը դարձրեց իր տերության երրորդ՝ հարավային մայրաքաղաքը, որտեղ իր անունով և պատկերով հատվում էին այն գեղեցիկ դրամները, որոնք մեծ քանակությամբ պահպանվել են և պահվում են այժմ թանգարաններում:

§ 1.5.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՕՐՈՔ

Պլուտարքոսի վկայությունները Տիգրան Մեծի [95-55] թագավորության, նրա նվաճումների և հիմնած տերության մասին կարևոր տեղեկատվություն են պարունակում հայ և հարևան ու հեռավոր շատ ժողովուրդների պատմության և տնտեսամշակութային կյանքի ուսումնասիրության համար: Ըստ պատմիչի՝ Տիգրան Մեծն իր նվաճումներն ուղեկցում էր նվաճված ժողովուրդների զանգվածային վե-

---

դել, ո՛չ իսկ խախտել, ուստի և Տիգրանը նույնիսկ օգնության չեկավ յուրայիններին» (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հին հունական աղբյուրներ, 9, Ա. Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ.՝ **Ս. Մ. Կրկյաշարյանի,** Հայկ ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1976, գիրք 36, 6, 1-2):

[136] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, Ա, էջ 450:

բաբնակեցումներով ոչ միայն բուն հայրենիքում, այլև իր տերության մաս կազմող Միջագետքում:

Պլուտարքոսը գրում է. «Հայաստանում թագավորում է Տիգրանը, արքայից արքան, որն իր զորքով փակում է պարթևների ճանապարհը դեպի Փոքր Ասիա, իսկ հունական քաղաքային համայնքները վերաբնակեցնում է իր երկրում, այդ արքան նվաճել է Ասորիքն ու Պաղեստինը, իսկ Սելևկյան տոհմի թագավորին մահվան մատնել [Տիգրանի հրամանով սելևկյան Սելենե թագուհին մահապատժի էր ենթարկվել Տիգրանի դեմ խռովություն բարձրացնելու փորձեր անելու համար] ու գերության տարել նրա կանանց ու դուստրերին: Եվ նման մարդը Միհրդատի [խոսքը Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորի (111-63) մասին է], որը Միհրդատյան երկրորդ պատերազմի ժամանակ (73-71թթ.) պարտություն էր կրել Լուկուլլոսից – Ռ. Ն.], բարեկամն է, նրա փեսան» (Լուկուլլոս, 14): Այնուհետև հավելում է. «Առաջին քայլերն անելիս Տիգրանի հնարավորություններն ու ծրագրերը խիստ չնչին էին, իսկ այժմ նա նվաճել էր բազում ժողովուրդների, ինչպես ուրիշ ոչ ոք չի կարողացել կոտրել պարթևների հզորությունը և Միջագետքը լցրել հելլեններով, որոնց մեծ թվով բռնագաղթեցրել էր այնտեղ Կիլիկիայից ու Կապադովկիայից, Հայաստան են բերվել նաև ասորիների, ադիաբենցիների, կորդվացիների և հրեաների հոծ զանգվածներ» [Լուկուլլոս, 21]: Մոտավոր հաշվարկներով Տիգրանի օրոք Հայաստան է բերվել կես միլիոնից ոչ պակաս օտարերկրացի[137]: Նվաճված երկրների բնակչության բռնի վերաբնակեցումը, որ հսկայական ընդգրկումով կատարվում էր Տիգրանի ժամանակ, նպատակ ուներ բավարարելու Հայաստանի ստրկատիրական տնտեսության աճող պահանջները:

Պլուտարքոսը ակնարկներ ունի նաև Տիգրանակերտի բնակչության ազգային խայտաբղետ կազմի մասին: Նրա հավաստմամբ՝ «Տիգրանակերտում ապրում էին մեծ թվով հույներ, որոնք բռնագաղթել էին Կիլիկիայից, և բարբարոսներ՝ ադիաբենացիներ, գորդիեներ, կապադովկիացիներ, հրեաների հոծ զանգվածներ, որոնց նույն բախտն էր վիճակվել. Տիգրանը ավերել էր նրանց քաղաքները, իսկ

---

[137] Տե՛ս **Г. Х. Саркисян,** Тигранакерт, Из истории древнеармянских городских общин, М., 1960, с. 60: **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Բ, ժզ:

մարդկանց բռնի քշել և ստիպել բնակվել այստեղ» [Լուկուլլոս, 26]:

Իհարկե, այդ հսկայական զանգվածները չէին կարող տեղավորվել միայն Տիգրանակերտում: Տիգրան Մեծի օրոք, քաղաքի հիմնադրման և ավերման միջև ընկած 10-15 տարվա ընթացքում քաղաքի բնակչությունը չէր կարող հասնել մի քանի հարյուր հազարի: Ուստի վերաբնակվածների մեծ մասը տեղավորվում էր այլ վայրերում ու քաղաքներում: Հայտնի է, որ Տիգրանի օրոք հիմնադրված Տիգրանակերտ անունով քաղաքներ գոյություն են ունեցել, բացի Աղձնիքից, նաև Արցախում և Ուտիքում, Գողթնում՝ Տիգրանավան[138]: Սրանցում ևս պետք է տեղավորված լիներ վերաբնակների մի մասը: Ինչպես նշվեց վերը, վերաբնակեցումներ կատարվում էին ոչ միայն բուն Հայաստանում, այլև Մարաստանում, Ամանոսում, ուր գոյություն են ունեցել Տիգրանուկոմե անունով բնակավայրեր [Լուկուլլոս, 14]: Հայկական աղբյուրներից ևս հայտնի է, որ օտարերկրացիները տեղավորվել են մասամբ նաև հին հայկական քաղաքներում, որպիսիք են՝ Արտաշատը, Արմավիրը, Երվանդաշատը, Բագրևանդի Զարեհավանը, Աղիովիտի Զարիշատը[139]: Փավստոս Բուզանդն էլ պատմում է բազմահազար հրեական բնակչության մասին, որը բնակեցրեց հայոց քաղաքներում մեծ արքա Տիգրանը իր դարում և իր ժամանակ[140]:

Վերաբնակվածների սոցիալ-տնտեսական վիճակը գնահատելու համար կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ Տիգրան Մեծը ոչ թե տեղահանում էր տվյալ նվաճված քաղաքի բնակչության մի մասին, կամ որոշակի, ասենք, առևտրա-արհեստագործական խավերին, այլ Հայաստան էր տեղափոխում ամբողջական քաղաքային համայնքների՝ լրիվ կազմով: Ըստ Ստրաբոնի, օրինակ, նա, «ամբողջ Մաժաքը տեղահան անելով, քշեց Միջագետք և նրանով բնակեցրեց Տիգրանակերտի մեծ մասը»[141], իսկ ըստ Պլուտարքոսի՝ նա

---

[138] Տե՛ս **Մեբեռսի եպիսկոպոսի պատմութիւն,** հրատ.՝ Ս. Մալխասյանցի, Ե., 1939, ԼԸ, էջ 125:

[139] Տե՛ս **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Բ, ժզ:

[140] Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Ս. Մալխասյանցի, Ե., 1968 Դ, ծե:

[141] Նվաճված երկրներում քաղաքային բնակչության առատությունից օգտվելով՝ Տիգրանը մի շարք վերաբնակեցումներ կատարեց Կիլիկիայից, Կապադովկիայից, Միջագետքից: Բացի Կապադովկիայի Մաժաք մայրաքաղաքից՝ վերաբնա-

«տեղահան էր անում հունական քաղաքային համայնքները» [Լուկուլլոս, 14] և այլն:

Հելլենիստական աշխարհում որպես նոր հիմնադրվող քաղաքների շենացման հիմնական եղանակ կազմակերպվում էր քաղաքների բնակեցման, այսպես կոչված, «սինոյկիսմոսի»՝ համաբնակեցման միջոցով: Նոր քաղաքին իրենց բնակչության մի մասն էին հանձնում հին քաղաքները՝ կամավոր կամ հարկադրաբար: Երբեմն բնակչությունը բերվում էր բավական հեռու տեղերից: Հայաստանում, տեղական քաղաքային բնակչության սղության պայմաններում, օտարերկրյա քաղաքային բնակչության ներգրավումը մեծ չափերի պիտի հասներ[142]:

Այդուհանդերձ, օտարերկրացիները չէ, որ կազմում էին այդ քաղաքների հիմնական բնակչությունը, Հայաստանի քաղաքների բնակչության հիմքը կազմում էին հայերը: Նոր քաղաքի բնակեցման ժամանակ, բացի տեղական քաղաքներից բերվող բնակչությունից, ներգրավվում էր և գյուղական բնակչությունը, մասամբ հենց քաղաքի համար, առավելապես՝ նրա հողագործական գոտու համար: Այսպես, օրինակ, Տիգրանը իր հիմնադրած քաղաքում բնակեցրեց նաև հայ ավագանու շատ ներկայացուցիչների: Պլուտարքոսի հաղորդման համաձայն՝ «…բոլոր մասնավոր անձինք և մեծատոհմիկները արքայի հանդեպ տածած սիրուց և հարգանքից դրդված (հոգում էին) քաղաքի աճի ու շենացման մասին, ուստի այն լի է գանձերով ու կառույցներով» [Լուկուլլոս, 26]:

Տիգրանակերտի կառուցապատման վերաբերյալ գրելիս Պլուտարքոսը հավաստում է, որ «թե՛ ազնվականությունը և թե՛ քաղաքի հասարակ ժողովուրդն աշխատում էին հաճոյանալ թագավորին և աջակցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման աշխատանքներին» [Լուկուլլոս 26, 3]: Տիգրանակերտում, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը [Լուկուլլոս, 29, 4], կառուցված է եղել առանձին թատրոն, որի համար զանազան տեղերից հրավիրված են եղել հույն դերասաններ:

կեցվեցին նաև Կիլիկիայից՝ Սոլե Մալլոս, Ադանա, Էպիփանեյա և մի շարք այլ, ընդամենը 12 հելլենիստական քաղաքներ (Ստրաբոն, XII, II, 9, 15):

[142] Տե՛ս **Ս. Կրկյաշարյան,** Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում, ՊԲՀ, 1964, № 1, էջ 111: Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին, ՊԲՀ, 1915, № 1, էջ 208-230:

Ազգային խայտաբղետությունը ավելի ցայտուն է երևում բանակի կազմում: Տիգրանի բանակում կռվում էին նաև «իրենց համայն զորքով հայերն ու գորդիենները (կորդվացիները, որոնք նույն հայերն էին Տիգրանի ժամանակ), իրենց զորքերի գլուխն անցած մեդիացի և ադիաբենացի արքայիկները, բաբելոնյան ծովից [Պարսից ծոց] արաբական մեծաթիվ զորքերը, իսկ Կասպից ծովից աղվանից և նրանց սահմանակից իբերների ամբոխները… ոչ փոքրաթիվ, Արաքսի ափերի ազատ ցեղերը [ըստ երևույթին, նկատի ունի Ամուդարյա (Արաքսես) գետի ափերին բնակվող սակառաուկ («սև սկյութներ») կոչվող ցեղերը]» [Լուկուլլոս, 26]: Պլուտարքոսը, հիշատակելով Տիգրան Մեծի բանակի շարքերի դասավորությունը և թվաքանակը, գրում է. «Նրանց [հռոմեացիների] դեմ կանգնած էին թշնամու մեծաթիվ հեծելազորը և ընտիր զորքեր, իսկ առաջին շարքերում գտնվում էին հեծյալ աղեղնավոր մարերը և նիզակակիր իբերները, որոնց, բոլոր օտարականներից ավելի, Տիգրանը վստահում էր իբրև առանձնապես մարտունակների» [Լուկուլլոս, 31]: Մեկ այլ առիթով էլ հիշատակում է Տիգրան Մեծի զորաբանակում, բացի հայերից, դաշնակից իբերներին, մարդերին, հատկապես մեդիացիներին, որոնք կռվում էին Ատրպատականի Միհրդատ թագավորի առաջնորդությամբ, որը հայոց թագավորի փեսան էր ու հավատարիմ վասալը [Լուկուլլոս 31]: Նա հիշատակություն ունի նաև կոլխերի, կապադովկիացիների, տիբարենների, խալդայների մասին [Լուկուլլոս 14, 19]: Տիբարենները ու խալդայները բնակվում էին Սև ծովից հարավ-արևելք ընկած տարածքում՝ պոնտական թագավորության կազմում:

Նրա հաղորդման համաձայն՝ «այլ ժողովուրդների թվում (հույն, հրեա, ասորի և այլն) իրենց նախկին բնակավայրերից նա (Տիգրան Մեծը) քշել էր նաև արաբական ցեղերի, որոնց բնակեցրել էր իր մայրաքաղաքի մերձակայքում (Տիգրանակերտ), որպեսզի նրանց օգտագործեր առևտրական կարիքների համար»[143] [Լուկուլլոս, 21]: Տիգրանը նրանց հանձնարարել էր տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողությունն ու պաշտպանությունը: Նրանք Տիգրանի համար մաքս էին գանձելու Եփրատի գետանցի մոտ, որը գտնվում էր Զեգմայի արևմտյան կողմում և Կիլիկիան Ասորիքից բաժանող Ամանոս

[143] Հմմտ. **Հ. Հակոբյան,** Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը, ՊԲՀ, 2007, № 3, էջ 3-29:

լեռների լեռնանցքում[144]:

Ըստ ուսումնասիրությունների՝ Տիգրան Մեծը զսպել է Վերին Միջագետքում բնակվող արաբական ցեղերին, քանի որ վերջինները, թեև օժտված էին առևտրական որոշ կարողություններով, բայց իրենց ապրուստի հիմնական միջոց էին դարձրել առևտրական քարավանների կողոպուտը կամ էլ իրենց բնակության շրջաններում տեղափոխվող ապրանքներից անչափ բարձր հարկեր կորզելը: Այդ վրանաբնակ արաբները հարմարավետ գետանցների կամ կամուրջների վրա կամայական մաքսային դրություն էին հաստատել: Տիգրան Մեծը, իրեն ենթարկելով այդ ցեղերին, կարգավորեց մաքսերը: Նա, գնահատելով արաբական ցեղերի առևտրական ձիրքը, նրանց մի մասին էլ բերեց ու բնակեցրեց Օսրոյենե (Ուրֆա) քաղաքի և Հայաստանի հարավային սահմանների մերձակա տարածքներում[145]: «Նրանց միջոցով Հայոց արքան վերահսկողություն էր սահմանում Արևելքն Արևմուտքին կապող խոշորագույն առևտրական մայրուղիներից մեծի վրա, որն անցնում էր Օսրոյենեով ու շարժվում դեպի Հնդկաստան: Այսպես, նա իրենից կախման մեջ էր զցում այդ մայրուղու վրա գտնվող երկրներն ու քաղաքները, որոնք հիմնականում գոյատևում էին դրա շնորհիվ»[146]:

§ 1.5.4 ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Պլուտարքոսը Հայաստանը համարել է հարուստ ու ծաղկուն երկիր. «Եզրափակիչ մարտից հետո [Մարաստանում] վեցերորդ օրը հռոմայեցիները հասան Արաքս գետը, որը Մարաստանը բաժանում էր Հայաստանից: …Իսկ երբ բարեհաջող հասնելով գետի հանդիպակաց ափը՝ ոտք դրեցին հայկական հողի վրա, այնժամ, ասես բաց ծովում երկար թափառումներից հետո առաջին անգամ ցամաք տեսած, նրանք համբուրում էին քարերն ու ավազը և, իրար գրկելով, ուրա-

---

[144] Տե՛ս **Я. А. Манандян,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н.э. – XV в. н. э.), 2-е изд., Е., 1954, с. 71:

[145] Տե՛ս **Հրանդ Ք. Արմեն,** Մեծն Տիգրան, Անթիլիաս, 1947, էջ 99-100:

[146] Տե՛ս **Ա. Ս. Եղիազարյան,** Արաբական ցեղերը Տիգրան մեծի տերության համակարգում, «Հայ աստվածաբան» (գիտական հոդվածների ժողովածու), Գ, ԵՊՀ աստվածաբանության ֆակ., Ե., 2009, էջ 217:

խությունից լաց էին լինում: ***Այնուհետև ընթանալով հարուստ ու ծաղկուն երկրի միջով, նրանք այդքան դաժան զրկանքներից հետո խիստ շատ կերան ու խմեցին,*** ուստի հիվանդացան ջրգողությամբ ու փորհարությամբ» [Անտոնիոս, 49]: Տնտեսական և մշակութային առումով կարևոր տեղեկություն է մայրաքաղաքի հելլենիստական տիպի խոշոր, գեղեցիկ, հարուստ մշակութային կյանքը: Այսպես, պատմիչը հաղորդում է. «Վերցնելով Տիգրանակերտում գտնված գանձերը՝ նա [Լուկուլլոսը] քաղաքը թողեց զինվորների թալանին, որոնք, բացի այլ բարիքներից, այնտեղ գտան նաև 8 հազար տաղանդ արծաթ [որ հավասար է 17 միլիոն ոսկի ռուբլու]: Այս ամենից բացի՝ «նա ռազմավարից հռոմեական ամեն մի զինվորի տվեց 800-ական դրաքմե», այսինքն՝ 280 ոսկի ռուբլի յուրաքանչյուրին [Լուկուլլոս, 29]: 8 հազար տաղանդն արծաթ դրամով հավասար կլինի, ըստ գերմանացի գիտնական Հուլչի հաշվումների՝ մոտ 34 միլիոն գերմանական ոսկի մարկի, իսկ 800 դրաքմեն կամ արծաթ դինարն՝ 560 ոսկի մարկի[147]: Տիգրան մեծի տերության պալատներից մեկում զորավար Լուկուլլոսը «գտել էր մեծ քանակությամբ ոսկի և արծաթ և երեք միլիոն մեդիմնոս (մոտ 120 հազար տոննա) ցորեն»: Այսպիսով՝ և՛ զինվորները հարստացան, և՛ Լուկուլլոսը զարմացավ, որ ինքը, մեկ դրամ անգամ չստանալով հասարակական գանձարանից, պատերազմը վարում է միայն իր միջոցներից» [Լուկուլլոս, 29, 30]: Տիգրանակերտում, Պլուտարքոսի հավաստմամբ, կային առատ գանձեր և աստվածներին նվիրված թանկարժեք ընծայաբերումներ, քանզի հասարակ մարդ և իշխանավոր արքայի հանդեպ ունեցած հարգանքի պատճառով իրար հետ մրցում էին քաղաքի ընդարձակման համար: Այդ պատճառով էլ Լուկուլլոսն ուժեղացրեց պաշարումը այն հույսով, որ Տիգրանը չի համբերի, այլ տուրք կտա զայրույթին և, ի հեճուկս իր իսկ մտադրության, կգա վճռական ճակատամարտ տալու» [Լուկուլլոս, 26]:

Ք.ա. 68 թ. ամռանը Լուկուլլոսի զորքը շարժվեց դեպի Հայաստանի երկրորդ մայրաքաղաք Արտաշատ: Տավրոսն անցնելով՝ այժմյան Մշո դաշտում, ինչպես վկայում է պատմագիրը, Լուկուլլոսը վիատվեց՝ տեսնելով, որ արտերը դեռևս կանաչ են. «Հունձն այստեղ այսքան ուշանում է օդի սառնության պատճառով, մինչդեռ Կորդվաց երկրում, որտեղից հռոմեական զորքը մեկնել էր մի քանի շաբաթ առաջ, արդեն հնձի ժա-

[147] **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 526:

մանակն էր» [Լուկուլլոս 31]: Հայկական լեռնաշխարհի այս առանձնահատուկ երևույթը, որ Լուկուլլոսի համար անակնկալ մի նորություն էր, նրան մեծ անհանգստություն պատճառեց, որովհետև մեծապես դժվարանում էր նրա բանակի պարենավորման գործը:

Պլուտարքոսը ակնարկ ունի նաև տեղական անխառն գինու թնդության մասին. «… Ամեն մարմին չէ, որ կարողանում է դիմանալ մեծաքանակ անխառն գինուն» [Լուկուլլոս, 25]: Ի դեպ, հին հույները, գինին կրատերի (կավե անոթի) մեջ ջրի հետ խառնելով, թնդությունը թուլացնելով խմելու սովորություն ունեին հնուց ի վեր[148]:

Ակնարկներ կան նաև ոսկերչության և արհեստագործության այլ ճյուղերի վերաբերյալ: Պլուտարքոսը գրում է, որ հռոմեացի զինվորները «բոլոր արշավանքների համար արժանի պարգևներ չեն ստանում, այլ դրա փոխարեն ուղեկցում են Լուկուլլոսի սայլերին և ուղտերին, որոնք բեռնված են ոսկե գավաթներով և թանկարժեք քարերով» [Լուկուլլոս, 34]: Կրասոսը ևս արշավեց Արևելք, «քանզի այդ երկրների բնակիչները միայն ավար են ու հարստանալու միջոց և ուրիշ ոչինչ…» [Լուկուլլոս, 36]: Գրեթե նույն տեղում և նույն ժամանակ Պլուտարքոսը նշում է մեծ աղմուկ և փառք հանած՝ Միհրդատ Պոնտացու դեմ տարած հաղթանակների պատվին Լուկուլլոսի կազմակերպած հաղթահանդեսի մասին: Այն մյուսների նման նպատակ չուներ զարմացնելու ամբոխին շարասյան երկարությամբ և դրանում տարվող իրերի առատությամբ: Դրա փոխարեն Լուկուլլոսը ֆլամինիոսների կրկեսը զարդարեց թշնամու մեծ թվով զենքերով ու թագավորի [Միհրդատ Պոնտացի] ռազմական մեքենաներով, և արդեն սոսկ այս տեսարանը խիստ տպավորիչ էր: «Հաղթահանդեսի երթով,- գրում է պատմագիրը,- անցան մի քանի զրահապատ հեծյալ, տասնյակ մանգաղակի կառք և թագավորի 60 մերձավորներ ու զորահրամանատարներ, սրանց հետևում էին 110 ռազմանավ՝ պղնձապատ քթերով, վեց ոտնաչափ բարձրությամբ Միհրդատի ոսկե արձանը, թանկարժեք քարերով ծածկված նրա վահանը, այնուհետև քսան պատգարակ արծաթե անոթներով ծանրաբեռ, և դարձյալ 32 պատգարակ՝ ոսկե բաժակներով, զենքերով և դրամներով: Այս ամենը

---

[148] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները՝ հայ ազգագրության անտիկ դարաշրջանի բացառիկ սկզբնաղբյուրներ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, ԵՊՀ հրատ., 2015, էջ 368:

տանում էին պատգարակիրները, ութ ջորի տանում էին ոսկե մահիճ-ներ, իսկ 56 ջորի՝ արծաթե ձույլեր, և դարձյալ 107 ջորի՝ արծաթ դրամ-ներ, որոնց գումարը կազմում էր գրեթե երկու միլիոն յոթ հարյուր դրաքմե…» [Լուկուլլոս 37]:

Այստեղ ևս, որպես ազգագրական երևույթի, համառոտակի անդրադառնանք Պլուտարքոսի հիշատակած չափ ու կշռի միավոր-ներին: Որպես տարածության չափի միավոր՝ հաճախ է հիշատակ-վում ասպարեզը [Անտոնիոս, 38]: 1 ասպարեզը Հին աշխարհում տարածության չափ է, որ ձին մի վազքով անցնում է, հավասար էր հունական ստադիոնի: 1 ստադիոնը 600 ոտնաչափ է: 1 ստադիոնը նաև հավասար է 185 մետրի: Հիշատակված է նաև գրկաչափը: 1 գրկաչափը հավասար էր 1,85 մետրի, 100 գրկաչափը նույնպես 1 ասպարեզ է: Ի դեպ, հին պարսկական ասպարեզը կամ ասպարիսաց ասպարեզը հավասար էր 230,112 մետրի[149]: Կանգունը 0,5 մ է: Հայ բացատրական բառարաններում այն ներկայացվում է մեկ մետրա-նոց կամ արշինանոց երկարության կամ բարձրության չափի միա-վոր[150]: Նետընկեց տարածության մասին Պլուտարքոսը ակնարկում է Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին կայացած Տիգրանակերտի ճակատա-մարտում հռոմեական զորքի արագ հարձակման ճանապարհը մատնանշելիս [Լուկուլլոս, 27]: Դա երկարության այն մոտավոր չափն է, այն հեռավորությունը, մինչև ուր կարող է հասնել աղեղից արձակված նետը[151]: Պլուտարքոսը նշում է 80 ոտնաչափ երկարութ-յուն ունեցող **խոյ** կործանիչ մեքենայի մասին: Նա գրում է [Անտոնիոս, 36], որ արևելյան արշավանքի ժամանակ «300 սայլի վրա տա-նում էին պաշարողական մեքենաներ, այդ թվում՝ և 80 ոտնաչափա-նոց **խոյ** անվամբ պարսպակործան մեքենայի մասին, բայց եթե դրանցից որևէ մեկը վնասվեր, այն վերանորոգել անհնարին կլիներ, քանի որ Ներքին Ասիայում չկան անհրաժեշտ ամրության ու երկա-րության անտառներ, և Անտոնիոսը, այս գումակը միայն ծանրութ-յուն էր պատճառում և ուշացնում, այն թողեց… պահակային ջոկա-

---

[149] Տե՛ս **Ստ. Մալխասեանց,** Հայերեն բացատրական բառարան, հ. I, ԵՊՀ հրատ., Ե., 2010, էջ 237:

[150] Տե՛ս նույն տեղում, հ. II, էջ 382, **Ա. Մ. Սուքիասյան,** Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, երկրորդ հրատ., ԵՊՀ հրատ., Ե., 2009, էջ 491:

[151] Տե՛ս **Ս. Մալխասեանց,** Հայերեն բացատրական բառարան, հ. III, ԵՊՀ հրատ., Ե., 2010, էջ 451:

տին» [Անտոնիոս, 38]: Դրամական միավորներից հիշատակված է **տաղանդը** և **մինա** դրամական միավորը, որը հավասար էր 1/60-րդ տաղանդի, արժեր 100 դրաքմե:

Նյութական մշակույթ: Հագուստը:

Հայոց արքան կրում էր ծիրանի բաճկոն՝ կեսը սպիտակ և կեսը ծիրանի, շապիկ և լայն վարտիք: Գլխին դնում էր բարձր խույր, որի վրա ոսկով գործված էին իրար մոտ կանգնած և գլուխները դեպի հակառակ կողմը դարձրած արծիվներ: Հայկական տիարան կամ խույրը անտիկ դարաշրջանների քանդակներում, բարձրաքանդակներում, փորագիր քարերի (գեմա) և դրամների վրա պատկերված թագն է, որ հանդիսավոր պայմաններում կրում են Տիգրան Մեծն ու հաջորդ մի քանի Արտաշիսյան արքաներն ու ազգակից կոմմագենյան ճյուղի Երվանդունի թագավորները[152]:

Պլուտարքոսի վկայությամբ [Լուկուլլոս, 28]՝ Տիգրան Մեծը Տիգրանակերտի ճակատամարտից փախուստի պահին «վերցրեց գլխի խույրը, արտասվելով տվեց իր որդուն (Տիգրան Կրտսերին) և պատվիրեց նրան ուրիշ ճանապարհով փախչել՝ իր անձը ազատելու համար: Որդին չհամարձակվեց խույրը իր գլխին դնել և տվեց պահելու իր հավատարիմ սպասավորին: Սակայն սա հռոմեացիների ձեռքը գերի ընկավ խույրի հետ, որը և Լուկուլլոսի համար դարձավ հաղթանակի նշան»: Պատերազմի ժամանակ արքայի խույրը գերեվարելը նշանակում էր հաղթանակ: Սա զավեշտական և ծիծաղ առաջացնող հորինվածք է, որը ոչ մի կապ չունի իրականության հետ, եթե խույրը իրոք գերվեր, այն կցուցադրվեր Հռոմում՝ հաղթահանդեսում, որը արված չէ. սրա մասին այսպես է մեկնաբանում Ն. Ադոնցը: Պատմագիրը, երբ խոսում է Պոմպեոսի բանակատեղիում Տիգրան Մեծի իջևանելու մասին, գրում է. «Ծերունի Տիգրանը, որն այդ ժամանակ մոտ 75 տարեկան էր, Պոմպեոսի մոտ եկել էր ձի հեծած, առանց արքայական ծիրանու, բայց գլխին ուներ իր խույրն ու ապարոշը» [Պոմպեոս, 33]: Պլուտարքոսը ակնարկ ունի մարահայկական արքունական հագուստի մասին: Խոսելով Ալեքսանդրիայում Անտոնիոսի կազմակերպած հաղթահանդեսի մասին՝ Պլուտարքոսը նշում է նաև Կլեոպատրայից ծնված Անտոնիոսի որդիների՝ Ալեքսանդրի և

---

[152] Մանրամասն տե՛ս **Հ. Պ. Հակոբյան,** Տիգրան Մեծ, Ե., 2005, էջ 211-220:

Պտղոմեոսի արքայական զգեստների մասին: Նա «Ալեքսանդրին հռչակել էր Հայաստանի, Մարաստանի և Պարթևստանի (հենց որ այդ երկիրը նվաճվեր), իսկ Պտղոմեոսին՝ Փյունիկիայի, Ասորիքի և Կիլիկիայի արքաներ: Հաղթահանդեսին Անտոնիոսն Ալեքսանդրին դուրս բերեց մարական հանդերձով, **տիարայով** (արքայական թագ) և **կիդարիսով** (վերնազգեստ), իսկ Պտղոմեոսին՝ երկարաճիտ կոշիկներով, մակեդոնական թիկնոցով և խույրով զարդարված **կավսիայով**»՝ թաղիքե լայն երիզ գլխարկ, որն օգտագործում էին մակեդոնացի արքաները: Սա Ալեքսանդրի հետնորդների տարազն էր, իսկ այն առաջինը՝ Մարաստանի և Հայաստանի թագավորների տարազը: Մանչուկները ողջունում էին ծնողներին, և մեկին շրջապատել էին հայ, մյուսին՝ մակեդոնացի թիկնապահները: Կլեոպատրան այդ օրը, ինչպես միշտ, երբ հայտնվում էր մարդկանց առաջ, հագել էր Իսիսի (Եգիպտական դիցարանի գլխավոր աստվածուհիներից մեկը՝ պտղաբերության, արգասավորության և մարդկանց մահից պաշտպանող աստվածուհին) սրբազան զգեստը. նա իրեն նույնպես կոչում էր նոր Իսիս» [Անտոնիոս, 54]:

1.5.5. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ԱՄՈՒՄՆԱԸՆՏԱՆԵԿԱՆ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պլուտարքոսը իր երկում ակնարկներ ունի նաև Արևելքի «բարբարոս»* երկրների արքունիքներում բազմակնության, հարեմ ու հարճեր պահելու սովորույթի մասին: Ըստ նրա՝ Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի գրավումից հետո Տիգրան Մեծը ուղարկում է «մի ընտիր հեծելագունդ, որին հանձնարարված էր պաշարված մայրաքաղաք Տիգրանակերտից ազատել **իր կանանոցն** ու մեծագին զանձերը» [Լուկուլլոս, 23, 6]: Տիգրան Մեծը, ըստ Պլուտարքոսի, Արտաշատում էր թողել **օրինավոր կանանց** և անչափահաս զավակներին [Լուկուլլոս, 31, 4]: Ինչպես Արևելքի այլ պետություններում, հայոց թագավորը ևս հարճերի աստիճանում էր պահում բազմաթիվ կա-

* Բարբարոսը անտիկ դարաշրջանում չուներ հետագայում կիրառություն գտած վիրավորական երանգավորում և պարզապես նշանակում էր «ոչ հույն», «այլազգի», բարբարոսների թվից ավելի ուշ դուրս բերվեցին հռոմեացիները՝ որպես հույներին նվաճած և հելլենական մշակույթը ընդօրինակած ժողովուրդ:

նանց, կամ էլ նրանց մի մասին շնորհում էր իր կինը կոչվելու պատիվը: Թագավորի կանայք էլ կոչվում էին տիկիններ: Դրանց մեջ միայն մեկը, ըստ բարձր ազնվական ծագման, դառնում էր թագուհի և ստանում էր տիկնանց տիկին պատվանունը: Թագավորի աղջիկը սովորաբար կոչվում էր «օրիորդ հայոց»:

Նույնանման հաղորդումները բավական շատ են նաև Արևելքի մյուս երկրների արքունական և նախարարական միջավայրի վերաբերյալ: Այսպես, Պլուտարքոսը հիշատակում է մարերի թագավորի կանանց ու որդիների մասին, որոնք Անտոնիոսի պարթևական արշավանքների ժամանակ ամրացել էին Ատրպատականի մայրաքաղաք Փրասպայում [Անտոնիոս, 38]: Պլուտարքոսը ակնարկում է նաև, թե ինչպիսի ճոխության մեջ էին ապրում պարթև[153] նախարարները, օրինակ՝ պարթև նախարար Սուրենը պատերազմի ժամանակ իր հետ ման էր ածում իր ամբողջ հարեմը. հազար ուղտ տանում էին նրա ծանրոցները, իսկ երկու հարյուր կառքերի մեջ տեղավորվում էին նրա հարճերը: Գիշերները նա մեծ գինարբուքների մեջ էր, որոնց մասնակցում էին հարճերը, պարուհիները և այլն [Կրասսոս, 32]: Հույն պատմագիրը գովում է մանավանդ Սուրենի գեղեցիկ հասակը [Կրասսոս, 24]: Հարեմների ընդարձակությունը, այնտեղ փակված կանանց և հարճերի բազմությունը համարվում էին տիրողի հարստության, երջանկության և կարողության գլխավոր նշաններ: Այն մշտապես հսկողության և պահպանության տակ էր: Այդ պաշտոնը կատարում էին բազմաթիվ ներքինիներ: XIX դարում եվրոպական պատմագիտության մեջ սխալ հակում կար Մերձավոր Արևելքի անտիկ արքունիքները նմանեցնել սուլթանների պալատների հետ, նաև բազմաքանակ հարեմներ տեսնել այստեղ, որը հիմա հերքվում է:

Հին աշխարհի, հատկապես Արևելքին բնորոշ սովորույթներից էին նաև մերձավորների ամուսնությունները: Բավական վկայություններ կան հայ պարթևական, հայ-մարական խնամիական կապերի վերաբերյալ:

Պլուտարքոսը ակնարկ ունի Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված, իրեն դավաճանած ենթակա երկրներից մեկի՝ գորդիենների (Կորդվաց երկրի – Ռ. Ն.) թագավոր Զարբիենոսի և նրա

---

[153] Բարձր, հաղթանդամ և գեղեցիկ մարդուն կոչում են «պարթև»: Տե՛ս **Ս. Մալխասյան,** Հայերեն բացատրական բառարան, հ. IV, (Չ-Ֆ), ԵՊՀ հրատ., 2010, էջ 83:

կնոջ ու որդիների պատվին Լուկուլլոսի կազմակերպած թաղման շքեղ ծեսի վերաբերյալ. «Նա [Լուկուլլոսը] Զարբիենոսի թաղման շքեղ ծեսեր կազմակերպեց, խարույկը զարդարեց զգեստներով, թագավորական ոսկիներով և Տիգրանից վերցրած թանկարժեք ավարով, իր ձեռքով վառեց խարույկը և հանգուցյալի ընկերների ու մերձավորների հետ զոհ մատուցեց, նրա պատվին կանգնեցվեց նաև թանկարժեք հուշարձան» [Լուկուլլոս, 30]:

Պատմագիրը գրում է նաև ժողովրդական բժշկության, թմրանյութեր պատրաստելու մասին: Պլուտարքոսը հակիրճ անդրադարձ ունի «ջրգողություն» հիվանդության [водянка] և թունավոր «ընձախոտ» բույսի մասին, որից պատրաստում էին և՛ թույն, և՛ դեղամիջոց [Կրասսոս, 33]:

§ 1.5.6. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՕՐՈՔ՝ ԸՍՏ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ

Պլուտարքոսը վկայություններ է թողել Տիգրանակերտի՝ ոչ միայն միջազգային առևտրի, արհեստների ու արդյունագործության, այլև հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության կենտրոն լինելու մասին: Այսպես, հույն նշանավոր հռետոր, Աթենքից աքսորված Ամփիկրատես Աթենացին, որը ապաստան էր գտել Տիգրանակերտում, զբաղվում էր գրական գործունեությամբ, գրել է «Տիգրանի վարքը»[154] երկը, որը մեզ չի հասել: Տիգրանի արքունիքում էլ նա գտել է իր վախճանը [Լուկուլլոս, 22]: «Պատմում են, թե նա իբր աքսորական ժամանեց Տիգրիսի վրա գտնվող Սելևկիա [այն ժամանակ պարթև Արշակունիների նստավայրն էր], և երբ նրան խնդրեցին այնտեղ պերճախոսության դասեր տալ, գոռոզաբար ու արհամարհանքով պատասխանեց. «Դելփինը տաշտում չի տեղավորվի»: «Այնուհետև,– շարունակում է պատմագիրը,– նա գնաց Տիգրանի կնոջ մոտ՝ Միհրդատի դստեր՝ Կլեոպատրայի արքունիքը …: Նրան նույնպես պատիվներով հուղարկավորեց Կլեոպատրան, նրա գերեզմանը գտնվում է Սափիի մոտ, այդպես է կոչվում այդ երկրում

[154] Տե՛ս **К. В. Тревер,** Очерки по истории культуры Древней Армении, М.-Л., 1953, с. 12:

գտնվող ինչ-որ բնակավայր» [նույն տեղում]:

Տիգրան Մեծի պալատական պատմագիրն է եղել Մետրոդորոս Սկեպսիացին, որը գրել է «Տիգրանի պատմությունը»[155] վերնագրով մի երկասիրություն, որը դարձյալ չի հասել մեզ: Նա հռետոր, քաղաքական գործիչ, պատմաբան, փիլիսոփա էր և երկար տարիներ ծառայել է Միհրդատ Եվպատորին՝ վարելով Պոնտոսի գերագույն դատավորի պաշտոնը, այնուհետև ապաստան է գտել Տիգրան Մեծի արքունիքում: Պլուտարքոսի հավաստմամբ՝ Մետրոդորոս Սկեպսիացին մեծ իմացությամբ և պերճախոսությամբ հայտնի «բազմագիտուն այր» էր, որին անվանում էին «թագավորի հայր»: Պատմագիրը գրում է, թե երբ Միհրդատը սրան ուղարկել էր Տիգրանի մոտ՝ հռոմեացիների դեմ օգնություն խնդրելու, Տիգրանը նրան հարցրել էր. «Իսկ դու, ո՛վ Մետրոդորոս, այս դեպքում ինչպիսի՞ խորհուրդ կտաս»: Իսկ նա, զուցե Տիգրանին բարիք ցանկանալով, զուցեև Միհրդատին՝ չարիք, պատասխանել է. «Իբրև դեսպան խորհուրդ եմ տալիս օգնել, իսկ իբրև խորհրդատու՝ մերժել» [Լուկուլլոս, 22]:

Պլուտարքոսը հիշատակում է նաև, որ հայոց մայրաքաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը հրավիրել էր իր կառուցած մայրաքաղաքի թատրոնի հանդիսավոր բացմանը: Նա գրում է. «Տեղեկանալով, որ քաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը ամեն կողմից հրավիրել էր իր կառուցած թատրոնի հանդիսավոր բացմանը, Լուկուլլոսը օգտագործեց նրանց՝ ի պատիվ իր հաղթանակի կազմակերպված խաղերում ու հանդիսություններում» [Լուկուլլոս, 29]:

Թե ինչպիսի խոր արմատներ էր ունեցել հելլենական կրթությունը հայկական արքունիքում, երևում է նրանից, որ Տիգրան Մեծին հաջորդած նրա որդի Արտավազդ II-ը գրում էր հունարեն ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր, որոնցից մի քանիսը հայտնի են եղել իրենից երկու հարյուրամյակ ավելի ուշ ապրած Պլուտարքոսին [Կրասսոս, գլ. 33, 1]: Տիգրան Մեծը, ինչպես և Միհրդատ Եվպատորը, անտարակույս հելլենիստական տիպի միապետներ էին, որոնք բուռն թափով առաջ էին տանում Ալեքսանդր Մակեդոնացու ու նրա հաջորդների քաղաքակրթական մեծ գործը:

---

[155] Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը, ՊԲՀ, 1969, № 1, էջ 107-126:

Ըստ Հ. Մանանդյանի բնութագրման՝ այդ ավերիչ արշավանքները ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ Առաջավոր Ասիայում հանգեցրին հելլենիստական քաղաքակրթության թուլացմանը և մշակութային հետադիմության: Հատկապես Հայաստանում և նրա հարևան Պարթևական թագավորության երկրներում, հելլենիզմը և հելլենական քաղաքային մշակույթը հետզհետե զիջեցին իրենց տեղը իրանական հին կենցաղին ու ավանդույթներին, որոնք խոր արմատներ ունեին այս երկրներում[156]:

§ 1.5.7. ԾԵՍԵՐՆ ՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ՝ ԸՍՏ ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ

Հույն պատմիչը ակնարկներ ունի նաև Տիգրան Մեծի արքունիքում որոշ ծեսերի և պալատական վարվելակարգի մասին: Այսպես, նա գրում է, թե «նրա (Տիգրանի) մոտ շատ թագավորներ կային սպասավորի դրությամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապես պահում էր իր մոտ՝ որպես ուղեկից կամ թիկնապահ, երբ նա գնում էր ձիով, նրանք, կարճ խիտոններ [անթև վերնազգեստ] հագած, վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը՝ ձեռքները կրծքներին: Համարվում էր, որ այդ դիրքը լավագույնս էր արտահայտում իրենց ստրկական կախվածության լիակատար ընդունումը: Այն ընդունողը կարծես թե իր մարմնի հետ տիրոջ տրամադրությանն էր հանձնում նաև իր ազատությունը և պատրաստակամություն հայտնում ամեն ինչ տանել, հանդուրժել առանց առարկության» (Լուկուլլոս, 21): Այս չորս թագավորները, ուսումնասիրողների կարծիքով, հենց այն չորս բդեշխներն էին, Հայաստանի չորս կողմերը պահպանողները[157]:

Տիգրան Մեծը ճանաչված էր «արքայից-արքա», ուստի, Պլուտարքոսի հավաստմամբ, նրան զայրացրել էր այն հանգամանքը, որ Լուկուլլոսը «իր գրության մեջ իրեն անվանել էր «արքա» և ոչ թե «Արքայից-արքա», որի պատճառով Տիգրանը ևս իր պատասխանի

---

[156] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 241:

[157] Տե՛ս **Յ. Մարկվարտ,** Հայ բդեշխք, թարգմ.՝ Հ. Թ. Կետիկյանի, Վիեննա, 1903, էջ 24:

մեջ Պոնտոսի արքա Միհրդատ VI-ին չհանձնելու վերաբերյալ գրավոր պատասխանում Լուկուլլոսին չէր անվանել իմպերատոր» [Լուկուլլոս, 21]: Այս ժամանակ իմպերատորը պաշտոն էր, որ սենատը շնորհում էր կարճ ժամանակով: «Իմպերատոր տերմինը գործածվում էր նաև որպես պատվո տիտղոս: Բայց և օգտագործվել է առավել լայն առումով և տրվել ռազմական ու դատական լիիրավ իշխանությամբ օժտված զորահրամանատարին, կոնկրետ դեպքում նման տիտղոսով դիմում էին Լուկուլլոսին: Պլուտարքոսի գրքի նույն հատվածում հանդիպում ենք Հին աշխարհի ևս մի սովորույթի, ըստ որի՝ նշանավոր արքաները, զորեղ, բայց և թշնամի տերության արքայի դեսպանին պատշաճ դիմավորելուց բացի, ճանապարհում են թանկարժեք նվերներով: Պլուտարքոսը գրում է. [Տիգրան Մեծը] «Ապպիոսին [Լուկուլլոսի դեսպանին – Ռ. Ն.] շքեղ նվերներ ուղարկեց, իսկ երբ վերջինս մերժեց ընդունել, դրանց ավելացրեց նոր նվերներ ևս: Ապպիոսը, որպեսզի չկարծեն, թե նվերները մերժում է ընդունել Տիգրանի հանդեպ թշնամության պատճառով, վերցրեց միայն մեկ [ոսկե] գավաթ…» [Լուկուլլոս, 21]:

Հայոց Տիգրան Մեծ թագավորը մի ամբողջ պաշտամունք էր իր ժողովրդի համար՝ որպես «Աստված»: Թագավորի նախնիների և ապա հենց իր՝ իշխող թագավորի պաշտամունքը պետական պաշտոնական ծավալով, ընդհանուր երևույթ էր հելլենիստական երկրներում: Կենդանի թագավորի պաշտամունքի սկիզբը կապվում է Տիգրան II-ի անձի հետ: Առաջին դրսևորումը Տիգրանի «Աստված» պատվանունն էր, որ վկայակոչված է անտիկ պատմագիրների մոտ, մյուսը՝ Տիգրանի պատկերով դրամները, որոնց վրա դրոշմված է նույն պատվանունը: Նույնպիսի եզրակացությունների տեղիք է տալիս դրամների վրա պատկերված արքայի դիմանկարը, որը ներկայացված է իդեալականացված դիմագծերով, ինչպիսիք հատուկ են աստվածացված անձնավորություններին: Եվ դա հասկանալի է, երբ նկատի ենք առնում Տիգրան Մեծի փառքն ու համբավը իր ժամանակվա աշխարհում: Հռոմեական ամենատաղանդավոր զորավարներն անգամ, անհաշտ թշնամիներ լինելով հանդերձ, ընդունում էին, որ աշխարհի ամենահզոր և մեծ թագավորներն էին Միհրդատ Պոնտացին և Տիգրան Հայը [Կրասսոս, 33.1]:

Պլուտարքոսը ուշագրավ հաղորդում ունի Անահիտ դիցուհուն

նվիրվող երինջների զոհաբերման սովորույթի մասին: Պատմիչը, մանրամասնորեն նկարագրելով հռոմեական զորավար Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքը, գրում է. «Զորքն անցկացրեց Եփրատով: Գետն անցնելիս նրան բարենպաստ նախանշան երևաց: Այս վայրերում արածում էին սրբազան երինջներ՝ նվիրված Արտեմիսին (Անահիտին), որին Եփրատի մյուս ափին բնակվող բարբարոսները (այդպես էին անվանում ոչ հույն ժողովուրդներին, այդ թվում՝ նաև հայերին) առավել են պաշտում, քան մյուս աստվածներին [Լուկուլլոս, 24, 4-8]: Նրանք այս երինջներից օգտվում էին միմիայն զոհաբերությունների համար, իսկ ընդհանրապես այդ տեղերում երինջներն ազատ շրջում էին, և ամեն մեկը կրում էր իր վրա խորանադրոշմ մի ջահ, որն աստվածուհու նշանն էր: …Երբ զորքն անցնում էր Եփրատ գետը, դրանցից մեկը բարձրացավ սրբազան մի ժայռի վրա, որը նվիրված էր դիցուհուն, կանգնեց նրա գագաթին և, խոնարհեցնելով գլուխը, ինչպես այդ անում են թոկով տարվող երինջները, տրամադրեց ինքն իրեն Լուկուլլոսին զոհաբերման համար: Բարեհաջող գետանցի համար Լուկուլլոսը զոհաբերեց նաև Եփրատին մի ցուլ» [նույն տեղում]: Արածող երինջները, պարզվում է, պատկանում էին Եփրատի արևմտյան ափին գտնվող տաճարին, որը նվիրված էր Արտեմիսին, և այս վայրը որոշակի տեղայնացվում է Անահիտ աստվածուհուն նվիրված Եկեղյաց գավառում, որի կենտրոնը Երիզա տաճարական քաղաքն էր: Անահտական պաշտամունքը տարածված էր Փոքր Ասիայում, բայց ոչ մի տեղ նա այնքան փայլ և ընդարձակ ժողովրդականություն չստացավ, ինչպես Հայաստանում: Ի դեպ հույները, ինչպես և հայերը, Արտեմիսին համարում էին ծննդաբերությունը հովանավորող աստվածուհի [Ալեքսանդր, 3]:

Պատմագիրը ակնարկներ ունի նաև հռոմեական որոշ աստվածությունների տոնակատարությունների մասին, որոնց հիշատակությունը օգտակար է ոչ միայն որպես հնագույն պաշտամունքային երևույթի, այլև հայկականի հետ զուգահեռներ անցկացնելու տեսանկյունից: Այսպես, Պլուտարքոսը Պոմպեոսին վերաբերող հատվածում (34) նշում է նաև հունական Կրոնոս աստվածությանը նվիրված տոնակատարության մասին, որ նույնական է լատինական Սատուռնին: Հռոմեացիները տոնը անվանում էին Սատուռնալիա: Դա սկզբնապես եղել է հողագործությունը հովանավորող աստվածություն: Սատուռնալիայի տոնախմբությունները Հռոմում կատարվում

էին ամեն տարի բերքահավաքից հետո՝ դեկտեմբերի 17-ին, և տևում էր յոթ օր: Հենց այդ տոնակատարության օրն էլ «աղվանները՝ չորս բյուրից ոչ պակաս թվով, հավաքվեցին անցան Կյուռնոս [Կուր-Քուռ] գետը և հարձակվեցին նրանց [Պոմպեոսի] վրա»:

Հին Հայաստանի հոգևոր մշակույթը, այսպիսով, դրսևորվում է երկու փոխադարձաբար կապված ճյուղերով՝ տեղական-ժողովրդական և հայ-հելլենիստական, որը տեղականի ու հելլենականի համատեղման արդյունք էր: Երկուսն էլ ունեցել են իրենց մեծ նվաճումները և իրենց զարգացմամբ ու ստեղծած արժեքներով նախապատրաստել հաջորդ, վաղմիջնադարյան շրջանի հայ ազգային մշակույթի աննախընթաց ծաղկումն ու բարգավաճումը:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Պլուտարքոսի վկայությունները չափազանց արժեքավոր աղբյուր են՝ հելլենիստական դարաշրջանում ինչպես մեր, այնպես էլ հարևան երկրների պատմաքաղաքական, տնտեսական և մշակութային իրավիճակը գնահատելու, իրարամերժ և հակասական փաստերն ու իրադարձությունները համադրելու, տվյալ դարաշրջանում տարածաշրջանային զարգացումներն ավելի ամբողջական պատկերացնելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՆՏԻԿ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

§ 2.1. ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հռոմեական ականավոր պատմագիր, գիտնական ու քաղաքական գործիչ Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսը (մ.թ. 23-79 թթ.) հեղինակ է մի շարք մեծածավալ գործերի, որոնցից են «Գերմանական պատերազմները»՝ 20 գրքով, «Պատմությունը»՝ 31 գրքով, «Բնական պատմությունը»՝ 37 գրքով և այլն: Սակայն դրանցից պահպանվել է միայն վերջինը՝ «Բնական պատմությունը», որը Պլինիոսը գրել է Վեսպասիանոս կայսեր որդու՝ Տիտոսի հանձնարարությամբ: Այն կարելի է բնորոշել որպես անտիկ բնագիտական մտքի հանրագիտարան, որտեղ ընդգրկված տեղեկությունները վերաբերում են տիեզերագիտությանը, երկրագործությանը, աշխարհագրությանը, բուսական ու կենդանական աշխարհներին, հանքաբանությանը, բժշկությանը, իսկ երբեմն նաև Հին աշխարհի քաղաքական, մշակութային պատմությանն ու հասարակական հարաբերություններին[158]:

Վերոնշյալից, բնականաբար, մեզ առավելապես հետաքրքրում են Հայաստանին վերաբերող տեղեկությունները, որոնք ներառում են երկրի քաղաքներն ու վարչական բաժանումները, բնակլիմայական պայմանները, բնաշխարհը, հանքային հարստությունները, ինչպես նաև մշակութային պատմությունն ու հասարակական հարաբերությունները*:

---

[158] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա: Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, հ. 1, Ե., 2007, էջ 287-292: Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան,** Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսը Հայաստանի և հայերի մասին «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Ե., 2017, էջ 349-354:

* Նյութերն ուսումնասիրելիս օգտվել ենք Ս. Մ. Կրկյաշարյանի թարգմանությունից, որը նա կատարել է «Plinit Secundi C. Naturalis historiae, vol. 1-10, Cambridge, Mass,- London, 1950-1962 /Loeb G lassical Library/» հրատարակությունից:

§ 2.1.1. ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՊԼԻՆԻՈՍԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ

Առաձնապես արժեքավոր տեղեկություններ են պարունակում «Բնական պատմության» V և VI գրքերը: Պլինիոսը VI գրքում պատկերացում է տալիս Մեծ Հայքի թագավորության տարածքի չափերի մասին: Նա հայտնում է, որ Ալֆիդիոսի կարծիքով՝ ամբողջ Հայաստանի տարածքը 5.000.000 քայլ է: Կլավդիոս կայսրը նրա երկարությունը՝ արևմուտքից դեպի արևելք՝ Դասկուսայից (Փոքր Հայք) մինչև Կասպից ծովի ափը, հաշվում է 1.300.000 քայլ, իսկ լայնությունը՝ Տիգրանակերտից մինչև Իբերիա, որի սահմանագիծը Մեծ Հայքի հետ անցնում էր Կուր գետով՝ այդ թվի կեսը: Այսինքն՝ Մեծ Հայքը արևմուտքից դեպի արևելք ձգվում է 1.300 մղոն (1.950 կմ), իսկ հարավից մինչև հյուսիս՝ 650 մղոն (975 կմ): Սակայն ուսումնասիրողները նշում են, որ այս թվերը չափազանցված են և տալիս են Մեծ Հայքի չափերի վերաբերյալ այլ տվյալներ, որոնց համաձայն՝ տարածքի երկարությունը 870 կմ էր, իսկ լայնությունը՝ 550 կմ[159]: Արևելքում Հայաստանը սահմանագծված էր Կերավնյան լեռներով[160] և Ադիաբենեով: Միջանկյալ տարածքում էր գտնվում Սոփենը (Ծոփքը), որոնցից այն կողմ մի լեռնաշղթա էր և Ադիաբենեն: Վերջինիս շրջապատում են Տիգրիսը և անմատչելի լեռներ, ձախ կողմում մեդիացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը: Այսպիսով՝ մ.թ. առաջին դարերի անտիկ խոշորագույն աշխարհագետների՝ Պլինիոս Ավագի և Պտղոմեոսի (90-168) տեղեկությունները համընկնում են «Աշխարհացոյց»-ում պահպանված տեղեկություններին՝ Հայաստանի գրաված տարածքի ու դրա սահմանների մասին: Մեծ Հայքի տարածքը նշված սահմաններով արձանագրված է Տիգրան Մեծի և հռոմեական զորավար Պոմպեոսի միջև կնքված դաշնագրով: Ըստ այդ դաշնագ-

---

[159] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 836-846, (տե՛ս էջ 836, ծան. 78):

[160] Կերավնյան լեռները (Շանթային լերինք) Կովկասյան լեռնաշղթայի այն մասն են, որը հյուսիսից եզերում է Աղվանքը: «Աշխարհացոյց»-ում այն կոչվում է «Կապ-կոհ լերինք» (տե՛ս **Ս. Երեմյան,** Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 838, ծան. 78:)

րի՝ Մեծ Հայք պետությունը ընդգրկում էր 312.795 կմ² տարածք: Հետագայում Մեծ Հայքի տարածքը մասնակիորեն փոփոխվեց: Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև մ.թ. 37 թ. կնքված համաձայնագրով Մեծ Հայքից անջատվեց և Պարթևների պետությանը կցվեց «Միջագետք Հայոց» տարածաշրջանը (ներառյալ Տուր-Աբդին (Ծավդեք) և Արուաստան գավառները)՝ 27.600կմ² տարածքով, Մծբին քաղաքով: Այնուհետև Մեծ Հայք պետությունը ընդգրկում էր 285.195կմ² տարածք: Հետագայում ամեն անգամ, երբ հարց էր ծագում Մեծ Հայքի թագավորության տարածքի մասին, պաշտոնական հիմք էր ընդունվում 37 թ. համաձայնագիրը: Վերջին անգամ այն պաշտոնապես ընդունվեց 298 թ. Մծբինի 40-ամյա դաշնագիրը կնքելու ժամանակ[161]:

Պլինիոս Ավագի հաղորդած տեղեկություններից երևում է, որ Կլավդիոս կայսեր (41-54) կարգադրությամբ մանրամասն ուսումնասիրվել է Մեծ Հայքի թագավորության տարածքը և կազմվել է քարտեզ, որը հետագայում օգտագործել է Պտղոմեոսը: Կլավդիոս կայսեր ժամանակաշրջանի Հայաստանին վերաբերող նյութերը լայնորեն օգտագործել է նաև Գայոս Պլինիոս Սեկունդոսն[162] իր «Բնական պատմության» մեջ:

Աշխատության VI գրքում Պլինիոսը նշում է, որ Մեծ Հայքը բաժանված էր 120 ստրատեգիաների՝ վարչատարածքային միավորների, որ կոչվում էին պրեֆեկտուրաներ (բառացի «զորավարություններ»), որոնցից մի քանիսը հնում թագավորություններ էին և հայտնի էին բարբարոսական (այսինքն՝ ոչ հունական և հռոմեական) անուններով: Ուսումնասիրողների կարծիքով՝ Պլինիոսը, խոսելով Հայաստանի 120 ստրատեգիաների կամ պրեֆեկտուրաների մասին, նկատի է ունեցել Մեծ Հայքի գավառները, որոնց թիվը այն ժամանակ մոտավորապես այդքան պիտի լիներ[163]:

Պատմագիրն առանձին-առանձին անդրադառնում է Մեծ և

---

[161] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Ե., 1963, էջ 69:

[162] Տե՛ս **Ս.Տ. Երեմյան,** Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 836:

[163] Տե՛ս նույն տեղում, էջ 840:

Փոքր Հայքերին: Եվ կրկին որպես ուղեցույցներ օգտագործվում են Հայաստանով հոսող գետերը: Այսպես, Մեծ Հայքը, ըստ նրա, սկսվում է Պարիադրեսի լեռներից [խոսքը պոնտական Պարխարյան (Խաղտյաց) լեռների մասին է – Ռ. Ն.]: Հարևան Կապադովկիայից այն բաժանված էր Եփրատ, իսկ Միջագետքից՝ Տիգրիս գետերով, Ադիաբենեից «լայնակի մի լեռնաշղթայով» [նկատի է ունեցել Նիփատես (Նպատ) լեռաշղթան]: Լայնությամբ այն տարածվում է մինչև Կյուրոս գետը [Կուր]՝ անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ երկարությամբ՝ մինչև Փոքր Հայք, որից բաժանված է Եվքսինյան Պոնտոսի [Սև ծովի] մեջ թափվող Ապսարոս գետով [Ճորոխ] և Ապսարոսին ծնունդ տվող Պարիադրես լեռներով:

Այնուհետև նա թվարկում է Մեծ Հայքի քաղաքների անունները: Մեծ Հայքում հայտնի քաղաքներ էին Ար(սա)մոսատը (Արշամաշատ), Եփրատին մոտ՝ Կարկաթիոկերտը [Ծոփքի մայրաքաղաք Արկաթիոկերտը], Տիգրիսի մոտ՝ Տիգրանակերտը մի բլրի վրա, Արտաշատը [Արարատյան] դաշտավայրում՝ Արաքս [գետի] մոտ: Ի դեպ, Տիգրանակերտի գտնվելու տեղի մասին հին պատմիչների հաղորդած տվյալները մտորումների տեղիք են տվել: Նշենք, որ այն որոշելու համար ուսումնասիրված վկայությունների շարքում ուրույն տեղ են գրավում նաև Պլինիոսի ցուցումները: Վերջիններիս մեջ ուշադրության արժանի է Տիգրանակերտի մոտ գտնված Պարթենիոս գետը՝ Տակիտոսի[164] հիշատակած Նիկեփորիուն գետի հետ միասին՝ իբրև Տիգրիս գետի ձախակողմյան վտակ:

Փոքր Հայքի հայտնի քաղաքների մասին ևս պատմագիրը տեղեկություններ է հաղորդում: Դրանք են՝ Կեսարիան, Ազան, Նիկոպոլիսը: Այս երեք քաղաքներն էլ գտնվել են Գայլ գետի հովտում: Ս. Երեմյանի կարծիքով՝ Կեսարիան հիմա պիտի լինի Սատաղը, Ազան՝ այժմյան Ազիզ գյուղը, իսկ Նիկոպոլիսը՝ այժմյան Բյուրգ կամ Պյուրկ գյուղի մոտ[165]:

Այս պատմիչի գրքում շատ տվյալներ կան Հայաստանի գետերի մասին: Նախ խոսվում է Եփրատի մասին և ասվում, որ գետը բխում է Մեծ Հայքի Կարենիտյան պրեֆեկտուրայից: Սա Կարնո գավառն

---

[164] Տե՛ս **Տակիտոս,** Տարեգրություններ, քաղեց և լատիներենից թարգմանեց պրոֆ. Պ. Սոտնիկյան, գիրք XV, գլ. 4, Ե., 1941, էջ 97:

[165] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 838:

է՝ Բարձր Հայքի 9-րդ գավառը, այժմյան Էրզրումի սանջակը: Այս գավառում էին գտնվում Եփրատ գետի ակունքները: Պլինիոսի վկայմամբ՝ «Եփրատ գետը ամենամոտից տեսնողներից Դոմիտիոս Կորբուլոնը [խոսքը հռոմեական նշանավոր զորավար, Կապադովկիայի կուսակալ, լեգատ և Արևելքում հռոմեական բանակների գլխավոր հրամանատար Դոմիտիոս Կորբուլոնի մասին է] նրա ակունքը տեղադրում է Աբա լեռան վրա, իսկ Լիկինիոս Մուկիանոսը՝ Կապոտեն լեռան[166] ստորոտին, Զիմարայից [քաղաք Փոքր Հայքում] 12.000 քայլ վերև: Այս գետը նախ կոչվում է Պյուքսիրատ(ես): Այն հոսում է Կապադովկիայից՝ բաժանելով նախ Դերքսենեն [Դերջանը՝ Բարձր Հայքի 6-րդ գավառը], ապա Անահիտիսը[167], որոնք Հայաստանի շրջաններն են, Դասկուսան[168] Զիմարայից (Մելիտինեի ճանապարհի վրա է գտնվել)[169] 75.000 քայլ հեռավորություն ունի»: Անահիտիս անվանումը կապված է Երիզա ավանում գտնվող Անահիտի հռչակավոր տաճարի անվան հետ: Այնտեղից մինչև Պաստոնա Եփրատը նավարկելի է 50.000 քայլ տարածության վրա, մինչև Կապադովկիայի Մելիտենե քաղաքը (գետի երկարությունն է) 24.000 քայլ, մինչև Հայաստանի Ելեգեա[170] քաղաքը՝ 10.000 քայլ, այս տարածության վրա են ընդունում Լյուկոս[171], Արսանիաս[172] և Արսանոս գետերը: Ելեգեայում գետն իր ճանապարհի վրա հանդիպում է Տավրոս լեռանը, որը նրան չի

---

[166] Կապոտեն – Կապույտ (Ծաղկավետ) լեռնաշղթան է, որի հարավային լեռնաբազուկներում են գտնվում բուն Եփրատի (կամ Արևելյան Եփրատ, այժմ Կարա-սու) ակունքները (տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 56):

[167] Անահիտիս – Անահտական գավառն է (կամ Եկեղյաց), Բարձր Հայքի 4-րդ գավառը, անտիկ հեղինակների Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը:

[168] Դասկուսա – բնակավայրը գտնվել է Փոքր Հայքում՝ այժմյան Արաբկիր-չայի գետաբերանից արևմուտք՝ Կողբենիք գյուղից հյուսիս:

[169] Տե՛ս **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 80:

[170] Հայաստանի Ելեգեա – Եղեգիսի ջերմուկներն են, այժմ՝ Իլիջա, Կարինից արևմուտք:

[171] Լյուկոս – չպետք է շփոթել Իրիս գետի (այժմ Եշիլ-Ըրմակ) Լյուկոս վտակի (Գայլ գետ, Թերմոդոն) հետ: Այստեղ խոսքը այն Գայլ գետի մասին է, որը սկիզբ է առնում Եղի-Դերելար լեռնանցքից և Երզնկայի մոտ թափվում է Եփրատ (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 290, ծանոթ. 9):

[172] Արսանիաս-հայկական սկզբնաղբյուրների Արածանի գետն է (Արևելյան Եփրատ), այժմ՝ Մուրադ-չայ (նույն տեղում, ծանոթ. 10):

դիմադրում՝ չնայած 12.000 քայլ հաստություն ունեցող իր զանգվածին: Գետը Օմիրաս է կոչվում, երբ լեռն է ներխուժում, այն հաղթահարելուց հետո արդեն կոչվում է Եփրատ, նրա հունը ժայռոտ է և հոսանքը սրընթաց, նույնիսկ այդ լեռն անցնելուց հետո[173]:

Պատմագրի խոսքերով՝ նվազ հայտնի չէ նաև Տիգրիս գետը, որը նույնպես սկիզբ է առնում Մեծ Հայքից: Կյուրոս գետի վերաբերյալ Պլինիոսը հայտնում է, որ այն սկսվում է Հենիոքիական լեռներում, որոնք ուրիշների կողմից կոչվել են Կորաքսյան[174]: Արաքսը նույնպես սկսվում է նշված լեռներից, ինչպես նաև Եփրատը՝ 6.000 քայլ միջանկյալ հեռավորությամբ, սնվում Մուրսիս (հայկական Մուրց գետն է, այժմ՝ Հասան Ղալա-սու) գետակով, ապա թափվում Կյուրոսի մեջ, որը նրան տանում է Կասպից ծով:

§ 2.1.2. ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պլինիոսը թվարկում է Հայաստանի սահմանամերձ շրջաններում ապրող ժողովուրդներին: Ամբողջ դաշտավայրը, Կյուրոսից սկսած, զբաղեցնում են ալբանները, հետո՝ իբերները, որոնք նրանցից բաժանված են Ալազան գետով (որն իջնում է Կովկասից և գնում է թափվելու Կյուրոսի մեջ):

Ամենակարևոր քաղաքներն են՝ Ալբանիայում՝ Կաբալական[175], Իբերիայում՝ Հարմաստիսը (գետի մոտ), [Արմազի-Մցխեթա], Նեորիսը: Այստեղ են Թասիայի և Թրիարեյի շրջանները [Թռեղք-Թրիալեթի] մինչև Պարիադրես լեռները: Նրանցից այն կողմ ընկած են Կողքիսի ամայի տարածքները: Այդ տարածքների այն մասում, որ

---

[173] Իր ակունքներից մինչև Տավրոսյան լեռները, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, Եփրատի երկարությունը կազմում է ավելի քան 600 կիլոմետր (նույն տեղում):

[174] Կորաքսյան-Պլինիոսը նկատի ունի Կարմիր Փորակ (այժմ՝ Ալահյուակբար) ջրբաժան լեռնաշղթան Կարսի և Արտահանի միջև (նույն տեղում):

[175] Կաբալակա-հայկական աղբյուրների Կապաղակ քաղաքն է, այժմ՝ Կաբալա գյուղը Նիժ գյուղի մոտ:

նայում է Կերավնյան լեռներին, բնակվում են արմենոխալիբները[176], ապա հաջորդում է մոսխերի երկիրը[177] մինչև Իբերոս գետը, որը թափվում է Կյուրոսի մեջ, նրանցից ներքև գտնվում են սակասենները[178], այնուհետև՝ մակրոնները[179] մինչև Ապսարոս գետը, սրանք են դաշտավայրերի և զառիվայրերի բնակիչները: Հակառակ կողմից, Ալբանիայի սահմաններից սկսած, լեռների ամբողջ շարքի դիմաց գտնվում են սիլվերի վայրի ժողովուրդները, նրանցից ներքև՝ կովկասյան ցեղերը՝ լուբիենների ժողովուրդը, այնուհետև՝ դիդուրները և սոդիացիները:

Ըստ Պլինիոսի՝ Հայաստանի հարևաններից էին մենոբարդցիները, մոկսիաները, որոնք բնակություն էին հաստատել Հայաստանին ամենամոտ բարձունքներում: Ս. Երեմյանի հավաստմամբ՝ այս ցեղերը ապրում էին Արևելյան Տիգրիսի հովտում և սրան հարող լեռներում: Մոկսիաների ցեղն ազգակից էր հայերին, նրանց անունից է ծագել Մեծ Հայքի Մոկք (Մոկս) նահանգի անունը[180]: Ադիաբենեի ձախ կողմում մեդիացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը:

§ 2.1.3. ԱՆԱՀԻՏ ԴԻՑՈՒՀՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՊԼԻՆԻՈՍԻ

Ինչպես Ստրաբոնը, այս պատմագիրը ևս մանրամասնորեն անդրադառնում է հայերի շրջանում Անահիտի պաշտամունքին՝ պատմելով հետևյալը. «Ասում եմ, որ ոսկեձույլ առաջին արձանը, որ

---

[176] Արմենոխալիբներ – բառացիորեն՝ հայախալիբներ, Հայաստանում բնակվող խալիբներ՝ ցեղեր, որոնք գտնվում էին մերձսևծովյան հարավարևելյան շրջանում. խալիբների այն մասը, որը ժամանակի ընթացքում ձուլվեց հայերի հետ (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա, հ. 1, էջ 291):

[177] Մոսխերի երկիրը համապատասխանում է հայոց Գողերձական կուսակալությանը, որտեղ բնակվում էին մեսխ կամ մոսխ հնդեվրոպական ցեղերը:

[178] Սակասենե-հայկական Շակաշենն է, Ուտիքի 7-րդ գավառը՝ Կուր գետի հովտի աջակողմյան մասում:

[179] Մակրոնները այն ցեղերն են, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Ճորոխի ավազանում:

[180] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 423-443:

նախորդել է նույնիսկ հոլոսփյուրատոն (մուրճով կոփված) բրոնզաձույլ արձաններին, կանգնեցվել է Անահիտիս աստվածուհու տաճարում»: Մենք ցույց ենք տվել, թե որ երկրին է պատկանում այդ անունը (Պլինիոսը մատնացույց է անում «Բնական պատմության» 5-րդ գրքի 20-րդ գլուխը, որտեղ խոսում է Անահիտիս գավառի մասին. դա Անահտական կամ Եկեղյաց գավառն է՝ Բարձր Հայքի 4-րդ գավառը, ըստ անտիկ հեղինակների՝ Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը): Անդրադառնանք արձանին, որը մեծապես պաշտվել է հայ ժողովրդի կողմից: Ապա, ըստ պատմիչի, այն տարվել է որպես ավար պարթևների դեմ Մարկոս Անտոնիոսի մղած պատերազմի ժամանակ: Իհարկե, հեղինակը շփոթում է, քանզի Անտոնիոսը այս ոսկեձույլ արձանը Եկեղյաց գավառի Անահիտի տաճարից տարել է ոչ թե պարթևական, այլ հայկական արշավանքի ժամանակ, այսինքն՝ Ք.ա. 35 թ.: Այնուհետև պատմիչը ներկայացրել է բոնոնիացի մի վետերանի հայտնի սրախոսությունը. ըստ որի՝ վերջինիս հյուր եկած Ավգուստոսը (խոսքը Հռոմի կայսր Գայոս Օկտավիանոս Օգոստոսի մասին է) ճաշի ժամանակ հարցնում է նրան, թե ճիշտ է արդյոք, որ այդ արձանը սրբապղծող առաջին մարդը մահացել է կուրանալուց և անդամալույծ դառնալուց հետո: Վետերանը պատասխանում է, որ Ավգուստոսի պատվին տրված ճաշը հենց աստվածուհու արձանի մեկ ազդրից էր, որ հենց ինքն է այդ արձանի առաջին հափշտակողը, և իր ամբողջ հարստությունն այդ ավարի շնորհիվ է գոյացել[181]:

Այսպիսով՝ Պլինիոսի գրքից տեղեկանում ենք, որ Անահիտի ոսկյա արձանը Եկեղյաց գավառի Երիզա ավանում ջարդուփշուր են արել, և ոսկին բաժան-բաժան է արվել Անտոնիոսի ու իր զորքերի միջև: Դրանից հետո, սակայն, նույն տեղում նորից ոսկյա արձան է դրվել, քանզի հայոց բոլոր աստվածներն ունեին իրենց մեհյանները և արձանները:

[181] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, էջ 499:

§ 2.1.4. ԱԿՆԱՐԿ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԿԱՏԱՐԱԾ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պլինիոս Ավագը վկայություններ ունի հին Հայաստանի ժողովրդագրական հարցերի, մասնավորապես վերաբնակեցումների մասին:

Պատմիչը ներկայացնում է Տիգրան Բ-ի կողմից Հայաստանում այլ ազգերի ներկայացուցիչներին վերաբնակեցնելու փաստը՝ խոսելով Ք.ա. 93 և 91 թվականների մասին, երբ հայոց թագավորը պատերազմ սկսեց Պարթևական թագավորության դեմ և տեր դարձավ Հայաստանի հարավային սահմանների մոտ գտնվող Միջագետքին: Պատմագրի վկայության համաձայն՝ Տիգրանը փոխադրեց Հարավային Միջագետքից և բնակեցրեց Օսրոյեն-Եդեսիայի շրջաններում արաբական թափառական ցեղեր, որոնց հանձնարարեց տարանցիկ առևտրային ճանապարհների վերահսկողությունը: Տիգրանի համար նրանք մաքս էին գանձելու, գլխավորապես Եփրատ գետի անցքի մոտ, որը գտնվում էր Զևգմայի արևմտակողմում[182]:

§ 2.1.5. ԱԿՆԱՐԿՆԵՐ ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես նշվեց, Պլինիոսը անդրադարձել է նաև հայկական բնաշխարհին, որի բաղկացուցիչ մասն են կազմում դեղաբույսերը: Նա գովաբանել է դրանց բուսական զորությունը՝ նշելով, որ պոնտական թագավոր Միհրդատը՝ Տիգրան Մեծի մերձավորն ու բարեկամը, Ք.ա. I դարում Հայաստանում աճող բույսերից պատրաստել է դեղ[183]: Պատմիչը վկայում է, որ Հայաստանը, ինչպես և Մարաստանը հնում հայրենիքն էին մի շարք արժեքավոր խեժաբեր բույսերի, այդ թվում՝ հռչակավոր **ուպանի**: Վերջինիս բուժիչ, եռանդը բարձրացնող հատկությունները խիստ հարգի էին Հռոմում: Ցոփ, շվայտ կյանքից, սեռական սանձարձակությունից վաղաժամ ծերացած Հռոմի պատրիկները փորձում էին դրա օգնությամբ վերադարձնել կորցրած առողջությունը և երիտասարդությունը: Ուպանը, ինչպես նաև մի

---

[182] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 152-155:

[183] Տե՛ս **Ա. Ա. Թորոսյան,** Հայաստանի դեղաբույսերը, Ե., 1983, էջ 4:

շարք արժեքավոր դեղաբույսեր, որոնք դարեր շարունակ անխղճորեն արտահանել են Հայաստանից, հետագայում հայկական բուսաշխարհից իսպառ վերացան: Ըստ նույն պատմիչի՝ Հայաստանում և Կապադովկիայում աճում էր թմրեցնող հատկություններ ունեցող մի բույս, որը մեղմացնում էր վայրի գազանների զայրույթը[184]: Պլինիոսը հիշատակում է նաև adamantis բույսը, որին առյուծը մոտենալով ուժասպառ ընկում է, բժշկագիտական բույս laser-ը, կամ orobitis ներկը, որը օգտագործում են նկարիչները: Ապա հիշատակում է Հայաստանից արտահանվող armenium քարը, որը ներկում էր chrysocoila-ի պես պաղլեղը (alumen) և որոշ այլ քարեր[185]:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, թեև Պլինիոս Ավագի թողած տեղեկությունները բազմաբովանդակ ու նորահայտ չեն, այդուհանդերձ, դրանք այլ պատմիչների վկայությունների հետ համադրելով՝ կարելի է ունենալ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի պատմաքաղաքական, վարչատնտեսական, սոցիոմշակութային պատկերը: Դրանցում հաղորդվում են տեղեկություններ Հայաստանի տարածքի, նրա ընդգրկած սահմանների, հարևանությամբ գտնվող երկրների ու ժողովուրդների, քաղաքների, վարչական բաժանումների, Հայաստանում այլ ժողովուրդների վերաբնակեցնելու, Անահիտ դիցուհու պաշտամունքի, նրա ոսկեձույլ արձանի ճակատագրի, ժողովրդական բժշկության և դրանում տարբեր բուսական ու հանքային նյութերի կիրառման մասին:

§ 2.2. ԱՊՊԻԱՆՈՍԻ «ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԸ՝ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՐԵՎՈՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Հելլենիստական դարաշրջանից պահպանված ու մեզ հասած բազմաթիվ աղբյուրներից, որոնք արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հայոց պատմության վերաբերյալ, կարելի է առանձնացնել Ապպիանոս Ալեքսանդրացու (Ք.հ. II դարի սկիզբ – II դարի 70-ական թթ.) աշխատությունները:

---

[184] Տե՛ս **Ս. Վարդանյան,** Հայաստանի բժշկության պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 2000, էջ 31:

[185] Տե՛ս **Հ. Տ. Երեմյան,** Развитие городов и городской жизни в древней Армении. «Вестник древней истории», 1953, № 3:

Հռոմեացի պատմիչ Ապպիանոս Ալեքսանդրացու «Հռոմեական պատմություն» 24 գրքից բաղկացած աշխատության մի շարք գրքերում կարևոր տեղեկություններ են հաղորդվում հելլենիստական դարաշրջանի Հայաստանում գոյություն ունեցող պատմաքաղաքական, տնտեսական, կենցաղային հարաբերությունների, սովորությունների վերաբերյալ[186]: Այն ժամանակագրորեն համընկնում է հիմնականում հայոց արքա Տիգրան Մեծի տիրապետության շրջանին: Պատմիչի վկայությունները արժեքավոր սկզբնաղբյուր են տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմության ուսումնասիրման և այլ աղբյուրների հետ համադրման տեսանկյունից:

Ապպիանոսի այս երկասիրությունը մեզ է հասել ոչ ամբողջությամբ: Պատմագիրը շարադրել է Հռոմի պատմությունը՝ քաղաքի հիմնադրումից մինչև Տրայանոս կայսեր իշխանության տարիները (98-117): Գրքի տարբեր հատվածներում նա հաղորդումներ ունի նաև Հայաստանի և հայերի վերաբերյալ:

§ 2.2.1. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ, ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊՊԻԱՆՈՍԻ

Տիգրան Մեծ արքայի տիրակալության շրջանում, ըստ նրա, Հայաստանի սահմանները շատ էին ընդարձակվել: Հայագիտության

---

[186] Ապպիանոս Ալեքսանդրացին ծնվել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, հույն տոհմիկի ընտանիքում: Նրա 24 գրքից բաղկացած «Հռոմեական պատմություն» երկասիրությունից մեզ են հասել 6-8-րդ և 11-17-րդ գրքերը, 18-24-րդ գրքերը կորել են, մնացածներից պահպանվել են առանձին պատառիկներ: Հելլենիստական Հայաստանի II-I դդ. պատմության և մշակույթի ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում աշխատության 11-րդ («Սիրիական») և 12-րդ («Միհրդատական») գրքերը: Հոդվածում Ապպիանոսից մեջբերված հատվածների թարգմանությունը կատարել է Ս. Մ. Կրկյաշարյանը (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, կազմողներ՝ **Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան,** ԵՊՀ հրատ., Ե., 2007) [այսուհետև այս գրքից մեջբերումների հղումներում կնշվեն գիրքը, գլուխը և էջը]: Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան,** Ապպիանոսի «Հռոմեական պատմություն» երկը՝ հայոց պատմության և մշակույթի կարևոր սկզբնաղբյուր: ՀՀ ԳԱԱ, «Լրաբեր հաս. գիտ.», Ե., 2017, № 3, էջ 70-80:

մեջ Արտաշես Ա-ի հաջորդների և Արտավազդի ու Տիգրան Բ-ի ազգակցության մասին հայտնվել են հակասական կարծիքներ: Դրանց մեջ ամենահավանականը Ապպիանոսի և Խորենացու տեղեկություններն են: Ըստ Ապպիանոսի՝ Տիգրան Մեծը Տիգրան Ա-ի որդին է, իսկ Արտավազդը՝ վերջինիս եղբայրը: Խորենացին այլ մանրամասներ է ներկայացնում, որոնց համաձայն՝ Արտաշեսի որդին ու հաջորդը՝ Արտավազդը, զավակ չի ունեցել և իրենից հետո Հայաստանում թագավորել է եղբայրը՝ Տիրանը (Տիգրան Ա)[187]: Պատմահոր հաղորդած կարևոր այս տեղեկությունները համապատասխանում են Ապպիանոսի վերոհիշյալ վկայությանը:

Ք.ա. 83 թ. Տիգրան II-ը, նվաճելով Սելևկյան Ասորիքը, Անտիոքը դարձրեց իր տերության երրորդ՝ հարավային մայրաքաղաքը, որտեղ իր անունով և պատկերով հատվում էին այն հռչակավոր դրամները, որոնք մեծ քանակությամբ պահպանվել են և այժմ պահվում են թանգարաններում: Իսկ Սելևկյան Ասորիքը նա դարձրեց առանձին կուսակալություն և այնտեղ կառավարիչ նշանակեց, ինչպես վկայում է Ապպիանոսը, իր Բագարատ զորավարին [XI, 48, էջ 346]:

Ապպիանոսը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Տիգրանակերտի հիմնադրման ու կառուցման վերաբերյալ. «Տիգրանը [Տիգրան Մեծը] իր անունով Տիգրանակերտ կամ Տիգրանապոլիս կառուցեց [երկրի նոր մայրաքաղաքը] այն վայրում [Աղձնիք նահանգում՝ Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի՝ Նիկեփորիոնի [Ֆարկինսու] հովտում – Ռ. Ն.], որտեղ առաջին անգամ դրեց Հայաստանի թագը» [XII, 67, էջ 346]: «Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով [50 կանգունը հավասար է 25 մետրի], որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և ձկնավազաններով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ» [XI, 84, էջ 347]: Պատմիչը շատ կարևոր մի դիտարկում է անում, որի համաձայն՝ արքունի պալատը պարսպապատ չէր, ինչի պատճառով այն հետագայում հեշտությամբ գրավվեց ու կողոպտվեց հռոմեացի զորավար Լուկուլլոսի բանակի կողմից, փո-

---

[187] Տե՛ս **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, Բ, կա: Տե՛ս նաև **Հ. Հակոբյան,** Տիգրան Մեծը և հայկազունները համաձայն Խորենացու և Սեբեոսի: Հայկազուններ, Ե., «Գիտություն» հրատ., 2013, էջ 17-47:

խարենը «քաղաքի և բերդի շուրջը խանդակ փորեց, (պաշարողական) մեքենաներ պատրաստեց և պարսպի տակ ականներ փորեց» [նույն տեղում]:

Ապպիանոսը աշխատության XI գրքում մանրամասն պատմում է Տիգրան Մեծի արշավանքների ու նվաճումների մասին: Նա գրում է. «Եվ Հայաստանի թագավոր Տիգրանը՝ Տիգրանի[188] որդին, հպատակեցնելով իրենց սեփական դինաստիաներն ունեցող մի շարք հարևան ազգերի, այնուհետև հռչակվեց արքայից արքա և արշավեց Սելևկյանների վրա, որոնք չէին կամեցել հպատակվել նրան: Անտիոքոս Եվսեբեսը[189] չկարողացավ դիմադրել նրան, և Տիգրանը տիրեց Եփրատից այն կողմ գտնվող Սիրիային, մինչև Եգիպտոս բնակվող սիրիական ցեղերի (երկիրը): Միաժամանակ նվաճեց Կիլիկիան, քանզի այն ևս հպատակվում էր Սելևկյաններին և այդ բոլորի վրա ստրատեգոս նշանակելով Մազադատեսին[190]՝ 14 տարի (իշխեց)» [XI, 48, էջ 346]: «Ասորիքը,– ասում է Ապպիանոսը,– ազատ շունչ քաշեց. և թեպետ ենթարկվեց նվաստացուցիչ օտար իշխանության, սակայն տասնչորս տարվա ընթացքում նա ունեցավ խաղաղություն, ապահովություն և բարեկեցություն» [նույն տեղում]: Դժվար չէ նկատել, որ ըստ Ապպիանոսի՝ Տիգրան Մեծի իշխանությունը Ասորիքում տևել է 14 տարի՝ 83-69 թվականները, իսկ ըստ այլ աղբյուրների՝ 17 տարի՝ 83-66 թվականը, այսինքն՝ մինչև Պոմպեոսի հետ կնքած հաշտության պայմանագիրը: Ուշագրավ են Ապպիանոսի հաղորդած մանրամասները միջազգային լայն ճանաչման արժանացած հզոր արքաներից ու զորավարներից մեկի՝ Տիգրան Մեծի մասին: Ըստ նրա հավաստման՝ «Հայ Տիգրանը Միհրդատի (Պոնտոսի թագավոր Միհրդատ VI Եվպատորի) փեսան էր, իսկ պարթև Արշակը՝ բարե-

---

188 Խոսքը վերաբերում է Արտաշես I-ի որդիներից Տիգրանին [Տիրան], որն իր ավագ եղբոր՝ Արտավազդ I-ի մահից հետո հռչակվեց Հայաստանի թագավոր: Նա հայրն էր Տիգրան II Մեծի:

189 Խոսքը Սելևկյան տերության թագավոր Անտիոքոս X Եվսեբեսի (95-92) մասին է, որը վաղուց սպանված էր, և պայքարը Տիգրան Մեծի դեմ գլխավորում էին նրա խորթ մայրը և կինը՝ Սելենե-Կլեոպատրան:

190 Մազադատեսը (Բագադատես) Ասորքի հայկական կուսակալ Բագարատն է, որին ուսումնասիրողները համարում են Բագրատունիների տոհմի ներկայացուցիչ (տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (մ.թ.ա. 66 թ.), Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 157):

կամը» [XII, 15, էջ 346]: Այստեղ խոսքը Պարթևստանի թագավոր Միհրդատ II-ի (դինաստիական անունով Արշակ IX՝ 123-87 թթ.) մասին է, որն ամուսնացած էր Տիգրան Մեծի դուստր Ավտոմա-Արիազատեի հետ:

Պատմիչը վկայում է, որ Տիգրան Մեծն իր նվաճումներն ուղեկցում էր նվաճված ժողովուրդների զանգվածային վերաբնակեցումներով ոչ միայն բուն հայրենիքում, այլև իր տերության մաս կազմող Միջագետքում:

Անշուշտ, ինչպես հայկական մյուս քաղաքների, այնպես էլ Տիգրանակերտի հիմնական բնակչությունը հայերն էին: Նոր քաղաքի բնակեցման ժամանակ, բացի տեղական քաղաքներից բերվող բնակչությունից, ներգրավվում էր և գյուղական բնակչությունը, մասամբ հենց քաղաքի համար, առավելապես՝ նրա հողագործական գոտու համար: Ապպիանոսը նշում է. «…Տիգրանակերտը, այն քաղաքը, որը թագավորը կառուցել էր իր պատվին, երկրի լավագույններին կանչում էր այնտեղ՝ սպառնալով, որ այն, ինչ չեն բերի իրենց հետ, կբռնագրավվի» [XII, 84, էջ 347]: Պատմիչը ուղղակիորեն փաստում է, որ Տիգրան Մեծը իր հիմնադրած քաղաքում բնակեցրել է նաև հայ ավագանու շատ ներկայացուցիչների, ըստ որում՝ երբեմն հարկադրաբար՝ ունեցվածքը բռնագրավելու սպառնալիքով: Անշուշտ, սրանց հատուկ դեր էր վերապահված՝ շենացնել քաղաքը, կազմել քաղաքի վերնախավը և ստանձնել համայնքի տնօրինման գործը[191]: Այն, որ, իրոք, հայկական հելլենիստական քաղաքներում մեծամասնությունը հայ բնակչությունը պիտի կազմեր, այդ ակնառու է նաև Ապպիանոսի հետևյալ հավաստումից. Տիգրանակերտի ճակատամարտից հետո Միհրդատ Եվպատորը (Տիգրան Մեծի աները և դաշնակիցը – Ռ. Ն.) հայկական «բոլոր քաղաքներում զենք էր պատրաստում և զորակոչեց գրեթե բոլոր հայերին: Նրանցից ընտրելով լավագույններին՝ մոտ 70 հազար հետևակ և այդ քանակության կեսի չափ հեծյալ զորք՝ նա մնացածին բաց թողեց» [XII, 87, էջ 349]:

Տիգրան Մեծը հետագա ռազմական գործողությունների հաջողությունը ապահովելու համար, ըստ Ապպիանոսի հաղորդման, հավաքագրում էր ռազմիկներ հիմնականում հայերից, քանզի Տիգրան

---

[191] Տե՛ս **С. Т. Еремян,** Развитие городов и городской жизни в Древней Армении. «Вестник древней истории», 1953, № 3, с. 24:

Մեծի բանակում եղած վարձկան հունական զորամասերը, ինչպես հայտնի է, իրենց չարդարացրին Տիգրանակերտի պաշտպանության ժամանակ՝ քաղաքը դավաճանությամբ հանձնելով Լուկուլլոսին [XII, 86, էջ 348]: Ի դեպ, Հայկ Հակոբյանը ուշագրավ մի հոդվածում[192] ցույց է տվել, որ Տիգրանակերտի ճակատամարտում հայերը չեն պարտվել: Ամբողջ Հայաստանով մեկ զորքի հավաքագրման մասին Ապպիանոսի վերոհիշյալ հաղորդումը օգնում է պարզաբանելու զորքի էթնիկ կորիզի և սոցիալական կազմի վերաբերյալ հարցը:

Ըստ Ապպիանոսի մեկ այլ վկայության՝ «Տիգրան Հայը դեպի Կապադովկիա (93 թ., 91 թ. և 74 թ.) կատարած արշավանքների ժամանակ (այստեղ խոսքը միայն 74 թ. արշավանքի մասին է – Ռ.Ն.) մայրաքաղաք Մաժաքից և նաև բազմաթիվ այլ հելլենական քաղաքներից մոտ 30 բյուր մարդ տեղահանեց ու տեղափոխեց Հայաստան և նրանց այլոց հետ միասին, համաբնակեցրեց մի վայրում, որտեղ նա առաջին անգամ դրեց Հայաստանի թագը և (այդ) վայրը իր անունով կոչեց Տիգրանակերտ և կամ Տիգրանապոլիս» [XII, 67, էջ 346]: Իհարկե, այդ հսկայական զանգվածները չէին կարող տեղավորվել միայն Տիգրանակերտում: Տիգրան Մեծի օրոք հիմնադրված Տիգրանակերտի բնակչությունը 10-15 տարվա ընթացքում չէր կարող հասնել մի քանի հարյուր հազարի, քանակ, որին իրենց գոյության հարյուրամյակների ընթացքում դժվարությամբ էին հասել ժամանակի խոշորագույն քաղաքները՝ Անտիոքը, Ալեքսանդրիան, Հռոմը: Ըստ երևույթին Տիգրանակերտի բնակչությունը 100 հազարից չէր անցնի: Ուստի վերաբնակվածների մեծ մասին տեղավորում էին այլ վայրերում ու քաղաքներում: Հայտնի է, որ Տիգրանի օրոք հիմնադրված Տիգրանակերտ անունով քաղաքներ գոյություն են ունեցել, Աղձնիքից բացի, նաև Արցախում, Ուտիքում և Գողթնում[193]: Փավստոս Բուզանդը[194] և Մովսես Խորենացին[195] նույնպես հավաստել են Տիգրան Մեծի կատարած վերաբնակեցումների մասին՝ նշելով նաև Արտաշատում,

---

[192] Տե՛ս **А. П. Акопян,** Тигранакертская битва в новом освещении. «Լրաբեր ՀՍՍՀ հաս. գիտ.», 1983, № 9, էջ 65-79:

[193] Տե՛ս «Սեբեոսի Եպիսկոպոսի Պատմութիւն», հրատ.՝ Ս. Մալխասյանցի, Ե., 1939, ԼԸ, էջ 125:

[194] Տե՛ս **Փաւստոս Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1832 (աշխարհաբար թարգմանությամբ Ս. Մալխասյանցի, Ե., 1986), Դ, ծե:

[195] **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, Բ, ժզ:

Արմավիրում, Երվանդաշատում, Բագրևանդ գավառի Զարեհավանում, Աղիովիտի Զարիշատում օտարերկրացիների վերաբնակեցման մասին:

Այս վկայությունները արժեքավոր լրացումներ են Տիգրան Մեծի տիրապետության ժամանակահատվածի մասին անտիկ շրջանի մյուս պատմիչների տեղեկություններին, ինչպես նաև կարևոր են հարևան ու հեռավոր շատ ժողովուրդների պատմության և տնտեսամշակութային կյանքի ուսումնասիրության համար:

Ընդհանուր առմամբ, Ապպիանոսի աշխատությանը բնորոշ է այն, որ նա ամեն կերպ ձգտում էր փառաբանել Հռոմեական կայսրությունը և արդարացնել նրա նվաճողական պատերազմները: Այս հանգամանքը ակնհայտորեն երևում է զորավար Լուկուլլոսի՝ դեպի Հայաստան արշավանքների մասին պատմիչի շարադրած անցքերում:

Այսպես, Լուկուլլոսը կարողանում է գրավել Տիգրանակերտը, որի պատճառը, ըստ Ապպիանոսի հավաստման, ոչ այնքան ռազմական ուժն էր, որքան քաղաքում ապրող օտարերկրացիների ապստամբությունը: Ի դեպ, ինչպես հավաստում է Ապպիանոսը, Տիգրանակերտի բերդապահ զորքը բաղկացած էր գլխավորապես հույներից և կիլիկեցիներից, որոնց այստեղ էր գաղթեցրել Տիգրանը Կիլիկիայից և Կապադովկիայից: Այս մասին պատմիչը գրում է. «Մանկայոսը (մայրաքաղաքի պաշտպանության ղեկավարը) Տիգրանակերտից տեսել էր տեղի ունեցած (Տիգրանի – Ռ. Ն.) պարտությունը, կասկածելով հելլենների վրա, որոնք նրա մոտ վարձկաններ էին, բոլորին զինաթափեց: Սրանք ձերբակալումից վախենալով՝ բրերով զինված գնացին և բանակեցին բացօթյա: Երբ Մանկայոսը նրանց դեմ հանեց զինված բարբարոսների, նրանք, իրենց վերնազգեստները վահանների փոխարեն կապկպելով ձախ ձեռքներին, խիզախաբար վազեցին նրանց վրա: Եվ ում որ սպանում էին, իսկույն նրա զենքերը բաժանում էին իրար միջև: Երբ այսպիսով, նրանք հնարավորին չափ իրենց բավարարեցին (զենքով), գրավեցին միջաշտարակային մի քանի մասեր և, դրսից հռոմայեցիներին կանչելով, բարձրացողներին ներս թողեցին: Այսպես գրավվեց Տիգրանակերտը և կողոպտվեց մեծ հարստություն, ինչպիսին կլիներ նորակառույց և փառասիրությամբ բնակեցված քաղաքում» [XII, 86, էջ 348]:

Ուշագրավ է այն, որ Ապպիանոսը հռոմեացի այլ պատմիչների, օրինակ՝ Պլուտարքոսի նման, հայկական և հռոմեական բանակների

միջև տեղի ունեցած ճակատամարտերը հիմնականում բնորոշում է որպես հռոմեացիների հաղթություն, սակայն դեպքերի հետագա ընթացքը, ինչպես, օրինակ՝ Ք.ա. 68 թ. սեպտեմբերի կեսերին Արածանի գետի ափին, Բագավանից հյուսիս հայկական և հռոմեական բանակների միջև կայացած ճակատամարտը, ցույց է տալիս, որ այստեղ հռոմեացիների տարած հաղթանակի մասին որևէ խոսք լինել չի կարող, որովհետև նրանք պարտություն էին կրել և ծանր հարված ստանալով՝ նահանջել Հայաստանից:

Ապպիանոսի հավաստմամբ՝ այդ ճակատամարտերից մեկում, «…երբ հավաքում էին սպանված հռոմեացիների դիակները, պարզվեց, որ սպանվել էր 24 տրիբուն և 150 ցենտուրիոն: Այսքան շատ հրամանատարներ հռոմեական կողմից հազվագյուտ էր սպանվում մի ճակատամարտում» [XII, 84, էջ 347]:

Ըստ Ապպիանոսի՝ Լուկուլլոսի բանակն ուներ ընդամենը 14.500 զինվոր: Նա գրում է. «Զոհեր մատուցելուց հետո նա (Լուկուլլոսը) երկու ընտիր լեգեոններով և 500 հեծյալներով արշավեց Տիգրանի վրա: Ք.ա. I դարի վերջերին լեգեոնում հաշվվում էր 7 հազար զինվոր, երկու լեգիոնը՝ 14.500, որը, անշուշտ, ճիշտ չէ, քանի որ բերված թվաքանակը վերաբերում է միմիայն հռոմեացիներից կազմված զորամասերին, մինչդեռ Լուկուլլոսն իր տրամադրության տակ պետք է ունեցած լիներ նաև դաշնակիցների զորագնդերը, որոնց հետ միասին նրա բանակը կազմում էր շուրջ 35-40 հազար զինվոր, որը միայն կիսով չափ էր պակաս հայկական բանակից, ինչպես կարծում են փոքրասիական չեզոք պատմիչներ Մեմնոնը և Փլեգոնը»[196]:

Ապպիանոսը խոսում է նաև Տիգրան Մեծի դեմ Հայաստանում տեղի ունեցող դավադրությունների մասին: Եթե նրան հավատանք, ապա Տիգրանի արքունիքում սովորական էին պալատական խարդավանքներն ու արյունահեղ ոճրագործությունները [XII, 104, էջ 349-350]: Տիգրանը Միհրդատի դուստր Կլեոպատրայից ուներ երեք որդի, որոնք բոլորն էլ թագավորական իշխանության էին ձգտում հոր մահից առաջ: Առաջինը՝ Զարեհը, պարտվել ու սպանվել էր, երկրորդը, որի անունը չի էլ հիշատակվում, մահապատժի է ենթարկվել հոր կողմից, իսկ երրորդի՝ Տիգրան Կրտսերի ճակատագիրն ավարտվում է Պոմպեոսի կողմից ձերբակալմամբ և մահապատժով:

---

[196] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 202:

Հռոմեական տարբեր աղբյուրներում տարբեր կերպ են ներկայացվում Տիգրան Մեծի՝ իբրև թե Լուկուլլոսից կրած պարտությունից հետո ձեռնարկած քայլերը: Տիգրանը որոշում է երկիրը ավերածություններից ու նոր զոհերից և վտանգված անկախությունը փրկելու համար ներկայանալ զորավար Պոմպեոսին[197]: Ուշագրավ է, որ Ապպիանոսը մի կողմից համաձայն է վերոնշյալ հեղինակների՝ Պոմպեոսի մոտ Տիգրանի ինքնուրույն և հոժարակամ գնալու մասին հավաստումներին, միևնույն ժամանակ էլ մատնանշում է, որ «ոմանք վկայում են նաև, որ Տիգրանին նախապես հրավիրել էր Պոմպեոսը»: Ապպիանոսը գրում է, որ Պոմպեոսը գնահատում է հայոց արքայի այս քայլը և պատշաճ վերաբերմունք է ցույց տալիս նրան. «Պոմպեոսը, ի պատիվ նրա, հրամայեց իր տրիբուններին և հեծելապետերին գնալ նրան դիմավորելու»: «*Կան նաև ասողներ,*– նշում է պատմագիրը,– *որ Տիգրանին, որը նախապես հրավիրված է եղել Պոմպեոսի կողմից, առաջնորդել են լիկտորները*»[198] (XII, 104, էջ 350): Հ. Մանանդյանի համոզմամբ՝ «Տիգրանին Պոմպեոսի կողմից նախապես հրավիրած լինելու» Ապպիանոսի թռուցիկ ակնարկը պատմագիտական երկերում աչքաթող է արվել և կարող է ճիշտ լինել, որովհետև Պլուտարքոսի մոտ ևս մատնացույց է արված (XXXVI, 52, 3), որ Տիգրանը նախքան Պոմպեոսի մոտ գնալը Արտաշատ էր թողել մտնելու նրա ուղարկած հռոմեական կայազորը: Անհավանական չէ, ուրեմն, որ Տիգրանը Պոմպեոսի մոտ հատուկ հրավերով է գնացել[199]:

Պոմպեոսի ու Տիգրանի այս հանդիպման ժամանակ նրանց միջև կայացավ հաշտություն: Ապպիանոսի հավաստմամբ՝ Տիգրանը պետք է հրաժարվեր իր բոլոր նվաճումներից, այն է՝ Ասորիքից, արևելյան Կիլիկիայից, Փյունիկիայից, Կապադովկիայից, Կորդուքից, Ծոփքից, և մնալու էր միայն իր հայրենի երկրի՝ Մեծ Հայքի թագավոր (նույն տեղում): Ապա պատմիչը նշում է, որ որպես հատուցում «Տիգրանը Պոմպեոսին

---

[197] Պոմպեոսը (Պոմպեոս Գնեոս Մագնուս՝ 106-48)- Ք.ա. 66 թ. նշանակվել էր Միհրդատ Եվպատորի և Տիգրան Մեծի դեմ գործող հռոմեական բանակների հրամանատար:

[198] Հին հռոմում լիկտոր էին կոչվում բարձրաստիճան պաշտոնյայի առջևից գնացող հատուկ անձինք, որոնք իբրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների մի կապոց՝ ծայրերին կացին ամրացրած:

[199] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 577-578:

տվեց 6000 տաղանդ [մոտ 12,5 միլիոն ոսկի ռուբլի], զինվորներից յուրաքանչյուրին՝ 50, յուրաքանչյուր վաշտապետին՝ հազար դրաքմե, իսկ յուրաքանչյուր տրիբունին՝ 10 հազար դրաքմե» (նույն տեղում):

§ 2.2.2. ՀԻՆ ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ապպիանոսի երկում տվյալներ են հաղորդվում նաև տնտեսության, նյութական մշակույթի մասին: Պատմիչը անդրադառնում է իր ժամանակաշրջանում օգտագործվող տարածության, չափի ու կշռի, դրամական միավորներին: Որպես տարածության միավոր՝ հաճախ է հիշատակվում **ասպարեզը** [XII, 85, էջ 348]: 1 ասպարեզը Հին աշխարհում տարածության չափ էր, երկարություն, որը ձին մի վազքով անցնում է, հավասար էր հունական ստադիոնի: 1 ստադիոնը 600 ոտնաչափ է: 1 ստադիոնը նաև հավասար է 185 մետրի: Հիշատակված է նաև **գրկաչափը**: 1 գրկաչափը հավասար էր 1,85 մետրի, 100 գրկաչափը նույնպես 1 ասպարեզ է: Ի դեպ, հին պարսկական ասպարեզը կամ ասպարիսաց ասպարեզը հավասար էր 230,112 մետրի[200]: Կանգունը 0,5 մ է: Ապպիանոսը Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը 50 կանգուն է մատնանշում, այդ նշանակում է, որ պարսպի բարձրությունը 25 մետր է եղել [XII, 84, էջ 347]: **Կանգունը** շատ տարբեր մեծություններով է ներկայացվում՝ ըստ ազգի, տեղի և ժամանակի: Հայերեն բացատրական բառարաններում այն ներկայացվում է որպես մեկ մետրանոց կամ արշինանոց (1 արշինը = 71 սմ) երկարության կամ բարձրության չափի միավոր[201]:

Դրամական և նաև կշռի միավորներից հիշատակված են **տաղանդը** և **մինան**: Մինան հավասար էր 1/60-րդ տաղանդի և արժեր 100 դրաքմե: Ըստ Ապպիանոսի՝ Տիգրան Մեծը որպես ռազմատուգանք Հռոմին էր վճարելու 6000 տաղանդ (= 12.5 մլն ոսկե ռուբլի) (XII, 104, էջ 350): Նույն տեղում պատմագիրը փաստում է, որ Տիգրան Մեծը նաև յուրաքանչյուր հռոմեական զինվորին բաժանեց 50 **դրաքմե**, վաշտի հրա-

---

[200] Տե՛ս **Ս. Մալխասեանց,** Հայերեն բացատրական բառարան, հ. I (Ա), ԵՊՀ հրատ, Ե., 2010, էջ 188:

[201] Տե՛ս նշվ. աշխ., հ. III, Ե., 1974, էջ 39: **Ա. Մ. Սուքիասյան,** Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2009, էջ 491:

մանատարին՝ 1000, իսկ տրիբունին՝ 10 հազար: Մի առիթով էլ Ապպիանոսը վկայում է, որ Միհրդատը պատերազմական գործողությունների համար հրամայել էր պատրաստել մեծ քանակությամբ նավեր ու զենքեր և մթերել էր տվել զորքի պարենավորման համար երկու միլիոն մեդիմն ցորեն (մոտ 5 մլն փութ) (նշվ. աշխ., գլ. 90):

Նյութական մշակույթի վերաբերյալ նկարագրություններից տեղեկանում ենք, որ հայոց արքան կրում էր բաճկոն՝ կեսը սպիտակ և կեսը ծիրանի, շապիկ և լայն վարտիք: Գլխին դնում էր բարձր խույր, որի վրա ոսկով բանված էին հպված կանգնած և գլուխները դեպի հակառակ կողմը դարձրած արծիվներ: Հայկական **տիարան** կամ **խույրը** անտիկ դարաշրջանների քանդակներում, բարձրաքանդակներում, փորագիր քարերի (**գեմա**) և դրամների վրա պատկերված թագն է, որ հանդիսավոր պայմաններում կրում են Տիգրան Մեծն ու հաջորդ մի քանի Արտաշիսյան արքաներն ու ազգակից կոմմագենյան ճյուղի Երվանդունի թագավորները[202]: Այն նաև ակնեղենով զարդարված միանձնյա իշխանության խորհրդանիշ էր: Վենետիկի Մխիթարյան միաբանության հավաքածուում գտնվող գեման պատկերում է հայոց թագուհու, նրա գլխին բարձրադիր կոնաձև թագը՝ առանց ականջակալների և ծոծրակին իջնող ծածկոցի: Այն պսակված է չորս ատամներով և զարդարված աստեղային նախշով[203]: Տիարան վերնամասում չորս կամ հինգ ատամներով ավարտվող հատուկ կոնի տեսք ունի: Սրանից ներքև են իջնում զույգ ականջակալներ և ծոծրակակալ ծածկոց: Հայկական տիարան սերտ առնչություններ ունի տարածաշրջանի խոշոր օջախների՝ խեթական պատկերագրության, նաև իրանական աշխարհի հետ: Տիարան պատկանելով աստվածացված գահակալին, ընդօրինակվեց նաև արվեստում՝ աստվածային կերպարների պատկերագրության մեջ: Ըստ պատմագետ Հ. Հակոբյանի՝ Տիգրան Մեծի տիարայի վրա պատկերված է նրա հովանավոր արևի աստվածը, ամենայն հավանականությամբ՝ Միհրը, իսկ նրա շուրջ՝ Տիգրանի փառքը և բախտը[204]:

Բնականաբար, Տիգրանի զինվորները ևս կարևոր տեղ էին տալիս խորհրդանշական զարդերին՝ թերևս արժևորելով դրանց պաշտպանիչ

---

[202] Մանրամասն տե՛ս **Հ. Պ. Հակոբյան,** Տիգրան Մեծ, Ե., 2005, էջ 211-220:

[203] Տե՛ս **Վ. Հացունի,** Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 34:

[204] Տե՛ս **Հ. Պ. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 216, 220:

նշանակությունը: Ապպիանոսի վկայությամբ, երբ հռոմեացիք հաղթեցին Տիգրան Մեծին, ապա ճակատամարտում վերջինիս ընկած զինվորների վրա գտան ապարանջաններ ու գումարտակներ (վզնոց), բայց զորավարը արգելեց դիակապուտը [XII, 85, էջ 247-248]:

§ 2.2.3. ԿԵՆՑԱՂԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊՊԻԱՆՈՍԻ

Ապպիանոսը տարբեր առիթներով անդրադարձել է նաև հայոց կենցաղային և սոցիալական որոշ սովորությունների: Պատմիչը վկայություններ է թողել հայ-պարթևական, հայ-մարական խնամիական կապերի վերաբերյալ: Այսպես, XII գրքի 15-րդ հատվածում նշում է, որ «Հայ Տիգրանը Միհրդատի [Պոնտոսի թագավոր՝ Միհրդատ VI Եվպատորի) փեսան էր, իսկ պարթև Արշակը՝ բարեկամը»: Խոսքը Պարթևստանի թագավոր Միհրդատ II-ի (դինաստիական անունով Արշակ IX՝ 123-87) մասին է, որն ամուսնացած էր Տիգրան II-ի դուստր Ավտոմա Արիազատեի հետ:

Հին աշխարհի, հատկապես Արևելքին բնորոշ սովորույթներից էր նաև մերձավորների ամուսնությունները: Ըստ Ապպիանոսի՝ «Անտիոքոս Եվսեբեսը [Սելևկյան թագավոր Անտիոքոս IX Կիզիկացու (114-95) որդին – Ռ. Ն.] ամուսնացավ Սելենեի հետ, որը եղել էր նաև նրա հոր՝ Կիզիկացու, ինչպես և նրա հորեղբոր՝ Գրյուպոսի [Անտիոքոս VIII Գրյուպոսի՝ (125-95)] կինը: Այս պատճառով էլ աստված նրան պատժեց, և Տիգրանը նրան քշեց իշխանությունից» [XI, 69, էջ 346]: Ուշագրավ է, որ Տիգրան Մեծի կինը իր հորեղբոր դուստր Զարուհին էր (Խորենացի, Ա, Իթ), որին անվանակոչել էին հոր՝ Զարեհի անունով (Խորենացի, Ա, ծգ):

Նա ուշադրություն է դարձրել Արևելքի երկրների արքունիքներում հարճեր պահելու սովորույթին: Ապպիանոսի հաղորդմամբ, երբ Տիգրանակերտը պաշարման մեջ էր հայտնվել, հայկական 6000-ոց հեծյալ գունդը ճեղքել է Տիգրանակերտը պաշարած հռոմեացիների շարքերը և նրանց միջով մտնելով բերդ՝ այնտեղից խլել ու դուրս բերել [հայոց] **թագավորի հարճերին ու գանձերը** [XII, 85, էջ 242-248]:

Նույնանման պատումները բավական շատ են նաև Արևելքի մյուս երկրների արքունական և նախարարական միջավայրի վերաբերյալ: Հարեմների ընդարձակությունը, այնտեղ փակված կանանց և

հարձերի բազմությունը համարվում էին տիրողի երջանկության, հարստության և կարողության գլխավոր նշաններ:

Այսպիսով՝ Ապպիանոսի՝ Հայաստանի պատմաքաղաքական իրավիճակների վերաբերյալ վկայությունների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհը մշտապես եղել է միջազգային պայքարի ու մրցության առարկա: Կռվող, մրցակից պետությունների համար Հայաստանին տեր դառնալը խիստ կարևոր էր և պայմանավորված էր ոչ միայն այն հանգամանքով, որ նրանով էր անցնում միջազգային առևտրական ուղիների հյուսիսային մեծ գիծը, այլև այն ուներ ռազմավարական մեծ կարևորություն: Աշխարհագրական իր առանձնահատկությունների շնորհիվ, Հայկական լեռնաշխարհը հսկայական բնական մի միջնաբերդ էր և ուներ առաջնակարգ նշանակություն ինչպես պաշտպանական, նույնպես և հարձակողական պատերազմի համար: Իբրև պարթևների բարեկամ՝ նա անհանդուրժելի մի վտանգ էր հռոմեական արևելյան նահանգների համար, իսկ իբրև Հռոմի դաշնակից՝ նա դարձյալ սպառնալիք էր Պարթևական թագավորությանը համար: Ուստիև, քաղաքական մերձեցումը Հայաստանի հետ կամ նրա բռնի նվաճումը ամենահիմնական հարցն էր թե՛ Հռոմի և թե՛ պարթևների ու Պարսկաստանի արտաքին քաղաքականության համար[205]: Սա է վկայում հենց Ապպիանոսի կողմից Տիգրան Մեծ արքայի տիրապետության ժամանակաշրջանի պատկերը:

[205] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, էջ 601-602:

§ 2.3. ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ «ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԸ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիոն Կասսիոս Կոկկեյանոսը (շուրջ 155-235թթ.) ուշ անտիկ շրջանի հռոմեական խոշորագույն պատմիչներից մեկն է, որի «Հռոմեական պատմություն» մեծածավալ երկասիրության 80 գրքից պատմագիտությանն է հասել միայն 24-ը (36-60 գրքերը), այսինքն՝ նրա ամբողջական պատմության միայն Ք.ա. 68 թվականից մինչև Ք.հ. 47 թվականի միջև ընկած ժամանակահատվածի՝ զորավար Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքից մինչև Կլավդիոս (41-51 թթ.) կայսեր իշխանության տարիների պատմության նկարագրությունը: Մնացած գրքերից միայն անվնաս են հասել առանձին հատվածներ՝ բյուզանդական տարեգիրների միջոցով: Նրա սույն երկասիրությունը կարևոր սկզբնաղբյուր է Հին աշխարհի, այդ թվում՝ նաև I դ. Ք.ա. - II դ. Ք.հ. Հայաստանի ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրության համար: Դիոն Կասսիոսի պատմությունը անհամեմատ արժանահավատ է, քանզի լինելով զինվորական և քաղաքացիական բարձր պաշտոնյա՝ կարողացել է օգտվել և իր աշխատության մեջ օգտագործել պետական պաշտոնական վավերագրեր և արխիվային նյութեր: Սակայն չի կարելի աչքաթող անել այն կարևոր հանգամանքը, որ հռոմեական պատմագրի արիստոկրատական ծագումը (ծնվել է Բյութանիայի Նիկիա քաղաքում, բարձրաշխարհիկ ընտանիքում) և զբաղեցրած պետական բարձր պաշտոնները, անկասկած, պայմանավորել են նրա պատմության միտումնավորությունը հօգուտ Հռոմի և, ի վնաս, հատկապես Արևելքի ժողովրդների:

Դիոն Կասսիոսի գրքից Հայաստանի և հայերի վերաբերյալ բերված հատվածները քաղված են «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի 9-րդ հատորից՝ նշելով հեղինակը, գիրքը և գլուխը[206]: Ս. Կրկյաշարյանը թարգմանել է գրքի այն հատվածները միայն, որոնք վերաբերում են պատմական Հայաստանին և հարևան

---

[206] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 9, Հին հունական աղբյուրներ, Ա. Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթություններ՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1976:

երկրներին, որոնց հետ հայերը հնագույն ժամանակներից ունեցել են քաղաքական, տնտեսական և մշակութային առնչություններ[207]:

§ 2.3.1. ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԸ ՀԱՅՈՑ ԵՐԿՐԻ ԲՆԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍԱՀՄԱՆՆԵՐԻ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԻ, ՔԱՂԱՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ըստ պատմիչի՝ Ք.ա. 69 թ. հոկտեմբերին հռոմեական զորքերի կողմից հայոց երկրի մայրաքաղաք Տիգրանակերտի պաշարման ժամանակ «բարբարոսները (Տիգրանակերտի պաշտպանները - Ռ. Ն.) նետաձգությամբ և պաշարողական մեքենաների վրա թափած նավթով մեծապես վնասեցին նրան (հռոմեացիներին)։ Այդ դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվող, այնպես որ հրկիզում էր այն ամենը, ինչի կպչում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգցնելը» (Դիոն, գ. 36, գլ. 2)։ Հայաստանում նավթի օգտագործման մասին Դիոնի սույն վկայությունը իր հաստատումը գտավ Արտաշատի միջնաբերդի հնագիտական պեղումների ժամանակ։ Արտաշատի պարիսպների մոտ՝ ներսից մի քանի տեղով № 1 բլրի վրա, հայտնաբերվել է մեծ քանակությամբ նավթ, որն արդեն ստացել էր սև, չորացած կուպրի՝ մազութի տեսք, իսկ սենյակներից մեկում զետեղված կարասների մեջ լցված է եղել նավթ[208]:

Հռոմեացի պատմագիրը հիշատակում է Վաղարշապատ քաղաքը՝ «Նոր քաղաք» անվամբ (այն հիմնադրվել է Վաղարշ Ա թագավորի (117-140 թթ.) կողմից)։ Ըստ նույն աղբյուրի՝ հռոմեացիները Վաղարշապատը հայտարարում են Հայաստանի մայրաքաղաք, հավանաբար, հին մայրաքաղաք Արտաշատի ապստամբած բնակչությանը պատժելու նպատակով[209]:

---

[207] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» երկը անտիկ դարաշրջանի Հայաստանի և հայերի մասին։ «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (15), Ե., 2017, 19-35։

[208] Տե՛ս **Բ. Առաքելյան**, Հին Արտաշատ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 22։

[209] Տե՛ս **Կ. Վ. Тревер,** Очерки истории культуры древней Армении, М.-Л., 1953, էջ 228-230։ Հմմտ. **Ս. Մ. Կրկյաշարյան**, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, 1970, էջ 120-121։

Դիոն Կասսիոսը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում անտիկ դարաշրջանի Հայաստանի տարածքային ընդգրկումների, սահմանային երկրների մասին։ Ուշագրավ է Դիոն Կասսիոսի այն տեղեկությունը, որը վերաբերում է Հայաստանի հյուսիսային սահմանագծմանը։ Ըստ նրա՝ Հայաստանի և Վրաստանի միջև սահմանը հանդիսանում է Կյուռնոս (Կուր գետի անվան հունական ձևերից մեկը) գետը, և նշում, որ «Կյուռնոսի երկու ափին, մի կողմից ալբանացիների (աղվանների), մյուս կողմից հայերի հարևանությամբ բնակվում էին իբերներ», որոնց երկիրը նույնպես իրեն էր ենթարկել Պոմպեոսը (Դիոն, 37. 1. 1-5, 2. 1-6)։ Դիոնը թվարկելով Պոմպեոսի՝ հռոմեական գերիշխանության ներքո անցած երկրների շարքը, նշում է նաև ասիական Իբերիան (պատմական Վիրքը), Ալբանիան (Աղվանքը) և երկու Արմենիաները։ Արմենիաներ անվան տակ նա նկատի է ունեցել Եփրատ գետից այն կողմ գտնվող Փոքր Հայքի և Եփրատից այս կողմ գտնվող Մեծ Հայքի տարածքները (Դիոն, 38. 38, 4)։ Իսկ նրա հավաստման համաձայն՝ Հայաստանի հարավային սահմանին էին հարում Օսրոյենեն՝ Եդեսիա (Ուռհա) մայրաքաղաքով, և Միգդոնիան՝ Մծբին (բնագրում՝ Նիսիբին) կենտրոնով, որոնք Հյուսիսային Միջագետքի երկրներն էին, և որոնք նշանակալից դեր էին խաղում հայ ժողովրդի տնտեսական և մշակութային կյանքում։ Այս երկրների և Հայաստանի միջև հատկապես Տիգրան Բ-ի (Ք.ա. 95-55 թթ.) օրոք հաստատված տնտեսամշակութային կապերը գնալով ամրապնդվում էին։ Տիգրան Մեծի կառավարման շրջանում Միջագետքի երկրների վրա վերակացու էր կարգված թագավորի Գուրաս եղբայրը, որը նստում էր Մծբինում։ Հռոմեացի պատմագրի հավաստմամբ «Տիգրանը, պարթևներից վերցնելով Հյուսիսային Միջագետքը, քանզի այսպես էր կոչվում Տիգրիսի և Եփրատի միջև գտնվող ամբողջ երկիրը . . ., (Տիգրան Արմենը) իր գանձերը և այլ հարստությունների մեծ մասը այնտեղ էր կենտրոնացրել և իր եղբայրը (Դիոնը չի հիշատակում Տիգրան Մեծի եղբոր անունը, սակայն Պլուտարքոսը[210] նրան անվանում է Գուրաս) այնտեղ (խոսքը լավ ամրացված Մծբինի, հռոմեական պատմագրի անվամբ՝ Նիսիբիսիի մասին է – Ռ. Ն.) բերդապահ էր կարգել» (Դիոն, 36. 6. 1-2)։ Մծբինը, ըստ պատմագրի,

[210] **Պլուտարքոս,** Կենսագրություններ, հին հունարեն բնագրի հայերեն թարգմանությունը և ծանոթագրությունները Ս. Մ. Կրկյաշարյանի, Ե., 2011, Լուկուլլ, XXII։

ոչ միայն բազմամարդ ու հարուստ քաղաք է եղել, այլև հզոր ամրոց՝ շրջապատված երկու շարք հաստ ու բարձրաբերձ պարիսպներով և շուրջը փորված լայն խրամով (Դիոն, 36. 6. 1-2)։ «Լուկուլլոսը (հռոմեական արևելյան արշավանքների հրամանատարը), ամռանը հասնելով այս քաղաքը, թեպետ հարձակվում էր ոչ իմիջայլոց, բայց ոչինչ չկարողացավ վճռել, քանզի (քաղաքի) պարիսպները և՛ կրկնակի, և՛ աղյուսաշեն լինելով, մեծ հաստություն ունեին և բաժանված էին խորը խրամատով. այնպես որ ոչ մի տեղում չկարողացավ (պարիսպը) ո՛չ քանդել, ո՛չ իսկ խախտել. ուստիև Տիգրանը նույնիսկ օգնության չեկավ յուրայիններին» (Դիոն, 36. 6. 1-2)։ Պատմագրի հավաստմամբ՝ Լուկուլլոսին ի վերջո հաջողվում է խորամանկությամբ գրավել այն և ձեռք բերել մեծ հարստություն, ու ձմեռել այնտեղ (Դիոն, 36. 7. 3-4)։

Պատմագիրը ակնարկ ունի նաև հռոմեական զորքերի կողմից (խոսքը Պոմպեոսի՝ հռոմեական բանակի հրամանատարի (Ք.ա. 106-48թթ.) Հայաստան կատարած արշավանքի մասին է) Հայաստանին պատկանող «Անահտական երկրի» գրավման մասին և նշում նաև, որ գավառի այդ անվանումը նվիրված է եղել համանուն մի աստվածուհու (Դիոն, 36. 48. 1-3)։ «Անահտական երկիր» անվամբ հիշատակության հանդիպում ենք նաև Պլուտարքոսի մոտ (Լուկուլլոս, 24, 28)։ Այդպես է կոչվել մի ամբողջ շրջան, որը հայտնի էր Երիզա ավանում Անահիտ դիցուհու պատվին կառուցված տաճարով և այնտեղ կատարվող տոնախմբություններով (տե՛ս նույնը Ստրաբոնի մոտ՝ XI. 14. 16)։

Դիոն Կասսիոսը Հայաստանի բուն սահմանների մեջ մտնող երկիր (երկրամաս) է թվարկել նաև Ծոփքը, որտեղ էլ պահվում էին հայոց երկրի գանձերը։ Ահա թե ինչ է գրում նա. «Տիգրան Մեծին վերադարձրեց (խոսքը Արտաշատի Ք.ա. 66 թ. պայմանագրի մասին է) նրա ամբողջ հայրենի իշխանությունը», բայց նրա կողմից նվաճված երկրները, որոնց մեջ նաև Դիոն Կասսիոսի հավաստմամբ «Կապադովկիայի Ասորիքի մասը (բնագրում՝ Սյուրիա), ինչպես նաև Փյունիկիան և ոչ փոքր երկիր Ծոփքը (բնագրում՝ Սոփանեն) վերցրեց նրանից, ինչպես նաև գանձեր պահանջեց նրանից։ Իսկ Կրտսեր Տիգրանին պարգևեց միայն Ծոփքը։ Եվ քանի որ Ծոփքում էին գտնվում (հայոց արքայի) գանձերը, ուստի և երիտասարդը սրանց պատճառով վիճեց և հաջողություն չունեցավ, քանի որ Պոմպեոսը ոչ մի այլ

տեղից չէր կարող ստանալ պայմանավորված գումարը, դժգոհեց և մտադրվեց փախչել։ Սակայն Պոմպեոսը[211], տեղեկանալով այդ մասին, նրան հսկողության տակ վերցրեց առանց կալանքի, և սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ՝ հրամայեց նրանց, որ այդ բոլորը հանձնեն նրա հորը» (Դիոն, 36. 53. 1-4)։ Դիոնի մոտ (68. 19. 1) հիշատակված է Արսամոսատա քաղաքը (Արշամաշատ), որը նախկինում Ծոփքի հայկական թագավորության մայրաքաղաքն է եղել։ Այն, ըստ Դիոնի հիշատակության, գտնվել է Եփրատի և Տիգրիսի միջև, Արածանի գետի ափին, այսպես կոչված՝ «Գեղեցիկ դաշտում»։

Ըստ նույն պատմագրի՝ «Կորդուքը (բնագրում՝ Կորդուենե, որը պատմական Հայաստանի նահանգներից մեկն էր՝ Կորճայք անվամբ, իսկ հայկական աղբյուրներում «Կորդվաց աշխարհ») հայ-հռոմեական պատերազմի շրջանում ժամանակավորապես Ք.ա. 65 թ. գրավվել էր պարթևների կողմից, սակայն Պոմպեոսը այն կրկին վերադարձրեց հայոց թագավորությանը» (37. 5. 1-5)։ Ք.ա. 64 թ. պարթև արքա Հրահատը (Ք.ա. 70-57 թթ.) նորից շարժվեց դեպի Հայաստան։ Ըստ Դիոն Կասսիոսի՝ Տիգրանը (Տիգրան Մեծը) բողոքի պատվիրակություն ուղարկեց Պոմպեոսի մոտ։ Հայոց պատվիրակները Պոմպեոսի դռան մոտ հանդիպեցին պարթևական պատվիրակներին. վերջիններիս նպատակն էր հիմնավորել Հրահատի՝ Հայաստանի հողերի նկատմամբ ունեցած ակնկալությունները։ Պոմպեոսը այս անգամ զենք չշարժեց, այլ ուղարկեց երեք միջնորդ դատավորների՝ հանձնարարելով տեղում ծանոթանալ գործի հանգամանքներին և համապատասխան վճիռ ընդունել (Դիոն, 37. 7. 3-6)։ Սրանց եզրակացությունը Հայաստանի օգտին էր։ Հայաստանը ոչ միայն պահպանեց Կորդուքը, որը պարթևներից մաքրել էր Պոմպեոս զորավարը, այլև ձեռք բերեց Հյուսիսային Միջագետքի որոշ հողեր ևս՝ Մծբին քաղաքով։ Հայաստանին էր միացվել նաև Ակիլիսինե գավառը, որն այդ ժամանակ, բուն Եկեղիք գավառից բացի, ընդգրկում էր նաև Դա-

[211] Պոմպեոս Գնեոս Մագնուս՝ Ք.ա. 106-40 – հռոմեական զինվորական և քաղաքական գործիչ։ Աչքի ընկնող դեր է կատարել, նաև Իսպանիայում Սերտորիուսի դեմ մղված պատերազմներում (Ք.ա. 77-72 թթ.), Սպարտակի ապստամբությունը ճնշելիս (Ք.ա.71 թ.) և Միջերկրական ծովում ծովահենների դեմ պայքարելիս (Ք.ա.67-66 թ.)։ Ք.ա. 66 թ. նշանակվել է Միհրդատ Եվպատորի և Տիգրան Մեծի դեմ գործող հռոմեական բանակների հրամանատար։

բանաղին, Մանանաղին, Աղյունն ու Մզուրը։ Տիգրանը պահպանել էր նաև արքայից արքա տիտղոսը։ Հայագիտության համար սրանք հավաստի, եզակի և շատ արժեքավոր հաղորդումներ են։

Ուշագրավ է այն, որ Դիոն Կասսիոսը Փոքր Հայքը անվանել է «Մյուս Հայաստան»։ Փոքր Հայքի՝ երբեմնի ինքնուրույն հայկական պետության մասին ավելի հանգամանալի հաղորդում է թողել Ստրաբոնը. «Փոքր Հայքը,– ասում է Ստրաբոնը,– բավական պտղաբեր երկիր է։ Այստեղ ևս, ինչպես և Ծոփքում, միշտ կառավարում էին երկիրը սեփական իշխանները, որոնք կամ բարեկամ ու դաշնակից էին մյուս արմենիներին, և կամ իրենց գործերը վարում էին առանձին ու անկախ։ Փոքր Հայքն իրեն հպատակեցրել էր խալդայներին և տիբարեներին, այնպես որ նրա իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն ու Փառնակիա» [XII. 3. 28]։ Իսկ Դիոնը գրում է. «Այդ միջոցին Տիգրանի դաշնակից Միհրդատ Պոնտացին հռոմեացիներից մաքրել էր մյուս Հայաստանը (Փոքր Հայքը) և նրա մերձակա շրջանները» [Դիոն, 36. 9. 1-2]։ Այդ հաջողությունները պատմագիրը պայմանավորում էր տեղի բնակչության համազգի լինելով և հայրենի թագավորական իշխանություն ունենալու հանգամանքով։ Փաստորեն՝ Փոքր Հայքը, որն այդպես էլ երբեք չմիացվեց Մեծ Հայքի թագավորությանը, քանի որ դեռ մինչև Տիգրան Մեծը՝ դեռևս Ք.ա. 115 թ., Միհրդատ Եվպատորը այն միացրել էր իր թագավորությանը։ Տիգրանը, անշուշտ, իր դաշնակից Միհրդատի հետ հարաբերությունները չսրելու համար, ստիպված էր հանդուրժել Փոքր Հայքի միացումը Պոնտական թագավորությանը։ Միհրդատի պարտությունից հետո այդ երկիրն անցավ Հռոմի տիրապետության տակ[212]։ Պատմագիրը Փոքր Հայքում է հիշատակում Սատալա քաղաքը, որը նույն Սատաղն է, որն ունեցել է ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն, որտեղ տեղակայված են եղել հռոմեական լեգեոնները։ I դարի քաղաքական կացության նկարագրություններում զգալի տեղ են գրավում նաև Հայաստանի երկու մայրաքաղաքների՝ Արտաշատի և Տիգրանակերտի շուրջը կատարվող անցքերը։

---

[212] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ.թ.), էջ 141։

§ 2.3.2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ ՈՒ ՊԱՐԹԵՎՆԵՐԻ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ, ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Դիոն Կասսիոսը անհամեմատ անաչառ պատմագիր է, քան նույն ժամանակի պատմագիր Պլուտարքոսը և այլք: Տիգրանակերտի անկման մասին որքան էլ տարբեր են իրարից նրանց բերած պատճառները, սակայն մի խնդրում համերաշխ են. քաղաքը դավադրաբար հռոմեացիներին են հանձնել Տիգրանակերտում գտնվող օտարերկրացիները[213]: Դիոնը Տիգրանակերտ մայրաքաղաքի հանձնումը համարում է բացառապես քաղաքի օտար բնակչության ապստամբության, նրանց դավաճանության հետևանք, «քանզի նրանց մեծ մասը կիլիկեցիներ էին, որոնք մի ժամանակ տեղահանվել էին իրենց երկրից և բնակեցվել էին հայոց երկրի մայրաքաղաքում, և սրանք այժմ գիշերով հռոմեացիներին ներս թողեցին: Այնուհետև մնացած ամեն ինչը հափշտակվեց, բացի կիլիկեցիների ունեցվածքից» (Դիոն, 36. 2. 1-4): Ասվածից ակներև է, որ Լուկուլլոսը Տիգրանակերտը գրավել է ոչ թե ռազմական գործողությունների արդյունքում, այլ քաղաքի օտարերկրյա բնակչության դավաճանության պատճառով: Այս հաղորդումից երևում է նաև, որ Տիգրանակերտը ևս Մերձավոր Արևելքի հելլենիստական մի շարք քաղաքների նման հիմնվել և բնակեցվել է սինոյկիսմոսի միջոցով[214]: Ի դեպ, ըստ Դիոն Կասսիոսի հավաստման, նշված կիլիկեցիները Կիլիկիայի ծովափնյա Տիգրան Մեծի

---

[213] Ըստ **Ապպիանոսի**՝ Մանկայոսի մոտ ծառայող հույն վարձկան զինվորներն էին, որ ապստամբելով ներս թողեցին հռոմեացիներին: Ապպիանոսից քաղված հատվածները օգտվել ենք Ս. Մ. Կրկյաշարյանի “Appiani Alexandrini, Historia Rommana, Bibl. Teubner., I-II, Lipsiae, 1879” գրքից կատարած հայերեն թարգմանության հատվածներից: Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թ., Ե., 2007, էջ 348-349: Պլուտարքոսը խոսում է ընդհանրապես «հելլենների ապստամբության» մասին՝ «բարբարոսների դեմ» (**Պլուտարքոս,** Լուկուլլ, 29): Մեմնոնի ասելով՝ դավադիրները Միհրդատ Եվպատորի՝ Տիգրանակերտում գտնվող զորապետներն էին (Мемнон, 57)

[214] Տե՛ս **Ս. Մ. Կրկյաշարյան,** Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում: ՊԲՀ, 1964, № 1, էջ 107-118, նույնի՝ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագները, Ե., 1970, էջ 169-192:

ավերած Սոլի (հետագայում այն վերանվանվել էր Պոմպեոպոլիս՝ Պոմպեոսի քաղաք) հելլենական 12 քաղաքներից մեկից Տիգրան Մեծի տեղափոխած հույն բնակչությունն է եղել (Դիոն, 36. 37. 6)։

Դիոնի գիրքը շատ ավելի վստահելի սկզբնաղբյուր է Տիգրան Մեծի պատմաշրջանի հայոց պատմության համար։ Հռոմեացի պատմագիրը առավել հանգամանորեն է ներկայացնում Տիգրան Կրտսերի հոր դեմ ապստամբելու, իր աներոջ՝ Փրատեսի (պարթևների արքա Հրահատ Գ) հետ համատեղ Արտաշատի վրա արշավելու, ապա (Տիգրան Մեծից) պարտություն կրելու և իր պապի՝ Միհրդատ Եվպատորի անհաջողություններից դրդված՝ հռոմեացիների մոտ գնալու և Պոմպեոսի զորքերի ուղեցկողի դերում Հայաստան՝ հոր դեմ արշավելու մասին (Դիոն, 36. 51. 1, 2, 3, և այլն)։

Դիոն Կասսիոսի գրքում հիշատակվում են Միհրդատ Պոնտացու՝ իր դաշնակից Տիգրան Մեծից հիասթափվելու և նրա՝ իրեն օգնության հասնելու խնդրանքը մերժելու իրական պատճառները։ Նա գրում է. «Միհրդատը շտապեց դեպի Տիգրանը, բայց երբ նրա մոտ նախ բանագնացներ ուղարկեց, ոչ մի սիրալիրության չհանդիպեց, քանի որ (Տիգրանի) որդին՝ Տիգրանը (Կրտսերը) ապստամբել էր (հոր) դեմ, իսկ սա կասկածում էր, որ Միհրդատը, լինելով նրա պապը, հրահրել էր այդ թշնամությունը հոր դեմ։ Ուստիև Տիգրանը (արքան) ոչ միայն չընդունեց նրան, այլև նրա կողմից եկած բանագնացներին կալանավորեց ու բանտարկեց։ (Ահա այս բոլորից հետո) Միհրդատը, հուսախաբ լինելով, շուռ եկավ դեպի Կոլխիս (Վրաստան) և այնտեղից հետիոտն հասավ Մայոտիս (Ազովի ծովը և նրա շրջակա երկիրը) և Բոսպորոս (այժմ՝ Կերչի նեղուց)» (Դիոն, 36. 50. 1)։

Պատմագիրը հակառակ տեսակետն է հայտնում նաև Ք.ա. 68 թ. սեպտեմբերին կայացած Արածանիի ճակատամարտի վերաբերյալ։ Ըստ Պլուտարքոսի՝ Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծի հեծելազորը իբր չէր դիմացել հռոմեական հետևազորի հարձակմանը և մատնվել էր փախուստի։ Հետապնդումը իբր թե շարունակվել էր երկար ժամանակ, հռոմեացիները ամբողջ գիշեր հալածել, կոտորել ու գերեվարել էին թշնամուն (Պլուտարքոս, Լուկուլլոս, 31, 7-14)։ Իսկ Դիոն Կասսիոսը գրում է. «Հարձակման ժամանակ թշնամու (հայկական) այրուձին խիստ նեղը գցեց հռոմեական հեձելազորին, բայց հետևակի դեմ ոչ ոք նրանցից դուրս չելավ ձեռնամարտի, այլ նրանք իսկույն ետ էին քաշվում, երբ Լուկուլլոսը հեծելազորին օգ-

նության էր տանում վահանակիրներին։ Չնայած դրան, թշնամիները որևէ վնաս չկրեցին, այլ նրանք, ետ դառնալով, նետեր էին արձակում հետապնդողների վրա և շատերին իսկույն սպանեցին և շատերին էլ վիրավորեցին» (Դիոն, 36. 3. 4)։ Արածանիի ճակատամարտում իբրև թե հռոմեացիների տարած հաղթանակի դժվարին լինելը Պլուտարքոսը և Ապպիանոսը (Ապպիանոս, Միհրդատ, 87) բացատրում էին հանկարծակի վրա հասած ցրտերով, ձյան տեղումներով, գետերի սառցապատմամբ և այլն, որը, իհարկե, անհնար էր վաղ աշնանը, սեպտեմբերի կեսերին, մինչդեռ Դիոն Կասսիոսը, ընդհակառակը, պնդում էր, որ հռոմեացիներն են պարտություն կրել և պարտության պատճառները համարում էր հռոմեական զորքի կրած մեծ կորուստներն ու սննդամթերքի պակասությունը (Դիոն, 36. 6. 1)։ Դիոնը նշում է նաև, որ հռոմեացի զինվորներին հասցված վերքերը ծանր էին և դժվար բուժելի, քանզի նրանք (հայերը) գործածում էին երկծայր նետեր, և ծայրերը այնպես էին իրար ագուցված, որ նետերը թե՛ մարմնի որևէ մասում մնալու և թե՛ դուրս քաշվելու դեպքում արագորեն սպանում էին, որովհետև երկաթյա ծայրերից մեկը, որը չէր ամրացված, մնում էր վերքի մեջ։ Այնժամ Լուկուլլոսը, քանի որ շատերը վիրավորվում էին և մի մասն էլ մահանում էր, իսկ հաշմվածները հեծեծում էին, և միաժամանակ պարենամթերքը պակասում էր, նահանջեց այդտեղից և շաժվեց Նիսիբիսի (Մծբին) վրա» (Դիոն, 36. 4. 1-2, 5. 1-2, 6. 1-2)։ Դժվար է գերագնահատել Դիոն Կասսիոսի այս հաղորդման նշանակությունը Արածանիի ճակատամարտի ընթացքը պարզաբանելու համար, քանի որ այս ճակատամարտի մասին չկա այլ վկայություն՝ բացի Պլուտարքոսի և Դիոն Կասսիոսի հիշատակություններից։ Սակայն նրանց հաղորդումները հիմնովին հակասում են իրար։ Ըստ Պլուտարքոսի՝ Արածանիի ճակատամարտում Լուկուլլոսը հաղթանակ է տարել, և Տիգրանն ու նրա դաշնակից Միհրդատ Պոնտացին ծանր պարտություն են կրել։ Մինչդեռ Դիոնը, ի տարբերություն Պլուտարքոսի, ճիշտ է համարում չմեղանչել պատմական ճշմարտության դեմ՝ հավաստելով, որ Արածանիի ճակատամարտում Տիգրան Մեծը ոչ միայն պարտություն չի կրել, այլ, ընդհակառակը, ինքն է ծանր հարված հասցրել հակառակորդին։

Դիոն Կասսիոսի աշխատությունը ուշագրավ սկզբնաղբյուր է նաև հռոմեական մեկ այլ զորավար Կրասսոսի արշավանքի, նրա դեմ պարթև Սուրեն զորավարի գործողությունների, պարթև արքա Օրոդեսի՝ Հայաստան ներխուժելու և հետագա անցքերի բավական

հանգամանալից հաղորդումներով։ Ահա թե ինչ է գրում պատմագիրը. «Իսկ Կրասսոսը[215], երբ ներխուժեց Միջագետք, Օրոդեսը (պարթևների արքա Օրոդես Բ՝ Ք.ա. 57-38 թթ.) նրա մոտ՝ Սիրիա դեսպաններ ուղարկեց՝ մեղադրելով նրան ներխուժման համար և պահանջեց հայտնել պատերազմի պատճառները. միաժամանակ նաև Սուրենին (պարթև տաղանդավոր զորավար) զորքով ուղարկեց նվաճված և ապստամբած շրջանները, քանզի ինքը մտադիր էր արշավել Հայաստան, որը մի ժամանակ Տիգրանի (Տիգրան Մեծի) երկիրն էր, որպեսզի Արտավազդը (Արտավազդ Երկրորդ հայոց արքա՝ Ք.ա. 55-34)՝ Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագավորում էր (այստեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգնություն չուղարկի հռոմեացիներին։ Բայց Կրասսոսը պատասխանեց նրան, թե պատերազմի պատճառը կհայտնի Սելևկիայում (պարթև արքաների ձմեռային նստավայրը՝ Տիգրիսի աջ ափին, Տիզբոնի դիմաց, հանդիսանում էր Սելևկյան թագավորների հիմնադրած համանուն Սելևկիա քաղաքներից և հելլենիստական աշխարհի քաղաքային կենտրոններից մեկը)։ Եվ պարթևներից մեկը իր ձախ ափին մյուս ձեռքի մատներով խփեց ու նրան պատասխանեց, թե «ավելի հեշտ այստեղ (ափի մեջ) մազեր կբուսնեն, քան դու կլինես Սելևկիայում (Դիոն, 39. 16. 1-3)»։ Իսկ Կրասսոսի վախճանը այսպես է գրել. «Ասում են նրա բերանը հալած ոսկի լցրին՝ իբրև ծանակ» (Դիոն, 39. 27. 3-4)։

Ըստ նրա տեղեկությունների՝ Օգոստոս Օկտավիանոսի (Ք.ա. 27 թ. – Ք.հ. 14 թ.) օրոք հպատակ երկրները կառավարվում էին հռոմեական սովորույթի համաձայն, մինչդեռ դաշնակից երկրներին թույլ էր տրվում կառավարել իրենց հայրենի ավանդույթներով։ Եվ նա նպատակահարմար չէր գտնում ոչ այս մեկին որևէ բան ավելացնել, ոչ իսկ թույլ տալ որևէ նոր բանի տիրանալ, այլ ճշտորեն բավարարվել եղածով (54. 9. 1)։ Դիոնի վկայությամբ՝ Հայաստանում «մյուս հայերը (նկատի ունի հռոմեասեր հոսանքի հայ մեծամեծներին) մեղադրում էին Արտաշեսին (Արտավազդ II-ի ավագ որդին, Հայաստանի թագա-

[215] Մարկոս Լիկինիոս Կրասսոս (Ք.ա. 115-53) – Հռոմի աչքի ընկնող քաղաքական ու ռազմական գործիչ, Առաջին եռապետության (Ք.ա.60թ.) կազմակերպիչներից մեկը, Ք.ա. 55թ. կոնսուլ։ Ք.ա. 55թ. վերջերին նշանակվել է Սիրիա պրովինցիայի պրոկոնսուլ և Արևելքում հռոմեական զորքերի գլխավոր հրամանատար։ Ք.ա. 54 թ. գարնանը Կրասսոսը նախնական որոշ ռազմական գործողություններ է սկսել պարթևների դեմ։ Հենց այս ժամանակ Կրասսոսի մոտ՝ Ասորիք է ժամանել հայոց Արտավազդ II թագավորը։

վոր Արտաշես II-ի Ք.ա. 30-20 թթ.)։ Պատճառը պարզ է, քանզի նա իր հոր նենգադավ ձերբակալությունից հետո գլխավորեց հայ ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ հռոմեացիների։ Սա Արտավազդ II-ի եղերական սպանության վրեժը լուծում է՝ սրի քաշելով Հայաստանում մնացած բոլոր հռոմեացիներին» (54. 9. 1)։ Այս և հետագա անցքերը հանգամանորեն տրված են պատմագրի աշխատության մեջ։ Նրանք, ըստ պատմագրի, հռոմեասեր ուժերը դեսպանություն են ուղարկում Հռոմ՝ խնդրելով Հռոմում գտնվող Տիգրանին թագադրել Հայաստանում։ Սա Արտաշես II-ի կրտսեր եղբայրն էր, որին Անտոնիոսը գերեվարել և տարել էր Եգիպտոս, որտեղից Օկտավիանոսը փոխադրեց Հռոմ, որտեղ տասը տարի պահելուց հետո ուղարկեց Հայաստան՝ Արտաշես II-ին թափուր գահը զբաղեցնելու։ Օկտավիանոսը Հայաստան ուղարկեց Տիբերիոսին (կայսրի արևելյան հարցերում ամենամերձավոր խորհրդականը, ապա՝ նաև 14-37 թթ.՝ Հռոմի կայսրը), որպեսզի Արտաշեսին հեռացնի թագավորությունից և Տիգրանին հաստատի հայոց գահին։ Դիոն Կասսիոսի հաղորդման համաձայն՝ Տիբերիոսն այս պատրաստություններին համապատասխան ոչինչ չկատարեց, քանզի հայերն (հռոմեասերները) իրենք արդեն սպանել էին Արտաշեսին (Դիոն, 54. 9. 1-5)։ Բնական է, որ Արտաշեսը պետք է սպանված լիներ Հռոմի Օգոստոս կայսեր դրդմամբ։ Ըստ հռոմեական մեկ այլ պատմագրի՝ Հովսեպիոս Փլավիոսի (Ք.հ. 37- II դարի առաջին տասնամյակ) «Հրեական հնախոսություն» գրքի՝ Կլավդիոսը (Տիբերիոսը ապագա կայսր (14-37)) Օգոստոս կայսեր կողմից Ք.ա 20թ. ուղարկվել էր Հայաստան՝ լռեցնելու հակահռոմեական ապստամբությունը և Արտավազդ II-ի Հռոմում դաստիարակված կրտսեր որդուն՝ Տիգրան III-ին Արտաշեսի փոխարեն հայոց գահին բազմեցնելու համար (15. 105)։ Եվ այսպես, Տիբերիոս Կլավդիոսի հանդիսավոր թագադրությամբ Տիգրան III-ը Հայաստանում գահակալեց Ք.ա. 20-8 թթ.։ Այնքան կարևորություն է տրվել Հայաստանի հնազանդեցմանը, որ Օգոստոս կայսեր կտրած ոսկե և արծաթե դրամների մի կողմում դրոշմված է մեծ մասամբ Օգոստոսի գլուխը, իսկ մյուս կողմում գրված է՝ «Հայաստանն առնված» (Armenia capita), կամ քանդակված են Հայաստանի խորհրդանիշներ՝ հայոց թագավորի խույրը և կողքին կապարճ ու աղեղ կամ հայ զինվոր, որ աջ ձեռքում բռնած ունի նիզակ, իսկ ձախում՝ աղեղ[216]։

[216] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 287-288։

Դիոն Կասսիոսի աշխատությունից ենք տեղեկանում նաև, որ Տիգրան IV-ի (Ք.ա.8-5թթ., Ք.ա.2-1Ք.հ.)՝ բարբարոսների (կովկասյան լեռնականների) դեմ մղված պատերազմի ժամանակ սպանվելու, թագուհի Էրատոյի (Մեծ Հայքի թագուհին՝ 8-5, 2-1 և 6-11 թթ.) հայոց գահից հրաժարվելու, Հայաստանի գահը ոմն մեդացի Արիոբարզանեսին, ապա նրա որդուն՝ Արտավազդին անցնելու և վերջինիս իշխանությունը հայերի կողմից չճանաչվելու ու ապստամբելով սպանվելու մանրամասների մասին (Դիոն, 55. 10a. 4-6):

Շատ արժեքավոր են I դարի երկրորդ կեսի հռոմեական արքունիքի, պարթևա-հռոմեական հակամարտության և Հայաստանի քաղաքական անցքերի վերաբերյալ աղբյուրագիտական հավաստումները: Դիոնի երկում հաղորդվում է 58 թ. ամռանը Հռոմեական զորավար Կորբուլոնի կողմից Արտաշատը գրավելու և հիմնահատակ կործանելու, ապա Տիգրանակերտը 59 թ. վերջերին առանց դիմադրության (Դիոն, 62. 20. 1) գրավելու և այնտեղ ոմն Տիգրան VI-ին հայոց արքա կարգելու, 61 թ. հռոմեա-պարթևական զինադադարի (պարթևական երկրի արքա Վաղարշ I-ի հետ 51-75 թթ.) կնքման, Տիգրանակերտի պաշարումը դադարեցնելու և իր զորքերը Հայաստանից դուրս բերելու, նույն կերպ Կորբուլոնի՝ հռոմեական լեգեոնները դուրս բերելու և Տիգրան VI-ին գահընկեց անելու մասին (Դիոն, 62. 20. 4):

Ուշագրավ են հայ-պարթևական ուժերի և Կորբուլոնի գլխավորած հռոմեական զորքերի միջև Հայաստանին տիրելու համար ռազմական գործողությունների նկարագրությունները, որոնք վերաբերում են 61 թ. Հայաստանում մղվող պատերազմի ժամանակ հռոմեական նորանշանակ զորավար Պետոսի, 63 թ. Խարբերդի դաշտում՝ Հռանդեա կոչված վայրում, հռոմեական զորքերի ծանր պարտությանը և կապիտուլյացիային, նրան «լծի տակով անցկացնելուն»[217], Պետոսի բանակի ամոթալի՝ մեկ օրվա ընթացքում 40 հռո-

[217] Գետնի մեջ խրված երկու նիզակների վրա դրվում էր երրորդը, և հաղթվածները կռանալով անցնում էին նրա միջով՝ դեն գցելով իրենց զենքերն ու վերնազգեստը: Այս մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում հռոմեական մեկ այլ պատմագիր Տակիտոսը, ըստ որի՝ «Լուր էր պտտվում, որ լեգեոններն անց են կացել լծի տակով, պատմում էին և այլ դժբախտ պատահարների մասին, նաև այն, որ նման արարքներ հայերն էին գործել, որովհետև սրանք նախքան հռոմեական զորքերի հեռանալը մտել էին ամրացրած ճամբարը, շրջապատել էին ճանապարհները և նկատելով երբևիցե իրենցից խլված ծառաներին ու գրաստնե-

մեական մղոն (մոտ 60 կմ արագությամբ) փախուստին, «ամոթալի» հաշտությանը, այդ նույն վայրում երկու կողմերի միջև կնքված դաշնագրով Տրդատ Արշակունուն Մեծ Հայքի թագավոր ճանաչելուն (Դիոն, 62, 22, 1-4), նաև Տրդատին հայոց գահին բարձրացնելուն նվիրված արարողակարգերին:

Թագադրման նախնական արարողության վայր է ընտրվում Հռանդեան. «Այս վայրը հաճելի էր երկու կողմերին էլ. մեկին՝ հայպարթևներին, որովհետև այստեղ պաշարելով հռոմեացիներին՝ կապիտուլյացիայի ենթարկեցին ու բաց թողեցին իբրև ապացույց ողորմած վերաբերմունքի, իսկ մյուսին՝ հռոմեացիներին, այդ վայրը նախկինում յուրայինների կրած անպատվությունը ջնջելու հնարավորություն է տալիս» (Դիոն, 62. 23. 1-2): Այսինքն՝ կազմակերպվող փառահեղ հանդեսները ոչ այլ ինչ էին, քան Հռոմի ռազմական վարկը և քաղաքական հեղինակությունը փրկելու պատվավոր մի միջոց: «Այստեղ (Հռանդեայում) բարձր բեմ պատրաստվեց, և դրա վրա կանգնեցվեցին Ներոնի պատկերքը (կիսանդրին), և Տիրիդատեսը (հռոմեական աղբյուրներում այդպես էին կոչում Տրդատին) հայերի, պարթևների ու հռոմեացիների բազմության առաջ մոտեցավ դրանց ու խոնարհվեց, այնուհետև զոհ մատուցելով դրանց և հանդիսավոր կոչերով, իր գլխից դիադեման (խույրը) վերցրեց ու դրեց կիսանդրու առջև» (Դիոն, 62. 23. 3-4) ու հանդիսավոր կերպով խոստացավ, որ թագը ետ կստանա Ներոնի ձեռքից Հռոմում:

Տրդատի ճանապարհորդությունը Հռոմ մանրամասն նկարագրվել է Դիոն Կասսիոսի 63-րդ գրքում (63. 1-7): Հայաստանը Հռոմի ենթակա և «դաշնակից» երկիր ու Տրդատին հայոց թագավոր ճանաչելը Հռոմի կողմից Ներոնը համարեց հաղթանակ, որով պատիվների արժանացավ, «մի շարք անգամ իմպերատոր հռչակվեց և հաղթահանդես կատարեց». Հռոմի ձիարշավարանում անգամ Ներոնի մասնակցությամբ կիթառահարների մրցություն կազմակերպվեց (63. 1. 1-2): Հռոմի դիվանագիտության հաղթանակին և միջազգային հեղինակությանը առավել փայլ տալու համար շքեղ հանդիսություններ անցկացվեցին Հռոմում՝ ի պատիվ Տրդատի թագադրման: Ըստ Դիոնի՝ քաղաքներն ու ժողովուրդները, որոնց միջով Տրդատը և իր շքա-

---

րին՝ վերցնում ու տանում էին: Նրանք զոռով վերցնում էին հագուստեղենն ու պահած զենքերը, իսկ վախեցած զինվորները զիջում էին, որպեսզի կռվի ո՛չ մի առիթ չծագեր» (Տակիտոս, XV, 15-16):

խումբն անցնում էին, նրանց ընդունում էին հանդիսավոր կերպով և մեծ պատվով ու ցնծությամբ: Ուղևորության ամբողջ ծախսը, որը կազմում էր օրական մոտ 200.000 դինար-դրաքմե կամ 800.000 սեստերց (մոտ 200.000 ֆրանսիական ոսկի ֆրանկ) հոգում էր կայսերական գանձարանը (63. 2. 1-2): Ուղևորությունը տևեց 9 ամիս, մինչև Իտալիա հասնելը Տրդատն ու նրա կինը գնում էին ձիով, ապա՝ մինչև Հռոմ՝ կայսեր կողմից ուղարկված երկձի կառքերով: Հանդիպումը կայացավ նախ Նեապոլում: «Նա (Տրդատ Արշակունին) Ներոնին մոտենալիս հրաժարվեց մինչև իսկ ակինակեն (դաշույն) մի կողմ դնել, թեպետև իրեն զգուշացրել էին, այլ գամերով այն ամրացրեց պատյանին, հետո ծնկի եկավ ու ձեռները խաչաձևեց և նրան կոչելով իր վեհապետը՝ երկրպագեց» (Դիոն, 63, 2, 4): Հ. Մանանդյանի կարծիքով՝ Տրդատի այս խոնարհումը Ներոնի առջև պարթևների և, հավանորեն, նաև հայերի մեջ ընդունված հպատակության ու հավատարմության հավաստիացումն էր, և որոշ ծիսակատարություն էր, որ համապատասխանում էր միջնադարյան Եվրոպայի hommagium-ին (hommage) և Ռուսաստանի челобитье-ին[218]: Այնուհետև ճոխ հյուրասիրություն ու պատիվներից զատ՝ Պուտեոլում կազմակերպեցին գլադիատորական մենամարտեր (կրկեսային խաղեր, սուսերամարտեր): Սովորույթի համաձայն՝ արարողությունը կազմակերպում, ֆինանսավորում և ղեկավարում էր հատուկ պաշտոնյա անձ, որին անվանում էին Ագոնոթետես: Ըստ պատմագրի՝ հանդիսության ժամանակ «Տիրիդատեսը, իր բարձրադիր աթոռից նետահարեց գազաններին և միանգամից մեկ նետով երկու ցուլ վարսեց (գետին) և սպանեց» (63. 3. 1-2): Նեապոլյան այս հանդիսություններից հետո Ներոնը Տրդատին տարավ Հռոմ, որտեղ կատարվեց թագադրության ծեսը Ֆորումում՝ Հռոմ քաղաքի վարչական, քաղաքական, կրոնական ու առևտրական կյանքի գլխավոր հրապարակի կենտրոնում: Ի դեպ, այն կառուցվել է Ք.ա VI դ. սկզբներին Պալատինյան և Կապիտոլյան բլուրների ստորոտում: Այստեղ էին գտնվում դատարանը, դրամահատարանը, պետության արխիվը, գլխավոր տաճարները, այստեղ էր իր նստաշրջաններն անցկացնում սենատը (ծերակույտ): «Ամբողջ քաղաքը զարդարված էր տոնականորեն՝ հրավառության ճրագներով և պսակներով, մարդկանց հոծ բազմություններով: Առանձնա-

[218] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 342:

պես բազմամարդ էր Ֆորումը: Կենտրոնում, իրենց աստիճանների համեմատ, կանգնած էին քաղաքացիները, սպիտակազգեստ և դափնեզարդ, իսկ մնացած բոլոր տեղերում՝ պայծառորեն հանդերձավորված զինվորները, որոնց զենքերն ու դրոշները փայլատակում էին …: Լուսաբացին հրապարակ մտավ Ներոնը՝ հաղթահանդեսի զգեստ հագած, սենատի և պրետորականների հետ ու բարձրանալով բեմ, նստեց կայսերական գահավորակին. Տիրիդատեսը և նրա ուղեկիցներն անցան երկուստեք կանգնած հոպլիտների շարքերի միջով ու մոտենալով բեմին՝ երկրպագեցին նրան, ինչպես նախկինում»: Նա (Տրդատը) խոսեց այսպես. «Ես, ո՜վ վեհապետ, Արսակեսի (խոսքը պարթև Արշակունիների նախահոր՝ սկյութական պարն կամ ապարն ցեղի առաջնորդ Արշակի մասին է. պարթևական բոլոր թագավորները կրում էին «Արշակ» տիտղոսը) հետևորդն եմ Վոլոգեսոս (Վաղարշ Ա՝ Պարթևստանի թագավոր) և Պակորոս (Բակուրի՝ Ատրպատականի թագավոր) թագավորների եղբայրը, իսկ քո՝ ծառան: Ու եկել եմ ես դեպի քեզ՝ իմ աստծուն երկրպագելու, ինչպես Միթրային (իրանահնդկական դիցարանի գլխավոր աստվածներից մեկն էր, կյանք պարգևող և ցերեկային լույսի աստվածությունը), և թող ինձ համար կատարվի այն, ինչ դու ինքդ կամենաս, քանզի դու ես իմ վիճակը և իմ բախտը»: Ներոնը նրան տալիս է հետևյալ պատասխանը. «… Ես քեզ դարձնում եմ Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ նրանք հասկանան, թե ես կարող եմ թագավորություններ և՛ վերցնել, և՛ պարգևել» (63. 5. 1, 3): Տրդատին նստեցնում է գահի վրա մի աստիճան ցածր և գլխին դնում հայկական թագը: Ներկաները ցնծագին աղաղակներով ողջունեցին հայոց թագավորին: Այնուհետև սենատի հատուկ որոշմամբ թատերական շքեղ հանդիսություն կայացավ Պոմպեոսի ոսկեզօծ մեծ թատրոնում, որի համար էլ այդ օրը կոչվեց «ոսկե»: Արևից պաշտպանվելու համար գլխավերևում պարզած կերպասե վարագույրները ծիրանագույն էին, դրանց մեջտեղում ասեղնագործված էր Ներոնի պատկերը՝ ռազմակառքը վարելիս, իսկ նրա շուրջը փայլփլում էին ոսկե աստղերը: Ապա տեղի ունեցավ շքեղ խրախճանք (Դիոն, 63. 6. 1-4): Պատմագրի հաղորդմամբ, այս հանդիսություններից զատ, «մի անգամ Տիրիդատեսը պանկրատիոն (մրցություն ըմբշամարտի և բռնցքամարտի տարրերից կազմված մենամարտի մի տարատեսակի) դիտելիս, տեսնելով, որ մենամարտողներից մեկը վայր ընկնելուց հետո ծեծվում էր հա-

կառակորդի կողմից, բացականչեց. «Մարտն անարդար է, քանզի արդարացի չէ ընկնողին ծեծելը» (63. 7. 1):

Թագադրության տոնակատարությունները վերջացնելուց հետո հայոց թագավորը, Դիոն Կասսիոսի հավաստմամբ, Ներոնից ստացավ «հինգ հազար բյուր դրաքմե», այսինքն՝ 50 միլիոն դրաքմե, որը հավասար է 200 միլիոն հռոմեական սեստերցի կամ 50 միլիոն ոսկի ֆրանկի, ինչպես նաև վարպետներ, մի մասին էլ համոզելով փողի միջոցով՝ 59 թ. Կորբուլոնի կողմից կործանված Արտաշատի վերաշինության համար: Վերաշինված Արտաշատին տրվեց Ներոնեա անվանումը (63. 7. 1-2): Սակայն հայերը չընդունեցին իրենց համար խորթ անվանումը, և Հայաստանի վերականգնված մայրաքաղաքը շարունակում էր նախկինի պես կոչվել Արտաշատ:

Հռոմի կայսրերի ձեռքով հայոց թագավորների ընտրության և նշանակման հաղթահանդեսի մի տեսարան է քանդակվել Հռոմի կայսեր Տրայանոսի (98-117թթ.) կոթողի վրա (68. 19. 1-5), հետագայում այն զետեղել են Կոստանդիանոս Մեծի հաղթակամարի վրա, երբ հայոց արքա Պարթամասիրիսը (113-114թթ.) թագը դնում է Տրայանոսի ոտքերի առջև՝ նրա ձեռքով թագադրվելու համար: Սա խորհրդանշում էր առանց կռվի երկիր նվաճել, «քանզի նրանք առանց կարոսի (հյուսված պսակ, որով հին Հունաստանում զարդարում էին Իսթմական և Պյութիական խաղերում հաղթողներին) անարյուն հաղթանակ էին համարում այն, որի համար էլ կայսրերը մեծարվում էին շնորհանդեսներով՝ իմպերատոր անվանվելով»:

Դիոն Կասսիոսը հանգամանալի տեղեկություններ է հաղորդում Հայաստանի II-III դդ. հայ-հռոմեական քաղաքական անցքերի վերաբերյալ:

Այսպիսով՝ հռոմեա-պարթևական փոխզիջման շնորհիվ, որ հետևանք էր, անշուշտ, Հռանդեայի մոտ հռոմեացիների ամոթալի պարտության ու դաշինքի, Հայաստանում վերջնականապես հաստատվեց պարթև Արշակունիների իշխանությունը և Հայաստանն այնուհետև դարձավ Արշակունիների երկրորդ թագավորությունը, որը շատ շուտով հայացավ՝ շուրջ չորս դար (66-428թթ.) լինելով հայոց պետականության փառավոր շրջաններից մեկը:

Նկատենք, որ Տրդատ Ա-ի հայասիրական քաղաքականությունը, պետական մեծ գործչի կերպարը, ինչպես նաև հայոց Զենոն թագավորը (18-34 թթ.) փառաբանվել են «Հայոց երգն վիպասանաց»-

ի համապատասխան հատվածներում և կոչվել են Արտաշիսյան թագավորության հիմնադրի անունով Արտաշես՝ որպես հայոց թագավորների տիտղոս: Սակայն Մովսես Խորենացու[219] և Ագաթանգեղոսի[220] մոտ սխալմամբ Տրդատ Ա-ի երգով փառաբանումը վերագրվել է Տրդատ Մեծին (298-330 թթ.):

§ 2.3.3. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅ-ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Թեև Կասսիոսը հունական և հռոմեական այլ պատմիչների համեմատ ժլատ է տվյալ ժամանակաշրջանի ժողովուրդների ազգագրական պատկերը ներկայացնելու առումով, բայց և այնպես որոշ տեղեկություններ հաղորդել է: Մասնավորապես, պահպանվել են ուշագրավ տեղեկություններ հայկական արքայական զգեստների, հագուկապի վերաբերյալ: Այսպես, Արտաշատը Պոմպեոսին հանձնվելու իրադարձությունը նկարագրելիս պատմիչը նշում է, որ «Տիգրանը (Տիգրան Մեծը) զգեստավորվել էր այնպես, որ դրսևորվեր և՛ իր նախկին շքեղությունը, և՛ այժմյան խոնարհ վիճակը, որպեսզի նրան արժանի երևա թե՛ հարգանքի և թե՛ կարեկցանքի: Քանզի նա (քաղաքավարության համար) իր վրայից հանել էր սպիտակաշերտ (մեջընդմեջ սպիտակ) խիտոնը (պատմուճան, որ սև գոտիով մեջքին կապվող հագուստն էր) և համակ ծիրանի կանդիսը (թևերով վերնազգեստ), գլխին շարունակեց կրել տիարան (խույրը) և անադեման (ապարոշը)» (Դիոն, 36. 52. 1-4): Արքայի թագավորական այս հագուստները լավագույնս պատկերված են Տիգրան Մեծից մեզ հասած դրամների վրա դրոշմված, որոնք արքայի թագավորական իշխանության տարբերանշաններ էին:

Մեկ այլ առիթով էլ նկարագրելով հայ Արշակունի արքայատոհմի հիմնադիր Տրդատ Ա-ի՝ ընտանյոք և 3000 հոգուց բաղկացած շքախմբով դեպի Հռոմ կատարած ուղևորությունը, գրում է, որ

---

[219] Տե՛ս **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփղիս, 1913, II, ծդ, էջ 185:

[220] Տե՛ս **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչէան և Ս. Տ. Կանայեանց, Տփղիս, 1909, ԺԱ, էջ 71:

«Տրդատի կինը ընկերակցում էր ամուսնուն. համաձայն իր զարմի սովորության՝ գլխին դրած ուներ ոսկե խույր (սաղավարտ) փոխանակ գլխի քողի, որպեսզի ոտնահարած չլինի (մարդկանց) չերևալու իր հայրենի սովորույթը» (Դիոն, 63. 2. 2-3):

Պատմագիրը պատերազմական գործողությունները նկարագրելիս ակնարկում է նաև գործածվող փոխադրության միջոցների և կապի միջոցների մասին: Նա գրում է. «Այդ օրերին ձիերով, ուղտերով, ամեն տեսակ ուղեբեռներով տղամարդիկ և կանայք խառնիճաղանջ ընթանում էին, նրանցից ոմանք, նժույգներ հեծած, մյուսները՝ ռազմակառքերի կամ ծածկած սայլերի և սայլակառքերի վրա», իսկ պարթևները, զրադաշտական կրոնի համաձայն, խուսափում էին ծովային ճանապարհորդություն կատարելուց: Այսպես, Տրդատի և նրա շքախմբի ճանապարհորդությունը մինչև Իտալիա իրականացվում է ձիերով, իսկ Իտալիա հասնելուն պես՝ ձիակառքերով (Դիոն, 63. 2. 2-3):

Դիոնը գիրք 36-ի, գլ. 49. 1-4 հատվածում էլ արձանագրում է շեփորահարների ազդանշանով, կամ պղնձե իրերին քարով հարվածելով՝ տեղեկացնում էին սպառնացող վտանգի մասին: Դիոնը մի քանի անգամ ակնարկում է ժամանակի միջազգային ճանաչման արժանացած **դրաքմե** դրամական միավորի մասին: Օրինակ՝ խոսելով Մակրինոս կայսեր (217-218թթ.) միջագետքյան ձախողված արշավանքի մասին՝ նշում է, որ այն Հռոմի վրա նստեց 5 հազար բյուր դրաքմե (79. 27. 1-2): 5 հազար բյուրը հավասար է 50 միլիոն դրաքմե, հավասար 200 միլիոն հռոմեական սեստերց, հավասար 50 միլիոն ոսկե ֆրանկ: Հայաստանը Հռոմից ամենամյա գումար էր ստանում Կովկասի հյուսիսային սահմանների ապահովությունը կազմակերպելու համար:

Դիոնի մոտ կա ակնարկ Զելա ոչ մեծ քաղաքում՝ պոնտական Ամասիա քաղաքի հարևանությամբ Անահիտ դիցուհու տաճարում կատարված արարողությունների մասին (40. 48. 1), որի վերաբերյալ առավել հանգամանալի նկարագրություններ է թողել Ստրաբոնը (XI, 14, 16: XII, 3, 27): Կասսիոսի տեղեկացմամբ՝ Անահիտ դիցուհուն պաշտում էին նաև հայերը: Իսկ Ստրաբոնի տեղեկությամբ՝ հնում այն եղել է պարսկական աստվածների սրբավայր:

Դիոնը իր աշխատության մեջ ակնարկել է հռոմեական Սատուռնալիա տոնի մասին (36. 54. 2): Սատուռնալիայի տոնախմբությունները Հռոմում կատարվում էին ամեն տարի բերքահավաքից հե-

տո՝ դեկտեմբերի 17-ին, և տևում էր 7 օր։ Սա Կրոնոս աստծուն (հույների Զևսի հայրը, որը աստվածների միջև գերիշխանության համար մղած պայքարում պարտվեց իր որդուց) նվիրված տոն էր։ Հունական Կրոնոսը, որը նույնականացվել էր լատինական Սատուռն աստվածության հետ, սկզբնապես եղել է հողագործությանը հովանավորող աստվածություն։ Սա համապատասխանում էր հայոց մեջ այգեգործության, պտղաբուծության և հացաբույսերի ու բերքի տոների հովանավոր աստվածությունների՝ Վանատուր-Ամանորին, որի մեհյանը գտնվում էր Բագրևանդ գավառի Բագավան դիցավանում։ Նրանց տոնը կատարվելիս է եղել գարնանը (մարտ) կամ ամռանը (օգոստոս)՝ Նավասարդի 1-6-ը տևողությամբ։ Նրանց մասին առաջին ու գրեթե վերջին ուղղակի տեղեկության հաղորդողը Ագաթանգեղոսն է[221]։

Ըստ Դիոն Կասսիոսի հաղորդումների՝ հունահռոմեական աշխարհում մեծ նշանակություն էր տրվում բնության տարբեր երևույթների, նշանների և հավքերի թռիչքի հիման վրա գուշակություններ անելու շնորհին։ Կարծում էին, թե այդ նշաններն ուղարկվում են աստվածների կողմից՝ կյանքում մարդկանց առաջնորդելու համար։ Հռոմեական պատմագիրը հետաքրքիր նկարագրություններ է թողել (39. 17. 1-3) Կրասսոսի անհաջողությունները կանխագուշակող նախանշանների վերաբերյալ. «Հռոմի վրա բազմաթիվ վատ նախանշաններ հայտնվեցին, քանզի բվեճներ երևացին և գայլեր, իսկ շները թափառում էին ու ոռնում, և արձանների մի մասը քրտնել էր, մյուս մասը՝ շանթահարվել, մինչդեռ իշխանությունները մասամբ գժտության, բայց և առավել ևս հավքերի ու երկնային նշանների պատճառով հազիվ յոթերորդ օրը այդ մասին հայտնեցին»։

Դիոնի աչքից չեն վրիպում հայ-պարթևական կենցաղի, սովորույթների որոշ նմանություններ։ Նա գրում է. «Հայերի երկիրն էլ դժգոհ էր հռոմեացիների գերիշխանությունից և պատրաստ էր հարելու պարթևներին, որոնք թե՛ հարևաններ էին և թե՛ սովորույթներով մոտիկ» (Դիոն, 39. 28. 4)։ Ապա խոսում է պարթևների և հայերի ձիավարժ ժողովրդներ լինելու մասին (Դիոն, 63. 1-7)։ Ըստ պատմագրի՝ հայտնի էին հայ-պարթևական սովորույթի ուժով մերձավորների ամուսնությունների օրինակներ։ Այսպես՝ Տիգրան III-ին հաջորդած նրա որդին՝ Տիգրան IV-ը, ամուսնացած էր իր խորթ (մորից տարբեր) քրոջ Էրատոյի հետ, որի հետ համատեղ կառավարում էին երկիրը։

[221] Տե՛ս **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1882, էջ 482։

Ուշագրավ է, որ Արտաշիսյան տոհմի այս թագավորները դրամների վրա իրենք իրենց Տիգրան Մեծի նման անվանում էին «Արքայից արքա», «Թագավոր թագավորների»: Փարիզի ազգային գրադարանում պահվում է Տիգրան IV-ի դրամներից մեկը, որի մի կողմում դրոշմված է Տիգրան IV-ի պատկերը, որի շուրջը գրված է «Թագավոր թագավորների Տիգրան», իսկ դրա մյուս կողմում դրոշմված է Էրատո թագուհու պատկերը՝ «Էրատո՝ Տիգրան թագավորի քույր» մակագրությամբ[222]: Դիոն Կասսիոսի վկայությամբ՝ Տիգրան IV-ը զոհվում է «պատերազմի մեջ բարբարոսների դեմ», ըստ երևույթին, Կովկասյան լեռնականների դեմ, իսկ նրա քույրն ու միաժամանակ կինը՝ Էրատոն, հրաժարվում է իշխանությունից (Դիոն, 55. 10a. 5): Հակված չենք Դիոնի՝ Արտաշիսյան վերջին թագավորների մասին հաղորդած տեղեկություններին անդրադառնալ՝ կրկնությունից խուսափելու նպատակով:

Պատմիչը պարթևների զինվածության և ռազմավարության մասին ևս կարևոր տեղեկություններ է հաղորդում. «Վահաններ նրանք բոլորովին չեն օգտագործում. նրանց բանակը կազմված է հեծյալ աղեղնավորներից և (հեծյալ) նիզակակիրներից, որոնք մեծ մասամբ զրահապատված են: Նրանց հետևակը փոքրաթիվ է՝ բաղկացած ամենաչքավորներից, բայց սրանք ևս նետաձիգներ են, և նրանք մանկությունից մարզվում են, և երկինքն ու երկիրը նպաստում են այս բոլորին: Քանզի երկիրը, մեծ մասամբ հարթավայրային լինելով, լավագույնս սնում է ձիերին և շատ կարևոր է ձիավարության համար: Ուստի և նրանք նույնիսկ պատերազմներին ամբողջ երամակներ են քշում: Նրանք անհաղթահարելի են թե՛ իրենց երկրում և թե՛ նմանվող այլ երկրներում: Քանզի նրանք, արդեն սովորած լինելով, կարողանում են տանել արևը, որը առավել կիզիչ է, և հակամիջոցներ են հայտնագործում ջրի սակավության և դրա հայթայթման հետ կապված դժվարությունների դեմ. ուստիև այս պատճառով էլ իրենց երկիրը ներխուժողի դեմ նրանք հեշտությամբ կարողանում են կռվել» (Դիոն, 39. 15. 1-6):

Ընդհանրացնելով պատմագիտական տվյալները՝ կարելի է ասել, որ հին հայերի համակրությունը միշտ եղել է պարթևների կողմը, որովհետև նրանք իրենց բարքերի, նիստուկացի, կրոնի և քաղաքական ու զինվորական կազմակերպության նմանությամբ մոտ են եղել պարթևներին ու նաև սրանց հետ կապված են եղել խնամիական կապերով:

---

[222] Տե՛ս **Հ. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 293:

§ 2.3.4. ՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐՆ ԱՅԼ ՑԵՂԵՐԻ ԴԵՄ

Ուշագրավ ակնարկների ենք հանդիպում նաև Հայաստան երկիր ներխուժած օտար, ռազմատենչ որոշ ցեղերի մասին: Օրինակ՝ գրքի 69. 15. 1 հատվածում հիշատակում է, թե «ալանները – մասագետներ են», որ հարձակումներ են գործում Աղվանքի, Մեդիայի և մասամբ էլ Հայաստանի վրա: Գիրք 72. 14. 2 հատվածում էլ խոսում է մաքելոնների և հենիոքների մասին, որոնք ապրում էին Սև ծովի հյուսիսարևելյան ափին՝ Պարխարյան լեռների ծովահայաց փեշերին, ըստ հին հայկական աղբյուրների՝ Խաղտիքում, ասիական Սարմաթիայում, և, սկսած Ք.հ. I դարից, որպես Հռոմին «դաշնակից» ցեղեր, գործիք էին դարձել հռոմեական դիվանագիտության ձեռքին և վերջինիս դրդմամբ հաճախ ավերիչ արշավանքներ էին գործում Հայաստանի և Պարսկաստանի վրա[223]: Պատմիչը հիշատակում է Միջագետքի ոչ մեծ երկիր արաբական Հատրենե փոքրիկ թագավորությունը՝ Հատրա մայրաքաղաքով: Այս անվանումը կապված է Հելիոս (Արև) աստվածության անվան հետ (Դիոն, 68. 31. 1-2): Այդ թագավորությունը գտնվում էր Ադիաբենե և Օսրոյենե թագավորությունների միջև, որ Տիգրան Մեծի օրոք մտնում էր հայկական թագավորության կազմի մեջ: «Սրանց՝ արաբ «բարբարոսների» հեծելազորը, ամենուրեք ուժգին և մեծ արագությամբ էր հարձակումներ գործում: Հատրացիներն էլ իրենց նետահարումներով շատ հեռու էին հասնում, քանզի նրանք իրենց նետերի մի մասն արձակում էին մեքենաների միջոցով, երկու նետ միանգամից էին արձակում և բազում ձեռքեր և բազում աղեղներ միանգամից էին նետում և նաև իրենց քաղաքը պաշարողների վրա կուպրալից նավթ (լցնում)» (Դիոն, 75. 11. 3-4):

§ 2.3.5. ՀԱՅ ԱՐՔԱՆԵՐԻ ԵՎ ԻՐԵՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԿԵՑՎԱԾՔԸ ՀՋՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՇՓՈՒՄՆԵՐՈՒՄ

Դիոն Կասսիոսի հավաստմամբ՝ հռոմեական արևելյան արշավանքների հրամանատար Անտոնիոսը Ք.ա. 34 թ. աշնանը Հայաս-

[223] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 785:

տանը նվաճելու առթիվ որոշեց շքեղագույն հաղթահանդես կազմակերպել Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Անտոնիոսը «քաղաք մտավ մարտակառքով,– գրում է պատմագիրը,– բացի այն ամենից, առատ ավարից, որ շնորհեց Կլեոպատրային (Եգիպտոսի թագուհին և Անտոնիոսի կինը), նրան բերեց նաև Արմենին (հայոց արքա Արտավազդ II-ին՝ Ք.ա. 55-34 թթ.) իր ընտանյոք հանդերձ (հայոց թագուհուն և երկու որդիներին՝ արքայազններ Տիգրանին ու Արտավազդին): Հայոց արքային Անտոնիոսը խաբեությամբ՝ իբր թե իրենց զավակներին ամուսնացնելու նպատակով, բանակցությունների փոխարեն ձերբակալեց և ի պատիվ նրա թագավորական կոչման՝ շղթայեց ոսկե կապանքներով»: Դիոնի հավաստմամբ՝ «դրանք բնավ չէին մեղմացնում Անտոնիոսի ուխտադրուժ վարմունքը (Դիոն, 49. 39. 2-6, 49. 40. 1-3): Իսկ «Կլեոպատրան բազմության մեջտեղ նստած էր արծաթապատ բեմում՝ ոսկեզօծ գահավորակի վրա: Սակայն բարբարոսները (հայոց արքա Արտավազդը և նրա ընտանիքը) թեպետև նրանց շատ էին ստիպում և շատ էին հորդորում ու հուսադրում՝ տալով ազատության խոստում, այդուհանդերձ, ո՛չ աղերսեցին Կլեոպատրային, և ո՛չ էլ երկրպագեցին (գլուխ չխոնարհեցին): Եվ անգամ հրաժարվեցին Կլեոպատրային անվանել թագուհիների թագուհի, նույնիսկ թագուհի չանվանեցին, պարզապես իր անունով կոչեցին, նրանք վեհամիտ մարդկանց համբավ շահեցին, բայց և նույն այդ պատճառով անգութ վերաբերմունքի, խիստ չարչարանքների ենթարկվեցին» (Դիոն, 49. 40. 1-3): Կլեոպատրան այնքան փառասեր ու դաժան էր, որ չհանդուրժեց այդօրինակ վերաբերմունքը, նրանց զնդան նետեց: «Այդ նենգ քայլով, ըստ Դիոնի, Անտոնիոսը մեծապես վարկաբեկել էր հռոմեական ժողովրդի հեղինակությունը» (Դիոն, 50. 1-4):

Մենք հայոց արքայի վեհության մասին հաղորդման հանդիպում ենք նաև Տիգրան Մեծի՝ հռոմեական զորավար Պոմպեոսի զորակայանը մտնելու արարողակարգում: Տիգրան Մեծը «գլխին կրում էր ոսկեհուռ խույրը (թանկագին քարերով զարդարված պսակաձև գլխանոցը՝ իր բարձր աստիճանի) և ապարոշը (գլուխը կապելու փաթթոցը) և առանց ձիուց իջնելու էր ցանկանում մտնել զորակայան, որի իրավունքը չուներ՝ հռոմեական ռազմական սովորույթի համաձայն: Արդ Պոմպեոսը, իր մականակիրներից մեկին ուղարկելով հայոց արքային ընդառաջ, ձիուց վար իջեցնել տվեց, որովհետև

նա, իրենց սովորության համաձայն, հեծյալ վիճակում էր մտել ամրություն… (Պոմպեոսը) նստեցրեց հայոց արքային իր կողքի բազմոցին և մխիթարելով ասաց նաև, թե նա ոչ միայն չի կորցրել հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել հռոմեացիների բարեկամությունը» (Դիոն, 36. 52. 1-4): Խույրը (բնագրում՝ տիարա) և ապարոշը (բնագրում՝ անադեմա) հայոց արքայի թագավորական իշխանության տարբերանշաններն էին, որ հայոց արքան չհանեց գլխից: Տիգրան Մեծը, ըստ Դիոն Կասսիոսի հավաստումների, ո՛չ միայն պահպանեց իր պետության բուն սահմանները, այլ նաև Հյուսիսային Միջագետքը, Կորդուքը, «արքայից արքա» տիտղոսը: Այդ տիտղոսը, ըստ մեր աղբյուրի, Պոմպեոսը փառասիրությունից մղված, «հակառակ ընդունված կարգի, շնորհեց գերեվարած Տիգրանին (Կրտսերին), երբ ինքը Հռոմում հաղթահանդեսը տոնեց» (Դիոն, 37. 6. 1-3): Վերջինս իրավունք չուներ կրելու այն, որովհետև երբեք էլ գահ չէր բարձրացել: Հետևաբար այդ տիտղոսի օրինական կրողը պետք է շարունակեր մնալ Տիգրան Մեծը, որի նկատմամբ այնքան մեծարանքով էր վերաբերվել զորավար Պոմպեոսը[224]:

Մեկ այլ դրվագում, երբ Տրդատը գնում էր ներկայանալու Ներոնին, նրան հրամայեցին, որ սուրը վրայից հանի, ինչպես այդ ընդունված էր կայսերական ընդունելությունների ժամանակ: Սակայն նա հրաժարվեց այդ անել և սուրը գամերով ամրացրեց պատյանին: Մոտենալով կայսեր՝ նա խոնարհվեց նրա առջև և մի ծնկի վրա չոքած ու ձեռքը կրծքին խաչաձև բռնած՝ նրան անվանեց վեհապետ (Դիոն, 63. 1. 1-7): Կարելի է ենթադրել, որ Տրդատի այս խոնարհումը Ներոնի առջև պարթևների և հավանորեն նաև հայերի մոտ ընդունված հպատակության և հավատարմության հավաստիացում էր իբրև:

Ինչպես ասվեց վերը, Դիոն Կասսիոսը գ. 63-ում Տրդատի և նրա շքախմբի ուղևորությունը ներկայացնելիս նշում է, թե (հայոց երկրի

---

[224] «Արքայից արքա» տիտղոսը մինչև Տիգրան Մեծը կրում էին պարթև Արշակունի թագավորները՝ սկսած Միհրդատ I-ից (Ք.ա. 171-138 թթ.): Սակայն, երբ Ք.ա. 87-86 թթ. Տիգրան Մեծը ջախջախեց պարթևներին և գրավեց «Յոթանասուն հովիտները», Մարաստանն ու Միջագետքը, պարթևական թագավոր Գոտարզ I-ը (Գոդերձ՝ Ք.ա. 87-80 թթ.) ոչ միայն ընդունեց Հայաստանի գերիշխանությունը, այլև հրաժարվեց «արքայից արքա» տիտղոսից՝ հօգուտ Տիգրան Երկրորդի: Այս տիտղոսը շարունակում էին կրել նաև հայոց Արտավազդ Երկրորդ, Արտաշես II (30-20 թթ.) և Տիգրան IV (Ք.ա. 8-5, 2-1 թթ.) արքաները (Տե՛ս **Հ. Մանանդյան,** Տիգրան Երկրորդը և Հռոմը, Ե., 1940, էջ 49):

նորընծա թագավոր Տրդատ I-ը) Տիրիդատես-Տրդատը թե՛ տարիքով, թե՛ գեղեցկությամբ և թե՛ ծագումով ու խելքով ծաղկուն վիճակում էր, և նրա ամբողջ շքախումբն ու արքունի հանդերձանքը ուղեկցում էր նրան. նրանց թե՛ քաղաքներն էին դիմավորում տոնազարդ և թե՛ ժողովուրդը՝ բարձրագոչ և հրճվագին, և ամբողջ պարենը նրանք ստանում էին անվճար (63. 2. 2-1): «Նեապոլիսում (Նեապոլում) նա Ներոնին մոտենալիս հրաժարվեց մինչև իսկ ակինակը (կարճ թուր, որը տղամարդիկ կրում էին դաշույնի նման իրենց գոտկատեղում) մի կողմ դնել, թեպետև իրեն պատվիրել էին, այլ գամերով ամրացրեց պատյանին…, հետո նա ծնկի եկավ ու ձեռները խաչաձևեց, երկրպագեց վեհապետին» (63. 3. 1):

§ 2.3.6. ԱԿՆԱՐԿ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԶՈՐԱՇԱՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուշագրավ են նաև Դիոնի տեղեկությունները որոշ տիտղոսների, պաշտոնների և զորքերի դասավորությունների վերաբերյալ: Հռոմի Տրայանոս կայսերը (98-117 թթ.) տրված **Պարթիկոս** տիտղոսը բառացի նշանակում է «պարթևական»: Այս հաղորդումը արժեքավոր է այն տեսանկյունից, որ Արտաշատում հայտնաբերված լատիներեն արձանագրության մեջ ևս Տրայանոսի բազում տիտղոսների շարքում նշված է նաև այս տիտղոսը, որով ճշտվում է այդ արձանագրության թվականը՝ 116 թ.[225]:

Դիոն Կասսիոսի գրքի տարբեր հատվածներում հանդիպում ենք մի քանի պաշտոնների անվանումների, որոնց բացատրությունը կարող է օգտակար լինել ուսումնասիրողների, ընդհանուր առմամբ ընթերցողների համար:

Իմպերատոր – Սկզբնապես այն չի ունեցել հետագայի կայսր իմաստը, այլ եղել է պատվո տիտղոս, որ զորքը շնորհում էր իր հրամանատարին ռազմադաշտում մեծ հաղթանակներից հետո: Օգտագործվել է նաև առավել լայն առումով և տրվել ռազմական ու դատական լիիրավ իշխանությամբ օժտված զորահրամանատարներին:

---

[225] Տե՛ս **Բ. Առաքելյան,** Լատիներեն արձանագրություններ՝ Արտաշատ մայրաքաղաքից: ՊԲՀ, 1967, № 4, էջ 302-311:

Պրետոր – սա վարում էր քաղաքացիական դատական գործերը: Սկզբնապես համարվում էր կոնսուլների և դիկտատորների տիտղոս՝ անձ, որին պատկանում էր դատական գերագույն իշխանությունը, իսկ պրովինցիների կազմակերպումից հետո՝ նաև դրանց կառավարումը:

Լեգատ – ուղարկված դեսպան, նաև զորավարների, կուսակալների օգնական:

Մականակիրներ – այսպես էին կոչվում Հին Հռոմում բարձրաստիճան պաշտոնյայի առջևից գնացող հատուկ ծառայող անձինք, որոնք, իբրև իշխանության տարբերանշան, տանում էին ձողիկների մի կապոց՝ ծայրին կացին ամրացված:

Փաղանգ (ֆալանգ) – հին հունական, մակեդոնական և մասամբ հռոմեական բանակների մարտական շարվածք՝ քառանկյունի՝ զինվորների 8-24 շարքերով: Փաղանգի ճակատամասը հասնում էր մինչև 500-1000 մետրի՝ յուրաքանչյուր շարքում 1000-ական հոպլիտ: Մակեդոնական փաղանգը ունենում էր մինչև 28.672 զինվոր:

Կրիա – այսպես էր կոչվում հռոմեական բանակի ռազմական դասավորությունը:

Հոպլիտներ – անտիկ դարաշրջանում հունական ծանրազեն հետևակայիններ, որոնք կազմում էին զորքի հարվածային ուժը:

§ 2.4. ԳԱՅՈՍ ԿՈՌՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ «ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՐԿԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԵԶԱԿԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Գայոս Կոռնելիոս Տակիտոսը Հռոմեական կայսերության ամենանշանավոր պատմագիրն է (մոտավորապես 55-125 թթ.): Տակիտոսի երկերի գլուխգործոցն է «Տարեգրություններ» աշխատությունը՝ բաղկացած 16 գրքից, որոնցից պահպանվել են միայն 1-4-րդ, 12-16-րդ գրքերը և հատվածներ 5-րդ, 6-րդ և 11-րդ գրքերից: «Տարեգրությունների» վրա հեղինակն աշխատել է մինչև իր կյանքի վերջը[226]:

[226] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 406-407:

Անգնահատելի նշանակություն ունեն նրա համապատասխան վկայությունները Հայաստանի և հայերի մասին, որոնք հայ ժողովրդի՝ այդ ժամանակաշրջանի պատմության կարևորագույն աղբյուրներ են և որոշակիորեն լույս են սփռում I դարում հայ ժողովրդի պատմության հարցերի վրա[227]:

Ի տարբերություն Հերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի աշխատությունների, որոնցում կարելի էր ազգագրական տեղեկությունները հնարավորինս առանձնացնել, համակարգել և թեմատիկ դասդասմամբ ներկայացնել հանրությանը, նույնը չենք կարող ասել այս հեղինակի երկի մասին: Այն ամբողջությամբ պատմաքաղաքական հարաբերությունների շարադրանք է Հռոմի և նրան ենթակա տարածաշրջանների ժողովուրդների վերաբերյալ: Ուստի կփորձենք հայերի վերաբերյալ ազգագրական նյութերը ներկայացնել պատմաքաղաքական իրողությունների հետ շաղկապված, որպեսզի դրանք չաղճատվեն:

§ 2.4.1. ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տակիտոսը, ինչպես և իրեն նախորդող հունահռոմեական պատմագիրները, տեղեկացնում է անտիկ դարաշրջանում Հայաստանի վարչատարածքային սահմանների տեղադրության մասին: Դրանք ձգվում էին Հռոմեական կայսրության բուն տարածքներից մինչև Մեդերի երկիրը: Ըստ պատմիչի՝ հռոմեացիները պրեֆեկտու-

---

[227] Մենք հատվածաբար օգտվել ենք «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարի թիվ 3 պրակից, «Կ. Տակիտոս», քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Ե., 1941 (այսուհետ այս գրքից հղումները կտրվեն տեքստում՝ նշելով գիրքը, գլուխը և էջը): Տե՛ս նաև **Ռ. Նահապետյան**, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին: Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված ժողովածու, ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտական աշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, Ե., ՀՊՄՀ հրատ., 2010, էջ 293-295, նույնի՝ Գայոս Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգրություններ» երկը՝ հայ ազգագրության պատմության անտիկ դարաշրջանի եզակի սկզբնաղբյուր: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, «Պատմություն և հասարակագիտություն» (Տարեգիրք), № 2, Ե., 2016, էջ 217-238:

րա էին անվանում Պարսկաստանի և Հայաստանի պրովինցիաները, իսկ սրանց կառավարիչներին՝ պրեֆեկտ [գիրք IX, գլ. 8, էջ 43]:

Տակիտոսը XIV գրքի 26-րդ գլխում նկարագրում է, թե ինչպես են Հայաստանի ծայրագավառները Հռոմեական կայսրության պահանջով հանձնվում հարևան երկրներին՝ հայկական պետությունը ջլատելու, փոքրացնելու, երկրորդական, երրորդական «դաշնակից» պետություն դարձնելու նպատակով: Ուսումնասիրողների համոզմամբ Մեծ Հայքից անջատված գավառները հիմնականում գտնվում էին նրա հյուսիսարևմտյան մասերում: Այսպես, Պոնտոսի Պոլեմոն II թագավորը պետք է ստացած լիներ Ճորոխի վերին հոսանքում գտնվող Սպեր գավառը, Իբերիայի Փարասման I-ը՝ Գուգարքը, Փոքր Հայքի Արիստոբուլոս թագավորը՝ Ակիլիսինե-Եկեղյաց, Դարանաղի, Աղյուն և Մզուր գավառները, իսկ Կոմմագենեի Անտիոքոս IV թագավորը հավանաբար ստացել էր Կիլիկիայի արևելյան սահմանամերձ շրջաններից և մերձեփրատյան Առավենե գավառից որոշ տարածքներ[228]:

Տակիտոսը XIII գրքի 39-րդ գլխում հիշատակում է մի քանի ամրոցներ: Դրանցից է Ողական ամրոցը (Արտաշատից ոչ հեռու՝ դեպի արևմուտք), իսկ XIV գրքի 24-րդ գլխում հիշատակում է ևս երկու ամրոց՝ առանց անունների, որտեղ ամրացել էին հայերը: Դրանք, ըստ Հ. Մանանդյանի, Բագավան և Ծումբ ամրություններն էին, որոնք գտնվում էին Հայկական պար լեռնաշղթայի հարավակողմում՝ Տիգրանակերտ տանող ճանապարհի վրա[229]:

§ 2.4.2. ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՊՐՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Տարեգրություններ»-ում խոսք կա նաև հայ բնակչության հետ հարևանությամբ ապրող **մարդերի** [գիրք XIV, գլ. 23, էջ 87]՝ Կասպից ծովի հարավ-արևմուտքում, մասամբ՝ Մարաստանում, մասամբ էլ՝ պատմական Հայաստանում՝ «Արածանիի հովտի լեռնային վերին

---

[228] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 434, ծան. 6:

[229] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 338:

շրջանում»[230], **դահաս** ժողովրդի մասին, որը, ըստ ուսումնասիրությունների, սկյութական ցեղն է, որն ապրելիս է եղել Կասպից ծովից հարավ-արևելք ընկած տարածքում[231]: Խոսվում է **ալբանների** (աղվանների) [գիրք VI, գլ. 33], **իբերների** [գիրք VI, գլ. 35] և **սարմատների** [գիրք VI, գլ. 33], **մոսքերի** (մեսխ) ցեղի [գիրք XIII, գլ. 37] մասին, որն ապրելիս են եղել Հայաստանի հյուսիսարևմտյան մասում) [Սև ծովի մոտ – Ռ. Ն.]:

§ 2.4.3. ԱԿՆԱՐԿՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒ ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ, ԹԱԳԱԴՐՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տարեգրություններ»-ում զգալի տեղ է հատկացված Հին աշխարհի պետական և ռազմական ու ծիսական արարողակարգերին: Այսպես, Տակիտոսը հաղորդում է Հին աշխարհի թագավորների միջև «փոխադարձ արյունով սրբագործված» դաշինքի ուշագրավ սովորույթի մասին. «Թագավորներն ունեն մի սովորություն, որ ամեն անգամ, երբ իրար են հանդիպում դաշն կնքելու համար, միախառնում են իրենց աջ ձեռքերը, բութ մատները միասին կապում և հանգույցով ամրացնում: Հետո հենց որ արյունը դեպի ծայրանդամներն է հոսում, թեթև ծակոցով արյունը հանում և փոխադարձաբար լիզում են: Այդ տեսակ դաշինքը համարվում է գաղտնի ուժ ունեցող, իբրև փոխադարձ արյունով սրբագործված» [գիրք XII, գլ. 47, էջ 59]: Այսպիսի դաշինք է կնքվում Հայաստանում կառավարող Վիրքի արքայի եղբայր Միհրդատի և Վիրքի գահաժառանգ Հռադամիստի միջև*: Հռոմեացիներին կաշառելով՝ վրաց արքայազն Հռադամիստը տենչում էր տիրանալ հայոց գահին, որը իր հորեղբայր և աներ Միհրդատի ձեռքին էր, ուզում էր ոչ թե «ուժով, այլ դաշինք կնքելով» տիրանալ դրան: Միհրդատը (Տակիտոսի մոտ՝ Միթրիդատը) զորքով ամ-

---

[230] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, Ե., 1936, էջ 106-107:

[231] Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 410, ծան. 11:

* Վիրքի արքայական գերդաստանը հայեր են: Նշված տեսակետը հիմա ընդունում են նաև վրաց պատմաբանները:

րացել էր Գառնի [Գորնեաս] ամրոցում: Այն, Տակիտոսի հավաստմամբ, ապահով էր թե՛ տեղադրությամբ և թե՛ կայազորի պաշտպանությամբ, ուստի Հռադամիստը փորձում էր կեղծ խոստումներով և երդումներով հասնել դաշինքի կայացմանը խաղաղությամբ: «Ռադամիստը,– նշում է Տակիտոսը,– սկզբում ընկավ Միթրիդատի գիրկը և ձևացնում էր, թե հնազանդ է՝ անվանելով նրան հայր ու աներ: Ավելացնում է՝ երդվելով, թե բռնություն չի գործադրի ո՛չ թրով, ո՛չ էլ թույնով. միաժամանակ քաշում տանում է մերձակա պուրակը՝ ասելով, որ իր հրամանով այնտեղ զոհաբերություն է նախատեսված և պատրաստված, որպեսզի խաղաղությունն ամրապնդվի աստվածավկաներով»: Դաշինքը կնքելու գործողության պահին «այդ կապերը դնողը ձևացնում է, թե ընկավ, բռնում է Միթրիդատի ծնկներից և նրան փռում է գետին: Միաժամանակ մոտ են վազում շատ մարդիկ և շղթայում են: Եվ նրան քարշ էին տալիս ոտքի շղթայից, իսկ այդ՝ բարբարոսների մոտ (նկատի ունի տեղական հայ բնակչությունը) համարվում է խայտառակություն»: Սակայն միմյանց տրված հավատարմության երդումը հնարավոր էր խախտել մի սովորույթով. «…Եվ Ռադամիստը, իբրև թե հավատարիմ իր երդման, իր քրոջ և հորեղբոր դեմ չգործադրեց ո՛չ թուր, ո՛չ էլ թույն, այլ սպանում է՝ նրանց գցելով գետին և ծածկելով բազմաթիվ ու ծանր գորգերով» (գիրք XII, գլ. 47, էջ 59- 61): Այս դեպքում գորգը մեղքը քավելու զորեղ միջոց էր համարվում[232]:

Ուշագրավ է թագադրության հին պարթևական մի սովորույթի նկարագրությունը ևս: Ըստ Տակիտոսի՝ Տիբերիոսը [Արևելքում հռո-

---

[232] Հայոց հնագույն հավատալիքներում ծիսառասպելական գորգը մեռնող և հառնող աստվածության խորհրդանիշ է համարվել, բնականաբար, պետք է նաև կյանք տար մահացածներին: Մեռյալներին վերակենդանացնելու վերաբերյալ պատկերացումների արտահայտությունը տեսնում ենք գորգերով թաղման ծեսերում. գորգերի և կարպետների պատառիկներ մեծ մասամբ հայտնաբերվել են մ.թ.ա. II-I հազարամյակներով թվագրվող դամբարանների պեղումներից (տե՛ս **Т. С. Хачатрян,** Древняя культура Ширака, Е., 1975, էջ 133, 254): Հետագայում, ընդհուպ XX դարի սկզբները, հայոց մեջ, օրինակ՝ Տավուշում, Տարոնում և այլուր, հուղարկավորել են ջեջիմի կամ կարպետի մեջ փաթաթած (տե՛ս **Ե. Լալայան,** Երկեր, հինգ հատորով, հ. 3, Ե., 2004, էջ 187-188, նույնի՝ Մուշ-Տարոն, «Ազգագրական հանդես», գ. XXIV, Թիֆլիս, 1916, էջ 189): Մեր ժամանակներում էլ հանգուցյալի դագաղի տակ գորգ փռելու սովորույթը հնամենի աշխարհընկալման վերապրուկային դրսևորում է:

մեական բանակների գլխավոր հրամանատարը, Օգոստոս կայսեր որդեգիրը, հետագայում՝ Հռոմի կայսրը – Ռ. Ն.] «**շքեղազարդում է Փրաատին**» (Հրահատ)՝ Հրահատ IV-ի կրտսեր որդուն՝ Պարթևստանի թագավոր Վոնոն Արշակունու եղբորը, **և, «նախապատրաստելով հայրական թագի համար, գոտի է կապում նրան»** [գիրք VI, գլ. 32, էջ 23]: Գոտու ծիսական կիրառությունը, ըստ էության, մարդկությանը հայտնի է վաղնջական ժամանակներից: Այդ է վկայում բրոնզեդարյան դրվագված գոտիների առկայությունը ցեղական ավագանու դամբարաններում: Վերջինիս ծիսական կիրառության խոսուն վկայություն է նաև հարուստ ու բազմաբովանդակ զարդանախշումը, որտեղ արտացոլված են այդ ժամանակաշրջանի մարդու աշխարհընկալումն ու պատկերացումները: Հին խեթական տեքստերում հիշատակվում է, թե ինչպես թագավորը ծիսակատարության պատրաստվելիս գոտևորվում է ճերմակ և կարմիր բրդաթելերից ոլորած գոտիով[233]: Տղամարդու գոտին ի սկզբանե եղել է իշխանության խորհրդանիշ: «Գոտկից կախ ընկնել» արտահայտությունը ենթադրում է դիմել մեկին՝ որպես կարող, հզոր անձնավորության, որպես իշխանավորի: Գոտուն ձեռքով դիպչելը նշանակում էր ոտնձգություն դիմացինի իշխանության, հեղինակության նկատմամբ կամ շնորհազրկում: Քսենոփոնի «Անաբասիս»-ում հետաքրքիր տեղեկություն կա Ք.ա. 5-4-րդ դարերի սահմանագլխին Հայաստանի սատրապ [կառավարիչ] Օրոնտես-Երվանդի մասին: Այտեղ ասվում է, որ երբ Կյուրոսի հրամանով բռնեցին Օրոնտեսի գոտուց, դա նրան մահվան դատապարտելու նշան էր[234]: Միաժամանակ, ըստ հայ ազգագրական տվյալների, բացի իշխանության խորհրդանիշ լինելուց՝ տղամարդկանց ծանր ու լայն գոտիները ունևորության չափանիշ էին: Հայոց լեզվում գործածվող «գոտին լայն կապել» արտահայտությունը նշանակում է «բարեկեցիկ կյանք վարել», «գոտին հաստացնել»՝ «հարստանալ» և այլն[235]:

Հետաքրքրական է, որ «գոտևորել», «գոտեպնդվել» արտահայտություններն ուղղակի և փոխաբերական առումով նշանակում են կազմ ու պատրաստ լինել: Գոտին՝ իբրև մոգական շրջանակ, ուներ նաև պահպանակի նշանակություն, որը պետք է պահպաներ կրողին

---

[233] **Ռ. Տ. Արձինբա,** Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, с. 124.

[234] **Քսենոփոն,** Անաբասիս, էջ 24:

[235] Տե՛ս **Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 173:

ոչ միայն թշնամու զենքից, այլ նաև «չարից»[236]: Հին աշխարհում գրեթե ընդհանրական դարձած նման սովորույթներից մեկն էլ հաղթող զորավարին դափնեպսակով զարդարելն ու մեծարելն էր: Տակիտոսը անդրադառնում է կոնսուլ Կորբուլոնի կայսերական խրձերին **դափնի** ավելացնելու սովորույթին [գիրք XVIII, գլ. 9, էջ 71]: Կոնսուլի առջևից գնում էր 12 լիկտոր՝ ձեռքներին բռնած ճիպոտների խուրձ՝ մեջը խրված մի տապար՝ ի նշան իշխանության: Ի դեպ, կոնսուլական լիկտորներ ունենալու իրավունքը հետագայում անցնում է միայն կայսրին:

Բավականին հետաքրքիր է Տակիտոսի՝ հռոմեական ռազմադրոշի նկարագրությունը, որը նման է հայկականին: Հռոմեական դրոշը նա անվանել է **արծիվներ.** ձողին ամրացված էր արծվի պղնձե կամ արծաթե և կամ ոսկե ձուլվածք: Այդ էր հռոմեական լեգեոնի ռազմադրոշը [գիրք XV, գլ. 17, էջ 117]: Արտաշիսյան հարստության թագավորների, մասնավորապես Տիգրան Մեծի դրամների վրա հայոց արքան պատկերված է շքեղ թագով: Թագի վրա պատկերված են երկու արծիվներ, իսկ մեջտեղում՝ արևը խորհրդանշող ութաթև աստղ: Այդ հերալդիկ հորինվածքը, ամենայն հավանականությամբ, եղել է հայոց թագավորության պետական զինանշանը: Արտաշիսյան հարստության գլխավոր հերալդիկ հորինվածքը եղել է արծվի պատկերը, որին հանդիպում ենք այդ ժամանակաշրջանով թվագրվող մեդալիոնների, քանդակների և այլ գտածոների վրա:

Անտիկ շրջանի հայկական զինանշանային խորհրդանշանների վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են տալիս նաև հռոմեական այն հաղթադրամները, որոնց վրա պատկերված են հայկական մարտադրոշներ, որոնցից մեկի դարձերեսին Հայաստանը խորհրդանշող կնոջ պատկերն է. դրանից ձախ՝ արևը ճանկռող արծվի, իսկ թիկունքում՝ մեծ աղեղի պատկերներն են, իսկ ներքևում՝ ARMEN[ARMENIA] մակագրությունն է: Արշակունյաց թագավորների զինանշանների հերալդիկ հորինվածքը եղել է արծվի պատկերով խորհրդանշանը[237]:

Տասնհինգերորդ գրքում պատմիչը հաղորդում է հռոմեական

---

236 Տե՛ս **Ա. Ստեփանյան,** Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), Ե., 2007, էջ 16-20:

237 Տե՛ս **Հ. Դեմոյան,** Հայկական ազգային խորհրդանշաններ (զինանշաններ, դրոշներ, պարգևներ), Ե., 2012, էջ 44-47:

զորքերի պարտության և Հռանդեայի դաշնագրի մասին: Այս առիթով նա հայտնում է իր անձնական դիտարկումները հայերի քաղաքական դիրքորոշման մասին, մասնավորապես այն, որ «հայերը միշտ կա՛մ Հռոմի իշխանության տակ են, կա՛մ ենթակա են կայսեր կողմից ընտրված թագավորին» (գիրք XV, գլ. 15):

Նույն գրքի տասնյոթերորդ գլխում իբրև հայերի համար ստեղծված բարենպաստ իրավիճակ՝ նշվում է, որ Վոլոգեսը (Պարթևստանի թագավոր Վաղարշ I-ը՝ 52-80 թթ.) վերջնագրի տեսքով պահանջում է Կորբուլոնից, որ վերջինս քանդի անդրեփրատյան ամրությունները, և գետը նախկինի նման լինի սահմանագիծ: Պահանջն ի կատար է ածվում, և Հայաստանը մնում է առանց հռոմեական միջնորդ իշխանավորի: Վաղարշ I-ի պահանջներից մեկն էլ այն էր, որ ամբողջ հռոմեական զորաբանակը թողներ Հայաստանի սահմանները, ամրություններն ու պաշարեղենը պիտի հանձնվեին պարթևներին և հայերին: Այդ բոլորով հանդերձ՝ հռոմեական զորքը հայ-պարթևական ուժերի կողմից ենթարկվում է նվաստացումների, մասնավորապես «անցկացվում է լծի տակով»: «Անցկացնել լծի տակով» արտահայտությունը առաջացել է հետևյալ երևույթից. գետնի մեջ խրված երկու նիզակների վրա դրվում էր երրորդը՝ մոտ մեկ մետր բարձրությամբ: Ճակատամարտում պարտված կողմը պետք է անցներ այդտեղով՝ նախապես զցելով զենքն ու վերնազգեստը: «Լծի տակով անցնելը» հին ժամանակներում համարվում էր ամենամեծ ստորացումը և պարտվողների ստրկացման ապացույցը[238]: Տակիտոսի վկայությամբ՝ հռոմեացիների դեմ տարած հաղթանակը առանձնահատուկ ցնծությամբ են տոնում հայերը, որոնք հռոմեացիներին՝ որպես պարտվողների, ամեն տեսակ ստորացուցիչ վիրավորանքների են ենթարկում: Տակիտոսի հավաստմամբ՝ Հռոմում լուրեր են հասնում, «թե լեգեոններն անցկացվել են լծի տակով, և պատմում էին այլ անհաջողություններ» [գիրք XV, գլ. 15, էջ 115]: Տեղի հայ բնակչությունը գերությունից ազատում է իր հայրենակիցներին հեռացող զինվորների ձեռքից: Հայերը խլում են հռոմեացիներից նրանց կողոպտած ողջ ավարը: Վախեցած հռոմեացիները տալիս են ամեն ինչ, միայն թե փրկեն իրենց կյանքը: Տակիտոսը հաղորդում է. «Հռոմեական զորքի հեռանալուց առաջ թշնամիները [հայերը] մտան ճամբարի ամրութ-

[238] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն քրեստոմատիա, հ. 1, էջ 440, ծանոթ. 7:

յունները, շրջապատեցին ճանապարհները. նրանք ճանաչում էին մի ժամանակ հռոմեացիների կողմից գերի վերցրած ստրուկներին ու գրաստը և հետ էին խլում» [գիրք XV, գլ. 15]:

Ուշադրության արժանի է նաև Հին աշխարհի ռազմական դիվանագիտության մեջ ընդունված մի երևույթի մասին հաղորդումը: Այն վերաբերում է պարթև Վաղարշ արքայի եղբայր Տրդատի՝ իր շքախմբով Հռոմ գնալու և այնտեղ Հռոմի կայսր Ներոնի կողմից արժանապատիվ ընդունելության արժանանալու արարողակարգին: Տակիտոսը հաղորդում է, որ Վաղարշը սուրհանդակի միջոցով հռոմեական զորքերի հրամանատար Կորբուլոնից պահանջում է, որ Տրդատը «չկրի ստրկության նման որևէ վիճակ, ստիպված չլինի զենքը հանձնել, պահանջում էր, որ պրովինցիաների կառավարիչները չհրաժարվեն եղբայրաբար գրկախառնվելուց և չստիպեն իրենց սպասել դուրսը, որ Հռոմում նրան ցույց տրվի կոնսուլին հավասար պատիվ: Իհարկե, նրան՝ իբրև օտարների զոռոզության սովոր մարդու, հայտնի չէր, որ մեզ մոտ [Հռոմեական կայսրությունում – Ռ. Ն.] իշխանության ուժն ունի մեծ նշանակություն, իսկ սնոտին անուշադրության է մատնվում» [գիրք XV, գլ. 31, էջ 129]:

Հռոմեա-պարթևական պատերազմները Տակիտոսը ներկայացնում է ամենայն մանրամասնությամբ: Հայաստանի հետ առնչվող հատվածները համեմվում են երկրի քաղաքական վիճակի, տիրող ներքին տրամադրությունների ներկայացմամբ: Ներկայացվում են մ.թ. I դարի առաջին կեսին հայոց թագավորների հաջորդականությունը, բնութագրերը, ինչպես նաև այն շարժառիթները, որոնց շնորհիվ այս կամ այն թագավորը ստացել է գահը: Ավելին՝ Տակիտոսը նաև մանրամասն ներկայացնում է թագավորների թագադրման ընթացակարգը: Օրինակ՝ Գերմանիկոսի[239] կողմից Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդի Զենոնին[240] Արտաքսատա (Արտաշատ) քաղաքում հանդիսավոր կերպով հայոց թագավոր օծելը նկարագրում է հետևյալ կերպ. «Այդ ժամանակաշրջանում թագավոր չունեին, սակայն ժողովրդի տրամադրությունը Պոնտոսի թագավոր Պոլեմոնի

---

[239] Խոսքը Տիբերիոս կայսեր եղբորորդու և նրա որդեգրի՝ հռոմեական հայտնի զորավար Գերմանիկոս Հուլիոս Կեսարի (մ.թ.ա. 15 – մ.թ. 19) մասին է:

[240] Զենոնը Պոնտոսի Պոլեմոն I թագավորի և Տիբերիոս կայսեր ազգականուհի Պյութագորասի որդին է, որին 18 թ. հռոմեացիները հռչակեցին Մեծ Հայքի թագավոր (18-34):

որդու՝ Զենոնի կողմն էր, որովհետև սա ամենավաղ մանկությունից կրթվել էր հայերի սովորույթներով ու կենցաղով, յուրացրել էր նրանց սովորություններն ու նիստուկացը, ընտելացել էր նրանց որսագնացությանը, խրախճանքներին և հաճախ բարբարոսների մոտ գործադրվող այլ սովորությունների միջոցով իր կողմն էր գրավել թե՛ ազնվականներին և թե՛ հասարակ ժողովրդին»: Ըստ այդմ էլ՝ 18 թ. Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքում գումարվում է հատուկ աշխարհաժողով, որտեղ Հռոմեական կայսրության ներրկայացուցիչ Գերմանիկոս զորավարը «մեծամեծների հավանությամբ և շրջապատող ժողովրդի բազմության ներկայությամբ նրա գլխին դրեց Արտաշատ քաղաքում թագավորական պատվանշանը: Սրանք, հարգանք հատուցելով թագավորին, նրան ողջունում էին՝ Արտաշես անվանելով: Այդպես կոչեցին նրան քաղաքի անվան օրինակով» [գիրք II, գլ. 56, էջ 15]: Սակայն Տակիտոսը շփոթում է. Զենոնին հայերը Արտաշես կոչեցին ոչ թե Արտաշատ «քաղաքի անվան օրինակով», այլ սա դինաստիական «Արտաշես» անունն էր, որը սիրելի էր հայերին ու հիշեցնում էր Արտաշեսյանների հզոր թագավորության օրերը:

Տակիտոսի հաղորդման համաձայն՝ հայերը ծագումով օտար արքաներից սիրում են նրանց, որոնք հարգում են հայկական սովորույթներն ու կենցաղը: Բացի այդ՝ Հայաստանում իշխելու համար կարևոր են եղել ոչ միայն երկրի իշխող դասի, այլև հասարակ ժողովրդի կարծիքն ու հավանությունը: Այս պատմիչի վկայություններում է, որ ականատես ենք լինում Հայաստանում ժողովրդավարության ծիլերի արձակմանը: Զենոն թագավորի գահ ստանալը մեծապես կապված է եղել հայ ժողովրդի ազատ կամարտահայտության հետ, ընդ որում, ինչպես հասարակ ժողովրդի, այնպես էլ այն ժամանակ արդեն ձևավորված և Տակիտոսի ուշադրությանն արժանացած հայ ազնվականության: Փաստորեն՝ աշխարհաժողովը պարտադրել է վարք ու բարքով, անշուշտ, նաև լեզվով արդեն իսկ հայացած Զենոնին թագադրման պահին հայոց սիրված թագավորի անունն ընդունել: Պարզ է, որ Զենոնը, համաձայնություն տալով այդ պահանջին, վերջնականապես հաստատում էր իր լիակատար հայացումը՝ պարտավորվելով պաշտպանել հայկական օրենքներն ու շահերը:

§ 2.4.4. ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱԿԻՏՈՍԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄՆԵՐԸ

Հայոց թագավորների մասին որոշ տվյալներ հաղորդելուց հետո պատմագիրը փորձում է բնութագրել հայերին: «Տարեգրությունների» երկրորդ գրքի 56-րդ գլխում Տակիտոսը գրում է. «Այս ժողովուրդը (նկատի ունի հայերին – Ռ. Ն.) հնուց ի վեր տատանվող է թե՛ մարդկանց բնավորության և թե՛ երկրների տեղադրության պատճառով: Այդ երկիրը լայնորեն սահմանակից է մեր պրովինցիաներին և տարածվում է հեռու՝ մինչև Մեդերի աշխարհը: Մեծագույն պետությունների միջև է տեղավորված Հայաստանը, և շատ հաճախ հայերը երկպառակ են, որովհետև նրանք թե՛ ատում են հռոմեացիներին և թե՛ նախանձում են պարթևներին» (գիրք II, գլ. 56, էջ 15): Այս հատվածից երևում է, որ պատմագիրը բացասաբար է արտահայտվում հայերի մասին՝ բնորոշելով նրանց «երկդիմի» բառով, հայ ժողովրդի ընդհանուր նկարագիրը համեմատելով երկրի աշխարհագրական դիրքի հետ: Պատմաբան Ա. Այվազյանի դիտարկմամբ՝ հայերը ոչ թե նախանձ են տածել, այլ նախանձախնդրություն, ինչը բոլորովին այլ բան է: Նրա կարծիքով՝ «նախանձը» (invidia) հունահռոմեական, ինչպես նաև հայկական մատենագրության մեջ ունեցել է նաև «նախանձախնդրություն» իմաստը, ինչն էլ հենց միակ տրամաբանականն է Տակիտոսի այս հաղորդման մեջ: Ուրեմն, ըստ նրա հայերը ոչ թե նախանձում էին պարթևներին, այլ նախանձախնդիր էին, այսինքն՝ ձգտում էին հավասարազոր լինել ու որևէ հարցում չզիջել նրանց, մրցակցում էին նրանց հետ[241]: Ա. Այվազյանի կարծիքով, նաև ուշագրավ այս հաղորդման իմաստը հիմնավորապես աղավաղվել է միայն Պ. Սոտնիկյանի կատարած հայերեն թարգմանության մեջ, որտեղ հայերի պատերազմներն ու ընդհարումները պարթևների և հռոմեացիների հետ ներկայացվում են որպես միջհայկական գժտություններ՝ «հաճախ հայերը երկպառակ են»: Ըստ էության, սա նույն բանն է: Թե՛ Սոտնիկյանը, թե՛ ռուսերենում Տակիտոսը միանման և ճիշտ են թարգմանում. սա վերջիվերջո թշնամու գնահատական է:

---

[241] Տե՛ս **Ա. Այվազյան,** Հին Հայաստանը որպես «Ազգային պետություն»: «Էջմիածին», թիվ 5 (մայիս), 2005, էջ 123-138 (տե՛ս էջ 130), նույնի՝ Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, Ե., 1998:

Ակներև է, գրում է Ա. Այվազյանը, որ Սոտնիկյանը զոհ է գնացել հայ հասարակական մտայնության մեջ տարածված, օտար ուժերի կողմից հաճախ խրախուսվող այն թյուր տեսակետին, ըստ որի՝ հայերը իբր միշտ անմիաբան են եղել և «իրար կոկորդ են կրծել»[242]: Մյուս կողմից հարկ է հաշվի առնել նաև այն, որ Տակիտոսի՝ հայերի ազգային բնավորությանը տված խիստ գնահատականները գրանցվել են այն ռազմաքաղաքական պայմաններում, երբ հռոմեական և իրանական կայսրությունների միջև մղվում էր Հայաստանը հպատակեցնելու կամ միմյանց միջև բաժանելու պայքարը: Հետևաբար, արդարացի է հայերի կողմից նշված պետությունների նկատմամբ ունեցած բացասական տրամադրվածությունը:

Տակիտոսը իր երկերը շարադրել է Հռոմի զավթողական քաղաքականության ջատագովի տեսանկյունից: Դրա համար էլ նա ավելի քան կողմնակալ հեղինակ է: Նա ատում էր ամեն մի հայի, ով կհամարձակվեր զենք բարձրացնել աշխարհակալ Հռոմի դեմ: Հավանաբար այս մոտեցումներն են պատճառ դարձել, որ այդ խոշորագույն պատմիչն իր «Տարեգրություններում» երբեմն իջնում է գրավոր խոսքի մեջ անթույլատրելի ձևակերպումների մակարդակին: Նա Հայաստանը անվանում է ստրկության երկիր, իսկ հայերին՝ ստրկության սովոր ժողովուրդ [գիրք XII, գլ. 50, էջ 65]: Կամ՝ «… որովհետև ազատությունը նրանց (հայերի) համար անծանոթ էր, ավելի էին հակվում դեպի պարթևական ստրկությանը» [գիրք XIII, գլ. 34, էջ 73]: Հայերին համարել է նենգ ու վախկոտ, տատանվող, դժվարին պահին դաշնակցին լքող, սակայն նույն պատմիչը մեկ անգամ չէ, որ ստիպված է եղել խոստովանել, թե «ստրկության սովոր» հայերը բազմիցս ջարդել են հռոմեական կայազորին՝ նրանց անցկացնելով «լծի տակով»: Այդպիսի ատելությամբ է լցված Հռոմին թշնամի մյուս ժողովուրդների նկատմամբ նույնպես: Այսպես, պարթևներին բնութագրում էր՝ «բացակա միապետի նկատմամբ արդարամիտ, իսկ ներկայի նկատմամբ՝ խառնակիչ» [գիրք VI, գլ. 36, էջ 31]:

Անհրաժեշտ ենք համարում բերել մի հատված «Տարեգրությունների» տասներկուերորդ գրքի 51-րդ գլխից, որը, պատմական մեծ արժեքից զատ, ունի նաև ազգագրական նշանակություն: Խոսքը Վիրքի արքայազն և Մեծ Հայքի թագավոր Հռադամիստի՝ Հայաստանից հղի կնոջ հետ փախչելու և դրա հետ կապված պատմության մասին է.

---

[242] Տե՛ս **Ա. Այվազյան,** նշվ. աշխ., էջ 205-208:

«Ռադիմիստին չէր մնում փրկվելու այլ միջոց, քան ապավինել ձիերի արագավազությանը: Ձիերը փախցրին թե՛ նրան և թե՛ կնոջը: Բայց հղի կինը փախուստի առաջին մասը թշնամիներից վախենալու և ամուսնուն սիրելու պատճառով մի կերպ տարավ. հետո, երբ շարունակական արշավընթացից նրա ընդերքն ու արգանդը ուժգին կերպով ցնցահար են լինում, սկսում է աղերսել, որ իրեն պատվավոր մահով ազատի գերության անարգանքներից: Ռադամիստը, սկզբում գրկելով, բարձրացնում է և քաջալերում՝ մերթ զարմանալով նրա քաջությունից, մերթ հիվանդագին տանջվելով վախից, թե ուրիշը կտիրանա կնոջը, եթե ինքը նրան լքի: Վերջապես սիրո ուժի ազդեցության տակ և անծանոթ չլինելով հանցագործություններին՝ նա մերկացնում է **նրանը** (արևելյան կարճ և ուղիղ դաշույն) և վիրավոր կնոջը քարշ է տալիս Արաքսի ափին և հանձնում գետին, որպեսզի նույնիսկ մարմինը տարվի-հեռանա, որպեսզի չընկնի թշնամիների ձեռքը: Ինքը գլխապատառ սլանում է հայրենական թագավորությունը՝ Իբերիա: Այդ ժամանակամիջոցում հովիվները, շնորհիվ ծփանքի հանդարտության, նկատում են, որ Զենոբիան (այդ էր կնոջ անունը) շնչում է, ուշադրության են առնում կյանքի բացահայտ նշաններն ու ազնիվ արտաքինից եզրակացնում են, որ հասարակ ծագում ունեցող կին չէ այդ, կապում են վերքը և գործադրում են գյուղական դեղամիջոցներ, անունը և արկածն իմանալուց հետո տանում են նրան Արտաքսատա (Արտաշատ) քաղաքը, այնտեղից հասարակական ծախսով կինն ուղարկվում է արքունիք, ընդունվում է սիրալիր» [գիրք XII, գլ. 51, էջ 65,67]: Փաստորեն՝ հայ գեղջուկները փրկում են կնոջը, հատուկ տնական սպեղանիներով դարմանում նրա վերքերը: Սա Հայաստանում ժողովրդական բժշկության մասին հնագույն վկայություններից է: Տակիտոսը մեզ հայտնում է նաև, որ Զենոբիան միառժամանակ ապրում է Տրդատի արքունիքում, որտեղ էլ ծնում է արու զավակ. վերջինս հետագայում թագավորեց Իբերիայում իբրև Փարասման II:

«Տարեգրությունների» II գրքի 3-րդ գլխում Տակիտոսը Հայաստանը Հռոմին անհավատարիմ երկիր է համարել. «Հայաստանը, որի գահն այդ ժամանակ թափուր էր, և որը գտնվելով պարթևների և հռոմեացիների ուժերի միջև, անհավատարիմ էր Անտոնիոսի [հռոմեական զորքերի արևելյան արշավանքների հրամանատար] ոճրագործության պատճառով, Անտոնիոսի, որը, Հայաստանի թագավոր Արտավազդին [55-34 թթ. Արտավազդ II, թագավոր Մեծ Հայքի – Ռ. Ն.] գրավելով բարեկամության անվան տակ, հետո շղթայել

ու սպանել էր [գիրք II, գլ. 3, էջ 11]»: Հայտնի է, որ Ք.ա. 36 թ. իր պարտությունն ու փախուստը, ինչպես նաև իր փոխանորդի սպանությունը Անտոնիոսը վերագրում էր Արտավազդի դավաճանությանը: Անտոնիոսն Արտավազդին նենգությամբ հրավիրեց իր կայան Նիկոպոլիս, շղթայեց արծաթե շղթաներով և տարավ նրան Ալեքսանդրիա՝ իբրև զարդ իր հաղթատոնի համար (Ք.ա. 34թ.): Ակտիումում տեղի ունեցած ճակատամարտից հետո Կլեոպատրան գլխատել է տալիս Արտավազդին [31 թ. Ք.ա. Ալեքսանդրիայում] և գլուխը ուղարկում է Արտավազդի թշնամի մեդերի թագավորին, որից Կլեոպատրան ուզում էր օժանդակություն ստանալ[243]:

§ 2.4.5. ՕՏԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՏԱԿԻՏՈՍԻ

Տակիտոսը անդրադառնում է նաև հայ-պարթևական, հայ-հռոմեական և հայ-վրացական կապերին, նրանց հարաբերություններին և դրանք շատ հաճախ մեկնաբանում է՝ իր երկրի գաղափարախոսական շահերից ելնելով: Այսպես, նա գրում է. «Հայերը տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով» [գիրք XIII, գլ. 34, էջ 73]: Հայերի պարթևական կողմնորոշումը պետք է բացատրել նրանով, որ Առաջավոր Ասիայի վերջին մեկուկես հարյուրամյակի պատմությունը անառարկելիորեն ցույց էր տալիս, որ Հռոմի գերիշխանությունը անհամեմատ ավելի դաժան ու խիստ է եղել, քան պարթևներինը[244]: Վերջիններս ընդհանուր առմամբ շարունակում էին հելլենիստական մեծ տերությունների, հատկապես Սելևկյանների կառավարման ձևերով առաջնորդվել, ձևեր, որոնց մեջ մեծ տեղ էր հատկացվում ինքնավարության սկզբունքին: Բացի դրանից՝ հենց հելլենիստական ավանդույթների, այնուհետև մշակույթի, կրոնի, բարքերի, խնամիական կապերի, տնտեսաձևի, պետական կառուց-

---

[243] Տե՛ս **Б. Низе,** Очерк Римской истории и источниковедения, 1910, էջ 358: Տե՛ս նաև **Գ. Խ. Սարգսյան,** Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 603-634 (տե՛ս էջ 625):

[244] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 293:

վածքի և այլ տեսանկյուններից հայերը շատ ավելի մոտ էին պարթևներին: Ուստի և ընտրությունը կատարվում էր հօգուտ պարթևների, և այդ դրությունը, ընդհանուր առմամբ (մի կողմ թողնելով առանձին միջադեպերը), շարունակվեց այնքան ժամանակ, որքան հարատևեց պարթևական պետությունը, այսինքն՝ մինչև մ.թ. 226 թվականը[245]:

Տակիտոսը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև իբերների՝ հայերի և Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշումների վերաբերյալ: Անդրադառնալով հայ-իբերական հարաբերություններին՝ գրում է «թե [իբերներ] Փարասմանը, սպանելով իր որդի Ռադամիստին իբրև դավաճանի, որպեսզի դրանով վկայվի նրա հավատարմությունը դեպի մեզ, հայերի վրա ավելի եռանդուն կերպով էր թափում իր հին ատելությունը: Եվ հենց այդ ժամանակ առաջին անգամ մեր կողմը գրավված **մոսքերը** հարձակվեցին Հայաստանի հեռավոր վայրերի վրա: Այս ցեղն ուրիշներից ավելի հավատարիմ է հռոմեացիներին» [գիրք XIII, գլ. 37, էջ 77]:

Մեկ այլ առիթով **հիբերներին** և ալբաններին (աղվաններ) անդրադառնալիս նշում է, թե «հիբերներն ու ալբանները, ապրելով անտառապատ լեռնոտ վայրերում, ավելի են ընտելացել բիրտ կյանքին ու համբերատարությանը: Ասում են, թե նրանք ծագած են թեսալացիներից այն ժամանակ, երբ Յասոնը Մեդեային հափշտակելուց և նրանից զավակներ ունենալուց հետո շուտով ձեռք բերեց Աետի դատարկ թագավորական պալատներն ու գահաթափուր Կոլխիդան (Կողքիսը): Այս երկրում շատ բան նրա անունն է հիշեցնում…» [գիրք VI, գլ. 34, էջ 27]: Նույն գրքի 33-րդ գլխում նախապես հավաստելով, թե հիբերները, Հայաստան ներխուժելով, կաշառում են նաև սարմատներին «կասպյան ճանապարհով (ռազմավարական ճանապարհով), արագորեն բաց են թողնում շարժվելու Հայաստանի վրա»*:

Մեր համոզմամբ՝ ազգագրական հետաքրքրություն են ներկայացնում Տակիտոսի վկայությունները հայ-պարթևական ուժերի և Հռոմի միջև խաղաղության դաշն կնքելու դիվանագիտական այն արարողությունների վերաբերյալ, որոնք ուշագրավ են նաև ռազմական պատմութ-

---

[245] Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների ժամանակաշրջանում: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 628-629:

* Վրացին ժողովուրդ է՝ բաղկացած իբերների, մենգրելների և այլ ազգագրական խմբերի միավորումից, հին համարել վրացիներին սխալ կլինի, իբերներն էլ տիրել են միայն այսօրվա Վրաստանի արևելքին:

յան ուսումնասիրության տեսանկյունից: Այսպես, պարթևա-հռոմեական պատերազմը ավարտելուն ուղղված և Հռոմի կայսրից Հայաստանի թագը ստանալու համար որոշվեց, որ «Տիրիդատը (Տրդատ Արշակունին՝ 66-88 թթ.) կայսեր [Ներոն] արձանի մոտ դնի թագավորական նշանը և հետ վերցնի միայն Ներոնի ձեռքից. բանակցությունն ավարտվեց համբույրով [Տրդատի և Կորբուլոնի միջև]» [գիրք XV, գլ. 28, էջ 127]:

Այնուհետև Տակիտոսը անդրադառնում է Հռանդեայում կայացած հանդիսավոր արարողությանը: «Հետո՝ մի քանի օր անց, երկու կողմից էլ փայլուն տեսքով հանդես եկան և կանգնեցին զորքերը՝ այնտեղ դասակներով դասավորված պարթևական հեծելազորն իր հայրենի զարդարանքներով, այստեղ՝ հռոմեական լեգեոնները փայլուն արծիվներով (զինանշան), դրոշակներով և աստվածների արձաններով, կարծես տաճարում լինեին. մեջտեղում կառուցված էր բեմ, բեմի վրա դրված էր կուրուլ աթոռ (որին բազմելու իրավունք ունեին միայն բարձր պաշտոնյաները՝ կոնսուլը, պրետորը, ցենզորը և կուրուլ էդիլը) և վրան Ներոնի արձանը: Դրան մոտեցավ Տիրիդատը, համաձայն սովորության, զոհեր մատուցանելով, իր գլխից հանում է արքայական խույրը (ապարոշը) և դնում գահի վրա, կայսեր կիսանդրու առաջ, որպեսզի Հռոմում այն վերստանա Ներոնի ձեռքից» [գիրք XV, գլ. 29, էջ 127]:

Հարկավ, կայսեր արձանին երկրպագելը ուխտի արարողության սովորական ձև էր, որ Հռոմից կախման մեջ գտնվող թագավորները պետք է կատարեին գահ բարձրանալիս [գիրք XII, գլ. 17]: Սակայն արարողության այս ձևը անբավարար համարվեց: Անհրաժեշտ էր, որ Տրդատը գնար Հռոմ և կայսեր ձեռքից ստանար հայկական թագը: Այս քայլը միտված էր Արևելքում Հռոմի ռազմական արժանապատվության պահպանմանը:

XV-րդ գրքի 15-րդ գլխում խոսվում է ռազմական մի սովորույթի մասին: Ըստ պատմիչի՝ թշնամու մեջ ահ ու սարսափ տարածելու նպատակով «Վոլոգեսը (Վաղարշ Ա. – 51-75թթ. Պարթևստանի արքա) հայ-պարթևական ուժերին կարգադրել էր թշնամու սպանվածների զենքերից և մարմիններից կույտեր դիզել, որպեսզի դրանով վկայվի մեր (հռոմեացիների) պարտությունը և չցանկացավ դիտել լեգեոնների փախուստը [գիրք XV, գլ. 15, էջ 115]: Հին ժամանակ սովորություն կար նաև, որ պատերազմից դարձող զինվորները բերում էին իրենց սպանած թշնամիների գլուխները՝ իբրև ապացույց իրենց

գործած քաջության, որքան շատ լինեին գլուխները, այնքան մեծ էր լինում բերող զինվորականի պարծանքն ու պատիվը: Սրանից է մնացել մեր ժողովրդական լեզվի մեջ «գլուխ բերել» արտահայտությունը՝ «Ի՞նչ ես պարծենում, հո թշնամու գլուխ չես բերել»[246]:

XIII գրքի 41-գլխում Տակիտոսը հպարտությամբ նշում է Կորբուլոնի՝ հայոց մայրաքաղաք Արտաշատը գրավելու և «հրդեհելու, քարուքանդ անելու, հողին հավասարեցնելու» մասին, և, ըստ նրա մեկնաբանության, Կորբուլոնը այդպես վարվեց «պարիսպների լայնածավալության, այն պահելու համար պահակազոր և բավարար ուժ չունենալու պատճառով, ոչ էլ մենք այնքան ուժ ունեինք, որ զորքը բաժանվեր թե՛ պահակազորն ուժեղացնելու և թե՛ պատերազմը վարելու համար, իսկ եթե մայրաքաղաքն անվթար մնար և առանց պահակազորի, ոչ մի օգուտ և փառք չկար նրանից, որ քաղաքն առնված է» [էջ 85]: Այս հաղթանակից հետո «որոշվում է պրինցեպսի համար [Կորբուլոնի] արձաններ դնել, հաղթակամարներ կառուցել և տալ շարունակական կոնսուլություններ, որոշվում է նաև, որ տոնական հայտարարվեն թե՛ տարած հաղթանակի, թե՛ այդ մասին հայտարարելու և զեկուցելու օրերը, ինչպես նաև ընդունվում են այլ նման ձևի որոշումներ» [էջ 87]:

§ 2.4.6. ԱԿՆԱՐԿ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹԱՅԻՆ ՈՐՈՇ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տակիտոսը «Տարեգրություններ»-ի II գրքի 3-րդ գլխում անդրադառնում է նաև տեղական՝ հայկական ամուսնության սովորույթներից մերձամուսնությանը: Խոսելով Արտաշես Բ-ի (30-20 թթ.)՝ մերձավորների կողմից դավադրաբար սպանության մասին՝ նշում է, թե նրան փոխարինելու համար Հռոմից Տիբերիոս Ներոնի ուղեկցությամբ Հայաստան բերվեց այնտեղ դաստիարակված Տիգրան III-ը (20-8թթ.): Նա Արտավազդ Բ-ի մյուս որդին էր, որին հայկական գահ են բարձրացնում հռոմեական կայսր Օգոստոսի հրամանով: Սակայն «ո՛չ Տիգրանի, ո՛չ էլ սրա որդիների տիրապետությունը երկարատև չէր, թեպետ վերջինները, ըստ օտար՝ ոչ հռոմեական սովորության,

[246] Տե՛ս **Ռ. Նահապետյան,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Ե., 2013, էջ 87:

ամուսնացել էին միասին թագավորելու նպատակով» [գիրք II, գլ. 4, էջ 11-13]: Խոսքը Տիգրան IV-ի (8-5թթ.) և իր խորթ քույր Էրատոյի (2-1 թթ., և 6-11 թթ.) հետ ամուսնության մասին է: Ի դեպ 5-2 թթ. Ք.ա. Մեծ Հայքի թագավորն էր Արտավազդ III-ը, որը Արտաշես II-ի ու Տիգրան III-ի եղբայրն էր և շուրջ 25 տարի գտնվում էր Հռոմում և Հռոմի կայսր Օգոստոսի կարգադրությամբ գահընկեց արված Տիգրան IV-ի փոխարեն հռչակվեց հայոց թագավոր:

Մերձամուսնության հնավանդ սովորույթը բնորոշ է եղել և՛ հայերին, և՛ նրանց հարևանությամբ ապրող պարսիկներին, մարերին: Այսպես, ինչպես նշվել է սույն գրքի սկզբում, Քսենոփոնի հաղորդման համաձայն, պարսից Կյուրոս արքան ամուսնացած է եղել իր մորաքրոջ՝ Մեդիայի արքայադստեր հետ: Մեդիայի արքա Կիաքսարեսը [Կիաքսարը] Կյուրոսի մոտ ուղարկեց իր դստերը, որպեսզի նրան մատուցի ոսկե պսակը, ապարանջաններ, մանյակ և ամենագեղեցիկ մեդական տարազ: Աղջիկը պսակազարդեց Կյուրոսին, իսկ Կիաքսարեսն ասաց. «Ով Կյուրոս, կնության եմ տալիս քեզ այս աղջկան՝ իմ հարազատ դստերը: Քո հայրը ևս ամուսնացել էր իմ հոր դստեր հետ, որից դու ես ծնվել»[247]:

Նման մերձամուսնություն է արձանագրվել Տակիտոսի կողմից նաև վրացական սովորույթներում: Միթրիդատը [Միհրդատը, Փարասմանը, Հռադամիստը հայեր էին, Արտաշիսյաններ – Ռ. Ն.] հայոց երկրի թագավոր էր կարգվել հռոմեացիների օգնությամբ, ամուսնացած էր իր եղբոր՝ Իբերիայի արքա Փարասմանի դստեր հետ, իսկ սրանցից ծնված աղջիկը՝ Զենոբիան՝ Փարասմանի որդի՝ գահաժառանգ Հռադամիստի կինն էր: Այսպիսով՝ Միհրդատն էլ աներն էր և հորեղբայրը Փարասմանի որդի Հռադամիստի [գիրք XII, գլ. 46, էջ 57]:

Այս նույն հաղորդումից տեղեկանում ենք Վիրքի արքունիքում ևս մեկ ամուսնական սովորույթի՝ բազմակնության մասին: Արքունիքում միևնույն ժամանակ պայքար էր ծավալվել Փարասմանի երկու կանանց՝ Համազասպուհի և Դադանա թագուհիների միջև: Համազասպուհին ատում էր Հռադամիստին և գահաժառանգ էր համարում իր դեռահաս Համազասպ որդուն, իսկ Դադանան ամեն կերպ հրահրում էր Հռադամիստին գրավելու հոր գահը[248]: Տակիտոսի հի-

---

[247] **Քսենոփոն,** Կյուրոպեդիա, գ. VIII, գլ. V, էջ 351:

[248] Տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, 703-733 (տե՛ս էջ 727):

շատակած վրաց թագավոր Միհրդատին (շուրջ 35-74 թթ.) հաջորդած նրա որդի Փարասմանի կինը՝ Մցխեթա մայրաքաղաքի 75 թ. արձանագրության մեջ հիշատակված Համազասպուհին, հայ արքայադուստր պետք է եղած լիներ[249]: Սրանց որդին էր արքայազն Համազասպը: Համազասպուհի թագուհին հավանաբար թագաժառանգ Հռադամիստի խորթ մայրն էր: Վրացական աղբյուրների համաձայն՝ հիշատակություն կա Փարասման թագավորի մի այլ կնոջ՝ Դադանայի վերաբերյալ, որը ներկայացված է որպես «Հայոց թագավորի դուստր», բայց արդեն ոչ հայկական ծագմամբ:

§ 2.4.7. ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տակիտոսի ուշադրությունից դուրս չեն մնացել հին հայ հասարակական կյանքի և ազգագրական այլ կողմերի վերաբերյալ տեղեկությունները: Այսպես, անտիկ դարաշրջանի Հայաստանի հասարակությունը բաղկացած է եղել երկու հիմնական սոցիալական շերտից՝ հասարակ ժողովրդից և ազնվական ավագանուց, որոնց Տակիտոսն անվանում է nobiles, proceres gentium, primores և primores gentium: Այդ ժամանակաշրջանում նախկին տոհմապետերը և ցեղապետերը, ինչպես ենթադրում է Ադոնցը[250], դարձել էին արդեն իշխանավորներ: Տակիտոսն առանձնապես հիշատակում է Հայաստանի մագիստաններին (magistanes)՝ մեծամեծերին, որոնք ունեցել են խոշոր կալվածքներ և ապրել են ամրոցներում, որ գտնվել են ամենուրեք, ինչպես դաշտային տեղերում, նույնպես և բարձունքների վրա[251]: Գիրք XII-ի 51-րդ գլխում, երբ խոսվում է վրաց Հռադամիստի կնոջը՝ Զենոբիային փրկելու և առաջին օգնությունը ցույց տալու մասին, նշվում է, որ բուժում են և «… տանում են նրան Արտաքսատա (Արտաշատ) քաղաքը. **այնտեղից հասարակական ծախսով** ուղարկվում է Տիրիդատի (Տրդատ հայոց թագավորի) մոտ, ընդունվում է սիրալիր և ապրում է թագավորական կենցաղով» [էջ 67]: Ուշադրություն դարձնենք «հասարակական ծախսով» բնորոշմանը, որից

---

[249] Տե՛ս **Г. А. Меликишвили,** К истории древней Грузии, Тбилиси, 1959, էջ 343-344:
[250] Տե՛ս **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 435:
[251] Տե՛ս **Հ. Մանանդյան,** Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 165:

հետևում է, որ հին Հայաստանում կենսունակ է եղել համայնքային, հասարակական օգնություն կազմակերպելու սովորույթը:

§ 2.4.8. ԱԿՆԱՐԿ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ, ՁԵՎԵՐԻ, ՉԱՓ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տակիտոսը հակիրճ նկարագրություններ ունի նաև Հայաստանում բեռների փոխադրության ձևերի, մասնավորապես ուղտերի քարավաններով հռոմեական զորքին հաց մատակարարելու [գիրք XV, գլ. 12, էջ 109], Եփրատ և Տիգրիս գետերի վարարումները հանդարտեցնելուն ուղղված շքեղազարդ ձիերի զոհաբերությունների ծիսակատարությունների մասին [գիրք VI, գլ. 37, էջ 33]: Հին Հայաստանում ևս ձիու շքեղազարդման սովորույթը հասել էր կատարելության: Այս տեսանկյունից բնորոշ է այն հանգամանքը, որ թամբագործության կամ ձիասարքի արհեստից (սառաջ) աստիճանաբար բաժանվել և ինքնուրույն արհեստ էր դարձել ձիազարդի պատրաստման (մուտաֆ) հնագույն զբաղմունքը, այստեղից էլ այդ արհեստներից ծագած՝ **Սառաջյան** (թամբագործյան) և **Մութաֆյան** ազգանունները[252]:

Գետերի հորդումները հանդարտեցնելու համար, հռոմեական հին սովորույթի համաձայն էլ, զոհաբերում էին նաև խոզ, ոչխար, եզ [գ. VI, գլ. 37, էջ 33]: Հին պարսկական սովորույթի համաձայն՝ շքեղազարդ ձիերի զոհաբերություն էին կատարում Միհրական տոներ-ին, ինչպես հայերը՝ Արև (հելիոս) Աստծուն[253:]

Տակիտոսը մանրամասն տեղեկություններ է հաղորդում նաև տարածության, չափի միավորների մասին, ինչպես, օրինակ՝ **քայլը, օրը, ստադիոնը**: Հատկանշական է, որ այս միավորները կիրառական էին նաև Հռոմի տիրապետության տակ գտնվող երկրներում, այդ թվում՝ և Հայաստանում: Այսպես, նա գրում է, թե հռոմեական զորավար «Պետոսը [իր զորքով] մեկ օրում անցել էր 40 հազար քայլ» [գիրք XV, գլ. 16, էջ 115]: Այն կազմում էր մոտ 40 մղոն կամ 62,2 կմ: Զորքի սովորական ընթացքի դեպքում դա երկու օրվա ճանապարհ էր: Կամ՝ «երկու օրվա ընթացքում հռոմեական զորքը կտրում անց-

---

[252] Այս մասին տե՛ս **Լ. Պետրոսյան,** Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ: ՀԱԲ, հ. 6, Ե., 1974, էջ 143:

[253] Տե՛ս **Քսենոփոն,** Անաբասիս, գիրք XI, XIV, 9:

նում է երեք հազար ստադիոն տարածություն», իսկ ստադիոնը կազմում էր մոտավորապես 184,4 մետր կամ 600 ոտնաչափ [գիրք XI, գլ. 8, էջ 43]: Այդ նշանակուում է, որ երկու օրվա ընթացքում հռոմեական զորքը կտրել անցել է 55 կմ 320 մետր: Տակիտոսը հաղորդում ունի նաև փոխադրամիջոցի՝ «ծածկած կառքերի» վերաբերյալ, որ գործածվելիս են եղել արքունական կանանց և երեխաների ճանապարհորդությունների համար [գիրք XI, գլ. 47, էջ 61]: Պատմիչի հավաստմամբ՝ ռազմարվեստում որպես հեծելազորի և փոխադրության միջոց, բացի ձիուց, հիշատակվում է նաև պարթևների և հռոմեացիների կողմից օգտագործվող փիղը. պարսից թագավորը, «փիղ նստած, իսկ նրա մերձավորներից յուրաքանչյուրը, ձի հեծած, ճեղքում էին Արսանիա (Արածանի) գետը, որովհետև լուր էին տարածել, թե կամուրջ կառուցողների նենգության պատճառով ծանրությանը չի դիմանա» [գիրք XV, գլ. 9, էջ 105]: Նույն տեղում կարդում ենք նաև նավերը բարձած ամրոցներ քանդող ռազմական **բաբանների, բալիստների** և **աշտարակների** տեղափոխման մասին. «Գետով [Եփրատ] հռոմեացիները առաջ են քաշում իրենց մեծությամբ աչքի ընկնող նավերը, որ միացած են իրար հետ գերաններով և ուժեղացրած էին աշտարակներով, բաբանների ու բալիստների օգնությամբ նա (Կորբուլոնը) քշում է բարբարոսներին» [գիրք XV, գլ. 9, էջ 105]: XV-րդ գրքի 11 գլխում էլ տրված է, թե Հայաստանում հռոմեական զորքին, բացի ռազմական պիտույքներից, ուղեկցում էին նաև հացով բարձված մեծաքանակ ուղտեր» [գիրք XV, գլ. 11, էջ 109]: Ակնարկներ կան պատերազմների ժամանակ վտանգը կանխելու կամ հաղորդակցվելու համար գործածված ազդափողի (շեփոր) և կրակի ու ծխի միջոցների մասին [գիրք XV, գլ. 30, էջ 127]:

Այսպիսով, թեև հույն պատմագիր Տակիտոսի գրավոր ժառանգությունը ամբողջական պատկերացում չի տալիս մ.թ. I դարում Հայաստանի ու հայերի մասին, սակայն դրանում առկա վկայությունները կարևոր սկզբնաղբյուր են այդ ժամանակաշրջանում հայոց պետության պատմաքաղաքական, աշխարհագրական, ռազմատնտեսական, մշակութային վիճակի մասին բազմաթիվ հարցերի լուսաբանման համար, մասնավորապես կարևոր են պատմիչի թողած ազգագրական բնույթի տեղեկությունները հայ ժողովրդի նիստուկացի, հարևան երկրների հետ շփումների, սովորությունների վերաբերյալ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մենագրության մեջ ներկայացվում են անտիկ դարաշրջանի հունական և հռոմեական պատմագրության ականավոր ներկայացուցիչներ Հերոդոտոսի, Քսենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Ստրաբոնի, Պլուտարքոսի, Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսի, Ապպիանոսի, Դիոն Կասսիոսի, Գայոս Կոռնելիոս Տակիտոսի աշխատությունների այն տեղեկությունները, որոնք հիմնականում վերաբերում են հայոց պատմաաշխարհագրական, ժողովրդագրական և կենցաղամշակութային բնութագրին: Սրանցից Հերոդոտոսի երկն առաջին պատմագրական աշխատությունն է, որտեղ որոշակի ծրագրով է շարադրվել համաշխարհային պատմությունը՝ օգտագործելով գրավոր և բանավոր աղբյուրներ, վիմագիր արձանագրություններ, ճանապարհորդությունների ընթացքում հավաքած տեղեկություններ և տպավորություններ: Նրա «Պատմություն ինը գրքից» աշխատությունը համաշխարհային պատմության և մշակույթի անգնահատելի սկզբնաղբյուր է: Աշխատության մեջ հավաստի տեղեկություններ են վկայված նաև հին Հայաստանի պատմական աշխարհագրության՝ տարածքի, պատմական սահմանների, մասնավորապես երկրի հարավարևմտյան, հարավային և հարավարևելյան կողմերի, վարչաքաղաքական առումով Աքեմենյան Պարսկաստանի XIII և XVIII սատրապությունների տարածքը կազմելու վերաբերյալ: Հայաստանի տարածքին պատմագիրն անդրադառնում է Փոքր Ասիայի կենտրոնական մասում Հալիս գետի հոսանքին հարող երկրներին, նշում, որ գետի ակունքը Հայկական լեռներն են: Այդ նշանակում է, որ Հայաստան (Արմենիա) երկրի հյուսիսարևմտյան սահմաններն ընդգրկել են Հալիսի ակունքները: Ուշագրավ է նաև Հայաստանի հարավով ձգվող «արքայական ճանապարհի» վերաբերյալ հիշատակությունը (56.5 փարսախ՝ 340 կմ): Առանձին խումբ են կազմում հին հայերի տնտեսական կյանքի և նյութական մշակույթի, հասարակական, քաղաքական հարաբերությունների, հին Հայաստանի էթնիկ կազմի, հարևան երկրների ու ժողովուրդների հետ ունեցած փոխշփումների, նրանց սովորութամշակութային կյանքի ու այլ բնագավառների վերաբերյալ տեղեկությունները: Ուշագրավ են Հերոդոտոսի հայերի ծագման վերաբերյալ հաղորդումները, որոնք հիմք հան-

դիսացան գիտական շրջանառության մեջ դրված և բավական տևական ժամանակ ընդունելի դարձած հայերի ծագման փռյուգիական վարկածի առաջ քաշման համար: Փռյուգիացի և հայ զինվորների համանման հագուկապի, հայերենում փռյուգերեն բառերի առկայության վերաբերյալ փաստերը չեն կարող հիմք հանդիսանալ մի ժողովրդի՝ մյուսից առաջանալու վարկածի առաջքաշման համար: Պատմագրի գրքում խոսվում են նաև Աքեմենյանների գերիշխանության շրջանում հայ-արմենևներից գանձվող հարկերի, պարսկական բանակի կազմում հայկական զորքի ու նրա սպառազինության մասին: Պատմագրի հիշատակած XIII և XVIII պարսկական տերության նահանգները, որի զգալի մասը կազմում էին հայկական տարածքները, որպես հարկ՝ պարսկական արքունիք էր վճարում համապատասխանաբար՝ 400 և 200 տաղանդ արծաթ: Սա խոսուն փաստ է հայ-արմենների տնտեսական կարողությունների մասին: Շատ արժեքավոր են անտիկ Հայաստանի տնտեսական կյանքում երկրագործության, անասնապահության՝ «առատ անասունների հոտեր ունենալու» և հատկապես մեր երկրից առաքվող «փյունիկյան» գինու Եփրատ գետով կատարվող առևտրի վերաբերյալ Հերոդոտոսի հիշատակությունները: Բացառիկ արժեքավոր է Հայաստանից առաքվող «փյունիկյան» գինու առևտրի վերաբերյալ պատմագրի հիշատակությունը: Ըստ նրա՝ հայկական գինին աչքի էր ընկնում առանձնահատուկ բուրավետությամբ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն պատրաստվել է «մուսկաթ» տեսակի խաղողից, որը հավանաբար, ուսումնասիրողների կարծիքով, այստեղ արտադրվել է դեռևս ուրարտական ժամանակաշրջանում: Այս փաստերը հաստատում են մեր երկրի գինու արտադրության, նավագնացության, նավաշինության հնագույն երկիր լինելու հանգամանքը, որը հաստատվում է նաև հնագիտական պեղումների արդյունքներով: Սույն աշխատության մեջ ցույց է տրվում, որ Հերոդոտոսի նկարագրած այդ բեռնատարողունակ նավերը փայտամած լաստահատակ պետք է ունենային և, որ տակից անպայման օդալից տկեր կապած, տկալաստ նավեր պետք է լինեին: Առաջ է քաշվում նաև միջազգային առևտրին հայերի հնարավոր մասնակցության խնդիրը: Հերոդոտոսի հաղորդումներից երևում է, որ Բաբելոնի և Հայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել: Պատմագրի հիշատակությունն-

ներում հանդիպում են նաև ակնարկներ ներկերի ստացման և ներկատու բույսերով բրդե գործվածքների նկարազարդման և ժողովրդական բժշկության վերաբերյալ: Բերված են նաև հայերի հարևանությամբ ապրող պարսիկների, բաբելոնացիների, մասագետների և այլոց հանդերձանքի, կենցաղում տեղ գտած աղջիկների վաճառքի, ամուսնաընտանեկան և ծիսապաշտամունքային մի քանի սովորույթների վերաբերյալ հիշատակությունների բնութագրությունը: Հերոդոտոսի հին Հայաստանի և հայերի վերաբերյալ տեղեկություններն անգնահատելի սկզբնաղբյուր են, քանզի դրանք եզակի են ու արժանահավատ:

Հերոդոտոսին հաջորդած Ք.ա. V-IV դդ ականավոր պատմագիր ու գրող Քսենոփոնի թողած հարուստ պատմագրությունից մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» անվանումներով աշխատությունները, որոնցում հայ ժողովրդի պատմության և տնտեսամշակութային կյանքի մի ամբողջ դարաշրջան է լուսաբանվում: Պատմագրի հաղորդած տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին միանգամայն արժանահավատ են ու վստահելի, որովհետև անձամբ է եղել մեր երկրում, անմիջականորեն է առնչվել նկարագրվող դեպքերին, շփվել հայ-արմենների հետ, ուստի և նրա հաղորդումները բացառիկ են: Քսենոփոնի այդ աշխատությունները հայ ժողովրդի պատմության, հայ կյանքի բոլոր կողմերի վերաբերյալ անուրանալի աղբյուրագիտական արժեք ունեն:

Սույն մենագրության մեջ Քսենոփոնի վկայությունների հիման վրա հեղինակը առաջին ենթագլխում անդրադարձել է Հայաստանի պատմաաշխարհագրական, քաղաքական և ժողովրդագրական կառուցվածքին, մասնավորապես հին Հայաստանի տարածքին ու նրա սահմաններին: Պատմագրի վկայությունները հիմնականում վերաբերում են մեր հայրենիքի հարավային և հյուսիսային կողմերին: Հաջորդ ենթագլխում ներկայացվում է Հայաստանի զինուժի թվաքանակին, սպառազինության, հին հայերի՝ որպես ռազմիկ ժողովուրդ լինելու, ազատատենչ ոգու և անկախության ձգտումների վերաբերյալ: «Կյուրոպեդիա» աշխատությունից տեղեկանում ենք, որ հայոց թագավորը պարտավոր էր մեդական թագավորին տրամադրել իր զինական ուժի կեսը՝ 20 հազար հետևակ և 4 հազար հեծելազոր:

Երրորդ ենթագլխում ներկայացվում է հին Հայաստանի էթնիկ պատկերը: Արմեններից բացի, եթե Հերոդոտոսը հիշատակում է

սասպեյրներին, ալարոդներին, մատիեններին, ապա Քսենոփոնը հիշատակում է Հայկական լեռնաշխարհի էթնիկ մի շարք այլ խմբեր ևս՝ խալդայներ, խալյուբներ, կարդուխներ, մարդեր, տաոխներ, փասիաններ, հեսպերիտներ, որոնց մեծ մասը, ըստ էության, ձուլվել են հայերի հետ՝ հետքեր թողնելով լեզվի, մշակույթի, մարդաբանական տիպի վրա: Մեկնաբանվում են, վերոնշյալ էթնիկ խմբերից բացի, նաև սկյութական ցեղերի պատմական, տեղագրական, ժողովրդագրական, տնտեսամշակութային և ռազմական կյանքի բնութագրերի վերաբերյալ պատմագրի ուշագրավ վկայությունները: Պատմագրի վկայություններում ընդարձակ, բայց և ուշագրավ տեղ է գրավում հին Հայաստանի և հայերի վերաբերյալ տնտեսամշակութային բնութագրությունը: Ուրիշ և ոչ մի սկզբնաղբյուր այնքան ծավալուն, բացառիկ և արժանահավատ վկայություններ չի թողել հին հայերի երկրագործական մշակույթի, ոռոգման համակարգերի, Տիգրիս գետից սնուցվող 4 խորը և լայն ջրանցքների, նրանցում նավարկվող հացատար նավերի, երկրագործական բարիքների, ցորենից ու գարուց պատրաստված հացի, մորթելու անասունների, և հատկապես կրաշաղախով ծեփված հորերում և կարասներում պահվող անուշահոտ գինու, գարեջրի, ձիթայուղերի, օծանելիքի ստացման յուրահատուկ եղանակների և այլնի վերաբերյալ: «Արմենիան մեծ երկիր է ու հարուստ». Քսենոփոնի այս խոսքերը հաստատվում են Հայկական լեռնաշխարհի վրայով հելլեն վարձկանների նահանջը նկարագրող ամեն մի էջով: Ավելի քան 10.000 զորքը՝ իր բազմահազար բեռնակիրներով ու ստրուկներով հանդերձ, վերադարձի ճանապարհին Արմենիայով անցնելիս առատորեն գտնում է ամեն տեսակ բարիք ու բարեհաջող հասնում է Սև ծովի ափերը:

Քսենոփոնը հակիրճ և արժեքավոր ակնարկներ ունի նաև անասնապահության, հատկապես հեռազնա անասնապահության, հայկական ընտիր ձիատեսակների և ձիաբուծության, որսորդության՝ որպես մարզական և պատերազմի վարժվելու ռազմական զբաղմունքի վերաբերյալ: Ուշագրավ են վկայությունները նաև արհեստագործության, մասնավորապես փայտամշակության ու որմնադրության, չափ ու կշիռների, հաղորդակցության ազդանշանային պայմանական միջոցների, ժողովրդական փոխադրամիջոցների ու սարքերի, հյուրերին անվտանգ, ապահով ճանապարհելու, հայկական ինքնատիպ հյուրընկալության, օտարականների նկատմամբ հայ-արմենների գթառատ լինելու սովորույթների վերաբերյալ: Եզա-

կի և բացառիկ արժեքավոր են պատմագրի՝ հայ-արմենների բնակավայրերի տիպերի, գյուղական գետնափոր տների, անասունների հետ ընտանիքի անդամների համատեղ կենսակերպի, տան ներսույթի, տարազի, ագանելիքների, գորգերի, զենքի ու զրահի և այլնի վերաբերյալ հանգամանալի տեղեկությունները:

Անչափ ուշագրավ և բացառիկ կարևոր վկայություններ է հաղորդել նաև հին հայերի ընտանիքի նրա կազմի ու կառուցվածքի, ներընտանեկան կյանքի, հայոց արքունական պալատում հարճեր պահելու, մերձամուսնության, մահվան և հուղարկավորման հնագույն սովորույթների վերաբերյալ: Ուշագրավ են նաև պատմագրի վկայությունները հին Հայաստանի հասարակական կառուցվածքի, գյուղական համայնքի վերաբերյալ հավաստումները, որոնց հիման վրա ներկայացվել են պատմագիտության մեջ ընդունելի արդի մեկնաբանությունները:

Հունական դասական պատմագրության աչքի ընկնող դեմքերից մեկի՝ Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան»՝ 40 գրքից բաղկացած աշխատությունը թեև մեզ է հասել կիսով չափ կորստի մատնված, սակայն հայագիտության համար կարևոր նշանակություն ունի, քանի որ, ի շարս տարածաշրջանի պատմության և կենցաղամշակութային բնութագրի, արժեքավոր տեղեկություններ է պարունակում նաև Հայաստանի և հայերի մասին: Այն եղել է հայոց պատմահոր՝ Մովսես Խորենացու գլխավոր աղբյուրներից մեկը: Դիոդորոս Սիկիլիացին պատմագիրների մեջ առաջինն է, որ «Պատմական գրադարան» աշխատության մեջ տվել է հին Հայաստանի աշխարհագրական տարածքը բնորոշող Արմենիա անվանումը: Առանձնապես օգտակար են տեղեկությունները Սատրապական Հայաստանի (Ք.ա. V դարավերջ) վերաբերյալ: Ներկայացվում են այդ ժամանակաշրջանում ծավալվող պատմաքաղաքական իրադարձությունները՝ պատերազմները, Հայաստանի տարածքով հունական զորքի նահանջի ուղին, Արմենիայի բնակլիմայական, աշխարհագրական պայմանները: Ուշագրավ են նաև տնտեսամշակութային կյանքի, տարածության և ժամանակի չափման համակարգերի, բնակարանների և բնակավայրերի, հեթանոսական աստվածություններին ուղղված զոհաբերություններ կատարելու սովորույթների, հավատալիքների վերաբերյալ վկայությունները, ինչը զգալիորեն լրացնում են Քսենոփոնի «Անաբասիս» աշխատության նույն ժամանակահատվածին վերաբերող հաղորդումները: Ուսումնասիրողները, ել-

նելով Դիոդորոս Սիկիլիացու հիշատակած Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո նրա զորահրամանատարների միջև բաժանված սատրապությունների վերաբերյալ ցուցակներից, կարծիք են հայտնում, թե նրանցից և ոչ մեկում հիշատակված չէ Արմենիան՝ ո՛չ Մեծ Հայքը և ո՛չ էլ Փոքր Հայքը, հետևաբար բացառում են Մակեդոնացու կողմից Հայաստանի նվաճված լինելը:

Ուշագրավ են նաև III-II հարյուրամյակների վերաբերյալ պատմական անցքերի, արմեններին հարևան նախահայկական ուրիշ ցեղերի և Հայաստանի հարևանությամբ ապրող կովկասյան ու իրանական, Սև ծովի առափնյա ցեղերի՝ մակրոնների, կոլխերի, սկյութների, մոսինոյկների, կադուսիների և այլնի կենցաղամշակութային կյանքի, սովորույթների, արհեստների, տարազի, սպառազինության, հավատալիքների, ինչպես նաև արամերեն գրի՝ որպես գրասենյակային լեզվի կիրառման վերաբերյալ տեղեկությունները, որոնք կարևոր սկզբնաղբյուր են անտիկ դարաշրջանի հայոց պատմության և ազգագրության համար:

Մենագրության հունական սկզբնաղբյուրներից անտիկ դարաշրջանի չորրորդ հեղինակը Ստրաբոնն է: Նրա «Աշխարհագրությունը», ի շարս այլ երկրների ու ժողովուրդների, բարձրարժեք ու հավաստի սկզբնաբյուր է նաև Հայաստանի բնության աշխարհագրության և հատկապես տնտեսամշակութային կյանքի ուսումնասիրության համար: Այն լրջագույն վավերագիր-փաստաթուղթ է, որը ոչ միայն վկայում է հայ ժողովրդի հնագույն լինելը, այլև հստակ օրինակներով ու փաստերով ներկայացնում է հայկական հզոր պետական միավորման դերը տարածաշրջանում: Առաջին ենթագլխում ներկայացվում են Ստրաբոնի՝ Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական և վարչաքաղաքական բնութագրի հավաստումները: Մանրամասնությամբ ներկայացվում են բոլոր ուղղություններով Հայաստանի ու մեր անմիջական հարևանների հետ ունեցած սահմանները, հայոց Արտաշես արքայի կառավարման տարիներին մեր երկրի սահմանների ընդարձակման, հայկական երեք ինքնուրույն պետական միավորումների՝ Մեծ Հայքի, Ծոփքի և Փոքր Հայքի, նրանցում ընդանուր լեզու դարձած հայերենի և հետևաբար՝ հայ ժողովրդի կազմավորման գործընթացի ավարտի, Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման ու նրանց բնակեցման վերաբերյալ տեղեկությունները: Փաստենք, որ Ստրաբոնի հաղորդած տեղեկութ-

յունները հնարավորություն են տալիս որոշելու հին Հայաստանի տարածքները և քաղաքական վիճակը Ք.ա. II դարի սկզբում: Ուշագրավ են Ստրաբոնի հավաստումները Հայաստանում իշխողների հաջորդականության վերաբերյալ: Ճշգրտությամբ վկայված են Հայաստանի ջրագրությունը, լեռնագրությունը, բնական հարստությունները:

Առանձին ենթագլխով ներկայացվում են հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ Ստրաբոնի հիշատակումները և դրանց վերաբերյալ հեղինակի կատարած մեկնությունները՝ Արմենիա և արմենիներ անվանումների առաջանալը արգոնավորդների առասպելի հերոսներից մեկի Արմենոս Թեսալացու անվանումից, հայերի ծագման թեսալական վարկածի անընդունելի լինելու, ապա նաև հայերի, ասորիների ու արաբների ցեղակից լինելու վերաբերյալ Ստրաբոնի վկայությունները:

Մենագրության մեջ ընդարձակ տեղ է հատկացված հարևան ցեղերի ու ժողովուրդների մասին Ստրաբոնի հաղորդած տեղեկությունների մեկնությանը: Նրանցում հիշատակված է աղվանների, կարդուխների, սկյութների, սարմաթների պարզ ու նահապետական կյանքը: Ստրաբոնը հավաստի և ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հին հայերի արտադրական և կենսապահովման մշակույթի՝ երկրագործական գործիքների, Կուր և Արաքս գետերի ջրարբիացնող հատկանիշների, Հայաստանի մարդաշատ դաշտավայրերի, հացի առատ պաշարների, Հայաստանը այգեշատ և գինեվետ երկիր լինելու, խաղողի առատ բերքի, ընտիր գինու, անասնապահության, ընդարձակ արոտներով երկիրը հարուստ լինելու, մասնավորապես պատերազմական նեսեական տեսակի, տոհմական ընտիր ավելի ճկուն ու ուժեղ ձիաբուծության իրական հայրենիք լինելու մասին: Ըստ նրա հաղորդման՝ Հայաստանը Պարսկաստանին որպես տուրք էր վճարում միհրական տոների համար տարեկան 20.000 քուռակ: Ակնարկներ ունի նաև արհեստագործության, շինարարական արհեստների, հին հայերի ճարտարապետական հմտությունների, ինչպես նաև Հայաստանի և Մարաստանի միջով ուղտերի քարավաններով հնդկական ու բաբելոնական ապրանքների վաճառահանման, հայերի հնարավոր մասնակցությամբ առևտրի, փոխանակության վերաբերյալ: Ուշագրավ են նաև ժամանակի, տարածության, կշիռների միավորների ժողովրդական փոխադրամիջոցների և կապի մի-

ջոցների, ձյան տակ հայտնված բնակավայրերի՝ աղետից փրկվելու հմտությունների վերաբերյալ տեղեկությունները: Մենագրության մեջ ուշադրություն է դարձվել տարազի, այն թեսալականին և մարականին նմանեցնելու, ագանելիքների տարբեր տեսակների և այլնի վերաբերյալ Ստրաբոնի հավաստումներին: Բացառիկ են հին հայերի պաշտամունքի վերաբերյալ հիշատակությունները: Հանգամանորեն են ներկայացվում Հայաստան երկրի հովանավոր աստվածուհու՝ Անահիտ դիցուհու պատվին կառուցվող տաճարների, երինջների ճակատները ջահաձև խարանելու և զոհաբերելու, Անահիտի արձանը մեհյանների շուրջը ծիսական արարողությամբ, բազմահազար հավատացյալների հանդիսությամբ երգով ու աղոթքներով պտտեցնելու, պարահանդեսների, նրա տոնական օրերին կազմակերպվող ազնվական դասի աղջիկների անձնատրության՝ աստվածուհու պատվին կուսությունը նվիրաբերելու բացառիկ սովորույթները: Կրոնական հետերիզմի վերաբերյալ պատմագրի այս հավաստումների պատմագիտական տեսակետները իրենց արտացոլումն են գտել սույն մենագրության մեջ: Աշխատության մեջ ներկայացվում են նաև գետերի վարարումները կանխելու նպատակով շքեղազարդ ձիերի զոհաբերման ծիսակատարությունների, ժողովրդական հավատալիքների, բժշկության վերաբերյալ հավաստումները: Անկասկած, Ստրաբոնի սույն աշխատությունը բացառիկ սկզբնաբյուր է հայոց անտիկ դարաշրջանի պատմության և ազգագրության համար:

Հայոց պատմության և մշակույթի անտիկ դարաշրջանի կարևոր սկզբնաղբյուրներից է հունական պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչ Պլուտարքոսի աշխատություններից «Զուգահեռ կենսագրություններ» երկը, որտեղ զուգահեռաբար ներկայացվում են նշանավոր հույների և հռոմեացիների կենսագրությունները, ներկայումս այս երկասիրությունը արժեքավոր պատմական աղբյուր է: Երկասիրության մեջ մեծ թվով տեղեկություններ կան Ք.ա. I դարի Հայաստանի և հայերի քաղաքական ու մշակութային կյանքի վերաբերյալ: Պատմաքաղաքական անցուդարձերից բացի՝ կարևոր տեղեկություններ են հաղորդվում նաև Հայաստանի տարածքային սահմանների, Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման, կարթագենացի զորավար Հաննիբալի խորհրդով և ցուցումով Արտաշատի հիմնադրման վայրի և նրա նախագծով քաղաքի կառուցապատման, նրանց ժողովրդագրական պատկերի վերաբերյալ: Ըստ պատմագրի՝ Արտաշա-

տը ունեցել է մեկ միասնական հատակագիծ, որն ապացուցվում է նաև հնագիտական պեղումների տվյալներով: Մանրամասներ ենք իմանում Տիգրան Մեծի կողմից Անտիոքը Մեծ Հայքի մայրաքաղաք դարձնելու և ապա Տիգրանակերտ մայրաքաղաքը հիմնադրելու վերաբերյալ: Ուշագրավ տեղեկություններ են հաղորդվում երկրի ու բանակի էթնիկ կազմի, Տիգրան Մեծի Կիլիկիայից ու Կապադովկիայից քաղաքային օտար բնակչության վերաբնակեցումների վերաբերյալ: Ըստ Պլուտարքոսի՝ Տիգրան Մեծը տեղահան էր անում հունական քաղաքային ամբողջական համայնքներ: Նոր հիմնադրվող քաղաքների շենացումը հիմնականում կազմակերպվում էր «սինոյկիսմոսի» համաբնակեցման միջոցով: Այդուհանդերձ, օտարերկրացիները չէ, որ կազմում էին հայկական քաղաքների հիմնական բնակչությունը, այլ տեղական հայ բնակչությունը, որը հայոց արքաների ռազմական նեցուկն էր: Ուշագրավ են նաև պատմագրի վկայությունները հայկական բանակի վերաբերյալ: Ըստ նրա՝ Տիգրանի բանակում կռվում էին իրենց համայն զորքով, բացի հայերից, նաև գորդիենները (նախահայերից՝ կորդվացիները, որոնք հետագայում ձուլվեցին հայ ժողովրդի մեջ), մեդիացի և ադիաբենացի արքայիկները, արաբական մեծաթիվ զորքերը, աղվանից և իբերների ամբոխները և այլ ենթակա ցեղերի զորախմբերը: Պատմագիրը ներկայացնում է նաև հայկական բանակի սպառազինության և ռազմավարության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ: Տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողության ու պաշտպանության համար Տիգրան Մեծը խոշորագույն առևտրական մայրուղիների վրա Տիգրանակերտի մերձակայքում բնակեցրել էր արաբական ցեղերի՝ ապահովելու համար նաև երկրի մաքսերի գանձումը, անվտանգությունը: Ուշագրավ են նաև «հարուստ ու ծաղկուն» մեր երկրի տնտեսական կյանքի, հատկապես Տիգրանակերտ մայրաքաղաքի հարստություններին, Հայաստան երկրի անխառն գինու թնդության, արհեստագործության, մասնավորապես ոսկերչության, չափ ու կշիռների, հայոց ազգային հագուկապի վերաբերյալ պատմագրի տեղեկությունները: Վերջինս ակնարկային անդրադարձեր ունի նաև հայոց արքունիքի, կենցաղի, բազմաթիվ կանայք և հարճեր պահելու սովորույթների վերաբերյալ: Ներկայումս անընդունելի է համարվում պալատական հարեմների նույնացումը XIX դարի սուլթանների պալատների կենցաղավարման հետ:

Պատմագրի հիշատակություններում կարևոր տեղ են գրավում

նաև Տիգրան Մեծի օրոք հելլենիստական մշակույթի դրսևորումների, Տիգրանակերտ մայրաքաղաքի արվեստի ու գրականության կենտրոն լինելու, Տիգրան Մեծի պալատական պատմագիրների՝ Ամփիկրատես Աթենացու և Մետրոդորոս Սկեպսիացու գործունեության, այստեղ գործող թատրոնի և մեծ թվով հույն դերասանների, ապա՝ Արտավազդ II-ի հունարեն ողբերգություններ, ճառեր, պատմական երկեր գրելու, պալատական ծեսերի ու պաշտամունքի, Անահիտ դիցուհուն ուղղված զոհաբերությունների, տոնական արարողությունների վերաբերյալ ակնարկները: Առանձնակի ուշագրավ են նաև հռոմեական սովորույթով կազմակերպվող շքեղ հաղթահանդեսների արարողակարգերի նկարագրությունները:

Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսի «Բնական պատմություն» հանրագիտարանային երկասիրության մեջ պատմիչի թողած վկայությունները ներառում են մեր երկրի՝ Ք.հ. I դարի սահմանները, քաղաքներն ու վարչական բաժանումները, բնակլիմայական պայմանները, բնաշխարհը, հանքային հարստությունները, ինչպես նաև մշակութային պատմությունն ու հասարակական հարաբերությունները: «Բնական պատմություն» երկի VI գրքում Հայաստանի տարածքը ներկայացվում է 5 միլիոն քայլ (1950 կմ), երկարությունը արևմուտքից դեպի արևելք՝ Փոքր Հայքից Կասպից ծով՝ 1 միլիոն 300 քայլ, իսկ լայնությունը՝ Տիգրանակերտից մինչև Իբերիա՝ Կուր գետը՝ այդ թվի կեսը (975 կմ): Մեծ Հայքի տարածքը, ըստ էության, կազմում էր 312.795 կմ^2: Այնուհետև պատմագիրն անդրադառնում է Հայաստանի սահմաններին ու տարածքային փոփոխություններին՝ տարածքային կորուստներին (37 թ պարթևա-հռոմեական դաշնագրով այն կազմել է 285.195 կմ^2): Ըստ պատմագրի՝ Մեծ Հայքը բաժանված էր 120 ստրատեգիաների՝ վարչատարածքային միավորների: Երկրի խոշոր քաղաքներից պատմագիրը հիշատակում է Արշամաշատը, Արկաթիոկերտը, Տիգրանակերտը, իսկ Փոքր Հայքում՝ Կեսարիան, Ազան, Նիկոպոլիսը: Մանրամասն տվյալներ է հաղորդում Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող գետերի վերաբերյալ:

Կարևոր հիշատակություններ են հաղորդվում նաև հարևանությամբ գտնվող երկրների ու ժողովրդների՝ ալբանների, իբերների, մոսխերի, սակասենների (շակաշեն), մակրոնների, կովկասյան ցեղերի մասին: Պատմագիրը տեղեկություններ է հաղորդում նաև Հայաստանի հարևանությամբ այլ ցեղերի՝ մենոբարդցիների, մոկսյան-

ների մասին: Նշված ժողովուրդների ու ցեղերի հետ հայերը ունեցել են բազմադարյան առնչություններ, բարեկամական կամ կոնֆլիկտային հարաբերություններ:

Պատմիչը ազգագրական բնույթի այլ ուշագրավ տեղեկություններ էլ է հաղորդում: Դրանցից թվելի են մասնավորապես Անահիտ դիցուհու պաշտամունքի, ինչպես նաև հռոմեական արշավանքներից հետո նրա ոսկեձույլ արձանի ճակատագրի և այլ մանրամասների վերաբերյալ վկայությունները: Ուշագրավ են տեղեկությունները Տիգրան Մեծի կատարած վերաբնակեցումների, այդ թվում՝ տարանցիկ առևտրային ճանապարհների վերհսկողություն սահմանելու համար արաբական թափառական ցեղերի վերաբերյալ: Նրա տեղեկություններում ակնարկներ կան նաև ժողովրդական բժշկության և դրանում տարբեր բուսական ու հանքային նյութերի կիրառման մասին: Թեև Պլինիոս Ավագի թողած տեղեկությունները բազմաբովանդակ ու նորահայտ չեն, այդուհանդերձ դրանք, այլ պատմիչների վկայությունների հետ համադրելով, կարելի է ունենալ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի պատմաքաղաքական, վարչատնտեսական, սոցիոմշակութային առավել ամբողջական պատկերը:

Հայոց պատմության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ թողած սկզբնաղբյուրների շարքին է պատկանում ազգությամբ հույն հռոմեական պատմիչ Ապպիանոս Ալեքսանդրացու «Հռոմեական պատմություն» 24 գրքից բաղկացած աշխատությունը, որտեղ գրել է Հռոմի պատմությունը քաղաքի հիմնադրումից մինչև իր ժամանակները: Այն հիմնականում վերաբերում է Ք.ա. I դարի իրադարձություններին, որը ժամանակագրորեն համընկնում է հայոց արքա Տիգրան Մեծի տիրապետության ժամանակահատվածին: Այն Տիգրան Մեծի պատմության ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկն է:

Ապպիանոսը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Տիգրան Մեծի կողմից Անտիոքը հայոց պետության մայրաքաղաք դարձնելու, իր անվամբ դրամներ հատելու, ապա Տիգրանակերտի հիմնադրման ու կառուցապատման վերաբերյալ: Ըստ պատմագրի՝ Տիգրանակերտը հիմնադրվում է այն վայրում, որտեղ առաջին անգամ արքան դրեց հայոց թագը: Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն (25մ) բարձրությամբ պարսպով և այնքան հաստությամբ, որի մեջ տեղավորվում էին ձիերի բազմաթիվ ախոռներ: Խոսվում է նաև Տիգրանակերտում ար-

քունական պալատի, թատրոնի, զբոսայգիների, որսատեղերի, ձկնավազանների, քաղաքի մերձակայքում հզոր բերդ կառուցելու վերաբերյալ: Պատմագրի տեղեկություններում կարևոր տեղ է հատկացված Տիգրան Մեծի արշավանքների ու նվաճումների, ամբողջական քաղաքային օտար բնակչության վերաբնակեցումների, նաև հայ ավազանու շատ ներկայացուցիչների բնակեցման վերաբերյալ: Այնուհետև անդրադառնում է հռոմեացի զորավար Լուկուլլոսի Հայաստան կատարած արշավանքների, հայոց բանակի էթնիկ կազմի, Տիգրանակերտը այստեղ հաստատված օտար բնակիչների կողմից դավաճանությամբ Լուկուլլոսին հանձնելու, նաև Արածանիի ճակատամարտի մանրամասներին: Հակառակ հռոմեական այլ պատմագիրների՝ Ապպիանոսի գնահատմամբ Ք.ա. 68 թ աշնանը հռոմեական բանակները կրել են ծանր պարտություն և նահանջել: Նրանք երբեք այնքան զորահրամանատարներ չեն կորցրել՝ 24 տրիբուն, 150 ցենտուրիոն, որքան Արածանիի ճակատամարտում:

Ուշագրավ են նաև հայոց երկրի առկա տնտեսական, կենցաղային հարաբերությունների, սովորությունների վերաբերյալ տեղեկությունները: Պատմագիրը հիշատակում է երկրի հացի առատ պաշարների, հայոց արքայի արքայական զգեստների, գլխի հարդարանքների, զինանշան հանդիսացող գլուխները հակառակ կողմ դարձրած արծիվների, արքայական թագի՝ ակնեղենով զարդարված միանձնյա իշխանության խորհրդանիշի մասին: Կարևոր են նաև ժամանակի, տարածության, չափ ու կշիռների և դրամական միավորների մասին հավաստումները:

Պատմագիրը հիշատակություններ է թողել նաև հայ-պարթևական, հայ-մարական խնամիական կապերի, մերձավորների ամուսնական սովորույթների, Արևելքի համար բնորոշ դարձած արքայական պալատական հարեմների, հարճեր պահելու սովորույթների մասին:

Անշուշտ, Ապպիանոսի հաղորդումները հայոց պատմության և Հայաստանի վերաբերյալ այնքան ընդարձակ չեն, որքան անտիկ շրջանի այլ պատմիչների մոտ, սակայն դրանք արժեքավոր են, քանի որ օգնում են լուսաբանել, հատկապես Տիգրան Մեծի թագավորության տարիներին առնչվող մի շարք հարցեր:

Ուշ անտիկ շրջանի հռոմեական խոշորագույն պատմիչներից

մեկն էլ Դիոն Կասսիոս Կոկկեյանոսն է, որի «Հռոմեական պատմություն» երկը կարևորագույն սկզբնաղբյուր է Հին աշխարհի և մասնավորապես Ք.ա. I դ. – Ք.հ. II դ. Հայաստանի պատմաքաղաքական և կենցաղամշակութային կյանքի ուսումնասիրության համար: Նրա հիշատակությունները անհամեմատ ավելի արժանահավատ են, քանզի լինելով զինվորական և քաղաքացիական բարձր պաշտոնյա՝ լայն հնարավորություններ է ունեցել օգտվելու պետական պաշտոնական վավերագրերից ու արխիվային նյութերից: Այդուհանդերձ, սոցիալական դիրքի և պաշտոնի բերումով Դիոն Կասսիոսը անկողմնակալ պատմագիր չէր կարող լինել:

«Հռոմեական պատմություն» երկասիրության մեջ պատմագիրը արժեքավոր տեղեկություններ է հաղորդել հայոց երկրի բոլոր ուղղություններով սահմանների, հարևան երկրների, նրանց հետ սահմանաբաժանների, բնական հարստությունների, տարածքային ընդգրկումների, Եփրատ գետով առանձնացվող երկու Արմենիաների (Մեծ Հայք և Փոքր Հայք), «Անահտական երկրի», Ակիլիսինե՝ Եկեղիք գավառի կազմում Դարանաղի, Մանանաղի, Աղյուն ու Մզուր տարածքների ընդգրկումների, քաղաքների և քաղաքական վիճակի, Վաղարշապատը երկրի մայրաքաղաք ճանաչելու և այլնի վերաբերյալ: Հայաստանի բուն սահմանների մեջ հիշատակում է նաև Ծոփքի, նրանում պահվող հայոց երկրի գանձերի, Արսամոսատա (Արշամաշատ) նախկին մայրաքաղաքի վերաբերյալ տեղեկություններ: Ըստ նրա հիշատակության՝ Կորդուքը, Հյուսիսային Միջագետքը՝ Մծբին կենտրոնով, նույնպես մտնում էր Մեծ Հայքի թագավորության մեջ: Պատմագիրը Փոքր Հայքը անվանել է «մյուս Հայաստան»:

I դարի քաղաքական կացության նկարագրություններում զգալի տեղ են գրավում նաև Հայաստանի երկու՝ Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների շուրջը կատարվող անցքերը:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում են պատմագրի հիշատակություններն այն մասին, երբ Հայաստանը հռոմեացիների ու պարթևների նվաճողական ծրագրերի կիզակետում էր, նկարագրում ռազմաքաղաքական իրավիճակն ու իրադարձությունները: Այստեղ կարելի է ընդգծել, որ սույն հեղինակը, ի տարբերություն Պլուտարքոսի և այլոց, չի մեղանչում պատմական ճշմարտության առջև: Այսպես, նրա հավաստմամբ Տիգրանակերտ մայրաքաղաքը Լուկուլլոսին է հանձնվել ոչ թե ռազմական գործողությունների արդյունքում, այլ քաղաքի օտա-

րերկրյա բնակչության դավաճանության պատճառով: Ըստ նույն պատմագրի հավաստումների՝ 68 թ. աշնանը տեղի ունեցած Արածանիի ճակատամարտը բնութագրվում է որպես հայկական կողմի հաղթանակ, անկասելի հարված հռոմեական բանակին: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Տրդատ I Արշակունու թագադրության հետ կապված շքահանդեսները, նրա պատվին Նեապոլում և Հռոմում անցկացված գեղարվեստական և մարզական միջոցառումների մանրամասն նկարագրությունները, նաև հռոմեացիների կողմից ավերված Արտաշատ մայրաքաղաքի վերաշինության համար Հռոմի կայսեր կողմից տրված նյութական և մարդկային միջոցների վերաբերյալ հավաստումները:

Դիոն Կասսիոսի հիշատակությունների առանձին խումբ են կազմում ազգագրական, մասնավորապես արքայական զգեստի, փոխադրամիջոցների, չափ ու կշիռների, դրամական համակարգերի, հնագույն հավատալիքների, ծիսակարգերի վերաբերյալ տեղեկությունները: Կարևորվում են նաև հայ-պարթևական կենցաղային և ռազմական առնչությունների ու սովորությունների, ռազմատենչ ցեղերի Հայաստան ներխուժումների, նրանց դեմ հայերի պայքարի մասին հավաստումները: Ուշագրավ են նաև հայոց արքաների և իրենց ընտանիքների արժանապատիվ կեցվածքը հզորների հետ շփումներին վերաբերող հիշատակությունները: Տեղեկություններ են հաղորդվում նաև ժամանակին տարածում ստացած տիտղոսների, պետական պաշտոնների, ռազմական զորաշարքերի անվանումների մասին հավաստումները:

Հարկ է ընդգծել, որ Դիոն Կասսիոսի երկը վստահելի սկզբնաղբյուր է հայոց պատմության և մշակույթի վաղ շրջանի ուսումնասիրության համար:

Հռոմեացի պատմիչ Գայոս Կոռնելիոս Տակիտոսը մի շարք աշխատությունների հեղինակ է («Գերմանացիների ծագման և Գերմանիայի տեղադրության մասին», «Տրամախոսություն հռետորների մասին», «Պատմություն» և այլն): Սակայն նրա աշխատությունների գլուխգործոցը մնում է հռչակավոր «Տարեգրություններ» երկը, որտեղ զգալի վկայություններ են պահպանված Հայաստանի և հայերի մասին: «Տարեգրություններ» երկը մեր ժողովրդի տվյալ պատմաշրջանի կարևորագույն սկզբնաղբյուրներից է: Սույն ուսումնասիրության մեջ ներկայացվում են այն հիմնական տեղեկությունները, որոնք օգնում

են լուսաբանել I դարում Հայաստան պետության զարգացման ընթացքի և քաղաքակրթական աստիճանի վերաբերյալ հարցերը, ինչպես նաև անդրադարձ է կատարվում պատմագրի այն դիտարկումներին, որոնք թյուրընկալման կամ միտումնավորության արդյունք են: «Տարեգրություններ»-ում արտացոլվում են Հին աշխարհի պետական և ռազմական ու ծիսական արարողակարգերը, թագադրության պարթևական և հռոմեական սովորույթները, անտիկ շրջանի օտար և հայկական զինանշանային համակարգերը, Հայաստանի քաղաքական կյանքը, հայ-պարթևական, հայ-հռոմեական և հայ-վրացական կապերը: Ընդարձակ տեղեկություններ են հաղորդվում հռոմեա-պարթևական պատերազմների, հռոմեական զորավար Կորբուլոնի ու Պետոսի Հայաստան կատարած արշավանքների, հռոմեական զորքերի պարտության, Հռանդեայի դաշնագրի, Հին աշխարհի ռազմական դիվանագիտության և այլ հարցերի վերաբերյալ:

Կարևոր տեղեկություններ կան Հայաստանի աշխարհագրական դիրքի, սահմանների, տնտեսական վիճակի, մշակույթի, զբաղմունքների մասին: Տակիտոսի ուշադրությունից դուրս չեն մնացել հին հայ հասարակական կյանքի ու ազգագրական մի շարք կողմերի վերաբերյալ տեղեկությունները: Դրանց շարքում հիշատակելի են հասարակության տարբեր խավերի հանդերձանքի, նիստուկացի, կենցաղի, հայերի և իբերների մերձամուսնական սովորությունների վերաբերյալ հաղորդումները: Ուշագրավ են նաև ռազմական ամրոցներ կործանող բաբանների, բալիստների, գետերի վարարումները հանդարտեցնելուն ուղղված զոհաբերությունների, հավատալիքների, բեռների փոխադրման ձևերի, ուղտերի քարավաններով փոխադրումների, ծածկած կառքերով արքունական կանանց և երեխաների ճանապարհորդական սովորությունների, տարածության չափի միավորների և այլնի մասին հիշատակությունները: Տակիտոսի հաղորդումները առավելապես արժեքավոր են ռազմաղաշտային սովորությունների, պետական գործիչների հյուրընկալությունների, որսագնացության, ժողովրդական բարքերի, տարազի, երկրագործության, կրոնական հավատալիքների ու պաշտամունքի և այլ երևույթների վերաբերյալ: Ուշագրավ դիտարկում է Զենոնին Արտաշես անվամբ գահ բարձրացնելը՝ որպես Հայաստանում ժողովրդավարության առաջին նշաններից մեկի դրսևորում, քանզի այն տեղի է ունեցել և՛ հասարակ ժողովրդի, և՛ իշխող դասի ընդհանուր համաձայնությամբ:

ЭТНОГРАФИЧЕСКИЕ ДАННЫЕ ГРЕКО-РИМСКИХ АНТИЧНЫХ ПЕРВОИСТОЧНИКОВ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ

(Резюме)

В монографии представлены сообщения античных греческих и римских известных авторов – Геродота, Ксенофонта, Диодора Сицилийского, Страбона, Плутарха, Гайя Плиния Старшего Секунда, Аппиана, Диона Кассия, а также Гайя Корнелия Тацита – касающиеся в основном исторической географии, демографии и культурно-бытовым особенностям армян.

Наиболее ранним из вышеупомянутых авторов является отец классической истории Геродот (V в. до н. э.). Его труд “История в девяти книгах” - бесценный источник для освещения всемирной истории и культуры древности. Здесь также можно найти достоверные сообщения об исторической географии (территории, границах); согласно Геродоту древняя Армения входила в состав Ахеменидской державы, занимая XIII и возможно часть XVIII ее сатрапий. К северо-западным рубежам Армении Геродот обращается в связи с соседними племенами и народами, граничащими с армянами на востоке Малой Азии в бассейне реки Галис. Причем, историк отмечает, что река берет начало в Армянских горах.

Примечательно и описание знаменитой “Царской дороги” – магистрали, начинающейся у берегов Эгейского моря (в Сардах) и достигающей царской резиденции в Сузах. Часть этой дороги (56.5 парасангов – 340 км) проходила по юго-западным рубежам Армении. Геродот отдельно останавливается на вопросах хозяйства, быта, материальной культуры, общественных и политических отношений, этнического состава, а также освещает взаимоотношения с соседними племенами и народами. Интересны сообщения Геродота о генезисе армянского народа, которые легли в основу одной из гипотез происхождения армянского народа – фригийской гипотезы.

Геродот предоставляет также сведения о вооружении армянского войска, составной части армии Ахеменидов. Весьма ценно сообщение отца истории о торговле вином между Арменией и Вавилоном. Геродоту были известны способы получения растительных красок, как украшались ими разные шерстяные изделия. Сообщения Геродота об Армении и армянах в силу достоверности, таким образом, являются исключительно важным источником.

Ксенофонт, известный древнегреческий историк, будучи военачальником греческих наемников, в конце V в. до н. э. проходил в соста-

ве 10.000 греков через Армению. Греки проникли в Армению через северную Месопотамию, и избегая крупных населенных пунктов и столкновения с их гарнизонами, они шли на север, к берегам Ченого моря. И весь этот путь описан в “Анабасисе” Ксенофонта. Вместе с “Киропедией” - следующим сочинением, Ксенофонта, современные историки получили бесценный фактический материал для освещения целой эпохи ближневосточной истории и культуры. Сведения автора об Армении и разных племенах, населявших страну, достоверны и заслуживают доверия: он лично общался с туземцами, и сведения о них как первоисточники имеют исключительное значение.

В Анабасисе Ксенофонт обращается к исторической географии, демографической ситуации и политической структуре древней Армении, в частностни, территории страны и локализации разных племен. Примечательно вооружения древний армян. Если наряду с арменами Геродот указывал на саспейров, алародов, матиенов, то спустя несколько десятилетий, Ксенофонт перечисляет также ряд племен Армянского нагорья: халдаев, халибов, кардухов, мардов, таохов, пасианов, гесперитов, вошедших вскоре в состав армянского народа и имевших значительный культурный вклад в процессе образования единого народа.

Ни один из древних исторических источников не обращался так подробно к земледельческой культуре древних армян, иригации, навигации (речному транспорту для доставки хлеба) через Тигр и его каналы; Ксенофонт сообщает о пшеничном и ячменном хлебе, о хозяйственных ямах и таре для хранения вина и пива, описывает наличие растительных масел разного назначения. “Армения, страна обширная и богатая” (Ксенофонт, Анабасис, III.V.17): эти слова Ксенофонта подтверждаются в каждой странице труда о передвижениях греческих наемников через Армению.

Ксенофонт сообщает также о скотоводстве, коневодстве, охоте верхом на конях в Армении: охота являлась одним из способов для усовершенствования индивидуальных навыков вождения и взаимопонимания наездников при маневрах, необходимых в военных условиях.

Примичательны также сообщения о ремеслах, в частности обработке дерева, строительном деле, коммуникации с помощью сигналов, о средствах передвижениях. Ксенофонт упоминает и об армянском гостеприимстве. Исключительно важны сообщения о типах поселений у древних армян, о существовании у древних армян сельской общины, о сельских подземных жилищах, интерьере домов, народной одежде, оружии и амуниции. Структура и состав, взаимоотношения внутри патриархальной семьи, погребальный обряд являются предметом описания в следующих частях Анабасиса.

Важные сведения об истории и культуре древней Армении встречаются в “Исторической библиотеке” Диодора Сицилийского. Труды римского историка стали в раннем средневековье, в V веке, источником для “Истории Армении” Мовсеса Хоренаци. У Диодора впервые в историографии встречается термин Армения, хотя это понятие уже известно в лапидарных надписях ахеменидского времени. Диодор касается военных столкновений, политических событий в рамках сатрапства за V в. до н. э., отхода через Армению греческих наемников, природных и климатических, географических условий Армении. Достойны внимания также сообщения Диодора о пространстве и времени, жилищах и поселениях, о практике жертвоприношений в честь языческих божеств, о верованиях древних армян, что дополняет знания об Армении и армянах ахеменидского времени, почерпнутые из Анабасиса Ксенофонта. Факт, что у Диодора после кончины Александра Македонского и раздела бывших персидских сатрапст между его военачальниками не упоминается Армения, дает повод исследователям заключить, что Армения не была завоевана Македонским и являлась независимой.

Диодор продолжает освещать этнографию прибрежных причерноморских протоармянских племен – макронов, скифенов, моссинойков, – а также колхов и племен Кавказской Албании.

Следующим в ряде античных авторов, приведенных в данной монографии, является Страбон, знаменитый географ и историк позднего эллинизма и ранней римской эпохи. В “Географии” Страбона наряду со многими странами и народами ценные и пространные сведения даются также об Армении и армянах, уже как о сложившемся едином народе, доминирующем по всему Армянскому нагорью и Малой Армении. Страбон сообщает как сведения о политической истории страны, а также о ее экономике и кульуре. Страбон характеризует физическую географию Армении и административную структуру. Подробно описаны границы, разделяющие армян от соседних племен в Малой Азии, Восточном Причерноморье и Северной Месопотамии. Страбон четко описывает как при царе Арташесе, в первой половине II в. до н. э., были воссоединены армянские земли, отторгнутые соседями за предыдущие десятилетия. Страбону известно три армянских государства – Великая Армения, Малая Армения и Софена. И общим для них являлась помимо других культурных параметров, также армянский язык. Факт, означающий окончание процесса формирования армянского народа.

Страбон праотцом армян считает аргонавта Армения из Тесалии, одной из областей северной Греции. К тому же географ предполагает общность происхождения армян, сирийцев и арабов, что не подтверждается современной наукой.

Согласно Страбону, Армения богата фруктами и является винообильной страной, страной, богатой разными злаками. По Страбону, наряду с мидийскими славились армянские кони, и ежегодно Армения отправляла в Персию 20.000 коней для жертвоприношений в чест Митры. Страбон подробно освещает культуру жизнеобеспечения армян, производственную культуру, роль армян в международной торговле. Страбон проводит параллели между тесалийской и армянской одеждой.

Исключительно интересны наблюдения Страбона о верованиях и культах древних армян. Страбон особо обращает внимание на культ богини Анаит и практику священной проституции в храмах, воздвигнутых в ее честь. Страбон описывает религиозную процессию к храму Анаит, о священных коровах со знаком богини на лбах этих животных.

Одним из важных первоисточников по истории и культуре Армении эллинистической эпохи является римский историк греческого происхождения Плутарх. Особенно его труд “Сравнительные жизнеописания” широко, но не всегда объективно освещает политическую историю Армении, историю военных столкновений между Арменией и Римом. Плутарх сообщает как были основаны столицы Армении Арташат, не без участия знаменитого полководца Ганнибала, и и Тигранакерт. Автором освещается структура и этнический состав, вооружение войск державы царя царей Тиграна Великого. Дается описание царского двора: здесь творили известные ученые Амфикрат Афинянин и Метродор Скепсийский. Сын Тиграна, Артавазд II, сочинял на греческом трагедии, речи и исторические сочинения. Плутархом засвидетельствованы меры, предпринятые Тиграном Великим для насаждения в державе эллинистической культуры в ее лучших проявлениях.

В “Естественной истории” римского автор Гайя Плиния Старшего Секунда немало место уделено природным ресурсам и истории Армении. Плиний указывает политические границы, административное деление, природные условия страны, некоторые черты ее культуры, общественных отношений. В VI книге автор свидетельствует, что протяженность Армении достигает 5 миллионам шагов (1950 км). Расстояние с запада на восток – от Малой Армении до Каспийского моря равняется 1 млн. 300 шагам, а ширина страны от Тигранакерта – на юге – до границ Иберии – бассейна Куры на севере – составляет половину этого (975 км). Следовательно площадь только Великой Армении к I в. до н. э. равнялась 312.795 км^2. Армения состояла из 120 стратегий. Из крупных городов Великой Армении, помимо Тигранакерта, Плинию известны Арсамосата, Аркатиокерт, а в Малой Армении – Кесария, Аза и Никополь.

Плиний приводит любопытные этнографические данные. В частности он сообщает о культе богини Анаит, о ее золотой статуе и ее судь-

бе. Плиний сообщает о переселении арабов схенитов к одной из переправ через Евфрат. В книге автора сообщается о народной медицине, о применении лекарями растительных и минеральных лекарств.

Следующим римским первоисточником для истории Армении является историк Аппиан. “Римская история” Аппиана касается главным образом событий I в до н. э., проливая свет на историю правления Тиграна Великого. Он сообщает как Тигран сделал Антиохию на Оронте одним из стольных городов, повествует об основании другой столицы Тигранакерт, о фортификационных сооружениях города. Аппиан достаточно объективно рассказывает о поражении римлян при Арацани в 68 г. до н. э. Аппиан приводит полезные сведения об экономике, бытовых особенностях, обычаях и верованиях древних армян. Бесценно описание царского наряда и армянской тиары.

Высокопоставленный римский чиновник и маститый историк Дион Кассий Коккеян в “Римской истории” излагает события I в. до н. э. – II в. н. э. Здесь параллельно политической истории Дион Кассий касается культурно-бытовых особенностей армян. Дион Кассий обращается к политическим рубежам Армении, к вопросу о перемещении столицы из Арташата в Новый город – Кайнополь. Для Диона существуют Великая Армения и Другая, т.е. Малая, Армения к западу от нее. Римский историк освещает как историю правления Тиграна Великого, детали баталий между римлянами и армянами, но также историю взаимоотношений Армении и Рима в I в. н. э., прибытия будущего царя Великой Армении Тиридата I в Рим, дорогих приемов армяно-парфянского посольства в Риме и Неаполе, коронации царя Армении императором Нероном.

Из исторических сочинений Гайя Корнелия Тацита наиболее ценным для освещения истории и культуры Ближнего Востока и в частности Армении являются его «Аннальы». К сожалению, римский автор по отношению к событиям в Армении и самим армянам занимает тенденциозную позицию, что впрочем не умоляет ценность его сообщений и комментариев. Особенно для нашей темы интересны детали сообщений об обычаях, ритуалах, верованиях армян и их соседей.

Названные источники взаимно дополняют друг друга и служат исключительно важной фактической базой для реконструкции истории, материальной и духовной культуры древней Армении.

ETHNOGRAPHIC DATA OF ANCIENT GREEK AND ROMAN SOURCES ON ARMENIA AND ARMENIANS
(Summary)

The monograph presents the records of ancient Greek and Roman distinguished authors – Herodotus, Xenophon, Diodorus Siculus, Strabo, Plutarch, Gaius Plinius Sekundus the Elder, Appianus, Dio Cassius, as well as Gaius Cornelius Tacitus – concerning, in general, historical geography, demography, cultural and household characteristics of ancient Armenians.

The earliest of the above-mentioned authors is the father of classical history Herodotus (5th century BC). His "Histories" is an invaluable source to illuminate the world history and culture of antiquity. Here one can also find reliable reports on historical geography (space and its borders). According to Herodotus, ancient Armenia was part of the Achaemenid Empire, occupying the XIII and possibly part of the XVIII of its satrapies. Herodotus touches to the northwestern borders of Armenia in connection with neighboring tribes and peoples bordering Armenia in the east of Asia Minor in the basin of the Halys River. Moreover, the historian notes that the river originates in the Armenian hills.

Quite noteworthy is description of the "Royal road" – a highway that started off the coast of the Aegean Sea (the initial point was Sardes) and reached the royal residence in Susa. Span of the road (56.5 *parasang*s - 340 km) passed along the southwestern borders of Armenia.

Herodotus separately dwells on questions of economy, way of life, material culture, social and political relations, ethnic composition of Armenians, as well as illuminates relations with neighboring tribes and peoples. Herodotus' reports on the genesis of the Armenian people, which formed the basis of one of the hypotheses of the origin of the Armenian people - the Phrygian hypothesis, are interesting. Herodotus also provides information about the armament of the Armenian army of Orontids, a component of the Achaemenid army. Very valuable is the record of the father of the history about the wine trade between Armenia and Babylon. Herodotus knew the methods of obtaining vegetable paints, decoration of different woolen fabrics. Herodotus' records on Armenia and Armenians, by virtue of their authenticity, are thus an extremely important source.

Xenophon, a well-known ancient Greek historian – being a commander of Greek mercenaries, at the end of the 5th century BC. – along with 10,000 Greeks passed through Armenia. The Greeks penetrated Armenia through northern Mesopotamia, and avoiding large settlements and clashes with their garrisons, they marched northward to the shores of the Black Sea. In addition, Xenophon's Anabasis describes all this way. Together with the "Cyropaedia"

- the next work after Xenophon, modern historians received invaluable factual material for covering the whole era of Middle Eastern history and culture.

The author's information about Armenia and various tribes inhabiting the country are reliable and trustworthy: he personally communicated with the natives, and information about them as primary sources is of exceptional importance.

In Anabasis Xenophon addresses historical geography, demographic situation and political structure of ancient Armenia, in particular, the territory of the country and the localization of different tribes. Remarkable were weapons of the ancient Armenians. If, along with the Armenians, Herodotus pointed to the Saspiri, the Alarodii, the Matieni, then several decades later, Xenophon also lists a number of tribes of the Armenian Highland: the Chaldaeans, the Chalybians, the Cardouchians, the Mardias, the Taochias, the Phasians, the Hesperites. They soon became part of the Armenian people and had significant cultural contribution to the consolidation into a single people.

None of the ancient historical sources addressed so in detail to the agricultural culture of the ancient Armenians, irrigations, navigation (river transport for the delivery of cereals) through the Tigris and its canals; Xenophon reports wheat and barley bread, household pits and containers for the storage of wine and beer, describes the presence of vegetable oils for various purposes. "Armenia, the large and prosperous province" (Xenophon, *Anabasis*, III.V.17): these words of Xenophon are confirmed in every page of his historical work about the movements of Greek mercenaries through Armenia.

Xenophon also reports on cattle breeding, horse breeding, and hunting on horseback. Hunting was one of the ways to improve the individual skills of driving and understanding riders with the maneuvers required in military actions.

Reports on crafts, in particular woodworking, construction, communication by means of signals, and means of transportation are also of note. Xenophon mentions Armenian hospitality. Reports on the types of settlements of the ancient Armenians, the existence of the rural community in rural Armenia, the rural underground dwellings, the interior of houses, traditional clothes, weapons and ammunition are extremely important. The structure and composition, the relationships within the patriarchal clan, the funeral rites are the subject of description in the following parts of Anabasis.

Important information about the history and culture of ancient Armenia exist in the Historical Library of Diodorus Siculus. The works of the Roman historian began in the middle ages, in the fifth century, the source for the "History of Armenians" by Movses Khorenatsi. For the first time in

historiography, Diodorus uses the term Armenia, though this notion already occurs in the lapidary inscriptions of Achaemenid time. Diodorus concerns military clashes, political events within the framework of satrapy in the 5th century BC, the retreat through Armenia of Greek mercenaries, natural and climatic, geographical conditions of Armenia. Diodorus's records on space and time, dwellings and settlements, on the practice of sacrifices in honor of pagan deities, on the beliefs of ancient Armenians are also worthy of attention, which complements the knowledge of Armenia and the Armenians of Achaemenid time, drawn from Xenophon's Anabasis. The fact that Diodorus does not mention Armenia after the death of Alexander the Great and the partition of the former Persian satrapies between his commanders gives grounds for the researchers to conclude that Armenia was not conquered by Alexander and was independent.

Diodorus continues to cover the ethnography of the coastal Black Sea Proto-Armenian tribes - Macroneans, Scythenians, Mossynoecians, - and also of the Colchians and tribes of Caucasian Albania.

The next in a number of ancient authors, given in this monograph, is Strabo, the famous geographer and historian of late Hellenistic – early Roman ages. In the "Geography" of Strabo, along with many countries and peoples, valuable and lengthy information is also given about Armenia and Armenians, already as a formed single nation dominating throughout the Armenian uplands and Lesser Armenia.

Strabo records on the political history of the country, as well as its economy and culture. Strabo describes the physical geography of Armenia and its administrative structure. The boundaries separating Armenians from neighboring tribes in Asia Minor, Eastern Black Sea Coast and Northern Mesopotamia Strabo describes in detail.

Strabo clearly describes how under king Artashes/Ataxias, in the first half of the 2nd century. BC, the Armenian lands, seized by their neighbors over the previous decades, were reunited. Strabo knows three Armenian states - Greater Armenia, Lesser Armenia and Sophena. In addition to other cultural parameters, the Armenian language was common to them. This means the end of the process of formation of the Armenian people.

Strabo considers Armenus the Thessalian – one of the regions of northern Greece – who accompanied Jason in his expedition, became the ancestor of Armenians. In addition, the geographer assumes the common origin of Armenians, Syrians and Arabs, which is unacceptable by modern science.

According to Strabo, Armenia is rich in fruits and is a wine country, land rich in various grains. According to Strabo, along with the Median,

Armenian horses were famous, and Armenia annually sent to Persia 20,000 horses for sacrifices to the honor of Mithra. Strabo highlights the culture of life support for Armenians, the production culture, the role of Armenians in international trade. Strabo draws parallels between the Thesali and Armenian clothes.

Strabo's observations on the beliefs and cults of the ancient Armenians are exceptionally interesting. Strabo especially pays attention to the cult of the goddess Anahit and the practice of sacred prostitution in the temples erected in her honor. Strabo describes the religious procession to the Anahit temple, the sacred cows with the goddess's sign on the foreheads of these animals.

One of the important sources on the history and culture of Armenia in the Hellenistic era is the Roman historian of Greek origin Plutarch. Especially his work "The Parallel Lives" widely, but not always objectively illuminates the political history of Armenia, the history of military clashes between Armenia and Rome. Plutarch reports how the capital of Armenia Artashat was founded, not without the participation of the famous general Hannibal, and Tigranakert. The author highlights the structure and ethnic character, the armament of troops in the empire of *king of kings* Tigran the Great. A description of the royal court is given too: famous scientists Amphicrates and Metrodorus of Scepsis created here. Tigran's son, Artavazd II, composed on the Greek tragedy, speeches and historical works. Plutarch testified the measures taken by Tigran the Great to introduce Hellenistic culture in Armenia and adjacent regions of his empire at its best.

In the "Natural History" of Roman author of Caius Plinius Secundus or Pliny the Elder paid a lot of attention to natural resources and the history of Armenia. Pliny indicates political boundaries, administrative divisions, natural conditions of the country, some features of its culture, social relations. In the VI book the author testifies that the extent of Armenia reaches 5 million steps (1950 km). The distance from west to east - from Armenia Minor to the Caspian Sea is 1 million 300 steps, and the width of the country from Tigranakert - in the south - to the borders of Iberia - the Cyrus basin in the north - is half of that (975 km). Hence only the area of Greater Armenia to the I century. BC. e. was equal to 312.795 km^2. Armenia consisted of 120 strategies. Of the major cities of Armenia, besides Tigranakert, Pliny knows Arsamosata, Argiatiokerta – in Armenia Major –, and Caesarea, Aza and Nikopolis – in Armenia Minor.

Pliny gives curious ethnographic data. In particular, he records on the cult of the goddess Anahit, about her golden statue and her fate. Pliny reports how Arabs of the Schenites were resettled by the Armenian king of king to one of the passes through the Euphrates. Pliny also indicates on folk

medicine, the use of healers of plant and mineral medicines.

The next Roman source for the history of Armenia is the historian Appian. "Roman History" of Appian refers primarily to the events of the 1st century BC, shedding light on the history of Tigran the Great. He reports how Tigran made The Great Antioch on the river Orontes, one of his capital cities, tells the story of the foundation of another capital, Tigranakert, on the fortifications of the city. Appian objectively talks about the defeat of the Romans at Aracani basin in 68 BC. The historian gives also useful information about the economy, household characteristics, customs and beliefs of ancient Armenians. Description of the royal outfit and Armenian tiara are of great significance.

A high-ranking Roman official and outstanding historian Dio Cassius Cocceianus in "Roman history" expounds the events of the 1st century BC – 2nd century AD. Here, in parallel to political history, Dio Cassius touches on the cultural and everyday characteristics of Armenians. Dio Cassius addresses the political boundaries of Armenia, the issue of moving the capital from Artashat to the New Polis. For Dion there are Armenia Major and another, Armenia Minor, to the west of this. The Roman historian covers both the history of the reign of Tigran the Great, the details of battles between the Romans and Armenians, but also the history of the relationship between Armenia and Rome in the first century AD. Quite spectacular are records on the arrival of the future Armenian king Tiridates I in Rome, the expensive receptions of the Armenian-Parthian delegation in Rome and Naples, the coronation of the Armenia king by Emperor Nero.

Of the historical works of Publius Cornelius Tacitus, his "Annals" are the most valuable for covering the history and culture of the Middle East and, in particular, Armenia. Unfortunately, the Roman author in relation to the events in Armenia and the Armenians takes a biased position, which, however, does not beguile the value of his messages and comments. Especially for our topic details of reports about customs, rituals, beliefs of Armenians and their neighbors are of great interest.

These sources mutually complement each other and serve as an extremely important factual basis for reconstructing the history, material and spiritual culture of ancient Armenia.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա.Սկզբնաղբյուրներ

1. **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչէան և Ս. Տ. Կանայեանց, Տփղիս, 1909:
2. **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1882:
3. «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ.՝ Գ. Մ. Նալբանդյանի, Երևան, 1964):
4. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, կազմողներ՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան, ԵՊՀ հրատ., Երևան, 2007:
5. **Հերոդոտոս,** Պատմություն ինը գրքից, թարգմ.՝Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986:
6. **Հոմերոս,** Իլիական, հ. II, հին հունարեն բնագրից թարգմ.՝ Համազասպ Համբարձումյանi, Երևան, 1955:
7. **Մովսիսի Խորենացւոյ** Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913:
8. **Պլուտարքոս,** Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ս. Գրքաշարյան, Երևան, 2001:
9. **Պլուտարքոս**, Կենսագրություններ, հին հունարեն բնագրի հայերեն թարգմ. և ծանոթ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 2011:
10. **Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն**, հրատ. Ս. Մալխասյանցի, Երևան, 1939:
11. **Ստրաբոն,** Աշխարհագրություն, կազմեց և առաջաբանի հեղ.՝ Սեն Հովհաննիսյան, Երևան, 2011:
12. **Տակիտոս,** Տարեգրություններ, քաղեց և լատիներենից թարգմ. պրոֆ. Պ. Սոտնիկյան, Երևան, 1941:
13. **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ.՝ Ս. Մալխասյանցի, Երևան, 1968:
14. **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, թարգմ., ներածությունը և ծանոթ.՝ Ս. Մալխասյանցի, ԵՊՀ հրատ., Երևան, 1987:
15. **Փաւստոսի Բիւզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, ի Վենետիկ, 1832:

16. **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970:
17. **Քսենոփոն,** Կյուրոպեդիա, թարգմանությունը հուն. բնագրից, ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, «Նոր-Դար» հրատ., 2000:
18. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 14, Հին հունական աղբյուրներ, Բ, Դիոդորոս Սիկիլիացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ս. Մ. Կրկյաշարյան, Երևան, 1985 :
19. Օտար աղբյուրներ հայերի մասին: Հունական աղբյուրներ 1: Ստրաբոն. Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:
20. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հին հունական աղբյուրներ, 9, Ա. Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Հայկ, ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, գիրք 36, 6, 1-2):
21. **Геродот,** История в девяти книгах, перевод с греческого Мищенко Ф. Г., т. II, М., 1888.

Բ. Ուսումնասիրություններ

1. **Այվազյան Ա.**, Հին Հայաստանը որպես «Ազգային պետություն»: «Էջմիածին», թիվ 5 (մայիս), 2005, էջ 123-138:
2. **Այվազյան Ա.,** Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, Երևան, 1998:
3. **Առաքելյան Բ.**, Հին Արտաշատ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975:
4. **Առաքելյան Բ.**, Լատիներեն արձանագրություններ՝ Արտաշատ մայրաքաղաքից: ՊԲՀ, 1967, № 4, էջ 302-311:
5. **Բդոյան Վ.,** Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974:
6. **Գասպարյան Բ.,** Արենի 1 քարայրի ուսումնասիրության հիմնական արդյունքները: Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Զեկուցումների դրույթներ, 17-19 հոկտեմբերի, 2013, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 77-78:
7. **Գարագաշյան Մ. Մ.,** Քննական պատմութիւն Հայոց, II, Թիֆլիս, 1895 :
8. **Գելցեր Հ.,** Համառոտ պատմութիւն Հայոց, թարգմ.՝ Հ. Գր. Գալեմ-

քարյանի, Վիեննա, 1897:
9. **Դեմոյան Հ.,** Հայկական ազգային խորհրդանշաններ (զինանշաններ, դրոշներ, պարգևներ), Երևան, 2012:
10. **Եղիազարյան Ա.**, Արաբական ցեղերը Տիգրան Մեծի տերության համակարգում: «Հայ աստվածաբան» (գիտական հոդվածների ժողովածու), Գ, ԵՊՀ աստվածաբանության ֆակ., Երևան, 2009 էջ 15-22:
11. **Երեմյան Ս.,** Հայասա-Ազզի տեղորոշումը, էթնիկ կազմը և լեզուն: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 189-202 :
12. **Երեմյան Ս.,** Հայաստանի գետերն ու լճերը: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 25-35 :
13. **Երեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963:
14. **Երեմյան Ս.**, Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 836-846:
15. **Երեմյան Ս.**, Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 423-443:
16. **Երեմյան Ս.**, Հայաստանը հռոմեա-պարթևական հակամարտության ոլորտում: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 703-733:
17. **Թորոսյան Ա.,** Հայաստանի դեղաբույսերը, Երևան, 1983:
18. **Լալայան Ե.,** Երկեր, հինգ հատորով, հ. 3, Երևան, 2004:
19. **Լալայան Ե.,** Մուշ-Տարոն: «Ազգագրական հանդես», գ. XXIV, Թիֆլիս, 1916, 149-195:
20. **Լեո**, Երկերի ժողովածու, հ. I, «Հայաստան» հրատ., Երևան, 1966:
21. **Կրկյաշարյան Ս.**, Դիտողություններ Հին Հայաստանի տաճարային քաղաքների առաջացման մասին: «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1963, № 9, էջ 55-66:
22. **Կրկյաշարյան Ս.,** Սինոյկիսմոսը հելլենիստական Փոքր Ասիայում և Հայաստանում: ՊԲՀ, 1964, № 1, էջ 107-118:
23. **Կրկյաշարյան Ս.,** Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970:
24. **Կրկյաշարյան Ս.**, Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում: ՊԲՀ, 1973, № 4, 179-186:
25. **Հակոբյան Հ.,** Հայոց պատերազմները և ռազմարվեստը Տիգրան

Մեծի օրոք, Երևան, 2013:
26. **Հակոբյան Հ.,** Հայաստանի բանակն ու ռազմարվեստը Երվանդունիների օրոք, Երևան, 2013, գունավոր ներդիրներ Ա և Բ:
27. **Հակոբյան Հ.,** Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը: ՊԲՀ, 2007, № 3, էջ 3-29:
28. **Հակոբյան Հ.,** Տիգրան Մեծ, Երևան, 2005:
29. **Հակոբյան Հ.,** Տիգրան Մեծը և հայկազունները՝ համաձայն Խորենացու և Մեբեռոսի: Հայկազուններ, Երևան. «Գիտություն» հրատ., 2013, էջ 17-47:
30. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971:
31. **Հացունի Վ.,** Պատմություն հին հայ տարազի, Վենետիկ, 1923:
32. **Հյուբշման Հ.,** Հին հայոց տեղվո անունները, թարգմ.՝ Հ. Բ. Պիլեզիկճյանի, Վիեննա, 1907:
33. **Հրանդ Ք. Արմեն,** Մեծն Տիգրան, Անթիլիաս, 1947:
34. **Ղազարյան Գ.,** Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի, Թիֆլիս, 1908 :
35. **Ղափանցյան Գ.**, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940:
36. **Մալխասեանց Ս.,** Հայերեն բացատրական բառարան, հ. I (Ա-Ե), ԵՊՀ հրատ, Երևան, 2010:
37. **Մալխասեանց Ս.,** Հայերեն բացատրական բառարան, հ. III (Հ-Ո), ԵՊՀ հրատ., Երևան, 2010:
38. **Մալխասեանց Ս.,** Հայերեն բացատրական բառարան, հ. IV (Չ-Ֆ), ԵՊՀ հրատ., 2010:
39. **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ.թ.), Երկեր, հ. Ա, Երևան, 1977:
40. **Մանանդյան Հ.**, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944:
41. **Մանանդյան Հ.,** Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1972:
42. **Մանանդյան Հ.**, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհներն ըստ Պևտինգերյան քարտեզի, Երևան, 1936:
43. **Մարկվարտ Յ.**, Հայ բդեշխք, թարգմ. Հ. Թ. Կետիկյան, Վիեննա, 1903:
44. **Մելիք- Փաշայան Կ.,** Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:

45. **Մկրտչյան Ս.,** Հայոց տոնածիսական մշակույթ, Երևան, 2016:
46. **Նահապետյան Ռ.,** Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004:
47. **Նահապետյան Ռ.,** Գայոս Կոռնելիոս Տակիտոսի ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին: Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված ժողովածու, ՀՊՄՀ պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտական աշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՊՄՀ հրատ., 2010, էջ 293-295:
48. **Նահապետյան Ռ.,** Հայոց ազգակցական համակարգը (XIXդ երկրորդ կես – XX դ սկիզբ), Երևան, 2012:
49. **Նահապետյան Ռ.,** Ազգագրական տեղեկությունները Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկում, Երևան, 2013:
50. **Նահապետյան Ռ.,** Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին: ՊԲՀ, 2015, № 1, էջ 208-231:
51. **Նահապետյան Ռ.,** Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատությունը՝ հայ ազգագրության անտիկ դարաշրջանի սկզբնաղբյուր: «Լրաբեր» ՀՀ ԳԱԱ հաս. գիտությունների, 2015, թիվ 3, էջ 134-145:
52. **Նահապետյան Ռ.,** Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները (հայ ազգագրության անտիկ դարաշրջանի բացառիկ սկզբնաղբյուրներ): «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 363-383;
53. **Նահապետյան Ռ.,** Հայաստանի պատմաաշխարհագրական, քաղաքական և ժողովրդագրական կառուցվածքը՝ ըստ Քսենոփոնի երկերի: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Գիտական տեղեկագիր», № 3-4 (28-29), Երևան, 2016, էջ 108-118:
54. **Նահապետյան Ռ.,** Դիոդորոս Սիկիլիացու վկայությունները Հայաստանի, հայերի և հարևան ժողովուրդների մասին: ՊԲՀ, 2016, № 3, էջ 125-140:
55. **Նահապետյան Ռ.,** Գայոս Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգրություններ» երկը՝ հայ ազգագրության պատմության անտիկ դարաշրջան եզակի սկզբնաղբյուր: Խ. Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համալսարան, «Պատմություն և հասարակագիտություն» (Տարեգիրք), № 2, Երևան, 2016, էջ 217-238:
56. **Նահապետյան Ռ.,** Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» երկը անտիկ դարաշրջանի Հայաստանի և հայերի մասին: «Ակունք», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (15), Երևան, 2017, էջ 19-35:
57. **Նահապետյան Ռ.,** Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսը Հայաստանի և հայերի մասին: «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2017, էջ 349-355:
58. **Նահապետյան Ռ.,** Ապպիանոսի «Հռոմեական պատմություն» երկը՝ հայոց պատմության և մշակույթի կարևոր սկզբնաղբյուր: «Լրաբեր ՀՀ ԳԱԱ հաս. գիտ.», Երևան, 2017, № 3, էջ 70-80:
59. **Նահապետյան Ռ.,** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի պատմության և մշակույթի վերաբերյալ վկայությունները Պլուտարքոսի երկերում: «Էջմիածին», Օգոստոս (Ը), 2017, էջ 7-28:
60. **Պետրոսյան Ա.**, Հայոց ազգածագման հարցեր, Երևան, 2006:
61. **Պետրոսյան Լ.**, Հաղորդակցության ազդանշանային կամ պայմանական միջոցները հայերի մեջ: ՊԲՀ, 1968, № 3, էջ 191-198:
62. **Պետրոսյան Լ.**, Հայ ժողովրդական փոխադրամիջոցներ: ՀԱԲ, հ. 6, Երևան, 1974, էջ 93-157: Աղյուսակներ I-XXXI:
63. **Պետրոսյան Լ.,** Հայոց ավանդական փոխադրամիջոցների պատմամշակութային աղերսները: ՀԱԲ, (նյութեր և ուսումնասիրություններ), գիրք 22, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2007, էջ 141-155:
64. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931:
65. **Սամուելյան Խ.,** Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Երևան, 1941:
66. **Սարգսյան Գ.**, Պատմահայր Հերոդոտոսը: **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986 էջ 553-578:
67. **Սարգսյան Գ..** Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966 :
68. **Սարգսյան Գ.**, Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը: ՊԲՀ, 1969, № 1, էջ 107-126:
69. **Սարգսյան Գ.**, Հայաստանը Արտավազդ Բ-ի և նրա հաջորդների

ժամանակաշրջանում: Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 603-634:
70. **Ստեփանյան Արմենուհի.** Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը, ՀԱԲ, հ. 22, Երևան, 2007:
71. **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, երկրորդ հրատ., ԵՊՀ հրատ., Երևան, 2009:
72. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.,** Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:
73. **Վարդանյան Ս.,** Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000:
74. **Տէր-Մովսիսեան Փ.,** Հայ գիւղական տունը, թարգմ. Պիլեզիկճեան, Վիեննա, 1894:
75. **Տիրացյան Գ.**, Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո: Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1970, էջ 444-464:
76. **Տիրացյան Գ.**, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դար): ՊԲՀ 1980, № 4, էջ 84-95,
77. **Տիրացյան Գ.**., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ- III դ. վերջ): ՊԲՀ, 1981, № 2: էջ 68-84:
78. **Տիրացյան Գ.**, Անաբասիսը և Հայաստանը: **Քսենոփոն,** Անաբասիս, թարգմանությունը՝ Սիմոն Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970 էջ 221-240:
79. **Փալանջյան Ռ.**, Գինեգործությունը և տեխնիկական բույսերի վերամշակումը Հին Հայաստանում (մ.թ.ա. VI - մ.թ. IV դարեր), պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2015:
80. **Адонц Н.,** Армения в эпоху Юстиниана, СПб., 1908.
81. **Акопян А.,** Тигранакертская битва в новом освесчении. «Լրաբեր ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ.», 1983, № 9, էջ 65-79.
82. **Аракелян Б.**, Арташат. I. Ереван, 1982.
83. **Ардзинба В.**, Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982.
84. **Арутюнян А.,** Очерки истории виноградарства и виноделия древней и средневековой Армении, Ереван, 2005.
85. **Гамкрелидзе Т.**, **Иванов В.,** Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тбилиси, 1984.

86. **Даль С. К.**, Результаты изучения млекопитающих из раскопок урартского города Тейшебании, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1952, թիվ 1, էջ 75-86:
87. **Дьяконов И. М.,** Ассиро-вавилонские источники по истории Урарту. «Вестник древней истории», 1951, № 2, с. 257-264.
88. **Дьяконов И. М.,** История Мидии, Москва-Ленинград, 1956.
89. **Еремян С. Т.,** Развитие городов и городской жизни в древной Армении, ВДИ, 1953, № 3.
90. **Еремян С. Т.**, Основные черты общественного строя Армении в эленистическую эпоху: «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. 1948, թիվ 11, էջ 33-73:
91. **Еремян С. Т.,** Происхождение некоторых орудий пашенного земледелия в древней Армении. Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության, հ. 1, Երևան, 1964:
92. **Кораблев И. Ш.,** Ганнибал, Москва, 1976.
93. **Манандян Я. А.,** О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. - XV в. н. э.), Ереван, 1954.
94. **Меликишвили Г. А.,** К истории древней Грузии, Тбилиси, 1959.
95. **Низе Б.,** Очерк Римской истории и источниковедения,, 1910:
96. **Петросян А.,** Этногенез. - Армяне. Серия “Народы и культуры”, Москва, 2012, с. 42-49.
97. **Пиотровский Б. Б.**, Урарту, Ереван, 1944.
98. **Пиотровский Б.Б.,** Ванское царство, Москва, 1959.
99. **Пиотровский Б. Б.,** Искусство Урарту, Ленинград, 1962.
100. **Саркисян Г. Х.**, Тигранакерт. Из истории древнеармянских городских общин. Москва, 1960.
101. **Тирацян Г. А.**. Некоторые аспекты внутренней организации Армянской сатрапии. ՊԲՀ, 1972, № 2, էջ 99-116:
102. **Тревер К. В.**, Очерки по истории культуры древней Армении, Москва-Ленинград, 1953.
103. **Халатянц Г.,** Очерк истории Армении, Москва, 1910.
104. **Хачатрян Т. С.,** Древняя культура Ширака, Ереван, 1975.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք խմբագրի կողմից 3
Ներածություն.....5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հունական անտիկ սկզբնաղբյուրները Հայաստանի և հայերի մասին..... 9

§ 1.1. Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» աշխատությունը՝ հայ ազգագրության անտիկ դարաշրջանի սկզբնաղբյուր 9

§ 1.1.1. Հին Հայաստանի տարածքը և Հայաստանի պատմական սահմանները՝ ըստ Հերոդոտոսի.....11

§ 1.1.2. Հին Հայաստանի էթնիկ կազմը՝ ըստ Հերոդոտոսի հավաստումների 14

§ 1.1.3. Հայերի ծագման փռյուգիական վարկածը 15

§ 1.1.4. Տնտեսական կյանքի և նյութական մշակույթի բնութագրությունը՝ ըստ Հերոդոտոսի.....17

§ 1.1.5. Ակնարկներ հարևան ժողովրդների սովորույթների ու մշակութային կյանքի վերաբերյալ.....24

§ 1.2. Քսենոփոնի «Անաբասիս» և «Կյուրոպեդիա» աշխատությունները՝ հայ ազգագրության անտիկ դարաշրջանի բացառիկ սկզբնաղբյուրներ 28

§ 1.2.1. Հայաստանի պատմաաշխարհագրական, քաղաքական և ժողովրդագրական կառուցվածքի մասին վկայությունները Քսենոփոնի երկերում.....30

§ 1.2.2. Հայաստանի զինված ուժերը՝ ըստ Քսենոփոնի.....33

§ 1.2.3. Հին Հայաստանի էթնիկ պատկերը 38

§ 1.2.4. Հին Հայաստանի և հայերի տնտեսամշակութային բնութագրությունը 44

§ 1.2.5.ա Հին հայերի սոցիոնորմատիվ մշակույթի վերաբերյալ հավաստումներ.....62

§ 1.2.5.բ Հին Հայաստանի հասարակության կառուցվածքի վերաբերյալ հավաստումները.....66

§ 1.3. Դիոդորոս Սիկիլիացու վկայությունները Հայաստանի, հայերի և հարևան երկրների ժողովուրդների մասին.....69

§ 1.3.1. Հին Հայաստանի տարածքը, Արմենիա անվան հիշատակությունը և քաղաքական կացությունը՝ ըստ Դիոդորոսի 71

§ 1.3.2. Տեղեկություններ բնակլիմայական պայմանների, տնտեսական կենցաղի ու նյութական մշակույթի վերաբերյալ 75
§ 1.3.3. Տեղեկություններ չափ ու կշիռների վերաբերյալ 77
§ 1.3.4. Տեղեկություններ մշակույթի որոշ դրսևորումների վերաբերյալ 78
§ 1.3.5. Արմենների հետ հարևանությամբ ապրող ցեղերի և երկրների վերաբերյալ վկայությունները՝ ըստ Դիոդորոսի.... 80
§ 1.4. Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին 85
§ 1.4.1. Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական և վարչաքաղաքական բնութագիրը՝ ըստ Ստրաբոնի հավաստումների 86
§ 1.4.2. Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ հավաստումները՝ ըստ Ստրաբոնի 95
§ 1.4.3. Ստրաբոնի տեղեկությունները հարևան ժողովուրդների մասին 97
§ 1.4.4. Ժողովրդագրական ակնարկներ 98
§ 1.4.5. Հին Հայերի արտադրական և կենսապահովման մշակույթի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ Ստրաբոնի 100
Երկրագործություն: Այգեգործություն 100
Անասնապահություն: Ձիաբուծություն 102
Արհեստագործություն 103
Առևտուր, փոխանակություն, չափ ու կշիռ 104
Ժողովրդական փոխադրամիջոցներ և կապի միջոցներ 106
Տարազ և ազանելիք 107
§ 1.4.6. Ակնարկ հին հայերի պաշտամունքային սովորույթների վերաբերյալ 109
§ 1.4.7. Ակնարկներ բժշկության վերաբերյալ 113
§ 1.5. Պլուտարքոսի «Զուգահեռ կենսագրություններ» երկը՝ հայոց պատմության և մշակույթի անտիկ դարաշրջանի կարևոր սկզբնաղբյուր 114
§ 1.5.1. Ակնարկներ Հայաստանի տարածքային սահմանների մասին 115
§ 1.5.2. Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքների հիմնադրման մասին 116
§ 1.5.3. Ժողովրդագրական վիճակը և բնակչության կազմը Տիգրան Մեծի օրոք 118

§ 1.5.4. Հայերի տնտեսական կյանքը 123
§ 1.5.5. Կենցաղային և ամուսնաընտանեկան
որոշ սովորույթների մասին 128
§ 1.5.6. Հելլենիստական մշակույթի դրսևորումները
Հայաստանում Տիգրան Մեծի օրոք՝ ըստ Պլուտարքոսի 130
§ 1.5.7. Ծեսերն ու պաշտամունքը՝ ըստ Պլուտարքոսի 132

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Հռոմեական անտիկ սկզբնաղբյուրները Հայաստանի և հայերի մասին 136

§ 2.1. Գայոս Պլինիոս (ավագ) Սեկունդոսը
Հայաստանի և հայերի մասին 136
§ 2.1.1. Հին Հայաստանի տարածքը, քաղաքները, ֆիզիկական
աշխարհագրությունը՝ ըստ Պլինիոսի հավաստումների 137
§ 2.1.2. Ակնարկներ Հայաստանի սահմանակից երկրների ու
ժողովրդների վերաբերյալ 141
§ 2.1.3 Անահիտ դիցուհու պաշտամունքի վերաբերյալ
հավաստումները՝ ըստ Պլինիոսի 142
§ 2.1.4. Ակնարկ Տիգրան Մեծի կատարած վերաբնակեցումների
վերաբերյալ 144
§ 2.1.5. Ակնարկներ դեղաբույսերի, ժողովրդական բժշկության
վերաբերյալ 144
§ 2.2. Ապպիանոսի «Հռոմեական պատմություն» երկը՝
հայոց պատմության և մշակույթի կարևոր սկզբնաղբյուր 145
§ 2.2.1. Տիգրանակերտ մայրաքաղաքի, Տիգրան Մեծի,
վերաբնակեցումների պատմաքաղաքական և ռազմական
անցքերի վերաբերյալ հաղորդումները՝
ըստ Ապպիանոսի 146
§ 2.2.2. Հին հայոց տնտեսական կյանքի և նյութական մշակույթի
բնութագրությունը 154
§ 2.2.3. Կենցաղամշակութային որոշ սովորույթների
վերաբերյալ հաղորդումները՝ ըստ Ապպիանոսի 156
§ 2.3. Դիոն Կասսիոսի «Հռոմեական պատմություն» երկը
անտիկ դարաշրջանի Հայաստանի և հայերի մասին 158
§ 2.3.1. Դիոն Կասսիոսը հայոց երկրի բնական հարստությունների,
սահմանների, տարածքային ընդգրկումների,
քաղաքների և քաղաքական վիճակի մասին 159
§ 2.3.2. Հայաստանը հռոմեացիների ու պարթևների
նվաճողական ծրագրերի կիզակետում,
ռազմաքաղաքական իրավիճակն ու իրադարձությունները՝
ըստ Դիոն Կասսիոսի հավաստումների 164

§ 2.3.3. Ազգագրական, այդ թվում՝ հայ-պարթևական կենցաղային և ռազմական որոշ սովորույթներ 174
§ 2.3.4. Հայերի պայքարն այլ ցեղերի դեմ 178
§ 2.3.5. Հայ արքաների և իրենց ընտանիքների արժանապատիվ կեցվածքը հզորների հետ շփումներում 178
§ 2.3.6. Ակնարկ ժամանակի մի քանի պաշտոնների և ռազմական զորաշարքերի մասին 181
§ 2.4. Գայոս Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգրություններ» երկը՝ հայ ազգագրության պատմության անտիկ դարաշրջանի եզակի սկզբնաղբյուր 182
§ 2.4.1. Ակնարկներ հին Հայաստանի վարչատարածքային ընդգրկումների վերաբերյալ 183
§ 2.4.2. Ակնարկներ հին հայերի հարևանությամբ ապրող ժողովուրդների մասին 184
§ 2.4.3. Ակնարկներ պետական և ռազմական ու ծիսական արարողակարգերի, պետական խորհրդանիշների թագադրման արարողակարգերի և այլնի վերաբերյալ 185
§ 2.4.4. Հայերի վերաբերյալ Տակիտոսի բնութագրումները 192
§ 2.4.5. Օտարների հետ ունեցած հայկական առնչությունների վերաբերյալ հավաստումները՝ ըստ Տակիտոսի 195
§ 2.4.6. Ակնարկ ամուսնության ավանդութային որոշ սովորությունների վերաբերյալ 198
§ 2.4.7. Ակնարկ հին Հայաստանի հասարակական կառուցվածքի վերաբերյալ 200
§ 2.4.8. Ակնարկ փոխադրության միջոցների, ձևերի, չափ ու կշիռների վերաբերյալ 201
ԱՄՓՈՓՈՒՄ 203
Этнографические данные греко-римских античных первоисточников об Армении и армянах (*Резюме*) 218
Ethnographic Data of Ancient Greek and Roman Sources on Armenia and Armenians (*Summary*) 223
Սկզբնաղբյուրների և գրականության ցանկ 228

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՆՏԻԿ ՄԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝ Մ. Պողոսյանի,
Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Արման Ասմանգուլյան» ԱՁ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 21.05.2018:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 15:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

ՌԱՖԻԿ ԱՍՔԱՆԱԶԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆիկ Նահապետյանի ուսումնասիրությունները հիմնականում նվիրված են հայ ազգագրության ամենատարբեր հիմնահարցերին՝ արևմտահայերի, մասնավորապես պատմական Աղձնիք նահանգի հայ բնակչության էթնոմշակութային բնութագրին, հայոց սոցիոնորմատիվ մշակույթին՝ ընտանիքին և ընտանեկան վարվելակարգին, ամուսնության, հարսանեկան, մանկան ծննդի ու դաստիարակության, հուղարկավորման և հիշատակման արարողակարգերին, հասարակական հնավանդ կառույցներին՝ ազգակցական, համայնքային համակարգերին: Ներկայումս առավել ուշադրություն է դարձրել հայ և օտար սկզբնաղբյուրների ազգագրական մեկնություններին, հայ ազգաբանության պատմության ուսումնասիրությանը:

Ներկա գիրքը վերաբերում է հունահռոմեական անտիկ սկզբնաղբյուրների՝ Հայաստանի և հայերի վերաբերյալ ազգագրական տեղեկությունների ուսումնասիրությանը:

Հեղինակ է 6 մենագրության, 120 գիտական ծավալուն հոդվածների, 3 ուսումնական բուհական ձեռնարկների, բազմաթիվ ուսումնամեթոդական աշխատանքների, համացանցային հրապարակումների, հեռուստատեսային հաղորդումների:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018
publishing.ysu.am